

4403

1  
196



1875 Jan 19

Wm. Lloyd Garrison  
at 25 N. 5th  
St. N. York  
N. Y.





ԿՐԹՈՒԹԻՒՆ

ՍԻՐԵԼՈՅ ԶՅԻՍՈՒՄ



129


20 NOV 2009

ՍՐԲՈՅՆ

ԱԼՓՈՆՍՈՍԻ ԼԻԳՈՒՈՐԵԱՅ

ԿՐԹՈՒԹԻՒՆ

ՍԻՐԵԼՈՅ ՁՅԻՍՈՒՍ



Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի Վաևա Սրբոյնի Հազարոշ

1855

20112

1. 2 MAY 2013

4403

Յ Ի Շ Ա Տ Ա Կ

Հ Ա Ն Գ Ո Ւ Ց Ե Ա Լ Հ Ո Գ Ի Ո Ց

Պ Ո Ւ Բ Ի Ս Ե Ա Ն

Բ Ա Ր Ե Պ Ա Շ Տ Օ Ն Տ Ո Հ Մ Ի Ն



57140-66

1-196 արձ



Սէր երկայնամիտ է , քաղցրանայ .  
սէր ոչ նախանձի , ոչ ամբարհաւաճէ ,  
ոչ հպարտանայ , ոչ յանդգնի , ոչ խնդրէ  
զիւրն , ոչ գրգռի , ոչ խորհի զչար , ոչ  
խնդայ ընդ անիրաւութիւն , այլ խնդայ  
ընդ ստուգութիւն . ամենայնի տեւէ , ա-  
մենայնի հաւատայ , ամենեկն յուսայ , ա-  
մենայնի համբերէ :

Ա . ԿՈՐ . ԺԳ . 4-7 :



Եթէ որ ոչ սիրէ զտէր Յիսուս , եղիցի  
նզովեալ : Ա . ԿՈՐ . ԺԶ . 22 :







Որ սիրակն զիս , սիրեացի ի հօրե իմնկ .

Ե՛ւ ես սիրեցից զևս .

ԿՐԹՈՒԹԻՒՆ

ՍԻՐԵԼՈՅ ԶՅԻՍՈՒՍ

ԳԼՈՒԽ Ա .

Ո՛րչափ արժանի է որ սիրենք զՅիսուս  
այն սիրոյն համար՝ որ իր չարչա-  
րանքովը մեզի ցոշցոշց :

1. Հոգիոն սրբութիւնն ու կատարե-  
լութիւնը կայացեալ է Յիսուս մեր տէրը ,  
մեր գերագոյն բարին ու մեր փրկիչը սիրե-  
լուն վրայ : Ով որ զիս կը սիրէ , ըսաւ Յի-  
սուս , իմ յաւիտենական Հայրս զանիկայ  
կը սիրէ<sup>1</sup> : Ոմանք , կըսէ սուրբն Ֆրանչիս-  
կոս Սալէզեան , կատարելութիւնը կը դնեն  
խոտակեցութեան վրայ , ոմանք աղօթքի

1 Զի ինքն իսկ Հայր սիրէ զձեզ , զի  
դուք զիս սիրեցէք : Յովհ . ԺԶ . 27 :

վրայ, ոմանք սուրբ խորհրդոց ստէսլ մերձե-  
 նալու վրայ, ոմանք ալ ողորմութեան վրայ,  
 բայց կը խաբուին. վասն զի կատարելութի-  
 նը կը կայանայ բոլորով սրտիւ զՄատուած  
 սիրելուն վրայ: Կրտէ Մուսքեալը. Մմէն  
 բանէ վեր աէր ունեցէք, որ է կատարե-  
 լութեան կասլը<sup>1</sup>: Սէրն է որ կը միացընէ  
 ու կը պահէ զայն ամէն առաքինութիւննե-  
 րը որ զմարդ կատարեալ կ'ընեն: Մոր հա-  
 մար կ'ըսէր սուրբն Օգոստինոս. Սիրէ,  
 ու ինչ որ կ'ուզես ըրէ: Վասն զի հո-  
 դոյն, որ զՄատուած կը սիրէ, նոյն իսկ  
 սէրը կը սորվեցընէ բնաւ բան մը չընել որ  
 իրեն անհաճոյ է, և ամէն բան ընել որ  
 իրեն հաճոյ է:

2. Միթէ Մատուած մեր բոլոր սիրոյն  
 արժանի չէ: Ինքը 'ի յաւիտենից զմեզ  
 սիրեց<sup>1</sup>: Ո՛վ մարդ, կրտէ Մատուած,  
 տես որ ես առաջինն եղայ քեզ սիրելու:  
 Դեռ դուն աշխարհք չէիր եկած. և ոչ

1 Եւ 'ի վերայ ամենայնի զսէր, որ է  
 զող կատարմանն: Կող. Գ. 14:

2 Սէր յաւիտենական սիրեցի զքեզ:  
 Երեմ. ԼԱ. 3:

խակ աշխարհք կար, ու ես զքեզ սիրեցի :  
 Քանի որ Աստուած եմ, զքեզ կը սիրեմ .  
 քանի որ ես զիս սիրեցի, քեզ ալ սիրեցի :  
 Արեմն շատ իրաւունք ունէր այն կուսանը  
 սուրբն Ագնէս, որ երբոր երկրաւոր փե-  
 սաներ իրեն առաջարկեցին, որ զինքը ի-  
 ըննց հարս ընել կ'ուզէին, պատասխան  
 տուաւ անոնց . Առաջուց սիրուած եմ  
 ուրիշ սիրելիէ . մէկ դի գնացէք, կ'ըսէր,  
 ո՛վ այս աշխարհքիս սիրողները, և մի յու-  
 սաք թէ զձեզ սիրեմ : իմ Աստուածս առջինն  
 եղաւ իս սիրելու, ինքը 'ի յաւիտենից զիս  
 սիրեց . ուստի իրաւունք ունի որ ես ալ իրեն  
 ընծայեմ իմ ամէն իղձս, ու իրմէն զատ  
 ուրիշը չիսիրեմ :

3. Աստուած տեսնալով որ մարդիկ բա-  
 րերարութեամբ մէկուն կը յարուին, ուղեց  
 որ իր պարգևներովը մարդիկ իրեն քաշէ :  
 Ա'ուզեմ, ըսաւ, զմարդիկ իմ սիրոյս քաշել  
 այնպիսի կապերով, որոնցմով որ մարդիկ  
 կը քաշուին, այս ինքն սիրոյն կապերովը <sup>1</sup> :

1 Չգեցի զնոսա կասկանօք սիրոյ խմոյ :  
 Ովս . ժԱ . 4 :

Աւ ահա ասանկ են Աստուծոյ առ մարդիկ  
 ըրած ամէն պարզւեաները : Աստուած մար-  
 դուս այնպիսի հողի մը տալէն զատ , որ  
 ըստ պատկերի իւրում ունի կարողութիւն-  
 ներ յիշողութեան , իմացողութեան ու կա-  
 մաց , ու մարմին մը զգայարանօք զարդա-  
 բուած , իրեն համար ստեղծեց նաև եր-  
 կինք ու երկիր և ուրիշ այնչափ բաներ . ա-  
 մէնն ալ մարդուս սիրոյն համար . երկինք ,  
 աստեղք , մոլորակներ , ծովեր , գետեր ,  
 աղբիւրներ , լեռներ , տունկեր , մետաղ-  
 ներ , սրտուղներ , և այնչափ տեսակ ա-  
 նասնոց , այս ամէն արարածները անոր  
 համար որ մարդուս ծառայեն . մարդն ալ  
 այնչափ պարզւեաց երախտագիտութեանը  
 համար զինքը սիրէ : Արկինք ու երկիր ,  
 կ'աղաղակէր սուրբն Օգոստինոս , ու ամէն  
 բան կ'ըսեն ինձի որ զքեզ սիրեմ : Ո՛վ տէր  
 իմ , կ'ըսէր , ինչ որ երկրիս մէջ ու երկրիս  
 վրայ կը տեսնամ՝ ամէնը ինձի հետ կը խօ-  
 սին , զիս կը յորդորեն զքեզ սիրելու , վասն  
 զի ամէնն ալ ինձի կ'ըսեն որ դուն զա-  
 նոնք իմ սիրուս համար ես ստեղծեր : Աբ-  
 բայն Ռանսէ Վրարբայի հիմնադիրը ,



րոյն համար, որով որ զմեզ կը սիրէ, ինչպէս որ կ'ըսէ սուրբ Առաքեալը, իր սիրելի որդին մեր քառութեանը համար խաւրեց, որպէս զի մեղքով զրկուած կեանքը մեզի նորէն պարգևէ <sup>1</sup>: Այլ իր Արդին մեզի պարգևելով, չէ թէ մեզի ներելու համար Արդւոյն ներելով, Արդւոյն հետը մեզի պարգևեց ամէն բարիք, իր շնորհքը, իր սէրը ու արքայութիւնը. որովհետև այս ամէն բարիք ստուգիւ նուազագոյն են քան զիր Արդին <sup>2</sup>:

6. Ասանկով միաձին Արդին ալ մեզ սիրելուն համար բոլորովին ինքը զինքը մեզի տուաւ <sup>3</sup>: Օ մեզ յաւիտենական մահուանէ խաղտելու համար, և Աստուծոյ շնոր-

<sup>1</sup> Ասան բազում սիրոյն իւրոյ զոր սիրեացն զմեզ, մինչդեռ մեռեալն էաք ՚ի մեղս մեր, կենդանիս արար ՚ի Քրիստոս: Եփեսս. Ժ. 4. 5:

<sup>2</sup> Որ յիւր որդին ոչ խնայեաց, այլ վասն մեր ամենեցուն մատնեաց զնա. զինքն ոչ նուազ հանդերձ զամենայն շնորհիցէ մեզ: Հռոմ. Ը. 32:

<sup>3</sup> Որ սիրեացն զիս և մատնեաց զանձն վասն իմ: Գաղատ. Բ. 20:

Հայր ու արքայութեան արժանի ընելու  
 Համար, զորն որ կորսորնցուցեր էինք, մարդ-  
 եղաւ ու մեզի նման մարմին զգեցաւ <sup>1</sup> . ու  
 նա որ Աստուածն էր ունայնացաւ <sup>2</sup> : Ահա  
 Տէրն աշխարհի կը խոնարհի ու մինչև  
 ծառայի կերպարանք կ'առնու, և ամէն  
 մարդկային նեղութիւն յանձն կ'առնու ինչ  
 որ ուրիշ մարդիկ կը քաշեն :

7. Բայց այն որ աւելի կը հիացնէ այն  
 է՝ որ ինքը կրնար փրկել զմեզ առանց  
 մեռնելու և առանց չարչարանք քաշե-  
 լու . բայց չէ . վշտալից ու նախատակոծ  
 կեանք մը ընտրեց և դառն ու ամօթալի  
 մահ, մինչև խաչի վրայ մեռնիլ, որ վա-  
 տահամբաւ մահ է չարագործներու միայն  
 սպանաւած <sup>3</sup> : Բայց կրնալով առանց չար-

1 Եւ բանն մարմին եղև : Յովհ . Ա .  
 14 :

2 Այլ զանձն ունայնացոյց զկերպա-  
 րանս ծառայի առեալ՝ ՚ի նմանութիւն  
 մարդկան եղեալ, և կերպարանօք դռեալ  
 իբրև զմարդ . Փիլիպ . Բ . 7 :

3 Խոնարհեցոյց զանձն լիեալ հնա-  
 զանդ մահու չափ և մահու խաչի : Փիլ .  
 Բ . 8 .

չարանք քաշելու ազատել զմեզ՝ ինչո՞ւ ըն-  
տրեց մեռնիլը ու խաչի վրայ մեռնիլը . որ-  
պէս զի ցուցրնէ թէ ինչպէս զմեզ կը սիրէ :  
“Որ սիրեացն զիս և մատնեաց զանձն  
վասն իմ” : Սիրեց զմեզ , և որովհետև  
զմեզ կը սիրէր , ցաւոց , նախատանայ  
ու վշտաչարչար մահուան ինք զինքը  
մատնեց . այնպիսի դառն մահ որ աշ-  
խարհքիս վրայ մարդ չէ եղած որ այնպիսի  
վիշտ կրած ըլլայ :

Տ . Ընոր համար Յիսուսի սիրովը վա-  
ռուած սուրբ Լուարեալն Պօղոս ըսաւ .  
Սէրն Քրիստոսի ստիպէ զմեզ<sup>1</sup> : Սուրբ  
Լուարեալը ըսել կուզէ թէ ոչ այնչափ  
չարչարանքն որ Յիսուս կրեց , որչափ  
սէրն որ մեզի համար չարչարուելու ատենը  
մեզի ցուցուց մեզ կը սլարտաւորէ ու իբրև  
թէ զմեզ կը ստիպէ որ զինքը սիրենք :  
Տեսնանք թէ սուրբն Պրանչիսկոս Սալէ-  
զեան այս բնաբանիս վրայ ինչ կ'ըսէ :  
“Վիտնալով որ Յիսուս ճշմարիտն Լս-  
տուած զմեզ այնչափ սիրեց որ մեզի համար

մահ ալ յանձն առաւ , մահ խաչի , միթէ այս բանս մամոյ մը տակ գնելու պէս չէ մեր սիրտերը և ուժով մը ճմլել և սաստկուածեամբ սէրը ճզմել , որ այնչափ աւելի պիտի ըլլայ , որչափ որ ինքն աւելի սիրելի է ,, : Ատքը այս ալ կ'աւելցրնէ . “ Ա՛հ , ինչո՞ւ ուրեմն Յիսուսի խաչելոյն շէնք պըլուիր , որպէս զի իրեն հետ խաչին վրայ մեռնինք , որ մեր սիրոյն համար խաչին վրայ մեռաւ : Պէտք էր որ ըսէինք . իրեն պըլուեցայ և ոչ երբէք զինքը պիտի թողում . թող իրեն հետ մեռնիմ , ու իր սիրոյն բոցովը էրիմ : Մի և նոյն հուրը թող բորբոքէ զԱրարիչն Աստուած ու իր ողորմելի արարածը : Յիսուան իմ զինքը բոլոր ինձի կու տայ , ես ալ զիս բոլոր իրեն կու տամ : Իրեն լանջայը վրայ պիտի ապրիմ ու պիտի մեռնիմ . ոչ մահ , ոչ կեանք երբէք զիս իրմէն պիտի բաժնեն : Ո՛վ սէր յաւիտենական , իմ հոգիս զքեզ կը փրկատրուէ և զքեզ կընտրէ յաւիտեան : Հասլա եկու , ո՛վ Հոգիդ սուրբ , ու քու սիրովդ բորբոքէ մեր սիրտերը : Կամ սիրենք կամ մեռնինք : Արիչ ամէն սիրոյ մեռնինք ,

որպէս զի Յիսուսի սիրոյն կենդանի ըլ-  
լանք : Ո՛վ մեր հոգւոյ Փրկիչը , տուր որ  
յաւիտեան երգենք . Ողջ լեր Յիսուս , կը  
սիրեմ զՅիսուս . ողջ լեր Յիսուս , կը սի-  
րեմ զքեզ , կը սիրեմ զՅիսուս որ անմահ  
է , յաւիտեանս յաւիտենից , :

9. Այնչափ մեծ էր Յիսուսի ունեցած  
սէրը առ մարդիկ , որ իրեն փափաքելի  
կ'ընէր իր մահուանը ժամը , որպէս զի  
ցուցնէ մարդկանց թէ ինչ սէր ունի  
վրանին . ուստի իր կենդանութեանը ատեն  
կ'ըսէր <sup>1</sup> . իմ արեամբս պիտի մկրտ-  
տուիմ , ո՛հ որչափ փափաքս վառուած է  
որ չարչարանացս ժամանակը շուտ գայ ,  
որպէս զի անով մարդս շուտ իմանայ իմ  
իր վրայ ունեցած սէրս : Այնոր համար  
սուրբն Յովհաննէս այն գիշերուան վրայ  
խօսելով , յորում Յիսուս չարչարուիլ սկսաւ  
կը գրէ , Յիսուս գիտէր թէ իր ժամը հասեր  
է որ փոխադրուի աշխարհքէս ու առ Հայրն  
երթայ . իրեններն որ աս աշխարհքիս վրան

1 Մկրտութիւն մի ունիմ մկրտել , և  
զիանդ փութամ մինչև կատարեսցի :  
ՂԷ . ԺԲ . 50 :


49961-1-196ab  
(99-05175)



են սիրեց, մինչև վերջը սիրեց զանոնք<sup>1</sup> :  
 Փրկիչն մեր այն ժամը իրեն ժամը անուա-  
 նեց, ժամ նորա, վասն զի իր մահուանը  
 ժամանակը իրեն փափաքած ժամանակն  
 էր, որ այն ատենը կ'ուզէր մարդկանց ցու-  
 ցընել իր սիրոյն մեծագոյն ցոյցը, անոնց  
 համար ցաւերով հալած մաշած խաչի վրայ  
 մեռնելով :

10. Տայց ո՞վ էր որ հաւանեցուց Մտու-  
 ծոյ անարգութեամբ դատապարտուած  
 մեռնիլ երկու աւազակներու մէջ իր աս-  
 տուածային մեծ վայելչութիւնը այնպիսի  
 կերպով անարգուելով : “ Ա՞րար զայս ,,  
 կը հարցընէ սուրբն Քնոնարդոս, ու պա-  
 տասխան կուտայ . “ Սէրն արար, մոռա-  
 ցեալ զմեծութիւնն ,,: Ո՛հ, երբոր կ'ուզէ  
 սէրը ինք զինքը յայտնի ցուցընել՝ չի վրնա-  
 ուեր թէ սիրողին մեծութեանը ինչ կը վայ-  
 լէ, հասլայ այն որ աւելի զինքը իր սիրելոյն

1 Գիտաց Յիսուս թէ հասեալ է ժամ  
 նորա զի փոխեսցի յաշխարհէ աստի առ  
 հայր . սիրեաց զիւրան որ յաշխարհի աստ  
 են, ՚ի սպառ. սիրեաց զնոսա : Յովհ .  
 յԳ . 1 :



յայտնի կ'ընէ : Արեւմն իրաւամբք սուրբն  
Ֆրանչիսկոս Պաւլայեցի խաչելութիւնը  
տեսած ատենը կ'աղաղակէր . « Մի սէր ,  
նմ սէր , նմ սէր , » : Ասանկ ամէնքս ալ  
աչուրնիս խաչելեալ Յիսուսի դարձուցած  
պէտք էինք աղաղակել . նմ սէր , նմ սէր ,  
նմ սէր :

11 . Թէ որ հաւատքը զմեզ ապահով  
չընէր , ոմ կրնար հաւտալ թէ Աս-  
տուած ամենակարող , ամեներանեալ ու  
տէր ամենայնի՝ կամեցած ըլլայ այնչափ  
սիրել զմարդիկ որ ինքն իրմէն դուրս ելած  
երևնայ մարդկանց սիրոյն պատճառաւ :  
Օչոյն ինքն զեմաստութիւն , այս ինքն  
զհանն յախտնական տեսանք մարդ-  
կանց վրայ ունեցած սաստիկ սիրոյն պատ-  
ճառաւ իբրև խելքը գլխէն ելած , այս-  
պէս կ'ըսէր սուրբն Վարենտիոս Յուս-  
տինեան : « Աոյն բանը ըսաւ սրբուհին Մա-  
րիամ Մագդաղենայի Քաջեան որ մը ,  
որ միտքը վերացած ըլլալով ձեռքը փայտէ  
խաչելութիւն մը առաւ ու սկսաւ աղա-  
ղակել . « Այո , Յիսուս իմ , վասն սիրոյ  
խելքդ կորսընցուցեր ես . կ'ըսեմ և միշտ

պիտի ըսեմ վասն սիրոյ խելքդ կորսնցուցեր ես, Յիսուս իմ,, : “ Բայց չէ, կըսէ սուրբն Ղիզոնիսու Արիստակազային, յիմարութիւն չէ, հապա աստուածային սիրոյն սովորական ազդեցութիւնն է սիրողը իրմէն դուրս հանել, որպէս զի զինքը բոլորովին սիրելոյն տայ ,, :

12. Ո՛ր էր որ մարդիկ խաչելեալ Յիսուսը տեսնալով կենային մտածէին թէ ամէն մէկուն վրայ ինչ սէր ունեցեր է . “ Աւ որպիսի՛ սիրով չէինք բորբոքեր, կըսէ սուրբն Քրիստոսիսու Սալէղեան, տեսնալով այն բոցը որ Փրկչին սրտին մէջ կը վառի : Աւ ո՛հ, ի՛նչ բարեբախտութիւն է կարենալ մի և նոյն բոցովը բորբոքիլ, որով որ Աստուած մեր բորբոքած է : Աւ ի՛նչ ուրախութիւն Աստուծոյ հետ միացած ըլլալ սիրոյն կապանօքը ,, : Սուրբն Բոնաւինդուրա Յիսուսին վէրքերը կ’անուանէր վէրք որ կը վերաւորեն աւելի անզգայ սիրտերը, և կը բորբոքեն աւելի սառած սիրտերը : Քանի՛ քանի սիրալիր սրբքներ կը թուչին այն վէրքերէն, ու աւելի խիստ սիրտերը կը վերաւորեն : Որ-



պիսի բոցեր կ'եղան Յիսուսի բորբոքած  
 սրտէն ու աւելի պաղ սիրտերը կը վառեն :  
 Ո՛րչափ կասկանք սիրոյ կ'եղան այն պա-  
 տառեալ կողէն ու աւելի անսանձ սիր-  
 տերը կը կասկեն :

13 . Արանաշնորհն Յովհաննէս Աւի-  
 լեան , որ այնչափ Յիսուսի սիրովը վա-  
 ոռւած էր , որ իր ամէն քարոզներուն մէջ  
 Յիսուսի մեր վրայ ունեցած սիրոյն վրայ  
 կը խօսէր , սիրելոյ Փրկչին մարդկանց  
 վրայ ունեցած սիրոյն վրայ ճառի մը մէջ  
 այս սիրաբորբոք իմաստները գրեց , որ  
 այնչափ գեղեցիկ են որ կ'ուզեմ հոս տեղս  
 յիշել : Այսպէս կըսէ .

14 . “ Դու միլ Փրկիչ , այնպիսի կեր-  
 ,, պով սիրեցիր զմարդը , որ ուլ որ մտա-  
 ,, ծէ այս սէրը չիկրնար չիսիրել զքեզ .  
 ,, վասն զի քու սէրդ զսիրտերը կը բռնա-  
 ,, դատէ , ինչպէս որ կ'ըսէ Առաքեալը թէ  
 ,, Սէրն Վրիստոսի ստիպէ զմեզ : Յի-  
 ,, սուսի առ մարդիկ ունեցած սիրոյն աղ-  
 ,, բիւրն է իր առ Աստուած ունեցած սէ-  
 ,, րը : Անոր համար ընթրեաց հինգշաբ-  
 ,, թին ըսաւ . Օ՛ի ծանխցէ աշխարհ

,, կթէ սիրեմ զՀայր , զն արիք , գնաս  
 ,, ցուք աստի : Բայց ո՞ր : Մարդկանց  
 ,, համար խաչի վրայ մեռնելու :

15 . ,, Չիկայ միտք մը որ հասնի թէ այս  
 ,, հուրը որչափ բորբոքած է Յիսուսի սրբ  
 ,, տին մէջ : Ինչպէս որ իրեն հրաման եղաւ  
 ,, որ միանգամ մեռնիլ յանձն առնու , ա  
 ,, սանկ թէ որ իրեն հրամայուած ըլլար  
 ,, որ բիւր անգամ մեռնի , այնչափ սիրով  
 ,, վառուած էր՝ որ բոլոր յանձ կառնուր :  
 ,, Այս այն որ իրեն հրամայուած էր բո  
 ,, վանդակ մարդիկներու համար յանձն  
 ,, առնուլ , թէ որ մէկ մարդու մին ալ  
 ,, փրկութեանը համար հրամայուէր՝ նոյն  
 ,, պէս կը շարժարուէր ամէն մէկուն հա  
 ,, մար զատ զատ , ինչպէս որ ըրաւ ամէ  
 ,, նուն համար միանգամայն : Այս ինչպէս  
 ,, որ իրեք ժամ խաչին վրայ մնաց , թէ  
 ,, որ հարկաւոր ըլլար հոն խաչին վրայ  
 ,, մնալ մինչև դատաստանին օրը , այնչափ  
 ,, սէր ունէր սրտին մէջը որ այն ալ կը  
 ,, կատարէր : Ասանկ որ Յիսուս շատ ա  
 ,, լելի սիրեց քան թէ շարժարուեցաւ :  
 ,, Ա՛յ սէր աստուածային , որչափ աւելի

,, մեծ էիր քան զոր արտաքուստ երևցար .  
 ,, վասն զի այնչափ խոցեր ու վէրքեր մեծ  
 ,, սէր մը մեզի կը քարոզեն , բայց բոլոր մե  
 ,, ծութիւնը չեն բացատրեր . բայց դուր  
 ,, սէն երևցածէն շատ աւելի էր ներքին  
 ,, սէրը : Այն անհուն սիրոյ մեծ ուլկիա  
 ,, նոսին կաթիլ մըն էր որ դուրսէն երև  
 ,, ցաւ : Այս է սիրոյ մեծ նշանը որ մէկը  
 ,, իր բարեկամացը համար կեանքը տայ .  
 ,, բայց Յիսուսի սէրը բացատրելու համար  
 ,, բաւական չէր այս նշանը :

16 . ,, Այս է այն սէրը որ երանելի  
 ,, հոգիք իրենք իրենցմէ դուրս կը հանէ ,  
 ,, և սոսկացած կը թողու զիրենք երբոր  
 ,, կարենան խելուրնին հասցընել : Ասկէց  
 ,, առաջ կու գայ որ կարծին թէ ներսերնին  
 ,, կերի , մարտիրոսութեան կը փափաքին ,  
 ,, չարչարուելու ատեն կ'ուրախանան , հրա  
 ,, ցեալ կասկարայներու վրայ կը ցընծան ,  
 ,, կրակի կայծականց վրայ վարդերու նման  
 ,, ժուռ կու գան , այն բանով կը զուարճա  
 ,, նան ուսկից որ աշխարհք կը վախնայ ,  
 ,, անոր կը փափաքին ուսկից որ աշխարհք  
 ,, կը սոսկայ : Աւերն Ամբրոսիոս կ'ըսէ

„ թէ այն հողին որ խաչելիալ Յիսուսի  
 „ հարսնացեալ է ուրիշ բան այնպէս փա-  
 „ ռաւոր չիսեպեր, ինչպէս վրան կրել  
 „ խաչեցելոյն նշանները :

17 . „ Ո՛վ սիրողդ իմ, ի՞նչպէս կըր-  
 „ նամես քու այս սիրոյդ փոխարէնը հա-  
 „ տուցանել : Ա՛րժան է որ արեան փոխա-  
 „ րէնը արինն ըլլայ : Ա՛յս արեամբը ներ-  
 „ կուած ըլլամ, և այս խաչին վրայ բեւ-  
 „ ռած : Ո՛վ սուրբ խաչ, զիս ալ ընդունէ  
 „ քու վրադ : Ո՛վ փշեայ սլտակ լայնցիր  
 „ որպէս զի իմ գլուխս ալ մջդ խոթեմ :  
 „ Ո՛վ բեհօք, թողուցէք Տեառն իմոյ այդ  
 „ անմեղ ձեռուքները, և ցաւակցութեամբ  
 „ և սիրով իմ սիրտս թափանցեցէք : Ա՛նոր  
 „ համար, կ'ըսէ Պօղոս Առաքեալ, մեռար  
 „ Յիսուս իմ, որ տիրես կենդանեաց ու  
 „ մեռելոց չէ թէ պատուհասիւ, հապա  
 „ սիրով : “ Քանզի 'ի նոյն իսկ և Քրիս-  
 „ տոս մեռաւ և եկեաց, զի մեռելոց  
 „ և կենդանեաց առ հասարակ տիրես-  
 „ ցէ <sup>1</sup> :

18. ,, Մ՛վ աւազակ սրտից , քու սիրոյդ  
 ,, բռնութիւնը մեր այնպիսի խիստ սիրտերն  
 ,, ալ կտոր կտոր ըրաւ : Քու սիրովդ բոր  
 ,, բոքեցիր բոլոր աշխարհք : Մ՛վ ամենա  
 ,, սիրելի Տէր , այս գինւովը արբեցուր մեր  
 ,, սիրտերը , այս սիրովը բորբոքէ զանոնք ,  
 ,, քու սիրոյդ այս վէրքերովը վերաւորէ  
 ,, զանոնք : Այս քու խաչդ բաղնատը մըն  
 ,, է , որ զսիրտերը կը վերաւորէ : Ճող  
 ,, բոլոր աշխարհք գիտնայ որ իմ սիրտս  
 ,, վերաւորուած է : Մ՛վ ամենաբաղցր սէր  
 ,, իմ , ի՛նչ ըրիր : Ակեր էիր որ զիս բժշ  
 ,, կես , բայց վերաւորեցիր զիս : Ակեր էիր  
 ,, որ ինձի ապրիլ սորվեցրնես , բայց զիս  
 ,, խնթ դարձուցիր : Մ՛վ ամէնիմաստուն  
 ,, յիմարութիւն , ո՛հ , չը լայ թէ ես եր  
 ,, բէք առանց քեզի ապրիմ : Տէր իմ ,  
 ,, խաչին վրայ ինչ որ կը տեսնամ՝ ամէն  
 ,, ալ սիրելու զիս կը յորդորեն , փայտը ,  
 ,, ձեւը , քու մարմնոյդ վէրքերը , և ՚ի վեր  
 ,, քան զամենայն քու սէրդ զքեզ սիրելու  
 ,, զիս կը յորդորէ , և ոչ երբէք մոռնալու  
 ,, զքեզ , :

19 . Բայց Յիսուսի կատարեալ սիրոյն

համնելու համար ճամբան պէտք է գիտնալ : Ահա ախի սրբոյն թափնառու Ազուխնացոյն սորվեցուցած ճամբան <sup>1</sup> :  
 'Նախ՝ շարունակ յիշել Աստուծոյ ընդհանուր ու մանաւոր բարերարութիւնները : Արիւորդ՝ Աստուծոյ անհուն բարութիւնը մտածել, որ միշտ մեզի բարիք ընելու հետ է, և միշտ կը սիրէ զմեզ ու մեզմէ կ'ուզէ մեր սէրը : Արիւորդ՝ ամենայն ջանքով իրեն տհաճելի ամենամանր բանէն ալ զզուշանալ : 'Զորիւորդ՝ այս աշխարհքիս ամէն զգալի բարիքներէն հրաժարիլ, հարբատութենէ, պատուէ, զգայարանաց զուարճութենէն : Հայրն Տաւերոս կ'աւելցրնէ թէ Յիսուսի կատարեալ սէրը ստանալու համար շատ լաւ ճամբայ է իրեն չարչարանալը վրայ մտածական ընելը :

20 . Ո՞վ կ'ընայ ուրանալ թէ Յիսուսի չարչարանաց ջերմեռանդութիւնը ամէն ջերմեռանդութիւններէն աւելի օգտակար, աւելի սրտաշարժ ու Աստուծոյ աւելի սիրելի ջերմեռանդութիւն է, այս ջերմ

1 Յաղագս սիրել. Աստուծոյ. յօդ. 1 :

ետանդութիւնը աւելի կը բորբոքէ սի-  
 բողաց հոգին : Այնչափ բարիք մենք  
 ուսկից կ'ընդունինք , բայց եթէ Յիսուսի  
 չարչարանքէն . ուսկից ունինք թողու-  
 թեան յոյս , փորձութեանց դէմ արիու-  
 թիւն , վստահութիւն արքայութիւն եր-  
 թալու . ուսկից ճշմարտութեանց այնչափ  
 լոյս , այնչափ սիրայորդոր քաջալերութիւն ,  
 այնչափ խրախոյս վարքերնիս փոխելու ,  
 այնչափ փափաք զմեզ Աստուծոյ տալու ,  
 բայց եթէ Յիսուսի չարչարանքէն : Ու-  
 բեմն շատ իրաւունք ունի սուրբ Առա-  
 քեալը որ նզոված կը կոչէ ուլ որ զՅի-  
 սուս չիտիրեր : “ Այժմ որ ոչ սիրէ զտէր  
 Յիսուս , եղիցի նզովեալ , մարանաթա<sup>1</sup> , ” :

21 . Սուրբն Բոնաւենդուրա կ'ըսէ թէ  
 հոգին սրբազործելու աւելի յարմար ջերմ-  
 ետանդութիւն չիկայ քան զՅիսուսի չար-  
 չարանաց մտածութիւնը . անոր համար  
 խրատ կու տայ մեզի որ ամէն որ Յիսուսի  
 չարչարանքը մտածենք թէ որ Աստուծոյ  
 սիրայն մէջ յառաջագիմնութիւն ընել կը

1 Ա . Կոր . Ժ. 2 . 22 :

փափաքինք : Աւ անկէց առաջ սուրբն  
 Օգոստինոս ըսաւ , ինչպէս որ կը յիշէ  
 Ռուստիս , թէ չարչարանաց յիշատակաւը  
 թափած արցունքի կաթիլ մը աւելի կ'ամէ-  
 քան թէ հացով միայն շաբաթն 'ի բուն  
 ծով'պահել : Անոր համար սուրբերը միշտ  
 Յիսուսի չարչարանքները կը մտածէին .  
 սուրբն Ֆրանչիսկոս Ասիզացի այս ճամ-  
 բով սերօքէ մը դարձաւ : Ազնուական մը  
 օր մը տեսաւ որ կու լար ու բարձր ձայնով  
 կ'ողբար . “ Ինչո՞ւ կու լաա ,” հարցուց . սուր-  
 բը պատասխան տուաւ . “ Այո լամ իմ  
 տիրոջս ցաւոց ու նախատանացը վրայ . և  
 այն է որ զիս աւելի կը լացնէ որ մար-  
 դիկ , որոնց համար ինքը այնչափ չարչա-  
 րանք քաշեց , ամենևին չեն յիշեր ,” : Այս  
 ըսելով աւելի սաստկացուց արցունքը  
 անանկ որ ազնուականն ալ սկսաւ լալ :  
 Արբոր սուրբը գառան մը մնայելը կը  
 լսէր , յամ ուրիշ բան մը տեսնար որ  
 Յիսուսի չարչարանքը միտքը բերէր , մէկէն  
 'ի մէկ կը սկսէր լալ : Աւրիշ անգամ մ'ալ  
 հիւանդութեան ատենը՝ մէկը իրեն ըսաւ  
 որ հոգևոր դիրք մը կարդալ տայ : Պա-



տասխան տուաւ սուրբը , թէ “ Իմ գիրքս  
խաչելեան Յիսուս է , ” : Անոր համար  
ուրիշ բան չէր ըներ բայց եթէ իր եղբարքը  
յորդորել որ միշտ Յիսուսի շարչարանքը  
մտածեն : Դիէբոլի կը գրէ թէ “ Ով որ  
Աստուծոյ սիրով չիբորբոքիր Յիսուս խա-  
չի վրայ մեռած տեսնալով , ոչ երբէք այն-  
պիսին սէր կրնայ զգալ , ” :

ԻՂԶԻ ԵՒ ՊԱՂԱՏԱՆԻ

Ով Քան յաւիտենական , երեսունուի-  
րեք տարի քրտինքով ու նեղութեամբ ան-  
յուցիր , մարդիկ փրկութեան հասցնելու  
համար արիւնդ՝ կեանքդ տուիր , վերջա-  
պէս մարդկանց սիրելի ըլլալու համար  
բանի մը շնորհակցիր . իսկ մարդիկ ինչ  
կ'ընեն որոնք այս ամէն բան գիտեն ու  
զքեզ չեն սիրեն : Վայ ինձ , այս ապի-  
րախտներուն մէկն ալ ես եմ : Արձանչեամ ,  
Յիսուս իմ , թէ քեզի ինչ անարգանք  
ըրի , ողորմէ ինձի : Այս ապերախտ  
սիրտս ես քեզի կը նուիրեմ . իրաւ ապե-

բախա է, բայց զզջական : Այո, ամէն  
բանէն աւելի ասոր վրայ կը զղջամ, Փրկիչ իմ,  
որ զքեզ արհամարհեցի : Բոլորով սրտիւ  
կը զղջամ, ու զքեզ կը սիրեմ : Անձն իմ,  
սիրէ զԱստուած քո՝ որ քեզի համար իբրև  
սարսուտը կապուեցաւ, զԱստուած քո՝  
որ քեզի համար իբրև գերի ծեծ կերաւ,  
զԱստուած քո՝ որ քեզի համար կատակա-  
նայ թաղաւոր եղաւ, զԱստուած քո՝ որ  
քեզի համար իբրև չարագործ խաչի վրայ  
մեռաւ : Այո, Աստուած իմ, Փրկիչ իմ,  
կը սիրեմ՝ կը սիրեմ՝ զքեզ : Վաղաչեմ միշտ  
յիշեցու ինձի թէ՛ սրչափ չարչարանք քա-  
շեցիր ինձի համար, որպէս զի զքեզ սիրել  
չիմոռնամ : Վիշուան, որով Յիսուս կա-  
պուեցաւ, կապէ զիս Յիսուսին հետը. նմ  
փուշ, որով Յիսուս սրակեցաւ, վիրաւորէ  
զիս Յիսուսին սիրովը. նմ բեւեռներ, ու  
բուլք Յիսուս բեւեռեցաւ, բեւեռեցէք զիս  
Յիսուսին խաչին, որպէս զի Յիսուսին  
հետ միացեալ ապրիմ ու մեռնիմ : Վի  
արիւն Յիսուսի, արբեցո զիս սուրբ սի-  
րով : Վի մահ Յիսուսի, մեռցու զիս  
ամէն երկրաւոր ախորժակներէ : Օսկո

տեալ Յիսուսի ոտուրները, ձեզի պըլ-  
լուած կ'աղաչեմ ազատեցէք զես դժոխքէն՝  
որուն որ արժանի եղայ : Յիսուս իմ,  
դժոխքին մէջ չէի կրնար զքեզ սիրել,  
բայց ես կը փափաքիմ միշտ սիրել զքեզ :  
Սիրեցեալ Փրկիչ իմ, ազատէ զես, քեզի  
հետ սնդէ զես, ու մի թողուր որ մէյ  
մ'ալ զքեզ ես կորսընցընեմ :

Ո՛վ ապաւէն մեղաւորաց Մարիամ,  
Մայր Փրկչին իմոյ, օգնեա մեղաւորիս,  
որ կը փափաքիմ սիրել զՄատուածն իմ,  
ու քեզի կ'ապաւինիմ, օգնէ ինձի այն սի-  
րոյն համար, որով սիրեցիր զՅիսուս :



## ԳԼՈՒԽ Բ .

Ո՛րչափ արժանի է որ սիրենք զՅիսուս  
այն սիրոյն համար՝ որն որ մեր  
վրայ ցուցուց առիթ Հաղորդութեան  
խորհուրդը հաստատուելով :

1. Ամենասիրելի Փրկիչն մեր գիտնալով  
որ ալ ատենն հասեր էր որ այս աշխարհ-  
քէս երթայ, մեռնելու երթալէն առաջ՝ ու-  
զեց իր սիրոյն մեծագոյն նշանն որ կրնար՝  
Թողուլ մեզի <sup>1</sup>, և է պարզե ամենատուր  
Խորհրդոյն : Սուրբն Բեռնարդինոս Սի-  
նային կրտէ, որ մեռնելու ատեն ցու-  
ցուած սիրոյն նշանները աւելի հաստատ  
միտք կը մնան ու աւելի սիրելի կը սե-  
պուին : Անոր համար սովորութիւն է  
որ բարեկամք մեռնելու ատեն անոնց որ  
իրենց կենդանութեան ատենը սիրած են,  
պարզե մը կը Թողուն, զգեստ մը եղեր

1 Գիտաց Յիսուս՝ Թէ հասեալ է ժամ  
նորա զի փոխեսցի յաշխարհէ աստի առ  
Հայր, սիրեաց զիւրան . . . 'ի սպառ սի-  
րեաց զնոսա : Յովհ . ԺԴ . 1 :

է, մատնի մը եղեր է, իրենց սիրոյն յիշատակ: Բայց դու, Տէր իմ Յիսուս, այս աշխարհքէս երթալու ատենդ ի՞նչ թողուցիր մեզի քու սիրոյդ յիշատակ: Չէ՛ թէ զգեստ մը, կամ մատնի մը, հապաքու մարմինդ, քու արիւնդ մեզի թողուցիր. քու աստուածութիւնդ, բոլոր զքեզ, ու քեզի բան մը չհապահեցիր: “ Բռվանդակ զինքը տուաւ, կ'ըսէ սուրբն Յովհանն Սոսկեբերան, իրեն բան մը չհապահեց ”:

2. Տրիտենդեան սուրբ ժողովքը կըսէ թէ Յիսուս այս սուրբ հաղորդութեան սարգևովը իր մարդկանց վրայ ունեցած սիրոյն ամէն մեծութիւնը գրեթէ դուրսէն ցուցընել ուզեց<sup>1</sup>: Այս սուրբ Առաքեալը կ'ըսէ՝ թէ այս սարգէլը Յիսուս այն գիշերը ըրաւ, յորում որ մարդիկ իրեն մահ կը պատրաստէին<sup>1</sup>: Սուրբն Բեռնարդոս Անա-

1 Նիստ . ԺԳ . ԳԼ . Բ :

2 Տէր Յիսուս ՚ի գիշերին յորում մատնէր, առ հաց . գոհացաւ, եբեկ և ասէ, այս է մարմին իմ, որ վասն ձեր: Ա . Կոր . ԺԱ . 23 . 24 :

յին կ'ըսէ, թէ Յիսուս մեր վրայ սիրով  
 վառուած ըլլալով, և բաւական չխտակելով  
 իր կեանքը մեզի համար տալը, մեռնելէն  
 առաջ իր սիրոյն սաստկութենէն ստիպուե-  
 ցաւ մէկ մեծ դորձք մը ընել, որ է նոյն  
 խակ իր մարմինը կերակուր տալ մեզի :

3. Արեւմն սուրբն թաղմաս այս խոր-  
 հուրդը շատ լաւ անուանեց Խորհուրդ <sup>սիրոյ</sup>  
 սիրոյ, Գրաստական սիրոյ : Խորհուրդ սիրոյ՝  
 վասն զի սէրը միայն առաջնորդեց Յիսու-  
 սին այս խորհրդովս բոլոր ինքզինքը մեզի  
 սրարգևելու : Գրաւական սիրոյ՝ որպէս զի  
 թէ որ երբէք երկբայութիւն ունեցած ըլ-  
 լայինք իր սիրոյն վրայ, այս խորհրդովս իր  
 սիրոյն գրաւականը ընդունինք. որպէս թէ  
 Փրկիչն մեր այս սրարգևը մեզի տալու ա-  
 տենը ըսած ըլլար • Ա՛յլ հոգիք, թէ որ  
 իմ սիրոյս վրայ կը տարակուսիք, ահա-  
 ւասիկ ես զիս ձեր ձեռքը կը թողում այս  
 խորհրդովս, այս գրաւականը ձեռուրնիդ  
 ունենալով ալ չէք կրնար տարակուսիլ  
 թէ զձեզ ես կը սիրեմ և շատ կը սիրեմ :  
 Բայց դարձեալ սուրբն Բեռնարդոս այս  
 խորհուրդը «էր սիրոյ անուանեց, վասն զի

այս պարզեիս մէջ ուրիշ ամէն պարզե-  
 ներն որ Աստուած մեզն ըրեր է, ստեղ-  
 ծումը, փրկութիւնը, ՚ի փառս նախա-  
 տահանութիւնը կը բովանդակուի . վասն  
 զի սուրբ Հաղորդութիւնը չէ թէ միայն  
 Յիսուսի սիրոյն զբաւականն է, հապա  
 նակ զբաւական արքայութեանն որ կ'ուզէ  
 տալ մեզն . “ Յայսմ հանդերձելոցն փա-  
 ռաց պարզեի մեզ առհաւատչեայ ,, կ'ըսէ  
 սուրբ Աղեղեցին : Անոր համար սուրբն Փի-  
 լիպոսս “ Աերեան զՅիսուս ՚ի խորհրդեան՝  
 «Իրոյ անուամբ միայն կրնար յիշել և ոչ եր-  
 բէք ուրիշ կերպով մը . և երբոր սուրբ  
 թողակը իրեն տարին, այսպէս կ'աղա-  
 ղակէր . “ Ահա իմ սէրս . տուէք ինձի իմ  
 սէրս ,, :

4. Առգէր Ասայի մարգարէ որ ամենուն  
 յայտնի ըլլան այն սիրայորդոր հնարքներն  
 որ Աստուած մարդիկներուն սիրելի ըլլալու  
 համար հնարեր էր : Ալ ո՞վ երբէք կրնար  
 մտածել թէ որ ինքն Աստուած ըրած չըլ-  
 լար՝ որ մարմնացեալ Քանն հացի տեսակին  
 տակ ծածկուի որպէս զի մեզն կերակուր ըլ-  
 լայ : Արթի յիմարութիւն շնորհնար, կ'ըսէ

սուրբն Օգոստինոս , ըսել՝ իմ՝ մարմինս  
կերէք , իմ՝ արիւնս խմեցէք : Արքոր Յի-  
սուս իր աշակերտացը յայտնեց որ այս  
սուրբ խորհուրդը կ'ուզէր մեղի աւանդել ,  
չէին կրնար հաւտալ , և ոմանք իրմէն ետ  
քաշուեցան ըսելով . “ Օ՛, իա՛րդ կարէ սա  
տալ մեզ զմարմին իւր յուտել : Խիստ է  
բանդ այդ , ո՞վ կարէ ըսել դմա <sup>1</sup> , ” : Բայց  
այն բանն որ մարդկանց խելքը չէր հաս-  
նէր , ու չէին կրնար հաւտալ , մտածեց  
ու կատարեց Յիսուսին սէրը : “ Ա՛ռէք և  
կերայք ,” ըսաւ իր աշակերտացը , ու անոնց  
ձեռքով մեղի ամենուս՝ իր մեռնելու երթա-  
լէն առաջ : Ա՛ռէք ու կերէք . բայց այդ որ-  
պիսի կերակուր է , ո՞վ Փրկիչ աշխարհի ,  
որ մեռնելէդ առաջ կ'ուզէս մեղի տալ :  
“ Ա՛ռէք և կերայք , այս է մարմին իմ ,” :  
Արկրաւոր չէ այս կերակուրը . ես եմ որ  
զիս բոլոր ձեզի կու տամ :

Տ . Այլ որպիսի փառաբանօք կը ցանկայ  
Յիսուս մեր սիրտը գալու սուրբ հաղորդու-  
թեամբ : Փառաբելով փառաբեցայ այս սլա-



տեքը ձեզի հետ ուտելու<sup>1</sup> : Այն գիշերը յուրում որ զայս սիրոյ խորհուրդը հաստատեց այսպէս ըսաւ . Յանկանալով ցանկացայ . այսպէս իրեն ըսել կու տայ, կ'ըսէ սուրբն Ալարենտիոս Յուստինեան , այն անհուն սէրն որ մեր վրայ ունէր . “ Չայն է այս բորբոքեալ սիրոյ ,” : Աւ որպէս զի ամէնքը զինքը դիւրաւ կարենան ընդունիլ , հացի տեսակաւ ուզեց մնալ . իսկ թէ որ դժուարագիւտ կամ ծանրագին կերակրոյ մը տեսակաւ մնալ ուզած ըլլար , աղքատները անկէց զուրկ կը մնային . բայց չէ . Յիսուս ուզեց հացին տեսակաւ ծածկուիլ , որ դիւրագին է , ու ամէն տեղ կը գտնուի , որպէս զի ամէնքը ամէն տեղ կարենան զինքը գտնալ ու ընդունիլ :

6 . Աւ որպէս զի մենք ալ փափաքինք սուրբ հաղորդութեամբ զինքը ընդունելու , չէ թէ միայն շատ տեսակ հրաւիրանքներով կը յորդորէ զմեզ այս երկնային հա-

1 “ Յանկանալով ցանկացայ զայս պատեք ուտել ընդ ձեզ ,” : Առկ . ԻԲ . 15 :

յի ու զինւոյն վրայ խօսելով . “ Ահէք իմ  
 Հացէս կերէք , ու իմ զինիս խմեցէք , որ  
 ձեզի Համար սպտորաստեցի ,”<sup>1</sup> . “ Իմ բա-  
 րեկամներս , կերէք ու խմեցէք ,”<sup>2</sup> . Հասրա  
 նաև սպատուիրանով հրաման կու տայ մե-  
 զի . “ Առէք և կերայք , այս է մարմին  
 իմ ,” : Ալ աւելին ալ կ'ընէ . որպէս զի եր-  
 թանք զինքը ընդունինք , կը համոզէ զմեզ  
 արքայութեան խոստմունքովը . “ Այլ որ  
 զիս կ'ուտէ , յաւիտենական կեանքը կ'ու-  
 նենայ ,”<sup>3</sup> . “ Այլ որ այս հացէս կ'ուտէ , յա-  
 վիտեան կենդանի պիտի մնայ<sup>4</sup> ,” : Ալ ա-  
 վելին . արքայութենէ զրկելով դժոխք կը  
 ստլառնայ մեզի՝ թէ որ չուզենանք հաղոր-  
 դուիլ . “ Թէ որ որդւոյ մարդոյ մարմինը

1 Եկայք կերայք ՚ի հացէ իմմէ և ար-  
 բէք զգինի իմ , զոր խառնեցի ձեզ : Ա-  
 ուակ . Թ . 5 :

2 Կերայք , մերձաւորք իմ , և արբէք :  
 Երգ երգոց . Ե . 2 :

3 Որ ուտէ զմարմին իմ , ունի զկեանս  
 յաւիտենականս : Յովհ . 2 . 55 :

4 Որ ուտէ զհացս զայս՝ կեցցէ յաւի-  
 տեան : Անդ . 59 :

չուտէք , կեանք չէք ունենար ,, <sup>1</sup> : Այս  
հրաւերքը , այս խոստումները , այս  
սպառնալիքները բողոքն ալ առաջ կու գան  
այն իր մեծ փափաքէն որ ունի այս խոր-  
հրդովը մեզի գալու :

7. Նայց ինչո՞ւ համար Յիսուս այն-  
չափ կը փափաքի որ զինքը սուրբ հաղոր-  
դութեամբ ընդունինք . ահա այս է սլառ-  
ճառը : Սուրբն Դիոնեսիոս կ'ըսէ՝ թէ սե-  
րը միշտ միանալու կը փափաքի ու կը դի-  
մէ . ինչպէս որ սուրբ Թովմաս ալ կ'ըսէ .  
“ Սիրողք կը փափաքին որ երկուքնին մէկ  
ըլլան ,, : Նարեկամբ՝ որ սրտանց իրար կը  
սիրեն , այնպէս իրարու միանալ կը փա-  
փաքին՝ որ իբրև թէ մէկ մարդ եղած ըլ-  
լան : Այս բանս ըրաւ Աստուծոյ առ  
մարդիկ անհուն սէրը՝ որ չէ թէ միայն  
յաւիտենական կենօք ինք զինքը բողոքովին  
անոնց տայ , հապա թող տայ որ այս աշ-  
խարհքիս փայ ալ որչափ որ կարելի է ներ-  
քին միութեամբ մարդիկ զինքը ժառանգեն

1 “ Եթէ ոչ կերիջիք զմարմին որդւոյ  
մարդոյ , ոչ ունիք կեանս յանձինս :  
Յովհ . 2 . 54 :

ինքը զինքը բոլորովին անոնց տալով այս սուրբ խորհրդովս հացին երևութին տալը : Հոս իբրև պատի մը հոս կեցած է ինքը , անկէջ իբրև խիս վանդակներէ մը մեզի կը նայի <sup>1</sup> : Իրաւ է որ մենք զինքը շնք տեսնար , բայց ինքը անկէջ մեզի կը նայի , և իրապէս ներկայ է . ներկայ է՝ որպէս զի թոյլ տայ մեզի որ զինքը ժառանգենք . բայց կը պահուրտի՝ որպէս զի իրեն փափաքինք . և մինչև որ մեր հայրենիքը հասնինք՝ Յիսուս կ'ուզէ ինք զինք բոլորովին մեզի տալ , ու մեզի հետ բոլորովին միացած մնալ :

Տ . Իրեն սէրը դո՛հ չեղաւ ինքը զինքը բոլոր մեզի տալ մարդ ըլլալով և մինչև 'ի մահ չարչարանք քաշելով ամէն մարդկանց համար , հասրա մտածեց ալ թէ ինչպէս կարելի է որ ամէն մէկուն ալ ամբողջ ինքը զինքը տայ . և այս բանիս համար հաստատեց սուրբ սեղանին խորհուրդը , որով

<sup>1</sup> Ահաւասիկ սա եկաց յայնկոյս որմոյն մերոյ , կարկառեալ ընդ պատուհանս , հայեցեալ ընդ վանդակապատան : Երգ . Բ . 9 :

ամէն մէկերնուս հետ կը միանայ : “ Այլ որ խմ մարմինս ուտէ, կ'ըսէ ինքը, անիկայ յիս կը բնակի և ես անոր մէջը ,”<sup>1</sup> : Սուրբ հաղորդութեան մէջ Յիսուս հողւոյն հետ կը միաւորի և հողին Յիսուսի հետ . և այս միութիւնը ոչ եթէ պարզ սիրոյ միութիւն է, այլ ճշմարիտ և ստոյգ միութիւն : Այս բանիս համար կ'ըսէ սուրբն Քրանչիսկոս Սալէզեան թէ Յիսուս Քրկիչ այնպէս գլխաւից և սիրելի ուրիշ բանի մէջ չերևար, ինչպէս երբ ինքը զինքը կ'ունայնացնէ, թէ որ կարենանք ըսել, և կերակուր կ'ըլլայ մեր հողին մտնելու և իր հաւատացելոց սրտին հետ միանալու : Այլ սուրբն Ռսկեբերան, թէ Յիսուս Քրիստոս իր մեր զրայ ունեցած մեծաբորբոր սիրովն այնպէս ուզեց մեզի հետ միանալ, որ իրեն հետ մէկ ըլլանք : “ Ինք զինք մեզի հետ միացուց, կ'ըսէ, որպէս զի իրեն հետ մէկ ըլլանք . և ու այս բանս շատ սիրականներու գործք է ,” :

<sup>1</sup> Ար ուտէ զմարմին խմ, յիս բնակեացէ և ես ՚ի նմա : Յովհ . 2 . 57 :

9. Միտլ բանիւ, կ'ուզես, սիւ Աստուած սիրող հոգւոյ մերոյ, կ'աղաղակէ սուրբն Վարենտիոս Յուստինեան, կ'ուզես այս խորհրդով մեր սիրտը քու սրտիդ հետ անբաժանելի կերպով միացընել, մէկ սիրտընել: Իսկ սուրբն Բեռնարդինոս Մենացի ալ կ'ըսէ. Յիսուսի Քրիստոսի սիրոյն վերջին աստիճանն եղաւ ինքը զինքը կերակրոյ սէս մեզի տալը. վասն զի այնպէս ասով ընդ մեզ կը միանայ, ինչպէս կերակուրը ուտողին հետ: Բանքէ, որչափ հաճոյական է եղիք Յիսուսի մեր հոգւոյն հետ միացեալ կենալը: Ենդամ մը իր սիրելի աղախնոյն Իպրեսացի Մարգարիտային հաղորդութենէն վերջը այսպէս ըսաւ. Տես, դուստր իմ, ինչ գեղեցիկ միութիւն եղաւ մեր մէջը. սիրէ զիս ուրեմն, որ այսպէս սիրով կապուած մնանք, և մէյ մ'ալ չսաճնուինք:

10. Եսկէ պէտք է խմանալ որ չկրնար աւելի հաճոյ բան մը ընել մէկը Յիսուսի. և ոչ իսկ կարող է մտածել քան զայս, որ երթայ հաղորդութի և հիւրընկալէ իր սիրտը պատշաճ սպաստութեամբ այնպիսի

սիրիցեալ Տէր մը և անոր հետ միանայ :  
 Պատշաճ պատրաստութեամբ ըսի և ոչ աբ-  
 շանի . վասն զի եթէ արժանաւոր պատ-  
 րաստութիւն փնտռուէր , ո՞վ պիտի կարե-  
 նար հաղորդուիլ . բայց եթէ ինքն ալ ուրիշ  
 Լստուած մը ըլլար : Իսկ պատշաճապէս  
 ըսելով կ'իմանամ ինչ պատրաստութիւն  
 որ խեղճ արարածոյ մը ձեռքէն կու գայ  
 որ ադամային մարմին զգեցած է : Սո-  
 վորաբար խօսելով՝ բաւական է որ շնոր-  
 հաց մէջ գտուի այն անձը , և փափաք  
 ունենայ Յիսուսի սէրը աւելի արծարծե-  
 լու : Միայն սիրոյ համար ընդունելու է  
 սուրբ հաղորդութեամբ զՅիսուս , կ'ըսէր  
 սուրբն Իրանչիսկոս Սալեղեան . որովհե-  
 տև ինքն ալ միայն սիրոյ համար ինքը զին-  
 քը մեղի կու տայ : Իսկ թէ մարդ որչափ  
 անգամ այս սուրբ խորհրդոյն պիտի մեր-  
 ձենայ , սէտք է իւրաքանչիւր իր հոգևոր  
 հօրը կարգադրութեանը հպատակի . և  
 գիտնալու է որ ստէպ մերձնալը ամենևին  
 վիճակի կամ պաշտօնի հետ կախմունք  
 չունի , և մէկու մըն ալ արդիւրեալ չէ , ոչ  
 ամուսնացելոյն և ոչ վաճառականին . բա-

աական է որ իր հոգևոր հայրը սրատաճ  
 դատէ . ինչպէս Խննովկենտիոս ժԱ  
 1679ին կոնդակաւ հրատարակեց :

11 . Արդ պէտք է գիտնալ որ չկայ  
 բան մը ուսկից կարենանք այնչափ օգուտ  
 քաղել , ինչպէս ՚ի սուրբ հաղորդութենէ :  
 Հայրն Աստուած իր ամէն աստուածային  
 գանձուցը տէր դրաւ զՅիսուս . “Ամենայն  
 բան Հայր անոր ձեռքը յանձնեց ,”<sup>1</sup> : Ուս-  
 տի երբոր Յիսուս մէկուն սիրտը գայ հա-  
 ղորդութեամբ , անոր իր շնորհաց ամբաւ  
 գանձն ալ մէկ տեղ կը բերէ : Եւ շատ կը  
 յարմարի այնպիսւոյն ըսել Սողոմոնի այն  
 խօսքը թէ “ Անոր հետ միատեղ ամենայն  
 բարիք ստացայ ,”<sup>1</sup> : Ա՛րսէ սուրբն Դիոնի-  
 սիոս թէ հաղորդութեան խորհուրդը քան  
 զայլ ամենայն հոգևորական մատակարար-  
 ութիւն աւելի գերազոյն զօրութիւն ունի  
 հոգիները սրբացնելու : Եւ սուրբ Վի-

<sup>1</sup> Զամենայն ինչ ետ հայր ՚ի ձեռս  
 նորա : Յովհ . ժԳ . 3 :

<sup>1</sup> Եւ եկին ինձ բարութիւնք միան-  
 գամայն ընդ նմա : Իմաստ . է . 11 :



չնայիտս Յերերեան գրեց որ մի անպա-  
մուան հաղորդութենէն շատ աւելի օգուտ  
կը տեսնայ հոգին, քան թէ եօթնեակ մը  
ծոմասպահութենէն ցամաք հացով ու ջրով:

12. Հաղորդութիւնը նախ և առաջին  
այն մեծագոյն գեղն է, որ՝ ինչպէս Տրի-  
տենդեան սուրբ ժողովքը կը սորվեցրնէ՝  
զմեզ ներելի մեղքերէն կ'ազատէ և մահու-  
չափներէն ալ կը պահէ<sup>1</sup>: Այն օրուան մեղ-  
քերէն կ'ազատինք կ'ըսէ, վասն զի ըստ  
բանից սրբոյն Թովմայի<sup>2</sup> այս խորհրդոյս  
ձեռքով մարդս կը յորդորուի սիրոյ ներ-  
գործութիւններ ընել, որով և ներելի մեղ-  
քերը կը ջնջուին: Այլ մահուչափ մեղ-  
քերէն կը պահուինք կ'ըսէ. վասն զի  
սուրբ հաղորդութիւնը կ'աւելցրնէ շնորհ-  
քը ու մեծամեծ մեղքերէ զմեզ կը պահէ:  
Անոր համար Իննովկենտիոս Գ գրեց որ  
Յիսուս Վրիստոս իր չարչարանօքը զմեզ  
մեղաց իշխանութենէն ազատեց, իսկ սուրբ  
հաղորդութեան խորհրդովը մեղանչելու իշ-  
խանութենէն կ'ազատէ:

1 Ահատ . ԺԴ . ԳԼ . Բ :

2 Մասն Գ . Խնդ . ՀԹ . ՊԵ . Դ :

13. Պարձեալ այս խորհուրդը գլխաւորաբար աստուածային սիրով կը բորբոքէ հոգիները : Աստուած սէր է<sup>1</sup> . և հուր է որ մեր սրտէն երկրաւոր փափաքները կ'այրէ և կը մըրկէ<sup>2</sup> : Այլ ահա այս սիրոյ կրակն եկաւ որդին Աստուծոյ երկրիս վրայ բոլնկցուց : Արկրիս վրայ , կ'ըսէ , հուր բորբոքելու եկայ , ու կ'աւելցնէ թէ ուրիշ բան չուզեր , բայց եթէ այս սրբազան կրակը մեր սրտերուն մէջը բորբոքած տեսնել<sup>3</sup> : Ո՛հ , քանի՛ քանի աստուածային սիրոյ ջահերը կը վառէ ամէն մէկուն ներսը , որ այս խորհրդոյն եռանդեամբ մերձենայ : Արբուհին Աստուծինէ Սենայի օր մը քահանայի մը ձեռքը տեսաւ զՅիսուս սրբագործեալ , որ բոցեղէն գունտ մըն էր . և սրբուհոյն զարմանք եկաւ որ ի՛նչպէս այնչափ մարդիկ

1 Ա . Յովհ . Դ . 8 :

2 Հուր ծախիչ է : Երկրորդ . Օր . Դ . 14 :

3 Հուր եկի արկանէլ յերկիր և զննչ , կամիմ թէ արդէն իսկ բորբոքէր : Ղուկ . ԺԲ . 49 :

իրենց սիրտը կ'ընդունին զանիկայ, և ամենևն չեն այրիր և մոխիր դառնար: Ախմայի Աարդուհի կոյսը հաղորդուելէն վերջը այնպիսի ճառագայթներ երեսէն կը ցաթեցընէր որ նայողներուն աչքը կ'առնէր, և բերնէն ելած տաքութիւնն ալ այն աստիճանի էր, որ եթէ մէկը ձեռք մօտեցընէր, ձեռքը կ'այրէր: Այս սրբոյն Աինչեսրաւոսի համար կը սպասմեն, որ միայն եկեղեցի երթալով ուր որ սուրբ խորհուրդը կը սրահուէր, այնպիսի եռանդեամբ կը տաքնար, որ իր հետը գնացող ծառան ձեան վրայէն անոր ոտուրները դրած տեղուանքէն քալելով, ամենևն սրահութիւն չէր զգար: Ասոր համար կ'ըսէր սուրբն Յովհանն Ասկեբերան, որ «Ամենասուրբ խորհուրդը կրակ է որ զմեզ կը բորնկէ. որպէս զի սեղանէն որ ետ քաշուինք այնպիսի սիրոյ բոցեր շնչենք, որ դժոխք սարսափի»,<sup>1</sup>:

14. Արդ երգոյ գրքին մէջը հարսը կ'ըսէ թէ «Թագաւորը մտուց զիս զիսնոյ սենեակը, և իմ վրաս սէր կարգաւո-

1 Ճառ. ԿԱ. առ Ժող:

րեց ,, <sup>1</sup> : Այս սուրբն Գրիգոր՝ Ախուայի կը  
 գրէ թէ՛ հաղորդութիւնն է գինւոյ սենեա-  
 կը, ուր հոգին այնպէս աստուածային սի-  
 րով կ'արբենայ, որ ամենայն բան կը մոռ-  
 նայ, և աչքէն ամենայն արարածք կը կոր-  
 սնցընէ. և այս է ահա այն սիրոյ հալումը  
 որուն համար վերջէն կ'ըսէ. «Օգրացուցէք  
 զիս իւրով, լեցուցէք վրաս խնձոր. վասն զի  
 սիրով կը նուազիմ ,, <sup>2</sup> : Բայց կրնայ մէկը  
 ըսել թէ՛ ես ստէպ չեմ՝ հաղորդուիր, ո-  
 րովհետև կը տեսնեմ որ աստուածային սի-  
 րոյն կողմանէ պաղ եմ : Այսպիսւոյն Գեր-  
 սոն պատասխան կու տայ. «Արեմն, կ'ըսէ,  
 ցուրտ ըլլալուդ համար կրակէն հեռու պի-  
 տի կենաս ,, : Այլ մանաւանդ թէ՛ սրովհե-  
 տև գիտես որ պաղ ես՝ այնչափ աւելի ստէպ  
 պիտի մտնենաս այս խորհրդոյն. բաւական  
 է որ ճշմարիտ փափաք ունենաս զՅիսուս

1 Մուծէք զիս 'ի տուն գինւոյ,  
 կարգեցէք 'ի վերայ իմ զսէր : Երգ .  
 Բ . 4 :

2 Հաստատեցէք զիս իւրով, կուտե-  
 ցէք յիս խնձոր . զի խանդակաթ եմ սի-  
 րով : Երգ . Բ . 5 :

սիրելու : “ Թէպէտ և սլաղութեամբ, կ'ըսէ սուրբն Յոնավենդուրա, բայց Աստուծոյ ողորմութեանը վստահութեամբ մերձեցիր . այնչափ աւելի մէկը բժշկին պէտք ունի, որչափ որ աւելի գիտէ թէ տկար է, ”<sup>1</sup> : Այնպէս սուրբն Յիւանչիսկոս Սալղեան կ'ըսէր . “ Արկու տեսակ մարդիկ պէտք է որ ստէպ հաղորդուին . մէյմը կատարեալները որ իրենց կատարելութեանը մէջ մնան . մէյմ՝ ալ անկատարները որ կատարելութեան հասնին, ”<sup>2</sup> : Բայց շատ անգամ հաղորդուելու համար, պէտք է դէթ մեծ փափաք ունենալ սուրբ ըլլալու և Յիսուսի սիրովը օրէ օր բորբոքելու : Օր մը Տէրն մեր սրբուհւոյն Անգիլտէի ըսաւ . “ Արբոր հաղորդուիս պիտի, փափաքէ այն սիրոյ որ սիրտ մը կրցեր է երբէք վրաս ունենալ . և ինչպէս որ կ'ուզէիր որ ըլլայ՝ այնպէս ես այդպիսի սէրը կ'ընդունիմ, ”<sup>3</sup> :

1 Յաղագս կրօնաւորական ուխտի . ԳԼ . ՀԸ :

2 Աստուածասէր . ԳԼ . Բ :

3 Առ Բլոսիոսի . ի ճառն յղ . հաւատարիմ հոգ . ԳԼ . Զ . Թիւ . Ը :

ԻՂԶՔ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Այլ Աստուած սիրոյ , միլ անասանն սէր , արժանի անհուն սիրոյ , սորվեցու ինձի որ միթէ կարելի էր աւելի բան հնարել մեզի սիրելի ըլլալու համար : Բաւական շտեպեցիր բոլոր արիւնդ մեզի համար տալ տանջանքներու բռնութեամբ , և ինչուան դառն ցաւեր քաշելով մեռնիլ ձողի մը վրայ՝ որ սաստիկ եղեռնաւոր չարագործներու պահուած էր : Այլ վերջապէս հաճեցար հացին տեսակաւ ծածկուիլ , մեզի կերակուր ըլլալու և այնպէս մեր ամէն մէկերնուս հետ միանալու համար : Սորվեցու ինձի , դարձեալ կը խնդրեմ , որ միթէ կարելի էր աւելի բան հնարել մեզի սիրելի ըլլալու համար : Այն մեզի , թէ որ այս աշխարհքիս մէջ զքեզ չսիրենք : Արբոր յաւիտենականութեան հասնելու ըլլանք , ինչ ցաւ սխաի ըլլայ մեզի թէ ինչու զքեզ չենք սիրած : Յիսուս իմ , չեմ ուզեր մեռնիլ առանց սիրելու զքեզ , և սաստիկ սիրելու : Մեծապէս կը ցաւիմ , և

սաստիկ վիշտ է ինձի որ այնչափ կամացող դէմ եմ գործեր . կը զոջամ ահունց վրայ , և կ'ուզէի ցաւէս մեռնիլ : Հիմա կը սիրեմ զքեզ ամէն բանէ վեր , կը սիրեմ զքեզ քան զիս աւելի , և իմ փափաքներս բոլոր քեզի կ'ընծայեմ : Դու որ այս ըղձից սարգէտող ես , սարգէտ ինձի նաև կարողութիւն որ գործքով ալ կատարեմ : Յիսուս իմ , Յիսուս իմ , քեզմէ ուրիշ բան չիմ ուզեր , զքեզ միայն կ'ուզեմ : Հիմայ որ զիս քու սիրոյդ քաշեցիր , ամէն բան կը թողում , ամէն բանէ կը հրաժարիմ , և քեզի հետ կը պըլլուիմ . դու միայն բաւական ես ինձի :

Ա՛յ մայր Աստուծոյ Մարիամ , ինձի համար աղաչէ Յիսուսին , որ սուրբ ընէ զիս : Այս մէկ հրաշքս ալ աւելցու մկկալ հրաշքներուդ վրայ որ այնչափ մեղաւորներ փոխեր սուրբ ըրեր ես :

Գ Լ ՈՒ Խ Գ .

Ի՛նչ մեծ վատահոռքիւն պիտի ունենանք  
Յիսուսի մեզի ցոռցրցած սիրոյն և  
մեզի համար ըրած ամէն բաներուն  
վրայ :

1 . Դաւիթ իր փրկութեան յոյսը իր  
հանդերձեալ Փրկչին վրայ դրեր էր , ու  
կ'ըսէր . “ Բու ձեռքդ , Տէր , կը յանձնեմ  
իմ հողիս . Աստուած իմ , քու ճշմարտու-  
թեամբդ դու ինձի փրկութիւն տուիր ,<sup>1</sup> :  
Ուրեմն ո՞րչափ ևս աւելի մենք պէտք է որ  
մեր ապաւինութիւնը հաստատենք Յի-  
սուսի Բրիստոսի վրայ որ արդէն եկաւ ու  
մեր փրկագործութիւնը կատարեց : Անոր  
համար աւելի վստահութեամբ պէտք է որ  
ըսենք ամէնքնիս և կրկին ու կրկին ըսենք .  
“ Տէր , քու ձեռքդ կը յանձնեմ իմ հողիս .

1 Ի ձեռս քո յանձն առնեմ զհողի  
իմ . փրկեցեր զիս , Տէր Աստուած , ճշմար-  
տութեամբ քով : Սաղմ . Լ . 6 :



Տէր Աստուած , քու ճշմարտութեամբդ  
փրկեցիր զիս ,, :

2 . Թէ որ յաւիտենական մահուրնէ  
վախնալու մեծ մեծ պատճառներ ունե-  
նանք շատ անգամ Աստուծոյ դէմ ընել-  
նուա համար , ընդ հակառակն շատ ա-  
ւելի պատճառներ կան յաւիտենական կե-  
նաց յուսալու՝ արդեամբք Յիսուսի Քրիս-  
տոսի , որոնց զմեզ փրկելու զօրութիւնը  
յանհունս աւելի վեր է քան զմեր մեղքը ,  
որ մեզի կորստեան պատճառ են : Ան-  
ղանչեցինք և դժոխքին արժանի եղանք ,  
բայց Փրկիչը եկաւ բոլոր մեր մեղքերը իր  
վրայ առաւ , և իր տանջանքներովը անոնց  
տեղը վճարեց <sup>1</sup> :

3 . Այն թշուառ վայրկենին որ մեղան-  
չեցինք , Աստուած մեր վրայ յաւիտենա-  
կան մահուան դատապարտութիւնը կըն-  
քեց . բայց մեր բազմադուժ Փրկիչը ինչ  
ըրաւ . մեր դատապարտութեան հրամա-  
նադիրը իր արեամբը աւրեց , և ետքը խա-

<sup>1</sup> Նա զմեզս մեր բառնայ և վասն մեր  
չարչարի : Եսայ . ԾԳ . 4 :

չին վրայ դամեց<sup>1</sup>, որպէս զի մեր գործած մեղացը սլատճառաւ ելած դատապարտութեան վճիռը տեսնելու ատեն, տեսնենք միանգամայն խաչը, որուն վրայ Յիսուս հողին տալով իր արեամբը զանիկայ ջնջեց և այսպէս թողութեան ու յաւիտենական փրկութեան յոյս ունենանք :

4 . Մէ, որչափ աւելի կը բարեխօսէ մեզի համար արիւնն Յիսուսի և աստուածային ողորմութեան գութը կը շարժէ մեր վրայ, քան զՂբելի արիւնը որ ընդդէմ իր Ապէն եղբորը կը բողոքէր : “ Սօտեցեր էք առ Յիսուս միջնորդն, և անոր թափած արեանը որ քան զՂբելինը աւելի բարձր կը խօսի ”<sup>2</sup> : Իբրև թէ ըսել կ'ուզէ Մաքեալը . Արանի՛ ձեզ, մեղաւորներ, որ մեղանշելէն ետև դիմեցիք առ Յիսուս խա-

1 Եւ ջնջեաց զձեռագիր . . . որ կայր մեզ հակառակ . եբարձ զայն 'ի միջոյ և բևեռեաց ընդ խաչափայտին : Կողոս . Բ . 14 :

2 Մատուցեալ էք 'ի միջնորդն Յիսուս և 'ի հեղումն արեան նորա, որ առաւել խօսի քան զհաբեղին : Եբր . ԺԲ . 24 :

չեայն, որ իր բոլոր արիւնը թափեց, որպէս  
 զի անով միջնորդ խաղաղութեան ըլլայ  
 մեղաւորաց և Աստուծոյ մէջ, և անոնց  
 համար թողութիւն առնու: Չեզի դէմ ձեր  
 անօրէնութիւնները ձայներնին վերուցած  
 կ'աղաղակեն. բայց ՚ի նպաստ ձեզի հա-  
 մար կը բարեխօսէ արիւնն Յիսուսի Փրկի-  
 շին. և այս իրեն արեանը ձայնին ալ չկըր-  
 նար աստուածային արդարութիւնը չզի-  
 ջանիլ:

Ծ. Յիրաւի խիստ համար պիտի տանք  
 մեր ամէն մեղքերուն համար յաւիտենական  
 դատաւորին ատենանը: Բայց ո՞վ պիտի ըլ-  
 լայ մեր դատաւորը. « Հայրն Աստուած իր  
 ամէն դատաստանները Որդւոյն տուաւ, »<sup>1</sup>:  
 Ուրեմն սիրտ առնունք. վասն զի Հայրն  
 Աստուած մեր դատաստանն ալ մեր Փրկի-  
 շին յանձնած է: Ուստի Պօղոս առաքեա-  
 լը քաջալերութիւն կու տայ մեզի ու կ'ըսէ.  
 « Ո՞վ է դատաւորը որ պիտի զմեզ դատա-  
 պարտէ. նոյն կնքն մեր Փրկիչը, որ զմեզ

1 Հայր... զամենայն դատաստան եւս  
 Որդւոյ իւրում: Յովհ. Ե. 22:

յաւխտենաւան դատասպարտութենէ ազա-  
տելու համար, հաճեցաւ ինքը զինքը  
սպարտաւոր ընել ու մեռաւ. և ասով միայն  
դո՛հ չըլլալով, հիմայ երկինքն ալ միշտ մեր  
փրկութեանը համար իր հօրը քով բարե-  
խօսութիւն կ'ընէ, <sup>1</sup>: Ասոր համար սուրբն  
Թովմաս Ա իլլանտիպցին կ'ըսէ. « Ինչո՞ւ կը  
վախես, ո՞վ մեղաւոր, թէ որ մեղքերէդ  
կը դանիս. ի՞նչպէս պիտի դատասպարտե-  
ղքեղ անիկայ, որ զքեզ չդատասպարտելու  
համար մեռաւ. ի՞նչպէս զքեզ պիտի վճրն-  
տէ, թէ որ իր ոտքը դառնաս, անիկայ՝ որ  
երկինքէն երկիր ինջաւ որ դտնէ զքեզ,  
ան ատեն որ դուն իրմէ փախստական  
կ'երթայիր », :

6. Ալ թէ որ վախերնուս մէկ սպառճառն  
ալ այս ըլլայ՝ որ մեր տկարութեամբը չկա-  
րենալով թշնամեաց յարձակմանը դէմ  
դնել կը կործանինք. որոնց հետ պիտի

1 Ո՞վ է որ դատասպարտ առնիցէ .  
Յիսուս Քրիստոս, որ մեռաւն . . . որ  
բարեխօս խակ է վասն մեր : Հ. ում. Ը .  
34 :

սլատերազմինք , ահա Առաքեալը զմեզ կը  
խրատէ թէ ինչ պիտի ընենք : « Քաջատու-  
տութեամբ երթանք կոուելու , աչուրնիս  
Յիսուսի խաչելոյն վրայ հաստատելով , որ  
իր խաչին վրայէն իր օգնութիւնը մեզի կու-  
տայ , միանգամայն յաղթութիւնը ու պսա-  
կը »<sup>1</sup> : Առաջները կործանեցանք , վասն  
զի չիդարձանք չնայեցանք մեր Վրկչին  
քաշած վէրքերուն և նախատանայր , և  
ասով իրեն օգնութեանը չդիմեցինք : Նայց  
թէ որ ասկէ վերջը ինչ որ մեր սիրոյն  
համար քաշած է աչուրնուն առջև բռնե-  
լու ըլլանք , և գիտնալով թէ ինչպէս իր  
օգնութիւնը տալու սլատրաստ է , իրեն  
դիմելու ըլլանք , անհնարին բան է որ  
կարենանք յաղթուիլ մեր թշնամիներէն :  
Արբուհին թերեզա այդպիսի կտրիճ սրը-

1 Համբերութեամբ ընթացուք ՚ի  
սլատերազմ որ առաջի կայ մեզ . հայեա-  
ցուք ՚ի զօրագլուխն հաւատոց և ՚ի կա-  
տարիչն Յիսուս , որ միօխանակ ուրախու-  
թեանն որ նմա առաջի կայր , յանձն  
առ զխաչն , արհամարհեաց զամօթն :  
Եբր . ԺԲ . 1 . 2 :

տուլ կ'ըսէր . “ Ո՛վ սատանայ սատանայ ,  
 ես չեմ գիտեր վախ ըսածը , երբոր կրնամ  
 ըսել՝ Աստուած , Աստուած . ու զքեզ դու  
 զայրնել , ” : Այլ ընդ հակառակն կ'ըսէր  
 այն սրբուհին թէ “ Մեր ամէն ջանքը քիչ  
 օգուտ կ'ընէ . թէ որ մեր վրայէն վերցը-  
 նելուլ բոլոր մեր վստահութիւնը Աստուծոյ  
 վրայ դնելու չըլանք , ” :

7 . Մեզի համար որպիսի երկու մեծա-  
 մեծ յուսոյ և սիրոյ խորհուրդներ են Յի-  
 սուսի չարչարանքները , և սուրբ սեղանոյն  
 խորհուրդը . այնպիսի խորհուրդներ , որ  
 եթէ սուրբ հաւատքը մեզի չտրուեցընէր ,  
 ո՞վ կրնար հաւատալ որ Աստուած ամենա-  
 կալ ուզենայ մարդ ըլլալ , իր բոլոր արիւ-  
 նը թափել , և փայտին վրայ ցաւօք մեռ-  
 նիլ . և ինչո՞ւ . որպէս զի մեր մեղքերուն  
 պատիժը վճարէ , և զմեզ ապստամբ որ-  
 դերը փրկէ : Այլ վերջը նոյն իր մարմինը ,  
 որ օր մը խաչին վրայ պատարագեց , ուզէ  
 մեզի կերակուր տալ , ու մեզի հետ բոլո-  
 ըովն միանալ : Ո՛վ Տէր , իրաւցընէ-  
 պէտք էր որ այս երկու խորհուրդները ամ-  
 մէն մարդկային սիրտ սիրոյն բոցով այրեր

փրկիք : Այս ո՞ր մեղաւորը , որչափ որ ալ  
 ըլլայ անթողլի եղեո՞նագործ , կրնայ թու-  
 զութեան յոյս չունենալ , թէ որ իր ըրած  
 չարեայը վրայ զղջալու ըլլայ , տեսնալով  
 որ ինքն Աստուած մարդկանց վրայ այս-  
 պիսի սիրով կը հալի և միշտ սլատրաստ է  
 անոնց բարիք ընելու : Անոր համար սուրբն  
 Յոնալենդուրա ամենայն վստահութեամբ  
 կ'ըսէր թէ “ Անիկայ որ այնչափ բան  
 ըրաւ և քաշեց զիս փրկելու համար , ինչ-  
 պէս իմ փրկութեանս համար հարկաւոր  
 շնորհքները կրնայ չտալ , ” :

8 . “ Ասկէ վերջը վստահութեամբ անոր  
 շնորհաց աթոռոյն առջևը մտնեանք , կ'ը-  
 սէ Առաքեալը քաջալերելով զմեզ , որպէս  
 զի ողորմութիւն ընդունինք և շնորհք  
 զանենք օգնականութեան յարմար առե-  
 նը , ” <sup>1</sup> : Խաչն է շնորհաց աթոռը , ուր որ  
 Յիսուս արքայակերպ կը նստի շնորհք

1 Մատիցուք այսուհետև համարձա-  
 կութեամբ առաջի աթոռոյ շնորհացն  
 նորա . զի ընկալցուք զողորմութիւն , և  
 դացուք շնորհս ՚ի դէպ ժամանակի օգնա-  
 կանութեան : Եբր . Գ . 16 :

բաշխելու և իրեն դիմողներուն ողորմու-  
թիւն տալու : Բայց պէտք է որ շուտով  
դիմենք , հիմայ որ կրնանք մեր փրկու-  
թեանը հարկաւոր օգնութիւնը գտնել .  
վասն զի կրնայ ատեն մը դալ որ ալ զինքը  
չկարենանք գտնել : Ուրեմն շուտով վա-  
զենք Վրիստոսի խաչին պղուինք , և մեծ  
վստահութեամբ վազենք : Ալքանինք չթուլ-  
նանք որ խեղճ ողորմելի ենք . խաչեալն Յի-  
սուսի քով ամէն ճոխութիւն , ամէն շնորհք  
կը գտնենք . “ Ամէն կողմանէ հարստա-  
ցած էք իրմով , այնպէս որ ձեզի շնորհք  
մ՝ ալ չպակսիր , ”<sup>1</sup> : Յիսուսի Վրիստոսի  
արդիւնքը ամենայն աստուածային գան-  
ձիւք զմեզ հարստացուց , և կրնանք ամէն  
փափաքած շնորհքները ձեռք բերել :

Գ . Սուրբն Վ և ոն կ'ըսէ որ “ Յիսուս իր  
մահուամբը այնպիսի մեծամեծ բարիք մե-  
զի բերաւ որ սատանան այնչափ միաս չէր  
բերած մեզքով , ” : Ալ ասով բացայայտ

1 Յամենայնի մեծացարուք դուք նու-  
վաւ . . . զի դուք մի նուազիցիք՝ և մի  
իւրի շնորհք : Ա . Կոր . Ա . 5 . 7 :



կ'իմանանք Պօղոս առաքելոյն ըսածը, թէ  
 փրկութեան շնորհքը քան զմեզքը մեծ  
 եղաւ . շնորհքը յանցանայ յաղթեց <sup>1</sup> :  
 Եւ Յիսուս այս բանիս համար յորդո-  
 ընց զմեզ իր արդեամբքը ամէն բարիք և  
 շնորհք յուսալու : Եւ ահա սորվեցուց ալ  
 թէ ինչ կերպով պիտի խնդրենք Հօր Աս-  
 տուծմէ որ ընդունինք ինչ որ կ'ուզենք :  
 « Իրաւցրնէ ձեզի կ'ըսեմ, թէ ինչ որ Հօր  
 մէս իմ անուամբս ուզելու ըլլաք, ձեզի  
 կու տայ », <sup>2</sup> : Որչափ բան որ կը փափաքիք,  
 կ'ըսէ, իմ Հօրմէս խնդրեցէք իմ անուամբս,  
 և ձեզի խօսք կու տամ, որ ձեր խնդրը  
 ւածքը ընդունելի կ'ըլլայ : Եւ Հայրն Աս-  
 տուած ինչպէս ո և իցէ շնորհքի համար չէ  
 ըսէ, երբոր իրեն միածին Որդին մեզի տուաւ  
 զոր այնպէս կը սիրէ ինչպէս որ ինք զինքը :

1 Ոչ որպէս յանցանքն, նոյնպէս և  
 շնորհքն . . . ուր առաւել եղեն մեղքն,  
 առաւել ևս յաւելան շնորհքն : Հռոմ.  
 Ե . 15 . 20 :

2 Ամէն ամէն ասեմ ձեզ, զի զոր ինչ  
 խնդրիցէք ՚ի Հօրէ իմմէ յանուն իմ, տա-  
 յի ձեզ : Յովհ . Ժ . 2 . 23 :

“Մեր ամենուն համար զանիկայ մատնեց,  
 Բնչպէս անոր հետ ամէն բան մեզի շտար,”<sup>1</sup> :  
 Ան Բան կ'ըսէ Առաքեալը . վասն զի ա-  
 մենեին մէկ շնորհք մը ետք շիթողուր, ոչ  
 թողութիւն, ոչ յարատեութիւն, ոչ սուրբ  
 սէրը, ոչ կատարելութիւնը, ոչ արքայու-  
 թիւնը . ամէն բան, ամէն բան կու տայ  
 մեզի : Բայց սէտք է իրեն աղաչել . “Աս-  
 տուած առատ է անոր, ու որ իրեն կ'ա-  
 ղաչէ,”<sup>2</sup> :

10 . Կ'ուզեմ հոս դեռ ուրիշ շատ գե-  
 ղեցիկ մտածութիւններ դնել, երանաշնորհ  
 Յովհաննէս Տալիլային նամակներէն հա-  
 նելով զորոնք գրեր էր մեր Յիսուսի  
 Քրիստոսի արդեանցը ունենալու մեծ վա-  
 տահութեանը պարտականութեանը վրայ :

11 . “Մի մոռնաք, որ Հօր Աստուծոյ  
 և մեր մէջը միջնորդ է Յիսուս Քրիստոս,  
 որուն ձեռքով սիրելի եղած ենք . և այն-

1 Վասն մեր ամենեցուն մատնեաց  
 զնա, զեմբոյն ոչ նովաւ հանդերձ զամե-  
 նայն շնորհիցէ մեզ : Հռոմ. Ը . 32 :

2 Բաւական յամենեսին ոյք կարդան  
 առ նա : Հռոմ. Ժ . 12 :

պիտի սիրոյ զօրաւոր կապերով կապուած ,  
որ ամենեւին բան մը չկայ որ կարենայ քա-  
կել , միայն թէ մարդ իր մահացու մեղքո-  
ւն չի կոտորէ : Յիսուսի արիւնը մեզի համար  
զթուծիւն կ'աղաղակէ . և այնպէս բարձր  
կ'աղաղակէ որ ալ մեր մեղաց աղաղակը  
չըլտուիր : Քրիստոսի մահը մեր մեղքերը  
մեռուց : Ո՛վ մահ , քու մահդ ըլլամ : Ո-  
րոնք որ կը կորսուին , իրենց կորչտեան  
պատճառը չէ թէ քաւութեան պակասու-  
թիւնն է , հասկա չուղելը խորհրդոյ ձեռ-  
քովը Յիսուսի ըրած քաւութեան օգուտը  
քաղել , :

12 “ Մեզի դարման տանելու հոգը  
Յիսուս իր վրան առաւ , իբրև թէ բուն իր  
սեփական բանը ըլլար . ուստի թէպէտ և  
մեր մեղքերը ինքը գործած չէր , բայց ի-  
րենը անուանեց , և անոնց համար թողու-  
թիւն խնդրեց . և գորովալից սիրով իբրև  
թէ իրեն համար կ'աղաչէր՝ այնպէս ա-  
ղաչեց , որ ով որ ուզենայ իրեն մերձենալ ,  
Աստուծոյ սիրելի ըլլայ : Ալ ինչպէս խոն-  
դրեց , այնպէս ալ խնդիրքը կատարուեցաւ .  
վասն զի Աստուած սահմաններ էր որ Յի-

սուս և մենք այնպէս 'ի մի միացեալ ըլ-  
լանք որ կամ ինքը և մենք սիրելի ըլլանք ,  
և կամ ինքը և մենք ատելի . և որովհետև  
Յիսուս ատելի չէ և ոչ կրնայ ըլլալ ,  
նոյնպէս մենք ալ թէ որ սիրով Յիսուսի  
հետ միացեալ ըլլանք , նաև մենք սիրելի  
կ'ըլլանք : Ինքը Աստուծոյ սիրելի ըլլալու  
վը , մենք ալ սիրելի եղած ենք . վասն զի  
աւելի կը զօրէ Յիսուս զմեզ սիրելի ընելու ,  
քան թէ մենք զմեզ ատելի ընելու . որով-  
հետև Հայրն Աստուած աւելի իր Արդին կը  
սիրէ , քան թէ մեղաւորները կ'ատէ , :

13. “ Յիսուս իր Հօրը այս ըսաւ թէ  
“ Ա'ռզեմ , Հայր , որ ուր որ ես գտուիմ ,  
հոն ըլլան նաև անոնք զորոնք ինձի տուեր  
ես ,”<sup>1</sup> : Մեծագոյն սէրը նուազագոյն ատե-  
լու թեանը յաղթեց , և այսպէս թողութիւն  
գտանք և սիրելի եղանք , ապահով ըլլա-  
լով որ մէյմ'ալ երեսէ չենք ինկնար այս-  
պիսի ամուր սիրոյ կապով միացած ըլլա-

1 Հայր , զորս ետուրն ինձ կամիմ զի  
ուր ես եմ , և նոքա իցեն ընդ իս : Յովհ .  
ժէ . 25 :

լով : Աստուած Ասայեայ ձեռքովը կ'ըսէ .  
 « Կարելի բան է որ մայր մը իր զաւակը  
 մոռնայ . և թէ որ անիկայ մոռնալու ալ  
 ըլլայ , ես զքեզ չսլիտի մոռնամ . վասն զի  
 ես զքեզ իմ՝ ձեռուրններուս մէջը նկարեր  
 եմ ,<sup>1</sup> : Ինքը զմեզ իր ձեռուրններուն մէջը  
 նկարած է իր արեամբը : Աւստի ամենեւին  
 չխոտլինք , որովհետեւ ամէն բան սլիտի  
 կարգադրուի այն ձեռուրններովը որ խա-  
 չին վրայ գամուեցան 'ի նշան մեր վրայ ու-  
 նեցած սիրոյն , :

14 . « Չկայ բան մը որ զմեզ այնչափ  
 կարենայ վախցընել , որչափ որ Յիսուս  
 կրնայ զմեզ ասպաճուլ ընել : Թող իմ չորս  
 կողմն պատեն ըրած մեղքերս , թող ասպ-  
 դային վախը զիս ամբաստանէ , սատանա-  
 ները ինձի թող որոգայթներ լարեն . ես չեմ  
 կրնար իմ վստահութիւնս վերցընել զժա-

1 Միթէ մոռանայցէ կին զմանուկ իւր ,  
 կամ թէ ոչ գլխասցի 'ի ծնունդս որովայնի  
 իւրոյ . և եթէ մոռանայցէ զայն կին , սա-  
 կայն ես ոչ մոռացայց զքեզ , ասէ Տէր :  
 Ահաւասիկ 'ի վերայ ձեռաց իմոց նկարե-  
 ցի զպարիսպս քո : Եսայ . ԽԹ . 15 . 16 :

լից Յիսուսի վրայէն , որ ինչուան 'ի մահ  
 զիս սիրեց , երբոր իրմէ ողորմութիւն խըն  
 դրեմ , քանի որ կը տեսնեմ որ այնչափ  
 ծանրագին եմ , որ Աստուած իմ տեղս  
 ինք զինքը տուաւ : Յիսուս իմ , որ ալիայ  
 խոռովութեան մէջ քեզի ապաւինողներուն  
 անխտանգ նաւահանգիստ ես , ո՛վ արժուն  
 հովիւ , կը խաբուի օվ որ քեզի շվստահիր ,  
 բաւական է որ ուղղուիլ ուզէ : Ասոր հա  
 մար ըսիր “ Աս եմ , մի վախէք . ես եմ որ  
 կը վշտացընեմ ու կը մխիթարեմ , : Արբեմն  
 ոմանք սրտացաւութեան մէջ կը թողում ,  
 որ դժոխք կը կարծեն . բայց վերջէն կը հա  
 նեմ զիրենք անկէց և կը տփօփեմ : Աս ձեր  
 փաստաբանն եմ , ես ձեր դատաստանը իբր  
 իմն՝ վրաս առի : Աս ձեր երաշխաւորն  
 եմ , որ եկայ ձեր պարտքերը վճարելու :  
 Աս ձեր տէրն եմ , որ իմ արիւնուիս զձեզ  
 գնեցի . չէ երեսէ ձգելու համար , հասպ  
 զձեզ հարստացընելու համար , զձեզ ծանր  
 գնով գնած ըլլալու : Ի՞նչպէս փախչիմ  
 զիս փնտոողէն , որովհետև անոնց դէմը  
 ելայ որ զիս նախատելու համար կը փրն  
 տուէին : Արեսս չգարձուցի անկէ որ ինծի

կը զարնէր , և հիմա զիս պաշտել ուղողէ՞ն  
դարձընեմ : Ի՞նչպէս կարելի է որ իմ որդիքս  
իմ սիրոյս վրայ կասկածին , երբոր իրենց  
սիրոյն համար ես զիս իմ թշնամեացս ձեռ-  
քը մասնեցի : Ա՞րբ մէկը արհամարհեցի  
որ զիս սիրած ըլլայ : Ա՞րբ մէկը ինձմէ  
օգնութիւն խնդրեր է և ես երեսը նայած  
չըլլամ : Աս զիս շինտուողներն ալ փնտուե-  
լու հետ եմ ,, :

15 . “ Թէ որ կը հաւատաս որ Հայրն  
Աստուած իր Որդին քեզի պարգևեց , հա-  
ւատա որ մնացածն ալ քեզի կու տայ , որ  
ամէն բան Որդւոյն քով բան չէ : Ալ ոչ  
մտքէդ անցընես որ Յիսուս զքեզ մուցած  
ըլլայ , երբոր ՚ի յիշատակ իր սիրոյն մե-  
ծագոյն գրաւ մը թողուց զինքը սուրբ  
սեղանին խորհրդոյն մէջ ,, :

### ԻՂԶԻ ԵՒ ՊԱՂԱՏԱՆԻ

Ա՛հ , Յիսուս իմ , սէր իմ , ինչ գեղե-  
ցիկ յուսերով զիս կը լեցընէ քու շարչա-  
րանքդ : Ի՞նչպէս կրնամ ես յուսահատիլ  
թողութիւն գտնելու մեղացս , արքայութիւն

և հարկաւոր շնորհքներ ընդունելու ամե-  
 նակարող Աստուծակ մը , որ իր բոլոր  
 արիւնքը ինծի տուաւ : Ա՛հ , Յիսուս իմ ,  
 յոյս իմ , սէր իմ , դու որպէս զի զիս չկոր-  
 սնցընես , քու կեանքդ ուղեցիր կորսնցընել :  
 Օքեզ , Վրկիչ իմ և Աստուած , ամէն բա-  
 րկբէ մեր կը սիրեմ : Դուն զքեզ բոլոր ին-  
 ծի տուիր , ես ալ քեզի կու տամ բոլոր իմ  
 կամքս , և կը կրկնեմ դարձեալ թէ կը սի-  
 րեմ զքեզ . կը սիրեմ զքեզ . և միշտ կ'ու-  
 զեմ կրկնել , կը սիրեմ զքեզ : Այսպէս  
 միշտ կ'ուզեմ ըսել կենացս մէջ , և այսպէս  
 կ'ուզեմ մեռնիլ . այս սիրելի խօսքը բերանս  
 վերջի շունչս տալ , Աստուած իմ , կը սի-  
 րեմ զքեզ . որպէս զի նոյն վայրկենէն սկսիմ  
 անվերջանալի սիրով մը սիրել զքեզ յաւի-  
 տեան առանց երբէք ՚ի սիրոյ դադրելու :  
 Այս զքեզ կը սիրեմ , և սիրելու համար ,  
 ամէն չարեացս վրայ՝ որովք զքեզ վշտացուցի՝  
 սաստիկ կը ցաւիմ : Այն ինծի , որ սլզտի  
 հաճոյք մը չկորսնցընելու համար , այն-  
 չտի անգամ ուզեր իմ զքեզ կորսնցընել , ո՛վ  
 յաւիտենական բարի : Այս մտածութիւնս  
 քան զամէն տանջանք աւելի կը դառնացընէ :



զես . բայց կը մխիթարուիմ երբ դարձեալ  
մտածելու ըլլամ որ անսահման բարի ես ,  
և շես արհամարհեր այն սիրտը որ կը սիրէ  
դքեզ : Ա՛հ , ո՛ւր էր թէ քեզի համար  
մեռնէի՝ դուն որ ինձի համար մեռար :  
Սիրելի Փրկիչս , հաստատ կը յուսամ  
քեզմէ անդիի աշխարհքը յաւիտենական  
կեանքը ստանալ . և աստիա քու սիրոյդ  
մէջ սուրբ յարատեւութիւն , և կ'առաջա-  
դրեմ միշտ այս բանը քեզմէ խնդրել : Այլ  
դուն քու մահուանդ արդեանցը համար  
տուր ինձի յարատեւութիւն աղաչելու  
դքեզ :

Նոյն բանը կը խնդրեմ և կը յուսամ  
հասե քեզմէ , ո՛վ թագուհի իմ Մարիամ :



## ԳԼՈՒԽ Դ .

Ո՛րչափ պարտական ենք սիրելու  
զՅիսուս Քրիստոս :

1 Յիսուս Քրիստոս իբրև Աստուած արժանի է որ բոլորովին զինքը սիրենք . բայց ինքը մեզնի ցրցուած սիրովը , կարծես թէ ուզեց զինքը բռնի մեզնի սիրել տալ գոնէ շնորհակալութեան համար ինչ որ մեզնի համար ըրաւ և կրեց : Սաստիկ շատ սիրեց զմեզ , որպէս զի մենք ալ զինքը սաստիկ շատ սիրենք : Ի՞նչու կը սիրէ Աստուած , եթէ ոչ սիրուելու համար , կ'ըսէ սուրբն Բեռնարդոս : Ինչպէս Սուրբն ալ առաջուց ըսեր էր . “ Հիմայ , Իսրայէլ , ի՞նչ կ'ուզէ քեզմէ քու տէրդ և Աստուածդ , բայց եթէ իրմէ վախնաս . . . և զինքը սիրես ”<sup>1</sup> : Անոր համար իրեն

1 Եւ արդ , Իսրայէլ , զինչ խնդրէ 'ի քէն Աստուած քո , այլ երկնչէլ 'ի Տեառնէ Աստուծոյ քուսմէ . . . և սիրել զնա : Երկրորդ . Օր . Ժ . 12 :

տուած առաջին սրտուիրանը այս եղաւ .  
 « Քու ամէն սրտովդ սիրես քու Աս-  
 տուածդ »<sup>1</sup> :

2. Այլ սուրբն Պօղոս կ'ըսէ թէ « Սէրը  
 օրինաց ամբողջութիւն է »<sup>2</sup> : Բայց տեսնա-  
 լով զԱստուած խաչ եղած և մեր սիրոյն  
 համար մեռած ո՞վ կրնայ զանիկայ չսիրել :  
 Բարձրաձայն կ'աղաղակեն այն փուշերը ,  
 այն զամերը , այն խաչը , այն վէրքերը և  
 այն արիւնը , ու կը յորդորեն զմեզ որ սի-  
 րենք զանիկայ որ այնչափ զմեզ սիրեց :  
 զԱստուած մեր սիրելու համար՝ որ մեր սի-  
 րովը այնպէս բորբոքեալ է՝ մէկ սիրտ մը  
 շատ քիչ է : Յիսուսի սիրոյն փոխարէնը  
 ընելու համար պէտք էր որ ուրիշ Աս-  
 տուած մը մեռնէր իրեն սիրոյն համար :  
 « Ա՛հ , ինչո՞ւ համար , կ'աղաղակէր սուրբն  
 Քրանչիսկոս Սալեզեան , չենք ինկնար խա-  
 չելալ Յիսուսին վրայ իրեն հետ խաչին

1 Սիրեսցես զՏէր Աստուած քո յա-  
 մենայն սրտէ քուամէ : Երկր . Օր . 2 . 5 :

2 Լրումն օրինաց սէր է : Հռոմ . ԺԳ .  
 10 :

վրայ մեռնելու, որ մեր սիրոյն համար նոյն խաչին վրայ մեռնել ուզեց, : Հաս լաւ կը հասկըցընէ մեզի Առաքեալը որ Յիսուս այս բանիս համար ուզեց մեռնիլ մեր ամենուս համար, որպէս զի ամէնքս ալ 'ի մեզ չսպրինք, այլ Աստուած միայն ա սպրինք որ մեզի համար մեռաւ <sup>1</sup> :

3. Աւրեմն կը մնայ քեզի այն ընելու ինչ որ Սիրաք կ'ապսպրրէ, « Մի մոռնար քու երաշխաւորդ, որ քու մեղքերդ քաւելու համար, իր մահուամբը քու սպառուհասդ ուզեց վճարել, <sup>2</sup> : Արչափ հաճոյական բան է Յիսուսի, որ ստէսլ իր չարչարանքները յիշենք . և որչափ ցաւ, երբոր անհող ըլ լանք մտածելու : Թէ որ մէկը իր բարեկամին համար նախատինք, ծեծ և բանտ յանձն առնու, որչափ այնպիսոյն վիշտ կ'ըլլայ երբ դիտնալու ըլլայ որ իր բարե-

<sup>1</sup> Եւ 'ի վերայ ամենեցուն մեռաւ, զի որ կենդանիքն իցեն, մի անձանց իցեն կենդանիք, այլ այնմ որ 'ի վերայ նոցայն մեռաւ : Բ . Կորն . Ե . 15 :

<sup>2</sup> Չճնոր հս երաշխաւորի մի մոռանար, զի ետ զանձն իւր վասն քո : Սիր . ԻԹ . 20 :

կամը ամենեւին զանոնք չյիշեր, և ոչ իսկ կ'ուզէ որ վրան խօսուի: Աւ ընդ հակառակն որչափ հաճոյ բան կ'ըլլայ՝ երբ գիտնայ որ բարեկամը անոնց վրայ միշտ սիրաւ ելած կը խօսի, և միշտ շնորհակալ կ'ըլլայ: Այսպէս ալ Յիսուս շատ կ'ախօրժի որ սիրալիր երախտագիտութեամբ մեզի համար քաշած չարչարանքը և մահը միտք բերենք: Յիսուս դեռ աշխարհք չեկած ամէն նախահարց, ու ամէն ազգաց փափաքն էր: Արչափ եւս առաւել հիմնց մեր միակ իղձը պիտի ըլլայ և մեր միակ սէրը, յետ իրեն դալուն և գիտնալնուս թէ ինչեր ըրեր և ինչեր քաշեր է մեր սիրոյն համար. ինչուան խաչին վրայ դամուած մեռնիլ:

4. Այս նպատակիս համար իր մահ հուրնէն օր մը առաջ հաղորդութեան խորհուրդը հաստատեց. և մեզի ալ յանձնեց որ քանի անգամ որ իր ամենասուրբ մարմինը ճաշակենք, իրեն մահը յիշատակենք<sup>1</sup>: Աւ սուրբ Ակեղեցին ալ կ'արօ-

<sup>1</sup> Առէք և կերայք, այս է մարմին իմ. . . Զայս արարէք առ իմոյ յիշատա-

Թէ . “ Աստուած , որ հրաշալի խորհրդոյն ներքե քու շարչարանացդ յիշատակը թողուցիր , և այն : Աւ ուրիշ տեղ մին ալ այսպէս կ'երգէ . “ Այլ սուրբ խնձոյք , յարում Քրիստոս կը բաշխի , և իրեն շարչարանաց յիշատակը կը նորոգուի , և այն : Այս տեսնելով կրնանք հետեւընել թէ որչափ անոնցմէ կ'ախորժի Յիսուս , որոնք որ շատ անգամ իրեն շարչարանացը վրայ մտածական կ'ընեն . որովհետեւ դիտմամբ սրբազործեցաւ սեղաններուն վրայ , որպէս զի իրեն մեզի համար քաշածներուն քաղցր յիշատակը անդադար մտքերնիս ունենանք , և այսպէս հետ զհետէ մեր սէրն ալ իրեն վրայ աւելնայ : Սուրբն Քրանչիսկոս Սալեզեան Գողգոթա լեռը լեռան սիրողաց կը կոչէր : Անկարելի է նոյն լեռը յիշել , և զՅիսուս չսիրել , որ այն լեռան վրայ մեր սիրոյն համար մեռնիլ յանձն առաւ :

Ե . Այլ Աստուած , հապա ինչո՞ւ չեն

կի : . . . . Քանիցս անգամ թէ ուտիցէք զհացս զայս , զմահ հեռուն պատմեցէք : Ա . Կոր . ԺԱ . 24 . 26 :

սիրեր մարդիկ զքեզ, Տէր, որ մարդիկներէն սիրուելու համար այդչափ բան ըրիր: Բա նին մարդանայէն առաջ կրնար մարդ տա ըստ իր թէ Մատուած արդեօք ճշմարիտ սիրով կը սիրէ զինքը թէ չէ. բայց յետ Որդւոյն Մատուծոյ աշխարհք դալուն և յետ մարդկանց սիրոյն համար իր կեանքը տալուն, ալ ինչպէս կրնանք տարակուսիլ: Ո՛վ մարդ, կ'ըսէ սուրբն Թովմաս Վիլանովայի, տես զայն խաչը, այն շարձարանքները, այն դառն մահը, որ քեզի համար քաշեց Քրիստոս. և յետ այնպիսի և այնչափ միայից իրեն սիրոյն՝ ալ չես կրնար երկբայիլ որ զքեզ կը սիրէ, և խիստ շատ կը սիրէ: Այս սուրբն Բեռնարդոս կ'աղաղակէ ու կ'ըսէ. Խաչը և մեր Փրկչին ամէն մէկ մէրքերը իրեն մեր վրայ ունեցած սիրոյն չափը կ'իմացնեն:

6. Մարդկանց փրկագործութեան այս մեծ խորհրդոյն մէջ սէտք է միտք բերել թէ ինչ մտածութիւն և ինչ փոյթ ունեցաւ Յիսուս այլ և այլ կերպ գտնալու՝ որ մեզի զինքը սիրելի ընէ: Թէ որ զմեզ փրկելու համար մեռնիլ կ'ուզէր, բաւական էր Հե-

րովզէսին սպաննել տուած տղայոց հետ  
 ինքն ալ մեռնիլ . բայց չէ , ուզեց մեռնելէն  
 առաջ երեսունուիրեք տարի լի տառապանօք  
 և լիտաչարչար կեանք մը անցընել . և այս  
 կեանքիս մէջ , որպէս զի զմեզ իր սիրոյն  
 քաշէ , ուզեց այլ և այլ կերպարանքնի  
 րով մեզի երէնալ : Աւզեց նախ ըլլալ խեղճ  
 մանկիկ մը ախոռի մը մէջ ծնած , ետքը  
 աշկերտ մը կրտակի մէջ , և ամէնէն վերջը  
 իբրև շարագործ մը տպաննուեցաւ խաչի  
 մը վրայ : Բայց նաև մեռնելէն ալ առաջ  
 ուզեց այլ և այլ խղճալի կերպարանքներ  
 առնուլ , և այս ամենայն բան կ'ընէր . միայն  
 մեզի սիրելի ընել տալու համար ինքը զինքը ,  
 տեսնուեցաւ սրտտէղը մահուան տագնա  
 պին մէջ ինկած , և բոլոր արիւն քրտին  
 քով լի . ետքը Արղատոսի սլալատը խարա  
 զանի հարուածներով մարմինը բզկի բզկի  
 եղած . ետքը իբրև սուտ թագաւոր ծաղը  
 եղած ձեռքը եղէզ մը , կունակը ծիրանն  
 գոյն քուրջ մը ձգած , և փշանիւթ պսակ  
 մը գլուխը . վերջը հասարակաց ճամբէն  
 խաչը ուսը զարկած սպաննելու քաշկուտն  
 ւով կը տանէին . և վերջապէս Առողջութային



վրայ երեք երկաթի ճանկերէն կախուած :  
 Արդ արժանի է թէ չէ սիրուելու մեզմ,  
 Աստուած՝ որ այնչափ վիշտ քաշեց կա-  
 մաւորապէս և այնչափ կերպեր բանեցուց ,  
 որ մեր սէրը իրեն ձգէ : Հայրն Յովհան-  
 նէս Վիքոյէօ կ'ըսէր . “ Աս ուրիշ բան  
 չէի ընէր բայց եթէ 'ի սիրոյ շարժեալ լալ  
 Աստուծոյ համար՝ որուն սէրն առաջնոր-  
 դեց մարդկանց փրկութեան համար մեռ-  
 նելու ” :

7 . Անձ բան , ծանրագին բան է սէրը ,  
 կ'ըսէր սուրբն Յեռնարդոս : Իսկ Սողոմոն  
 աստուածային իմաստութեան վրայ խօսե-  
 լալ , որ է սուրբ սէրը , զանխկայ անսահ-  
 ման դանձ անուանեց . վասն զի ոլ որ  
 սէր ունի , Աստուծոյ բարեկամութեանը  
 մասնակից է այնպիսին <sup>1</sup> : Առ հրեշտակայ-  
 ինն սուրբն թուլմաս կ'ըսէ <sup>2</sup> , թէ սէրը չէ  
 թէ վիայն թագուհի է ամենայն առաքի-

1 Ձի անսրտկաս դանձ է նա մարդ-  
 կան . որով որք վարեցան՝ առ Աստուած  
 առաքեցին զբարեկամութիւն : Իմաստ .  
 է . 14 :

2 Ճա . 17 . Առաք . 107 . Գ . :

նութեանց , հասլա նաև ուր որ ինքը կը  
 թաղաւորէ , հոն ամենայն առաքինու-  
 թիւնք իրեն հետ կ'ընկերանան իբրև իրեն  
 սլաշտօնեաները , և անոնցմով աւելի զմեզ  
 Աստուծոյ հետ կը միացընէ : Բայց բուն  
 սէրն է , ինչպէս կ'ըսէ սուրբն Բեռնար-  
 տոս , որ զմեզ Աստուծոյ հետ կը միացընէ :  
 Այլ շատ անգամ սուրբ գրոց մէջ գրուած  
 է եթէ Աստուած իր սիրողը կը սիրէ : “ Աս  
 իմ սիրողներս կը սիրեմ , ”<sup>1</sup> : “ Ավ որ զիս կը  
 սիրէ . . . իմ Հայրս զանիկայ կը սիրէ .  
 և անոր կու գանք և անոր քով կը բնա-  
 կինք , ”<sup>2</sup> : “ Ավ որ սիրոյն վայ հաստատուն  
 կը կենայ , ինքը Աստուած բնակած է ,  
 Աստուած ալ 'ի նմա կը բնակի , ”<sup>3</sup> : Ահա

1 Ես որ զիսն սիրէն՝ սիրեմ : Առակք  
 Ը . 17 :

2 Եթէ ոք սիրէ զիս . . . և Հայր իմ  
 սիրեացէ զնա . և առ նա եկեացուք և  
 օթեւանս առ նմա արասցուք : Յովհ .  
 ԺԴ . 23 :

3 Ար կայ 'ի սէրն՝ բնակեալ է յԱս-  
 տուած , և Աստուած 'ի նմա բնակէ :  
 Ա . Յովհ . Դ . 16 :

սիրոյն գործած զեղեցիկ միութիւնը , որ  
 զհոգին ընդ Աստուծոյ կը միաւորէ : Աս-  
 կէց զատ սէրը նաև զօրութիւն կու տայ  
 մեծամեծ բաներ գործելու և կրելու Աս-  
 տուծոյ համար : “ Մահուան պէս զօ-  
 րաւոր է սէրը ,”<sup>1</sup> : Աւ սուրբն (Օգոստին-  
 նոս կ’ըսէ . “ Այսպէս կարծր բան մը  
 որ սիրոյն բոցոյն զիմանայ ,”<sup>2</sup> . վասն զի ,  
 կ’ըսէ , սիրած բանին մէջ կամ աշխա-  
 տութիւնը չիմացուիր , կամ թէ նոյն իսկ  
 աշխատութիւնը սիրելի կ’ըլլայ :

8 . Ասեմք հիմա սրբոյն Յովհաննու  
 Ասկեբերանի թէ ինչեր կը գործէ աս-  
 տուածային սէրը այն հոգիներուն վրայ  
 որոնց վրայ որ կը թագաւորէ : “ Արբոր աս-  
 տուածային սէրը հոգւոյ մը վրայ տիրէ , հոն  
 անշիջանելի փափագ մը կը վառէ իր սիրելոյն  
 համար գործ գործելու . և այնպիսի եռանդ-  
 որ որչափ շատ և մեծամեծ գործքեր ընէ ,  
 և որչափ երկար ժամանակ անոր ծառայու-

1 Բուռն է իբրև զմահ սէր : Երդ .  
 Ը . 6 :

2 Գեղք զԲարոյ . Եկեղ . ԳԼ . ԻԲ :

Թեանը մէջ անցընելու ըլլայ, տակաւին ամէն բան իրեն աչքին ոչ ինչ կ'երևայ, և միշտ կը ցաւի թէ ինչպէս բան մը չընելը Աստուծոյ համար. և թէ որ մեռնիլ ալ պէտք ըլլայ՝ և ինքը զինքը անոր համար ոչ ընչացընել, սիրով յանձն կ'առնէ: Ասոր համար ինչ որ ընէ ամէն բանի մէջ ինք զինքը անպիտան կը համարի. վասն զի սէրը իրեն կը սորվեցընէ թէ ինչ բանի արժանի է Աստուած, և այն ըլլային պայծառութեամբը կը տեսնէ իր բոլոր գործոց պակասութիւնները, և ամէն ըրած բանին վրայ կ'ամբշնայ ու կը վշտանայ, գիտնալով որ իր ըրածը շատ նուաստ է և ամենեւին համեմատութիւն մը չունի այնպիսի մեծ Տիրոջ մը, :

9. Ա՛հ, որչափ կը խաբուի մարդս, կ'ըսէ սուրբն Ֆրանչիսկոս Սալեզեան, թէ որ իր սրբութիւնը ուրիշ բանի վրայ կը դնէ և ոչ աստուածսիրութեան վրայ: « Ոմանք, կը զրէ՛ նոյն սուրբը, խստամբերութեան վրայ կը դնեն կատարելութիւնը, ուրիշները ողորմածութեան վրայ, այլք աղօթքի վրայ, կան ալ որ ստէպ սուրբ

խորհրդոյ մերձենալուն վրայ: Իսկ ես ուրիշ  
կատարելութիւն չեմ գիտեր, բայց զԱս-  
տուած բոլոր սրտով սիրել. վասն զի այլա-  
մենայն առաքինութիւնք առանց սիրոյ քարի  
կոյտի կընմանին: Բայց թէ կատարելապէս  
չենք վայելեր այս սուրբ սէրը, այս պակասու-  
թեան պատճառը մեզմէ է. որովհետեւ բոլո-  
րովին մենք զմեզ Աստուծոյ չենք նուիրեր,, :

10. Տէրն մեր օր մը սրբուհւոյն թե-  
րեղայի ըսաւ. “ Ինչ բան որ ինծի հա-  
ճոյական չէ, ընդունայն բան է,, : Ա՛հ  
ն՛ր էր թէ ամէնքը այս խօսքիա ճշմար-  
տութեանը խելք հասցնէին: Մէկ բան մը  
միայն հարկաւոր է<sup>1</sup>: Հարկաւոր չէ այս  
աշխարհքիս վրայ հարուստ ըլլալ, ուրիշէն  
համարմունք ունենալ, հանգիստ կեանք ան-  
ցընել, պատիւ ստանալ, ինձատունի համ-  
բաւ հանել. հասլա միայն աստուածսիրու-  
թիւնն է հարկաւոր և Աստուծոյ կամքը  
կատարել: Այս նպատակիս համար միայն  
Աստուած ստեղծեց զմեզ, և մեր կեանքը

<sup>2</sup> Բայց աստ սակաւ ինչ պիտոյ է:  
Ղուկ. Ժ. 42:

կը պահէ . և ասով միայն կրնանք ար-  
քայութեան արժանի ըլլալ : “ Օխ իբրև  
կնիք քու սրտիդ վրայ դիր և մատնիի պէս  
աջ ձեռքիդ վրայ , ” <sup>1</sup> : Այսպէս կ'ըսէ  
Տէրն մեր ամէն իրեն հարսնացեալ հոգւոյ .  
դիր զիս իբրև կնիք քու սրտիդ վրայ , և  
քու աջ ձեռքիդ վրայ , որպէս զի քու ամէն  
փափաքներդ և ամէն գործքերդ բոլորովին  
առ իս ուղղես . քու սրտիդ վրայ , որպէս  
զի ինձմէ զատ ուրիշ սէր ներս չմտնէ . և  
աջ ձեռքիդ վրայ , որպէս զի ինչ որ կ'ընես  
բայ ինձմէ ուրիշ վախճան չդիտես : Ա՛հ ,  
ինչպէս կատարելութեան կը դիմէ անիկայ  
որ իր ամէն գործողութեանը մէջ խաչ-  
ելեալ Յիսուսին վրայ է միայն իր աչքը և  
անոր միայն կ'ուզէ հաճոյ ըլլալ :

11 . Արեւմն բոլոր մեր ջանքը այս պիտի  
ըլլայ , որ ճշմարիտ սէր մը ստանանք առ  
Յիսուս Քրիստոս : Հոգւոր կենաց վար-  
ժապետները ասանկ կը ստորագրին ճշմա-

<sup>1</sup> Դեր զիս իբրև զկնիք 'ի սրտի քում',  
և իբրև զմատանի յաջոյ ձեռին քոյ :  
Երգ . Ը , 6 :

րիտ սիրոյ նշանները : Աերը , կ'ըսեն , երէ-  
 չոր է . իրեն բոլոր վախն այն է որ չըլայ  
 թէ Աստուծոյ տհաճութիւն մը տայ : Վէ-  
 հանչն է , որով բոլոր իր յոյսը Աստուծոյ  
 վրայ դրած իրեն փառացը համար որ և իցէ  
 դժուարին բան ալ ըսես յանձն առնելու  
 չի վախնար : Հըօր է , ինչու որ ամէն շար-  
 յօժարութեանցը կը յաղթէ նոյն խակ սաս-  
 տիկ փորձութեանց ու անմխիթար լըք-  
 մանց մը զտնուած ժամանակը : Հնազանդ  
 է , ուստի և կը ջանայ շուտ մը Աստուծոյ  
 խօսքը կատարել : Մասրոյ է , վասն զի  
 զԱստուած միայն կը սիրէ իբրև միակ սի-  
 բելու արժանաւոր : Առանդնաբոբոյ է ,  
 վասն զի կը փափաքի զամէնքը բորբոքել ու  
 Աստուծոյ սիրովը հալած տեսնալ : Օհայ-  
 լէցոյ է , անանկ որ զհոգին ինք իրմէ  
 դուրս կը հանէ իբրև թէ ամենևին եր-  
 կրաւոր բաները չտեսնար ու չիմանար ու  
 կարողութիւն ալ չունենար զանոնք զգա-  
 լու , բոլոր իրեն խելքը միտքը զԱստուած  
 սիրելուն վրայ ըլլալով : Միասորէ է , որ  
 անձուկ լծորդութեամբ մը արարածին կամ-  
 քը իր Արարչին հետ կը միաւորէ : Փափա-

Գող է . այնպէս որ զհոգին զաշխարհս թող  
լու փափագով մը կը լեցունէ , որպէս զի  
կերպով մը Աստուծոյ հետ միանալով եւ  
րանելեաց դաւաոր՝ հոն ալ իր ամենայն  
զօրութեամբը կարենայ զինքը սիրել :

12. Բայց ոչ որ Պօղոս առաքելոյն պէս ,  
որ սիրոյն քարոզն է , ճշմարիտ սիրոյն  
բնութիւնն ու գործագրութիւնը լաւագոյն  
կերպով կրնայ սորվեցնել . ինքը Աորընթա  
յուոյ գրած առաջին թղթոյն մէջ նախ և ա  
ռաջ կ'ըսէ որ առանց սիրոյ մարդս ոչ ինչ  
է , և թէ մէկն որ սէր չունենայ ուրիշ բան  
իրեն օգուտ չըներ : “ Թէ որ , կ'ըսէ , ա  
մէն հաւատք ունենամ ” անանկ որ նաև լեռ  
ները կարենամ տեղէ տեղ փոխել , բայց  
սէր որ չունենամ ” ոչ ինչ եմ : Աւ թէ որ  
բոլոր ունեցածս չունեցածս աղքատներու  
տամ , ու մարմինս ալ կրակի մէջ ձգեմ որ  
այրի , բայց սէր որ չունենամ ” ամենևին օ  
գուտ մը չեմ կրնար տեսնել <sup>1</sup> , : Անանկ

1 Եթէ ունիցիմ զամենայն հաւատս  
մինչև զէրինս փոփոխեալ , և սէր ոչ  
ունիցիմ , ոչ ինչ եմ : Եւ եթէ շամբիցեմ



որ մէկը այն աստիճանի հաւատք ալ ունե-  
 նայ որ ինչուան լիոները տեղերնէն խախ-  
 տէ, ինչպէս որ սուրբ Գրիգոր Սքանչեղա-  
 գործ հայրապետը ըրաւ, բայց սէր որ  
 չունենայ ստակ մ'ալ չաժէր: Թէ որ բո-  
 լոր հարստութիւնը աղքատներուն ցրուէ,  
 ու ինչուան նաև կամաւոր յօժարութեամբ  
 մարտիրոսութեան չարչարանքներէ անյնի,  
 բայց սէր որ չունենայ, կ'ուզեմ ըսել բոլոր  
 ան ըրած գործքերը չէ թէ Աստուծոյ հա-  
 ճոյ ըլլալու համար՝ հապա բողբոլիսն օտար  
 վախճանի մը համար որ կատարելու ըլլայ՝  
 ամենևին օգուտ մը իրեն չըլլար: Այս  
 խօսքերը ըսելէն վերջը սուրբն Պօղոս  
 մեղի ճշմարիտ սիրոյ ցոյցերն ալ կը յիշէ,  
 սորվեցընելով միանգամայն այն առաքի-  
 նութիւնները՝ որ սիրոյ ծնունդքն են, գործ-  
 քով ալ կատարել. «Սէրը, կ'ըսէ, եր-  
 կայնամիտ է ու անուշ. սէրը չնախան-  
 ձիր. վնկբը մեծ բանի մը տեղ չգնիր,

զամենայն ինչս իմ աղքատաց, և մատնի-  
 ցեմ զմարմինս իմ յայրումն, և սէր ոչ  
 ունիցիմ, ոչ ինչ օգտիմ: Ա. Կոր. ԺԳ. 2:

չհարտանար, չյանդգնիր, ինք զինքը չփրկե  
տուեր, չարդողիր, մէկու մը չար չմտածեր,  
անիրաւութեան վրայ չուրախանար, մանաւ  
ւանդ թէ ճշմարտութեան վրայ կ'ուրա-  
խանայ, ամենայն բան կը քաշէ, ամենուն  
կը հաւտայ, ամենայնի կը յուսայ, ամէն  
բանի կը համբերէ <sup>1</sup> ,, :

Աւտի այս մեր գրքիս մէջ մէկիկ մէկիկ  
այս սուրբ կրթութիւններուն վրայ մտա-  
ծեմք . որպէս զի կարենանք տեսնել թէ ի-  
րաւոյրնէ կը թագաւորէ՞ ՚ի մեզ այն սէրը  
որով որ գէշիտուս սպարտական եմք սիրե-  
լու . միանգամայն իմանանք նաև թէ ա-  
ւելի ո՞ր առաքինութեանց մէջ մեմք զմեզ  
պիտի կրթենք որ կարող ըլլանք այս սուրբ

1 Սէր երկայնամիտ է, քաղցրանայ .  
սէր ոչ նախանձի, ոչ ամբարհաւաճէ, ոչ  
հպարտանայ, ոչ յանդգնի, ոչ խնդրէ  
զիւր, ոչ գրգռի, ոչ խորհի զչար, ոչ  
խնդայ ընդ անիրաւութիւն, այլ խնդայ  
ընդ ստուգութիւն . ամենայնի սուէ, ամ-  
ենայնի հաւատայ, ամենեկին յուսայ, ամ-  
ենայնի համբերէ : Ա . Կոր . ԺԳ . 4 .  
5 . 6 . 7 :

սէրը պահել ու երթալով ալ 'ի մեզ ար-  
ծարծել :

ԻՂՁԲ ԵՒ ՊԱՂԱՏԱՆԻՔ

Ո՛վ ամենասիրելի ու ամենայն սիրով  
լցեալ սիրտ Տեառն իմոյ Յիսուսի . սրչափ  
թշուառ է այն սիրտը որ զքեզ չսիրեր :  
Ո՛վ Տէր իմ , դուն խաչին վրայ ամենայն  
մխիթարութենէ զուրկ՝ մարդուս սիրոյն հա-  
մար շունչդ տուիր , և ի՛նչպէս կ'ըլլայ որ  
մարդիկ այսչափ զքեզ մոռնան : Ո՛վ սէր  
աստուածային , ո՛վ աստուածային մարդ-  
կան : Մարդիկ , մարդիկ , աչուրնիդ մէյ-  
մը Աստուծոյ անմեղ գառանը վրայ դար-  
ձուցէք , տեսէք ի՛նչպէս խաչին վրայ տաս-  
տիկ ցաւով կը տագնապի ու կը մեռնի ձե-  
զի համար , որպէս զի ձեր մեղացը հատույ-  
մունքը ընէ Աստուծոյ արդարութեանը , ու  
զձեզ ալ 'ի սէր իւր ձգէ : 'Այեցէք ի՛նչպէս  
մի և նոյն ժամանակ նաև կ'աղաչէ իր եր-  
կնաւոր Հօրը որ ձեզի ներէ : 'Այեցէք ու  
սիրեցէք : Ո՛վ Յիսուս , սրչափ քիչ են  
զքեզ սիրողները : Վայ ինձի ալ որ այն-

չափ տարի զքեզ բնառ չեմ յիշած, անոր  
համար ալ այնչափ քեզի դէմ գործք գոր-  
ծեր եմ: Միրելի Փրկիչ իմ, ոչ այնչափ իմ  
արժանի եղած պատիժներս, որչափ մա-  
նաւանդ քու իմ վրաս ցուցուցած սէրդ զիս  
յարտասուս կը շարժէ: Ա՛յլ ցաւք Յիսու-  
սի, ո՛վ նախատինք Յիսուսի, ո՛վ վէրք Յի-  
սուսի, ո՛վ մահ Յիսուսի, ո՛վ սէր Յիսուսի,  
տալաւորեցէք իմ սրտիս մէջը ձեր քաղցր յի-  
շատակը, որպէս զի միշտ մնալով, ամէն ա-  
տեն անդադար զիս վիրաւորեն ու բորբոքեն  
'ի սէր Փրկչիս իմոյ: Ար սիրեմ զքեզ, այո՛ կը  
սիրեմ զքեզ, Յիսուս, իմ ծայրագոյն բա-  
րիս. կը սիրեմ զքեզ ո՛վ սէր իմ, իմ ամէն  
բանս, կը սիրեմ զքեզ ու միշտ ալ կը փա-  
փաքիմ սիրել: Ա՛աղաչեմ, մի թողուր որ  
մէյ՛մ ալ զքեզ թողում, կորսնցընեմ: Ա՛յ  
զիս ու բոլորովին քուկդ ըրէ վասն ար-  
դեանց մահուանդ: Ա՛յս բանիս հաս-  
տատ յոյս ունիմ: Շատ վստահ եմ քու  
բարեխօսութեանդ վրայ ալ, ո՛վ Արիամ,  
Թադուհի իմ, տուր ինձ սիրել զՅիսուս,  
տուր նաև որ զքեզ ալ սիրեմ, ո՛վ մայր իմ  
և յոյս:

# ԳԼՈՒԽ Ե .

ՍԷՐ ԵՐԿԱՅՆԱՄԻՏ Է .

ԶՅխառս սիրող հոգին նեղուքիւն  
քաշել կը սիրէ :

1. Այս աշխարհքս վարձք շահելու տեղ է , ուստի և նեղութիւն կրելու տեղ : Մեր հայրենիքը՝ ուր որ Աստուած յախտննա կան վայելքով հանդիստ սրատրաստեր է մեզին՝ արքայութիւնն է : Աշխարհքիս վրայ կենալու ժամանակնիս կարձ է . քայց աս կարձ ժամանակուան մէջ քաշելիք նեղութիւննիս շատ է : “ Աշխարհքիս վրայ մարդուս կեանքը կարձ է ու նեղութեամբ լի ,”<sup>1</sup> : Պէտք է վիշտ քաշել . ու ամէն մարդ ունի իր քաշելիքը . թէ արդարմները և թէ մեղաւորները ունին իրենց խաչը : Այլ որ համբերութեամբ կը վերցրնէ՝ փրկութեան կը հասնի , իսկ ուլ որ անհամբերութեամբ՝

1 Այր կանանցածին սակաւակեաց է և լի բարկութեամբ : Յոր . ԺԴ . 1 :

յաւխտեանն կը կորսուի: Մի և նոյն թշուառութիւնները, կ'ըսէ սուրբն ()գոսաթնոս, զոմանս արքայութիւն, զայլս ալ դժոխք կը զրկեն: Նեղութեանց փորձովը, կ'ըսէ դարձեալ նոյն սուրբը, Մտուծոյ եկեղեցւոյն մէջ յարդը ցորենէն կը զատուի. ու որ նեղութեանց ատեն կը խոնարհի ու Մտուծոյ կամայը ինքզինքը կը յանձնէ, այնպիսին արքայութեան համար ցորենն է. իսկ ու որ կը հպարտանայ ու կը նեղանայ որով և զՄտուած կը թողու, դժոխոց յարդն է:

2. Մյն օրը որ մեր փրկութեան դատը պիտի կտրուի, նախասահմանելոց երջանիկ դատակնիքը առնելու համար, հարկ է որ մեր վարքը Յիսուսի վարուցը նման գրտնուի. «Վասն զի զորոնք որ առաջուցուրնէ ճանչցած էր, առաջուց ալ որոշեց իր Արդւոյն պատկերին նմանցընելու իրենք զիրենք»,<sup>1</sup>: Մյս նպատակիս համար Քանն

1 Ձի զորս յառաջն ճանաչէր, յառաջագոյն հրաւիրեաց կերպարանակից լինել պատկերի Արդւոյն իւրոյ: Հռոմ. Ը. 29:

յախտնական աշխարհք եկաւ, որ մեզի  
 իր օրինակաւը սորվեցրնէ՝ Աստուծոյ խաւ-  
 րած խաչերը համբերութեամբ տանելու :  
 « Քրիստոս, կ'ըսէ Պետրոս առաքեալը,  
 ձեզի համար մեռաւ, ու ձեր առջևը թողուց  
 իր օրինակը, որպէս զի իրեն նուէն եր-  
 թաք », <sup>1</sup> : Աւստի Յիսուս անոր համար  
 ուզեց չարչարուիլ որ մեզի ալ սիրտ տայ :  
 Ա՛հ, ինչպիսի կեանք էր Յիսուսին անցու-  
 ցած կեանքը . նախատանօք ու չարչարա-  
 նօք լեցուն կեանք մը : Մարդարէն մեր  
 Փրկչին կ'ըսէր. « Ա՛յն մարդիկներէն խեղճ  
 էր տեսքը . մարդ մը որ ծեծի տակ՝ վշտաց  
 համբերել գիտէ », <sup>2</sup> : Այո՛ Յիսուսի Քրիս-  
 տոսի կեանքը լի եղաւ ցաւովք ու տառա-  
 սրանօք :

3 . Ա՛րդ Աստուած ինչ կերպով որ իր

1 Քրիստոս վասն ձեր մեռաւ, և  
 ձեզ եթող օրինակ՝ զի զհետ երթայցէք  
 հետոց նորա : Ա . Պետր . Բ . 29 :

2 Տեսիլ նորա անարդ նուազեալ քան  
 զամենայն որդւոց մարդկան . այր մի 'ի  
 հարուածս և գիտէ համբերել ցաւոց :  
 Եսայ . ԾԳ . 3 :

սիրելի Արղւոյն հետ վարուեցաւ, նոյն կերպով կը վարուի նաև այն ամէն մարդու հետ ալ զոր կը սիրէ ու իրեն որդւոյ տեղ կ'ընդունի: “Օտլ որ Աստուած կը սիրէ, կը խրատէ, ու այն ամէնքը որ իբրև որդի կ'ընդունի, կը տանջէ,”<sup>1</sup>: Ասոր համար ալ որ մը սրբուհւոյն (Թերեզայի) ըսաւ. “Ղիտցած ըլլաս որ իմ հօրս աւելի այն անձինքն են սիրելի՝ որոնք որ աւելի մեծ վշտեր կը քաշեն,”: Աւստի ասով սրբուհին երբոր նեղութիւն մը ունենար՝ կ'ըսէր թէ իր այն տառասորանքը աշխարհքիս գանձերուն հետ չփոխեր: Մահուրնէն վերջ անգամ մը բարեպաշտ անձի մը երևնալով յայտնեց իրեն որ երկինքը փառաւոր վարձք մը կը վայելէ, ոչ այնչափ իր բարի գործոցը փոխարէն՝ որչափ այն վշտացն ու նեղութեանցը համար որ իր կենացը մէջ յօժարութեամբ Աստուծոյ սիրոյն համար քաշեր էր. և թէ որ սպառճառի մը համար նորէն աչ

<sup>1</sup> Զի զոր սիրէ Տէր խրատէ, տանջէ զամենայն որդի զոր ընդունի: Եբրայեց. ԺԲ. 6:



խարհք դառնալու փափաքի, միայն ատոր  
համար սխտի ըլլայ, որ կարենայ Աստու-  
ծոյ համար քիչ մը բան ալ դեռ քաշել:

4. Ով որ զԱստուած կը սիրէ, նեղու-  
թիւն քաշելով արքայութեան կրկին շահ  
կ'ընէ: Սուրբ Վիչենցիոս Պաւլայեցին  
կ'ըսէր որ այս աշխարհքիս մէջ նեղութիւն  
չունենալը մեծ դժբախտութիւն սեպելու է:  
Ու այս ալ կ'աւելցրնէր որ “Միաբանու-  
թիւն մը կամ որ և իցէ անձ մը որ ամե-  
նեին վիշտ մը չքաշեր, և որուն որ բոլոր  
աշխարհք գովեստ կու տայ, կործանումը  
հասեր է”: Ասոր համար սուրբն իրան-  
չիսկոս Աստուծոյ համար խաչ մը քաշելու  
կ'անցրնէր, կը վախէր որ Աստուած զինքը  
մոռցած ըլլայ: Սուրբ Յովհան Ոսկեբերան  
կը զրուցէ որ երբ Աստուած մէկու մը նե-  
ղութիւն քաշելու շնորհքը կու տայ, շատ  
աւելի մեծ շնորհք կու տայ այնպիսոյն,  
քան եթէ իրեն զօրութիւն տար մեռելներ  
յարուցանելու. վասն զի հրաշք գործելու  
վը մարդս Աստուծոյ պարտական կը մնայ,  
իսկ նեղութիւն կրելով Աստուած մարդուս

պարտական կը մնայ : Ուստի , կ'ըսէր նոյն սուրբ Հայրապետը , ուլ որ Աստուծոյ սիրոյն համար նեղութիւն մը կը քաշէ , թէպէտ և ամենեւին ուրիշ փոխարէն մը չունենայ նոյն իսկ Աստուծոյ սիրոյն համար նեղութեանց տանել կարենալը մեծ վարձք մըն է իրեն : Եւ շատ աւելի մեծ շնորհք կը սեպէր Պօղոսի Յիսուսի համար կապուիլը , քան թէ երբոր երբորդ երկինք յափշտակուեցաւ :

Ճ . “ Համբերութիւն գործ կատարեալունի ”<sup>1</sup> . այսինքն թէ չկայ բան մը որ այնչափ Աստուծոյ հաճոյ անցնի՝ ինչպէս տեսնել հոգի մը որ համբերութեամբ ու խաղաղ պատու իր գրկած խաչերը կը վերցընէ : Ատիկայ գործ է սիրոյ , որ զսիրելին սիրողին նման կ'ընէ : Սուրբն Պրանչիակոս Սալեղեան կ'ըսէր . “ Յիսուսի ամէն վէրքերը մէյմէկ բերաններ են , որ մեզի կը սորվեցընեն թէ ինչպէս պէտք է իրեն համար նեղութիւն քաշել : Այս է գիտութիւն սրբոյ , հաստատուն պնդութեամբ

Յիսուսի համար նեղութեանց համբերել . այս որ ընենք՝ շուտով սուրբ կ'ըլլանք ,, : Ով որ զՅիսուս կը սիրէ , կը փափազի որ ինքզինքը Յիսուսի պէս աղքատ , նախատեալ ու չարչարեալ տեսնայ : Սուրբն Յովհաննէս բոլոր սուրբերը տեսաւ սալիտակազգեստ ու ձեռուրնին արմաւենի բրուհած<sup>1</sup> : Ըրմաւենին մարտիրոսութեան նշան է . սակայն գիտենք որ ամէն սուրբք մարտիրոս չեղան . հասկա ինչո՞ւ համար է ուրեմն որ ամէնքն ալ ձեռուրնին արմաւենի ունին : Պատասխան կու տայ սուրբն Գրիգոր , թէ ամենայն սուրբք ալ մարտիրոս եղած են կամ սրով կամ համբերութեամբ . ու այս ալ կ'աւելցնէ թէ “ Մենք ալ կրնանք առանց երկաթի ու սրոյ մարտիրոս ըլլալ , թէ որ համբերութիւն պահենք ,, :

6 . Օ՛Յիսուս սիրող հոգւոյ մը բոլոր արդիւնքը աս բանիս վրայ է՝ սիրել , ու

<sup>1</sup> Արկեալ զիւրեամբք հանդերձս սալտակա և արմաւենիս 'ի ձեռու իւրեանց : Յայան . է . 9 :

կրել : Տես ինչ ըսաւ Յիսուս սրբուհի Թե-  
րեզային . “Ղուստր իմ, ի՞նչ կարծես, մի՞թէ  
արդիւնքը զմայլելուն վրայ կայացած է . չէ .  
Հասպա կրելու և սիրելու : “Այլ, մէյմը իմ  
կենացս վրայ որ լի է շարժարանօք : Ղիտ-  
նաս , դուստր իմ , որ Հայրս որչափ որ  
մէկը կը սիրէ այնչափ աւելի նեղութիւններ  
իրեն կը դրկէ , և ասով կը շափուի սէրը :  
Տես այս իմ վէրքերս . քու ցաւերդ ոչ եր-  
բէք այսչափս կրնան հասնիլ : Մեծ սխալ  
է համարելը թէ իմ Հայրս իր բարեկա-  
մութեան այնպիսիները կ'ընդունի որ ամե-  
նսին բան մը չեն քաշեր , : Արբուհին  
Թերեզա այս խօսքերուս վրայ մեր միտիժա-  
րութեան համար կ'աւելցրնէ նաև թէ  
“Աստուած ոչ երբէք վիշտ մը կը դրկէ  
առանց շուտով նոր շնորհքով մը անոր  
վճարքը ընելու , : Օր մը Յիսուս Պաթ-  
թիսթա Վարանի անունով սրբակեաց կու-  
սին երևնալով ըսաւ , թէ երեք են մեծա-  
գոյն բարիքը գորս ինքը իր սիրելեացը կ'ը-  
նէ . առաջինը շնորհանչելը . երկրորդը՝ որ ա-  
ւելի մեծ է՝ բարի գործքիք ընել . իսկ երրոր-  
դը՝ որ ամենամեծ է՝ իր սիրոյն համար նե-

զումբիւն կրելը : Ուստի սրբուհին թերեզա  
կ'ըսէր որ երբ մէկը Աստուծոյ համար բարի  
գործք մը կ'ընէ , Աստուած նեղումբիւն մը  
ղրկելով՝ իրեն փոխարէնը կու տայ : Ասոր  
համար սուրբերը երբ նեղումբիւն մը ունե-  
նային՝ Աստուծոյ շնորհակալ կ'ըլլային :  
Գաղղիոյ սուրբ Սուգովիկոս թագաւորը  
Տաճկաց ձեռքը գերի ինկած ժամանակը ,  
իր վրայ խօսելով « Ուրախ եմ , կ'ըսէր ,  
ու Աստուծոյ շնորհակալ կ'ըլլամ՝ աւելի  
անոր համար որ ինձի համբերումբիւն  
տուաւ գերումբեանս ժամանակը՝ քան թէ  
բոլոր աշխարհք ինձի տուած ըլլար » :  
Արքուհին Աղիսաբէթ Տուրինգիոյ իշխա-  
նուհին ալ երբ այրը մեռաւ ու իր որդւոյն  
հետ իր իշխանումբեան երկրէն հալածուե-  
ցաւ , ու թափառական ասդիս անդին ին-  
կած ու ամենուն երեսէն ձգած Ֆրանչիս-  
կեանց վանք մ'որ հասաւ , առջի բանը ե-  
ղաւ Աստուծոյ շնորհակալումբեան համար  
« Օքեզ Աստուած գովարանեմք » , տաղը  
երգել տալ . ինչու որ իրեն սիրոյն համար  
նեղումբիւն քաշելու շնորհքը կ'ընէր :

7 . Սուրբն Յովսէփ Գալատանցիոյ կ'ը-

օճեր թէ “ Արքայութիւնը վաստակելու հա-  
 մար ինչ ջանք ալ որ ընենք ոչ ինչ է ” : Այն  
 բանը իրմէն շատ առաջ ըսեր էր Առաքեա-  
 լը , թէ “ Այս աշխարհքիս չարչարանքները  
 արքայութեան հանդերձեալ փառացը ար-  
 ժանի չեն ” <sup>1</sup> : Մեծ շահ կ'ըլլար մեզի թէ  
 որ բոլոր սրբոց մարտիրոսաց քաջաճները  
 մեր կենացը մէջ քաշէինք՝ արքայութեան  
 մէջ մէկ վայրկեան մ'ալ անցընելու հա-  
 մար , անանկ է նէ որչափ ևս առաւել  
 մեր խաչերը սէտք է որ սիրով գրկենք ,  
 յայտնի գիտնալով որ մեր այս կարճ կե-  
 նացը քաջաճներուն տեղ սխտի յաւիտենա-  
 կան երանութիւն վայելենք : “ Մեր կտոր  
 մը ատենուան քաջած թեթև նեղութիւննե-  
 ըր յաւիտենական փառաց առիթ սխտի ըլ-  
 լան մեզի ” <sup>2</sup> : Սուրբն Ագապիտոս քանի որ

<sup>1</sup> Ոչ են արժանի չարչարանք ժամա-  
 նակիս հանդերձեւոցն փառաց որ յայտ-  
 նելոց են 'ի մեզ : Հռոմ . Ը . 18 :

<sup>2</sup> Առ ժամայն յաճախութիւն թեթև  
 նեղութեանս մերոյ 'ի յաւիտենական ա-  
 աւաւելութիւն , զմեծութիւն փառացն  
 գործէ 'ի մեզ : Բ . Կոր . Դ . 17 :

դեռ սլատանեակ էր, երբ բռնաւորը կը սարտնար որ կրակ կտրած տաղաւարտով մը գլուխը կ'այրէ, դարձաւ պատասխան տուաւ. « Դնծի համար ասկէց աւելի ինչ մեծ բախտ կրնայ ըլլալ որ գլուխս կորարնւցընեմ, որպէս զի տեսնամ վերջէն արքայութեան մէջ պտակուած », : Ընոր համար սուրբ Պրանչիսկոս ալ կ'ըսէր, թէ « Ը կրնկալեալ բարին այնչափ մեծ է, որ անոր առջև ինչ նեղութիւն ալ ըլլայ՝ ինծի զուարճութիւն կ'երևայ », : Բայց ով որ արքայութեան պտակին կը փափագի, պէտք է որ պատերազմի ու նեղութիւն կրէ. « Թէ որ համբերենք նէ վերջէն Ըստուծոյ հետ պիտի մէկ տեղ թագաւորենք <sup>1</sup> », :

Ըռանց արդեանց վարձք չըլար, և ոչ արդիւնք առանց համբերութեան : « Ըպտակուիր թէ որ ինչպէս որ պէտք է նէ չպատերազմի », <sup>2</sup> : Աւ ով որ

<sup>1</sup> Եթէ համբերեմք ընդ նմին և թագաւորեսցուք : Բ. Տիմ. Բ. 12 :

<sup>2</sup> Ոչ պտակի էթէ ոչ ըստ օրինին մարտիցէ : Բ. Տիմ. Բ. 5 :

մեծագոյն համբերութեամբ կը պատերազմի, մեծագոյն պսակին ալ արժանի կ'ըլլայ : Շատ բան . երբ խօսքը աշխարհքիս անցաւոր բաներու վրայ կ'ըլլայ, աշխարհասէրք տեսնես ամէն փոյթ կ'ընեն որ սրչափ որ կրնան աւելի շահին : Իսկ երբոր յախտենական բարեաց վրայ դայ խօսքը՝ է՛հ, կ'ըսեն, ի՛նչ պիտի ըլլայ . բաւական է ինծի որ արքայութեան մէջ անկիւն մը գտնամ . բայց սակայն սուրբերը ասանկ չեն խօսիր . իրենք այս աշխարհքիս վրայ որ և իցէ բանով զոհ կ'ըլլան, մանաւանդ թէ բոլոր մէկդի կը ձգեն երկրաւոր բարիքները . իսկ երկնաւոր բարիքները կը ջանան որչափ կրնան նէ աւելի շատ ձեռք ձգեն : Հիմա կը հարցընեմ քեզի . աս երկուքէն ո՞րը աւելի խելքով ու խոհեմութեամբ կը շարժի :

Տ . Բայց խօսքերնիս այս աշխարհքիս վրայ ալ դաւով յայտնի բան է որ ով սր աւելի համբերութեամբ կ'անցընէ՝ աւելի խաղաղ կ'ըլլայ սիրտը : Սուրբն Փիլիպպոս Աերեան կ'ըսէր թէ « Ես աշխարհքիս մէջ քաւարան չիայ, հասլա կամ արքայու-



Թիւն է կամ դժոխք . ուլ որ համբերու  
 Թիամբ նեղութիւնները կը քաշէ՝ արքայու  
 Թիւնը կը վայելէ . իսկ ուլ որ չէ՝ դժոխքը , :  
 Աւ իրաւցընէ, վասն զի, ինչպէս որ սրբուհին  
 Թեբեզայ կը գրէ, ուլ որ Աստուծոյ զըկած  
 խասերը սիրով կ'ընդգրկէ՝ չզգար : Սուրբն  
 Ֆրանչիսկոս Սալեզեան անգամ մը չորս  
 կողմը նեղութիւն առած ըլլալով՝ ըսաւ .  
 “Ատեն մը կայ որ զլսէս անցած հակառա  
 կութիւններն ու դաղանի դիմամարտու  
 Թիւնները վրաս այնպիսի քաղցր խաղաղու  
 Թիւն մը կը բերեն՝ որուն նմանը չկայ . ու  
 ինծի դուշակել կու տան որ մտեցեր է  
 հոգւոյս իր Արարչին հետ միաւորութիւնը .  
 որն որ ճշմարիտը խոստովանելով սրտիս մէկ  
 հատիկ փառասիրութիւնն ու փափազն  
 է , : Խառնակ կեանք անցընողը չկրնար  
 խաղաղութիւն գտնել . հասլա միայն անի  
 կայ՝ որ Աստուծոյ հետ միացեալ ու իրեն  
 սուրբ կամայը հստատակ կ'անցընէ՝ կեան  
 քը : Քարողիչ կրօնաւորին մէկը հնդկաս  
 տան դատապարտելոյ մը հանդիսիլով որ  
 մահուան տեղը կեցած էր սպաննուելու  
 համար , բոլն որ մտեցաւ՝ ասիկայ դար

ձառ “ Հայր իմ, ըսաւ, գիտցած ըլլաս որ ես  
քու հաւատքիդ տէրն եղած եմ. քանի որ  
կարգը կանոնը բռնեցի՝ միշտ գոհ կեանք  
մը անցուցի. բայց երբ ընդհակառակն  
սկսայ թուլնալ՝ սկսայ միանգամայն ամենայն  
բանի մէջ դառնութիւն մը զգալ. ու այն  
ատրիճանի հասայ, որ հաւատք օրէնք ծաւ  
լած՝ ինքզինքս ամէն կերպ ակտիւ ու մոլու  
թեանց ձեռքը մատնեցի, որոնք վերջապէս  
այս թշուառ միճակիս զիս հասուցին ”: Ու  
խօսքը լմնցնելով ըսաւ. “ Այս բանս քեզի  
անոր համար պատմեցի՝ որպէս զի իմ օրի  
նակս կարենայ ուրիշներուն օգտակար ըլ  
լալ ”: Արանաշնորհն Առիճի Տա Բճնդէ  
կ’ըսէր թէ “ Աս աշխարհքիս անոյշ բանե  
րը լեղոյ տեղն որ առնես, ու լեղին՝ անուշի  
տեղ, միշտ խաղաղ կ’ըլլաս ”: Այն զի  
անոյշը թէպէտ զգայարանաց ակտրժելի  
կու գայ, սակայն միշտ մէկ խրդճմտան  
քի դառնութիւն մը կը թողու այն սրակա  
սաւոր հեշտութեանց համար որ գրեթէ  
միշտ այնպիսի բաներու մէջ կ’ունենանք.  
բայց դառն բաները համբերութեամբ Աս  
տուծոյ ձեռքէն ընդունելովսիս՝ կը դառ

հան կ'ըլլան մէյակ անոյշ ու սիրելի բաներ այն հոգւոյ՝ որ զՄատուած կը սիրեն :

9 . Խեղուընիս սէտք է լաւ պառկեցընենք՝ որ այս արտասուաց հովտին մէջ կարելի բան չէ սրտի ճշմարիտ հանգստութիւն ունենալ, բայց այն միայն՝ որ Մատուծոյ հաճոյական բան ընելու համար բոլոր նեղութիւնները սիրով կը քաշէ ու կը համբերէ : Մ. յս է ասպականեալ բնութեան միջակը, որով ասպականած ենք ամէնքս ալ մեղաց պատճառաւ : Սրբոց երկրիս վրայի միճակն է նեղութեանց համբերել սիրելով, խակ երկինքը՝ զմայլել սիրելով : Արքայ սերն Սենեկրի անգամ մը իր խոստովանորդւոցը մէկը աւելի յորդորելու համար ՚ի համբերել՝ դրեց որ դիմացը ունեցած խաչին տակը այս խօսքս գրած պահէ .  
 “ Մ. յսպէս կ'ըլլայ սիրել ” : Աչ եթէ նեղութիւն կրելը, այլ ուզելը նեղութիւն կրել վասն սիրոյն ( Յիսուսի յայտնի նշան է իմանալու թէ արդեօք մէկը կը սիրէ՞ զՅիսուս :  
 “ Ի՞նչ աւելի մեծ շահ կրնանք ստանալ, կ'ըսէր սրբուհին Թերեզա, բայց եթէ վկայութիւն մը ունենալ որով գիտնանք

Թէ Մտուծոյ ակտորժելի բան մը կ'ընենք ,, : Մշաղ . մարդկանց մեծ մասը միայն խաչի , խոնարհութեան ու վշտաց անունը լսելով կը զարհուրին . բայց սակայն չեն ալ սրակոխոյր այնչափ սիրով վառեալ հոգիներ ալ որ բոլոր իրենց զուարճութիւնը նեղութիւն կրելու վրայ դրած են , ու կարծեա թէ անմխիթար կը մնային թէ որ առանց բան մը քաշելու որ ապրէին :  
 “ Օ՛հ իսուս խաչի վրայ տեսնալը , կ'ըսէր աստուածարեալ անձ մը , ինծի անանկ սիրելի կ'ընէ զխաչը՝ որ կը կարծեմ թէ առանց նեղութիւն քաշելու մարդս երջանիկ չկրնար ըլլալ : Յիսուսի սէրը ինծի ամէն բանի տեղ բաւական է ,, : Մհաւասիկ Յիսուս այս խրատը կու տայ որոնց որ իր ետեւէն կ'ուզեն երթալ . խաչը առնել ու իր ետեւէն երթալ <sup>1</sup> : Բայց սակայն խաչը սէտք է առնել ու տանիլ , չէ թէ բռնի ու դժկամակութեամբ , հասլա խոնարհութեամբ , համբերութեամբ ու սիրով :

<sup>1</sup> Առցէ զխաչ իւր հանապաղ և եկե սցէ զհետ իմ : Ղկ . Թ . 23 :

10. Ո՛հ, ի՛նչ հաճոյական բան կ'ընէ  
 Աստուծոյ ու՛ որ խոնարհութեամբ ու  
 համբերութեամբ Աստուծոյ զրկած խաչերը  
 կը վերցընէ : Սուրբն Իգնատիոս Լոյո-  
 լեան կ'ըսէր թէ « Սուրբ խաչին փայտը  
 ամէն փայտէ աւելի յարմար է Աստուծոյ  
 սէրը ստղաբերելու և սղահելու միանգա-  
 մայն », . այսինքն է սիրել զԱստուած նաև  
 վշտաց մէջ : Օր մը սրբուհին Գեղբրուտէ  
 հարցուց Յիսուսի թէ « Տէր իմ, ի՛նչ աւելի  
 քեզի հաճոյագոյն բան մը կ'ընամ՝ նուիրել », .  
 պատասխանեց Յիսուս . « Դուտար իմ,  
 չես կրնար աւելի հաճոյագոյն բան մը ընել  
 ինձի քան թէ ամէն քեզի պատահած նե-  
 ղութեանցը համբերութեամբ տանիս », :  
 Ուստի մեծ աղախինն Աստուծոյ Վ իկտո-  
 ըրիա Անճելինի կ'ըսէ թէ որ մը խաչի վրայ  
 անցընելը՝ հարիւր տարուան բոլոր ուրիշ հո-  
 դեոր կրթութիւնները կ'աժէ : Այլ երա-  
 նաչնորհ Յովհաննէս Աբիլա ալ կ'ըսէր  
 թէ « Ներհակ ու կամքին դէմ եղած բա-  
 ներուն մէջ մէկ փոքր չէր քէր մը ըսելը՝  
 յաջողութեանց ժամանակը ըրած հազար  
 շնորհակալութեան աղօթքներէն աւելի դին

ու յարգ ունի ,, : Ափսոս որ մարդիկ չեն  
 ճանչնար թէ Աստուծոյ համար քաշուած  
 նեղութիւնները ինչ մեծ արժէք ունին :  
 Անձէլա Տա Գողինեոյ կոյսը կ'ըսէր թէ  
 “ Աստուծոյ համար խաչ քաշելը թէ որ  
 մենք ճանչնայինք , իրարմէ յափշտակե-  
 լու բան մը պիտի ըլլար ,, . կ'ուզէ ըսել  
 թէ ամենայն մարդ ան ատեն ամենայն  
 ջանք կ'ընէր որ ուրիշներուն ձեռքէն համ-  
 բերելու առիթ մը յափշտակէ : Ասոր հա-  
 մար սրբուհին Սարիամ՝ Սաղգաղինէ  
 Բացեան , նեղութեանց յարգը ճանչնա-  
 լով , կը փափագէր որ աւելի կեանքը եր-  
 կրննայ քան թէ մեռնի ու արքայութիւն  
 երթայ . ինչո՞ւ ըսես նէ , “ Վասն զի , կ'ը-  
 սէր , երկինք նեղութիւն քաշել չկայ ,, :

11 . Հոգի մը որ զԱստուած կը սիրէ՝  
 ուրիշ բան չմտածեր , բայց եթէ բոլորովին  
 Աստուծոյ հետ միանալ . բայց այս կատա-  
 ընալ միութեանն համար նայէ ինչ կ'ըսէր  
 սրբուհին Աստարինէ Գենուացին . “ Աս-  
 տուծոյ հետ միանալու համար ամենահար-  
 կաւոր բաներ են ձախորդութիւնները .  
 փսն զի ասոնց ձեռքովը Աստուած կ'ուզէ

մեր ներքին ու արտաքին չար շարժմունքները սպառել: Ասոր համար ամէն անիրաւութիւն, նախատինք, հիւանդութիւն, ծնողաց և բարեկամներու երեսէ ինկնալ, ամօթով մնալ, փորձութիւնները, ու որ և լցէ ուրիշ մեզի դէմ ներհակ բաները բոլորն ալ մեզի ամենահարկաւոր բաներ են, որպէս զի պատերազմինք, մինչև որ յաղթութեան ճամբով մեր ամէն չար շարժմունքները այնպէս տկարանան՝ որ ալ ամենևին զանոնք չզգանք. ու ինչուան որ այս ճախորդութիւնները կամ ներհակութիւնները մեզի Աստուծոյ սիրոյն համար չսկսին քաղցր երևնալ, չենք կրնար բնաւ Աստուծոյ հետ միանալ, :

12. Այս ամէն ըսած բաներուս նայելով՝ հոգի մը որ կը փափաքի բոլորովին Աստուծոյ ըլլալ, պէտք է որոշ միտքը դնէ, ինչպէս սուրբն Յովհաննէս Ղաչեան կ'ըսէ, որ այս աշխարհքէիս մէջ չէ թէ վայելք՝ հապա ամենայն բանի մէջ նեղութիւն պիտի փնտռենք, սիրով յանձն առնելով ամէն կամաւոր մահացումները, ու մեծադոյն եռանդեամբ ու փափագանօք՝

ակամայները . ինչու որ աս ետքիններս  
 Աստուծոյ աւելի սիրելի են : Սողոմոն կ'ը-  
 սէ . “ Համբերող մարդը ուժով մարդէն ա-  
 ւելի աղէկ է ,<sup>1</sup> : Իբաւ Աստուծոյ հաճոյա-  
 կան է այն որ սպաճք սպահելով , խարաղ-  
 ներ հագնելով , խարազանաբախ ըլլալով ինք-  
 զինքը կը մահացուցանէ այն ուժին սատ-  
 ճառաւ որ զինքը մահացընելու համար կը  
 գործածէ , բայց շատ աւելի իրեն հաճոյա-  
 կան է այն որ ուժ ունի համբերութեամբ և  
 ուրախ սրտով Աստուծոյ դրկած խաչերը  
 քաշելու : Սուրբն Ֆրանչիսկոս Սալե-  
 վեան կ'ըսէր . “ Այս մահացուցմունքներն  
 որ մեզի Աստուծոյ կողմանէ կու գան ,  
 կամ իրեն թոյլ տալովը՝ մարդիկներէն ,  
 շատ աւելի յարգի են քան թէ այն մահա-  
 ցուցմունքներն՝ որ մեր կամացը ծնունդն  
 են . վասն զի ընդհանուր կանոն է որ ուր  
 որ մեր ընտրութիւնը նուազ է , հոն աւելի  
 կը գտնուի Աստուծոյ հաճութիւնը ու մեր  
 մեծագոյն օգուտը , : “ Այն ազդարարու-

1 Աւա է այր երկայնամիտ քան զհզօր :  
 Առակ . Ժ. 2 . 32 :



Թիւնը կ'ընէր նաև սրբուհին Թերեզա .  
 « Մէկ օր մը Աստուծմէ և կամ ընկեր-  
 ներէն եկած նեղութեանցն համբերելով  
 մարդ շատ աւելի վաստակ կ'ընէ , քան թէ  
 տասը տարի իր կողմանէ ճգնութիւններ  
 կատարէ ,, : Ուստի սրբուհին Մարիամ  
 Մագդաղինէ Քայեան մեծանձնութեամբ  
 մը կ'ըսէր թէ չկայ աշխարհքիս վրայ վիշտ  
 մը որչափ դառն ալ ըլլայ զորն որ ինքը  
 ուրախութեամբ քաշել յանձն չառնու ,  
 մտածելով՝ որ Աստուծոյ ձեռքէն եկած  
 է : Այլ իրօք ալ այն սաստիկ տաղնասինն  
 ըուն մէջը՝ որ սրբուհին հինգ տարուան  
 փորձութեանցը մէջ քաշեց՝ բաւական էր  
 իրեն միտքը միայն ձգել թէ Աստուծոյ  
 կամքն է որ ինքը այս բաներս քաշէ , որ  
 մէկէն սիրտը կը հանգչէր : Ա՛հ , Աստուած  
 մը ստանալու համար , այն գերագոյն  
 գանձը , ինչ ծախք ալ ընենք քիչ է :  
 Հայրն Հիսպոգոլիտոս Տուրացոյ կ'ըսէր  
 թէ՝ « Աստուած որչափ ալ արժէ՝ ոչ եր-  
 բէք սուղ է ,, :

13 . Հասպա ուրեմն Աստուծոյ ոտքն  
 ինկնանք , աղաչենք իրեն որ իր սուրբ սիրոյն

զմեց արժանի ընէ . վասն զի թէ որ զինքը  
 կատարելապէս սիրենք նէ՛ ալ անկից ետև  
 այս աշխարհքիս բոլոր բարիքները ծուխ ու  
 կաւ կ'երևան մեզի , իսկ նախատինքն ու  
 նեղութիւնները մեզի մէյմէկ զուարճու-  
 թիւններ կը դառնան : Ասենք թէ ի՛նչ կ'ը-  
 սէ սուրբն Ասկերերան խօսելով հոգւոյ մը  
 վրայ՝ որ ինքզինքը բոլորովն Աստուծոյ է  
 տուեր . “ Ա՛էկն որ Աստուծոյ կատա-  
 րեալ սիրոյն հասնելու ըլլայ՝ այնպէս մը  
 կ'ըլլայ որ իբրև թէ ինքը միայն ըլլար աշ-  
 խարհքիս վրայ . ալ ոչ փառք կը նայի , ոչ  
 նախատինք . կ'անարգէ փորձութիւններն ու  
 նեղութիւնները . կը կորսնցունէ ամենայն  
 բանի համն ու ախորժը : Աւ չգանալով  
 բան մը որուն յենու և յոր հանգչի , անգա-  
 դար առանց ամենևին յոգնելու իր սիրել-  
 ւոյն ետևէն կը վազէ . այնպէս որ թէ աշ-  
 խատելու , թէ ուտելու , թէ հսկելու , թէ  
 ննջելու և թէ ուր և իցէ գործողութեանց  
 ու խօսակցութեանց ատենը՝ բոլոր իր ջան-  
 քը իր ամէն մտածութիւնն այն է՝ որ իր  
 սիրելին գտնայ . վասն զի հոն է իր սիրտը  
 ուր որ իր զանձն է , , :

Այս դժխտ մէջ խօսեցանք համբերութեան վրայ ընդհանուր մտքով. ժե գլխին մէջ աւելի այն առանձնական բաներու վրայ կ'իջնանք, որոնց մէջ որ մտնաւորապէս մեր համբերութիւնը պիտի կրթենք :

ԻՂԶԲ ԵՒ ՊԱՂԱՏԱՆԲ

Ո՛վ սիրելիդ իմ և ցանկալիդ Յիսուս, Յիսուս գանձդ իմ, ո՛հ ես քեզի դէմ ըրած այնչափ յանցանացս համար արժանի չէի որ զքեզ սիրեմ, բայց սակայն քու արդեանցդ համար ըլլայ կ'ազաչեմ արժանի ըրէ զիս քու սուրբ սիրոյդ : Ա՛մէն բանեաւելի կը սիրեմ զքեզ . և բոլոր սրտանց կը ցաւիմ որ ատեն մը զքեզ անարգեցի ու հողիէս դուրս վճռեստեցի . իսկ հիմայ ինծմէ աւելի զքեզ կը սիրեմ, կը սիրեմ զքեզ բոլոր սրտովս, ո՛վ անսպառ բարի . կը սիրեմ զքեզ, կը սիրեմ, կը սիրեմ զքեզ, և ուրիշ բանի չեմ փափագիր, բայց եթէ կատարեալապէս զքեզ սիրել . և ուրիշ բանէ չեմ վախեր, բայց եթէ զիս քու սուրբ

սիրոյդ զրկուած տեսնել : Ո՛հ սիրապա-  
տար Վրկիչ խմ, տուր ինձի ճանչնալ թէ  
ինչ մեծ բարի ես, տուր որ կարենամ խմա-  
նալ թէ ինչպիսի սէր էր որ վրաս ցուցու-  
ցիր, սրպէս զև զքեզ սիրելու ստիպես զես :  
Եստուած խմ, մի թողուր որ ան ապե-  
րախտ դտնուիմ քու այսչափ բարերարու-  
թեանցդ դէմ : Ո՛հ, շատ է մինչև ցայժմ  
գործած մեղքերս . ասկէց ետև մէյմ՝ ալ  
չեմ ուզեր թողուլ զքեզ . բոլոր մնացած  
տարիներս զքեզ սիրելու պիտի անցընեմ ու  
քեզի հաճոյ գործքեր ընելու : Հիտուս սէրդ  
խմ, օգնէ ինձի, օգնէ ողորմելի մեղաւորի մը  
որ կը ցանկայ զքեզ սիրել ու բոլորովն  
քուկդ ըլլալ :

Ո՛վ յոյս խմ, Մարիամ կոյս, քու Որ-  
դիդ քեզի չէ չըսեր . բարեխօսէ և ընդու-  
նէ ինձի համար զինքը կատարեալ սիրելու  
չնորհքը :

## ԳԼՈՒԽ Զ .

ՍԷՐ ՔԱՂՅՐԱՆԱՅ .

Ո՛վ որ կը սիրէ զՅիսուս , կը սիրէ  
զքաղցրութիւնն :

1 . Քաղցրութեան հոգին Աստուծոյ  
յատուկ է . “ Իմ յիշատակս մեղրէն անուշ  
է , ”<sup>1</sup> : Ուստի զԱստուած սիրող հոգին կը  
սիրէ նաև զայն ամէնքը զորոնք որ Աս-  
տուած կը սիրէ , որ են մեր ընկերները . ա-  
սանկով՝ ամենայն յօժարութեամբ առիթ կը  
փնտրէ որ ամենուն օգնէ , ու որչափ որ  
ձեռքէն գայ զամէնքը մխիթարէ ու գոհ  
ընէ : Սուրբն Քրանչիսկոս Սալեղացին՝  
որ վարժապետ ու օրինակ մը եղաւ սուրբ  
քաղցրութեան՝ կ'ըսէ թէ “ Խոնարհամիտ  
քաղցրութիւնը , զոր Աստուած այնչափ մեղի  
պատուիրած է , առաքինութեանց առաքի-  
նութիւնն է . ուստի պէտք է որ միշտ և

<sup>1</sup> Յիշատակ իմ քան զմեզր քաղցր է :  
Սիրաք . ԻԳ . 27 :

ամէն կերպով գործքով ջանանք կատարել,, : Ուստի սուրբը մեղի այս կանոնը կու տայ . “ Այն որ կը տեսնաք որ կարելի է սիրով կատարել՝ ըրէք . և այն որ առանց ընդդիմութեան կատարել չըլլար՝ մ՛ընէք ,, : Այլ զի ըսել՝ թէ որ կարելի է զանց ընել առանց Աստուծոյ դէմ մեղք ընելու . վասն զի մեղքը միշտ պէտք է արգելու . և որուն որ պարտքն է արգելելը՝ որչափ կարելի է պէտք է շուտ մը արգելու :

2. Այս անուշութիւնը մասնաւորապէս աղքատաց հետ պիտի բանեցրնենք , որոնք սովորաբար աղքատ ըլլալուն համար մարդիկ խտուրտութեամբ հետեւնին կը վարուին : Արձեալ առանձին կերպով մը նաև հիւանդաց հետ , որոնք հիւանդութենէն մեծապէս վշտացեալ են , ու քիչ անգամ կ'ըլլայ որ մարդիկ պէտք եղած խնամքը վրանին ցուցրնին : Բայց ևս առաւել այս անուշութիւնը մեր թշնամեացը պիտի ցուցրնենք . “ Բարի գործքերովդ յաղթէ չարին ,, <sup>1</sup> :

1 Յաղթեալ բարեաւն չարին : Հռոմ . ԺԲ . 21 :

Պէտք է ատելութեան՝ սիրով յաղթել, ու  
 հալածանաց՝ քաղցրութեամբ. այսպէս  
 ըրին սուրբերը, ու իրենց անուշութեամբը  
 ինչուան իրենց կատաղի թշնամեացը սէրը  
 շարժեցին :

3. Սուրբն Պրանչիսկոս Սալեզիան կ'ը-  
 սէ թէ՛ « Չկայ բան մը որ այնչափ ընկեր-  
 ներուն շինութիւն ըլլայ՝ ինչպէս վարմունքի  
 մջ քաղցր մարդասիրութիւնը », : Ասոր  
 համար սուրբը միշտ ծիծաղերես կ'երևար,  
 ու բոլոր խօսքերէն ու ձևերէն անուշութիւն  
 կը վազէր. սուրբ Վ ինչննցիտս Պաւլայեցին  
 ալ կը վկայէ թէ սուրբ Պրանչիսկոսէն ա-  
 ւելի անուշ մարդ մը չէ տեսած : Գար-  
 ձեալ ուրիշ տեղ ալ կ'ըսէ թէ Սալեզացին  
 Յիսուսի քաղցրութեանը ինծի պատկերը  
 կ'երևար : Արբոր իրմէն բան մը ուզէին  
 որ խղճմտանքովը չէր կրնար հա ըսել,  
 այնպիսի քաղցրութեամբ մը չէ կ'ըսէր,  
 որ դիմացինին թէպէտ ուղածը չըլլար՝  
 բայց սիրտը կը վառէր ու դո՛հ սրտով իր-  
 մէն կը դառնար : Ամենուն հետ ալ նոյն  
 անուշութեամբ կը վարուէր. թէ մեծաւո-  
 թայ հետ եղեր է, թէ հաւասարակցաց

և թէ ստորնագունից հետ . թէ տունը  
 և թէ դուրսը : Բողոքովն տարբեր  
 այն մարդիկներէն , որ ինչպէս սուրբը  
 կ'ըսէ , “ Տնէն դուրս հրեշտակ կը նմա-  
 նին , իսկ ներսը՝ սատանայ ” : Օրառայից  
 հետ ալ վարուելու ժամանակ ոչ երբէք  
 անոնց պակասութեանը վրայ գանդատ մը  
 կ'ընէր . հազիւ թէ երբեմն իրենց ազ-  
 դարարութիւն մը կ'ընէր , այն ալ մեղմ  
 ու անոյշ խօսքերով : Այս բանս ա-  
 մէն մեծաւորաց համար ալ գովելի բան  
 մըն է : Մեծաւորը իր հպատակացը հետ  
 պէտք է որ ամէն քաղցրութիւն բանեցընէ .  
 երբոր բան մը իրենց պիտի ապսպրէ որ  
 կատարեն , աւելի պիտի աղաչէ բան թէ  
 հրամայէ : Սուրբն Վինչենցիոս Պաւլայե-  
 ցին կ'ըսէր թէ “ Բաղցրութենէն զատ  
 ուրիշ կերպ չկայ որ հպատակները մեծա-  
 ւորաց հնազանդիլ տայ ” : Աոյնպէս նաև  
 սրբուհին Յովհաննա Շանթալ կ'ըսէ .  
 “ Շատ տեսակ կառավարելու կերպեր փոր-  
 ձեցի , բայց քաղցր ու համբերող կառա-  
 վարութենէն լաւ կերպ մը չկրցայ գտնել ” :

4 . Մեծաւորը պակասութիւնները



յանդիմանելու ատենն ալ նայի պիտի  
 որ քաղցր ըլլայ . ուրիշ է ուժով յան-  
 դիմանել, ուրիշ է խստութեամբ յանդի-  
 մանել . պէտք է երբեմն ուժով յանդի-  
 մանել երբ յանցանքը մեծ ըլլայ, մա-  
 նաւանդ երբ ուրիշ անդամ ալ նոյն բանին  
 վրայ հպատակը խրատուած ըլլայ . սակայն  
 մեծասպէս զգուշանալու է որ չըլլայ թէ  
 խստութեամբ ու բարկութեամբ ըլլայ յան-  
 դիմանութիւնը . ով որ բարկութեամբ կը  
 յանդիմանէ, աւելի մնաս՝ քան թէ օգուտ  
 կ'ընէ : Այս է ահա այն դառն նախան-  
 ձայուզութիւնը զոր սուրբն Յակոբոս կը  
 պարսաւէ : Ոմանք կը պարծին թէ իրենց  
 խիստ կերպովը ընտանիքինն շատ լա-  
 կը բռնեն, ու կ'ըսեն ալ թէ ասանկ կ'ըլ-  
 լայ կառավարել : Սակայն սուրբն Յա-  
 կոբոս ասանկ չըսեր . « Թէ նախանձու  
 դառնութիւն ունենաք . . . մի պարծիք »<sup>1</sup> :

1 Թէ նախանձ և դառնութիւն և հա-  
 կառակութիւն ունիցիք 'ի սիրտս ձեր մի  
 պարծիք սուտ առնել զճշմարտութիւն :  
 Յակ. Գ . 14 :

Թէ որ երբեմն , այն ալ շատ քիչ անդամ ,  
 հարկաւոր ըլլայ յանցաւորին քանի մը  
 խիստ խօսքեր ալ ըսել յանցանքին ծան-  
 րութիւնը ըմբռնել տալու համար , սակայն  
 միշտ խօսքը ըմբռնելու ատեն անուշ բերնով  
 պէտք է իրեն քանի մը քաղցր խօսքեր ալ  
 աւելցընել : Այնպէս Սամարացոյն ըրա-  
 ծին պէս վերքը գինւով ու ձիթով բժշկել  
 “ Այլ որովհետեւ , կ'ըսէր սուրբն Ֆրան-  
 շիսկոս Սալեպեան , ձէթը միշտ որ և իցէ  
 հեղանիւթոյ երեսը կ'ելայ , ասանկ ալ քաղ-  
 ցրութիւնը պէտք է մեր ամենայն գործոյ  
 վրայ կենայ ” : Այլ երբ տեսնես որ յանդի-  
 մանութիւն տալու անձը խռոված է ,  
 պէտք է յանդիմանութիւնը ուշացընել և  
 սպասել որ բարկութիւնը անցնի . ասանկ որ  
 չըլլայ՝ զինքը 'ի բարկութիւն կը գրգռես :  
 Սուրբն Յովհաննէս կանոնիկոս կրօնաւորը  
 կ'ըսէր՝ Թէ տունը այրած ժամանակը պէտք  
 չէ վրան նոր փայտ աւելցընել :

5 . “ Չէք գիտեր թէ ինչ հոգւոյ տէր  
 էք ” <sup>1</sup> : Եսանկ ըսաւ Յիսուս իր երկու

<sup>1</sup> Աջ գլխէք որոյ ոգւոյ էք : Առկ . Թ . 55 :

առարեւոյր Յակորայ և Յովհաննու, որոնք  
 որ կ'ուզէին Սամարայիքը պատիժներով  
 խրատել. ինչու որ իրենց երկրէն վաճնտեր  
 էին զԻրենք: Ա՛հ, առ ի՞նչ հոգի է, պա-  
 տասխան տաւ Յիսուս. առիկայ իմ  
 հոգիս չէ. վասն զի իմ հոգիս քաղցր է և  
 բարեգութ. և չէ թէ հոգիները ՚ի կորուսա-  
 մասնելու եկեր եմ, այլ մանաւանդ թէ  
 փրկելու: «Արդի մարդոյ ոչ եկն կորու-  
 սանել զհոգիս, այլ կեցուցանել»,<sup>1</sup> և դուք  
 կ'ուզէք որ հիմա զասոնք կորսնցնեմ.  
 Ընցէք, ու մէյմ՝ ալ չեմ ուզեր որ այդ-  
 պիտի բաներ ինձմէ խնդրէք, վասն զի ա-  
 տիկայ իմ հոգիս չէ: Այլ իրաւցրնէ նայե-  
 ինչ քաղցրութեամբ այն շնայեալ կնոջը հետ  
 վարուեցաւ Յիսուս. «Մ՛վ կլին, ըսաւ իրեն,  
 մարդ զքեզ չըգատապարտից. անանկ է՛նէ  
 և ոչ ես զքեզ կը գատապարտեմ. դ՛նա,  
 բայց մէյմ՝ ալ ասկէց ետեւ շմեղանչես»,<sup>2</sup>:

1 Ղուկ. Թ. 56:

2 Կին դու ո՛չ որ զքեզ գատապար-  
 տեաց. և ոչ ես զքեզ գատապարտեմ. . .  
 երթ յայսմ հետէ մի մեղանչեր: Յովհ.  
 Ը. 10. 11:

Բաւական սեպեց զինքը խրատել որ ալ  
 չմեղանչէ, ու զինքը խաղաղութեամբ զըր-  
 կեց : Դարձեալ որպիսի քաղցրութեամբ  
 ջանաց նաև Սամարուհին ալ դարձրնել,  
 ու դարձուց ալ. նախ և առաջ խմելու ջուր  
 ուղեց, ու վերջէն լուսաւ. « Ո՛հ, թէ գիտ-  
 նայիր թէ ուլ է որ քեզմէ ջուր կը խնդրէ », :  
 Աս ըսելէն ետև իմացուց իրեն որ ինքն է  
 Սեսիայն, որուն այնչափ կը սարասէին :  
 Դարձեալ ինչպիսի անոյշ կերպերով ուղեց  
 նաև Յուդան ալ դարձի բերել. իր առջևի  
 սնակէն իրեն կերակուր մասն հանեց,  
 ոտուրները լուաց, ու նոյն իսկ մատնու-  
 թեանը ժամանակ դեռ չէր դադրեր զինքը  
 խրատելէն. « Յուդա, կ'ըսէր, պագնելով  
 մի զիս կը մատնես », <sup>1</sup> : Հասլա Պետրոս,  
 ինչպէս եղաւ որ զինքը ուրանալէն վերջը  
 նորէն զղջումի եկաւ. նայէ ինչ կ'ըսէ Ա-  
 վտարանը. « Դարձաւ Յիսուս ու Պետրո-  
 սին նայեցաւ », <sup>2</sup> : Բահանայապետին անէն

1 Յուդա համբուրելով մատնեսս զոր-  
 գի մարդոյ : Ահ . ԻԲ . 48 :

2 Դարձաւ Տէր և հայեցաւ 'ի Պեա-  
 րոս : Առևկ . ԻԲ . 51 :

դուրս ելելու ժամանակը առանց ամենևին  
ըրաժ յանցանքին վրայ և ոչ մէկ խօսք մը  
ըսելու, քաղցր կերպով մը աշուրները վրան  
դարձուց, և անանկով դարձի բերաւ, և  
այնպիսի կերպով զղջումի շարժեց, որ Պե-  
տրոս քանի որ ապրեցաւ՝ ոչ երբէք դադրե-  
ցաւ իր վարդապետին դէմ՝ ըրաժ նախա-  
տանաց վրայ լայու :

6. Ո՛հ, սրչափ աւելի շահաւոր է քաղ-  
ցրութիւնը քան թէ խստութիւնը : Սուրբն  
Ֆրանչիսկոս Սալեզեան կ'ըսէր թէ ըն-  
կուզէն աւելի դառն բան չկայ, բայց երբոր  
շաքարով եփուի՝ քաղցր ու համով բան մը  
կ'ըլլայ . այսպէս ալ յանդիմանութիւնը  
թէպէտ և ըստ ինքեան անախորժ ըլլայ,  
'ի վերայ այսր ամենայնի երբ սիրով կ'ըլլայ  
ու քաղցրութեամբ՝ հաճոյական բան մը  
կը դառնայ, որով և մեծապէս շահաւոր  
կ'ըլլայ : Սուրբ Վինչենցիոս Պաւլայեցին  
կը պատմէ իր վրայ թէ իր միաբանութիւնը  
կառավարելու ատեն միայն իրիք անդամ  
խստիւ յանդիմանութիւն տուեր է, արդա-  
րացի սեպղով . բայց սակայն վերջէն մե-  
ծապէս զղջացեր է տեսնելով որ ամէն

անգամուն ալ բանը գէշի գացեր է, ուր ընդ հակառակն քաղցրութեամբ խրատելով՝ ամէն անգամուն լաւ կերպով ըմբօցեր է :

7. Սուրբն Յրանչեսկոս Սալեզիան իր քաղցր կերպովը ամէն իր ուղածները կը յաջողէր . ասով նաև էն խստասիրտ մեղաւորներն ալ առ Աստուած կը դարձնէր :  
 ‘Նոյն կերպով կը վարուէր նաև սուրբն Վինչենցիոս Վալայեցի, ու իրեններուն ալ այս խրատը կուտար . “ Անուշութիւնը, կ’ըսէր, սէրն ու խոնարհութիւնը զարմանալի եղանակաւ մը մարդկանց սիրտը կը շահին, ու իրենց բնութեանը աւելի դէմ կարծած բաներն ընել կու տան ,” :  
 Անգամ մը իր միաբան քահանայից մէկուն ձեռքը յանձնեց մեծ մեղաւոր մը որ դարձի բերէ . ասիկայ որչափ որ աշխատեցաւ ալ նէ ամենևին օգուտ մը չտեսաւ . ուստի աղաչեց սրբոյն որ ինքն ալ քանի մը խօսք խօսի այն անգեղջ մարդուն : խօսեցաւ սուրբը, ու զինքը զղջումի շարժեց : Այս մարդս ետքը կը զրուցէր թէ Վինչենցիոսի աննման քաղցրութիւնն ու եղբայրսիրու-

Թիւնն իր սիրտը շահեր էր : Ասոր համար ոչ երբէք սուրբը կ'ուզէր որ իր միաբան քահանայքը ապաշխարողաց հետ խստութեամբ վարուին . ու կ'ըսէր թէ գժոխային ողին ոմանց խստութիւնը գործի կ'առնու զհոգիս աւելի մեծ կորստեան մէջ ձգելու :

Տ. Քաղցրութիւնը պէտք է ամենուն հետ գործածել , ամէն առթի մէջ ու ամէն ատեն : Սուրբն Նեոնարգոս կ'ըսէ թէ ոմանք քանի որ բաները ուզածնուն պէս կ'երթայ հեղ կ'երեւան , բայց իրենց կամացը դէմ բան մը կամ խօսք մը որ լսեն , տեսնես որ մէկէն կը բռնկին ու Վ Եսուպ լերան պէս կը սկսին ծուխ դուրս տալ : Ասոնք կրնանք ըսել թէ կրակ կտրած ածուխ են մոխրի տակ թաղուած : Սի որ կ'ուզէ սուրբ ըլլալ պէտք է որ այս աշխարհքիս մէջ ըլլայ իբրև շուշան մը 'ի մէջ փշոց . որ որչափ փուշերէն ծակծրկի ոչ երբէք իր շուշան ըլլալը կը կորսնցնէ , որ է ըսել միշտ անուշ ու մարդասէր : Աստուածասէր հոգին սրտին մէջ միշտ իր խաղաղութիւնը կը պահէ ու դէմքին վրայ ալ նոյնը կը ցուցնէ , ամէն դիպուածի մէջ անայլայլակ երևնալով թէ

յաջողութիւն եղեր է և թէ ձախողութիւն,  
ինչպէս որ կ'երգէ նաև Քեդրուչի ծիրա-  
նաւորը .

Շուրջ զարարածս զհերեաւ ետես  
Սերպարանեալ 'ի դէմս պէսպէս ,  
Ինքն անսխտիս յալուց սրբտին  
Յիւրն Աստուծոյ կայ անմեկին :

Գ . Սերհակ բաներու մէջ կը ճանչցուի  
մէկու մը ինչ ոգւոյ տէր ըլլալը : Սուրբն  
Ֆրանչիսկոս Սալեղեան մասնաւոր գութ  
մը ունէր Այցելութեան ըսուած կուսա-  
նաց կարգին վրայ որ այնչափ աշխատու-  
թիամբ ինքն հաստատեր էր : Շատ ան-  
գամ տեսաւ որ այս կարգը հակառակոր-  
դաց հարածանքներուն պատճառաւ կոր-  
ծանելու վտանգին հասած . էր բայց սուրբը  
ոչ երբէք իր սրտին խաղաղութիւնը կը կոր-  
սընցընէր , հասլա միշտ գոհ էր սրտիւ նոյն  
կրօնը կործանուելու ալ ըլլար՝ թէ որ Աս-  
տուած այնպէս կամենար . ան ատենն էր  
որ այս խօսքերս ըսաւ , թէ . “ Դասանա-  
կէ մը 'ի վեր վրաս եկած այնչափ ներհա-  
կութիւններն ու հակառակութիւնները այն-



պիսի քաղցր խաղաղութիւն մը ինծի կը պատճառեն՝ որուն նմանը չկրնար ըլլալ . ու ինծի գուշակել կու տան թէ մտեցեր է հոգւոյս յԱստուած միանալու ժամանակները , որ սրտիս միակ փափազն է , :

10 . Արբոր հարկ կ'ըլլայ որ մեզի հետ գէշ կերպով վարուողին պատասխան տանք , արթուն կենանք իրեն հետ քաղցրութեամբ վարուելու : “ Անոյշ պատասխանը դիմապինին բարկութիւնը կ'իջեցնէ , ”<sup>1</sup> , ու իրեն կատաղութեանը կրակը կը մարէ : Իսկ երբոր տեսնենք որ այլայլեր ենք , այն ատին ալ լաւ է որ լռենք . ինչու որ այնպիսի ժամանակ մեզի արդարացի կ'երևայ բերաննուս եկածը դուրս տալ . բայց մէյմը որ կըքերնիս իջնայ , կը տեսնենք որ բոլոր զրուցած խօսքերնիս պակասաւոր են եղեր :

11 . Իսկ երբ հանդիպի որ մենք իսկ յանցանք մը ընենք , պէտք է որ նաև մեզի հետ ալ անուշութիւն բանեցընենք : Յանցանքը ընելէն վերջը մենք մեզի դէմ

1 Պատասխանի ողորդարձուցանէ շարամուտութիւն : Աւակէք . ԺԵ . 1 :

սրդ ողիւր չէ թէ խոնարհութեան , այլ մա-  
 նաւանդ բարակ հպարտութեան նշան է ,  
 իբրև թէ մենք չըլայինք ողորմելի տկար :  
 Սրբուհին թերեզա կ'ըսէր . « Այն խոնար-  
 հութիւնը որ զմարդ անհանգիստ կ'ընէ ,  
 Աստուծմէ չէ , հասլա սատանայէն կու  
 դայ » : Պակսութիւն մը գործելէն ետև  
 մենք մեզի նեղանալնիս այն ըրած պակ-  
 սութիւնէն աւելի մեծ պակսութիւն մը  
 ընել է , որն որ միանգամայն իր հետը շատ  
 պակսութիւններ կը բերէ . անհողանալ կու  
 տայ մեր ջերմնուանդութեանցը , աղօթիցն  
 ու սուրբ հաղորդութեան մերձենալուն .  
 որոնք թէպէտ ընենք ալ բայց շատ պա-  
 կասաւոր կերպով կ'ըլան : Սուրբն Ալլոզիոս  
 Աոնծակա կ'ըսէր թէ պղտորած ջուրին  
 մէջ բան չտեսնուիր , ու սատանան այն  
 տեղը որս կ'ընէ : Արք հողի մը խառնու-  
 թեան մէջ է՝ զԱստուած ու իր ինչ ընելի-  
 քը բաւ չկրնար տեսնել : Աւրեմն անանկ է  
 նէ պէտք է միշտ՝ երբոր պակասութիւն մը  
 գործենք՝ խոնարհութեամբ ու մեծաւ յու-  
 սով առ Աստուած դառնալ ու խնդրել  
 իրմէ որ ներումն շնորհէ , սրբուհի Աա-

տարինէ Գննուացւոյն խօսքերը կրկնելով .  
 “ Տէր իմ , ահա ասոնք են իմ պարտիզիս  
 բոյսերը : Ար սիրեմ զքեզ բոլորով սրտիւ ,  
 և կը ցաւիմ որ քեզի այս դժկամակու  
 թիւնը տուի : Ոչ երբէք մէյմ՝ալ աս  
 բանս կ'ուզեմ ընել , տուր ինձի քու օգնու  
 թիւնդ . , : ”

ԻՂԶԻ ԵՒ ՊԱՂԱՏԱՆԻ

Ո՛վ երանելի կապանք , որ զմարդիկ  
 Աստուծոյ հետ կը միաւորէք . ո՛հ , զիս  
 ալ կապեցէք . բայց այնպէս կապեցէք որ  
 մէյմ՝ալ չլուծուիմ յԱստուծոյ՝ի սիրոյ իմ  
 մէ : Յիսուս , սիրեմ զքեզ . ո՛վ գանձ ,  
 ո՛վ կեանք հոգւոյ իմոյ , քեզի կը պըլուիմ .  
 ու բոլոր զիս քեզի կը նուիրեմ : Ա՛յ , չէ .  
 ոչ երբէք ասկից ետև , սիրեցեալ Փրկիչ  
 իմ , զքեզ սիրելէն ետ պիտի կենամ : Դուն  
 որ իմ մեղքերս քաւելու համար յանձն  
 առիր որ զքեզ յանցաւորի մը պէս կա  
 պեն , ու այնպէս կապած բոլոր Արուսաղէ  
 մայ փողոցներէն անցընելով ՚ի մահ տա

նին : Դուն որ ուզեցիր խաչնս վնայ գա-  
 մուիլ, ու չուզեցիր վար իջնալ մինչև որ  
 կեանքդ բոլոր ծախեցիր . աղէ, Յիսուս,  
 այնչափ քաշած չարչարանացդ արդեանցը  
 համար ըլլայ մի թողուր որ բնաւ քեզմէ  
 բաժնուիմ : Ամէն բանէ աւելի ասոր կը  
 ցաւիմ, Տէր իմ, որ ատեն մը քեզի դէմ  
 դարձայ . ու հիմայ կ'առաջադրեմ քու  
 սուրբ շնորհքովդ որ աւելի մեռնիմ քան  
 թէ մէյմ'ալ քեզի դէմ անհաճոյ դործք  
 մը ընեմ, թէ մեծ եղեր է և թէ սղտիկ :  
 Յիսուս, քեզի կը յանձնեմ ինքզինքս .  
 կը սիրեմ զքեզ բոլոր սրտանց, կը սիրեմ  
 զքեզ քան զիս աւելի : Անցեալ կենացս մէջ  
 զքեզ վշտացուցեր եմ, բայց այսօրուան օրս  
 կը զղջամ ՚ի բոլոր սրտէ ու կը փառիագիմ  
 որ ցաւէս մեռնէի : Ա՛ղաչեմ, Փրկիչ  
 իմ, զիս առ քեզ քաշէ : Աշխարհքիս ամէն  
 զգայական մտիթարութիւններէ կը հրա-  
 ժարիմ . զքեզ միայն, ուրիշ բան չեմ ու-  
 զեր : Յիսուս, նախ քու սիրովդ զիս լե-  
 ցուր . ու ալ անկէց վերջը ինչ որ կ'ուզես  
 ինձի ըրէ :

Յոյս իմ, Մարիամ, միացուր զիս Յի-

սուտիս հետ . և սուր որ իրեն հետ մէկ  
տեղ միացեալ սպրիմ ու մեռնիմ, որ  
պէս զի մէկ որ մը դամ այն հրջանկաւտ  
բնակարանը, ուր ալ վախ չիմ ունենար որ  
իբ սուրբ սիրոյն կասկանքը ինծմէ լու-  
ծուին :



## ԳԼՈՒԽ Ե .

ՍԷՐ ՈՉ ՆԱԽԱՆՁԻ :

ՉՅիտուս սիրող հոգին աշխարհքիս  
մեծերուն չնախանձիր , հասցայ ա-  
նուց միայն որ զՅիտուս առելի կը  
սիրեն :

1 . Սուրբն Գրիգոր սիրոյ այս նշանն  
ալ կը բացատրէ և կ'ըսէ , որ սէրը չնա-  
խանձիր , վասն զի չուզեր նախանձիլ աշ-  
խարհայնոյ այն երկրաւոր մեծութեանցը ,  
զորոնք ինքը շքանկար , հասցա կ'անար-  
պէ : “ Չնախանձիր , կ'ըսէ սուրբը , վասն զի  
այս աշխարհքիս բաներէն ամենեւին բանի  
մը չփափաքելով՝ երկրաւոր յաջողութիւն-  
ներուն նախանձիլ չգիտեր ,”<sup>1</sup> : Աստի պէտք  
է նախանձը երկու տեսակ բաժնել , մէկը  
չար և մէկը սուրբ : Չարն է այն , որ  
կը նախանձի ու կը տխրի ուրիշներուն աշ-  
խարհքիս վրայ ունեցած երկրաւոր բա-

ընայր Համար : Իսկ սուրբ նախանձն է  
այն , որ ոչ միայն ճնախանձիր , հասկանալի  
ցաւակցի մանաւանդ աշխարհքի մեծա-  
մեծներուն , որոնք երկրաւոր զուարճու-  
թեանց ու սլատուոյ մէջ օրերնին կ'անցը-  
նեն : Աստուծմէ զատ ուրիշ բան ինքը  
չկանդրեր , չցանկար . և ուրիշ բան չբաղ-  
ձար այս կենացս մէջ , բայց միայն կրցածին  
չափ զԱստուած սիրել . և անոր համար  
սուրբ նախանձով մը կը նախանձի իրմէ  
չատ սիրողին , որովհետեւ ինքը Աստուծոյ  
սիրոյն մէջ կ'ուզէ զՍերովբէներն ալ գե-  
րազանցել :

2 . Ասիկայ է մի միայն վախճանն որ  
ունին երկրիս վրայ սուրբ հոգիները , այս  
վախճանը 'ի սէր կը շարժէ և այնպէս սի-  
րով կը վառէ Աստուծոյ սիրտը , որ ըսել  
կու տայ . իրեն « Սիրտս վերաւորեցիր քոյր  
իմ հարսն , սիրտս վերաւորեցիր քու մէկ աչ-  
քովդ , » <sup>1</sup> : Այն մէկ աչքը կը նշանակէ մի

1 Սրտակաթ արարեր զմեզ , քոյր մեր  
հարսն , սրտակաթ արարեր զմեզ միով  
ակամբ քով : Երգ երգոց . ԳԼ . Դ . 9 :

միայն վախճանը, զոր ունի հարսնացեալ հոգին Աստուծոյ հաճոյանալու իր ամէն մտածութեանցը ու կրթութեանցը մէջ: Աշխարհքիս մարդիկը իրենց գործոցը մէջ իրաց վրայ այլ և այլ աչքով կը նային, այսինքն մարդկանց հաճոյանալու այլ և այլ անկարգ նպատակներով, պատիւ ստանալու, հարստութիւն ժողովելու, և ուրիշ բանի ալ չըլլայ, իրենք զիրենք գոհ ընելու. բայց սուրբերը մէկ աչք մը միայն ունին՝ իրենց ամէն գործոցը մէջ Աստուծոյ հաճոյքը միայն գիտելու. և կ'ըսեն Պաւլոսին հետ. « Արկիները ինձի ի՞նչ կայ. ուրիշ ի՞նչ բան ուզեմ՝ քեզմէ, Աստուած իմ, երկրիս վրայ, եթէ ոչ զքեզ միայն. դու ես իմ ճոխութիւնս, դու սրտիս մի միայն տէրը, »<sup>1</sup>: (Ծող վայլեն, կ'ըսէր սուրբ Պաւլինոս, հարուստները իրենց երկրաւոր գանձերը, թագաւորները իրենց թագաւորու-

<sup>1</sup> Ա ի՞նչ կայ իմ բնաւ յերկինս, կամ ՚ի քէն զի՞նչ ևս խնդրեցից յերկրէ: . . . Աստուած սրտի իմոյ, բաժին իմ Աստուած յաւիտեան: Սղմ. Հ Բ. 26:



Թիւնները , դու , Յիսուս իմ , դու ես իմ  
զանձս ու իմ Թագաւորութիւնս :

3 . Այս ալ պիտի գիտնանք որ բաւա-  
կան չէ բարի գործք ընելը , հասլա պէտք  
է զանոնք լաւ ընել : Արպէս զի մեր գործ-  
քերը լաւ ու կատարեալ ըլլան , պէտք է  
Աստուծոյ հաճոյանալու սրարդ գիտաւո-  
րութեամբը միայն վանոնք գործել : Այս  
եղաւ Քրիստոսի տրուած արժանաւոր դու-  
րստը . “ Ամէն բան լաւ ըրաւ <sup>1</sup> , ” : Հատ  
գործքեր ըստ ինքեան գովիլի կրնան ըլլալ ,  
բայց ուրիշ գիտմամբ եղած ըլլալով քան  
Թէ աստուածային փառաց համար , քիչ  
կամ ոչ ինչ կ'աժեն Աստուծոյ առջևը :  
Արբուհին Մարիամ Մագդաղինէ Բա-  
ցեան կ'ըսէր . “ Աստուած մեր գործ-  
քերը ըստ մաքրութեան կշռոյն կը վարձա-  
տրէ , ” : Բսել կ'ուզէ , Թէ որչափ մաքուր  
ըլլայ մեր գիտմունքը , ըստ այնմ Աս-  
տուած ալ կ'ընդունի ու կը վարձատրէ մեր  
գործքերը : Բայց , ս'վ Աստուած իմ , որչափ

<sup>1</sup> Զամենայն ինչ բարւոք գործեաց  
սա : Մարկ . Է . 37 :

դժուարին է Մատուծոյ համար եղած գործք մը գտնալ : Ար յիշեմ ծերունի սուրբ կրօնաւոր մը , որ շատ աշխատած էր Մատուծոյ համար ու սրբութեան համբաւով մեռաւ . որ մը ասիկայ քննելով իր կեանքը՝ խորին տխրութեամբ ու սարսափով ըսաւ ինձի . “ Այն ինձի . կենացս բոլոր գործքերը քննելով ե ոչ մէկ հատ մը՝ Մատուծոյ համար միայն եղած կը գտնամ ” : Մի՞թէ անձնասիրութիւն , որ մեր բարի գործոց պտղոյն կամ բոլորը և կամ մեծ մասը կորսնցընել կու տայ մեզի : Քանիներ քարոզատութեան , խոստովանահայրութեան , քարոզչութեան սուրբ պաշտօններովը կ'աշխատին , կը յոգնին , ու քիչ կամ ոչինչ կը շահին . վասն զի միայն զՄատուծ շին դիտեր , հասլա աշխարհային փառք , կամ վաստակ , կամ երևելի ըլլալու մնափառութիւն , կամ գէթ անձնական հաճոյքնին :

4 . Ա՛րա՛է Տէրն մեր . “Նայեցէք որ մարդիկներէն տեսնուելու համար չընէք բարիք , ասլա թէ ոչ երկնաւոր Հօրմէն

վարձք մը չէք ընդունիր ,<sup>1</sup> : Այլ որ իդո  
 հաճոցքը կատարելու համար կ'աշխատի ,  
 արդէն իր վարձքը կ'ընդունի . “ Իրաւցընէ  
 կ'ըսեմ ձեզի , իրենց վարձքը առին , ”<sup>2</sup> : Այն  
 պիտի վարձք մը որ քիչ մը ծուխ կամ առ-  
 օրեայ հաճութիւն մըն է որ շուտ մը  
 կ'անցնի , և հոգւոյն վատտակ մը չմնար :  
 Անդէոս մարդարէն կ'ըսէ , “ Այլ որ ուրիշ  
 վախճանաւ կ'աշխատի և ոչ Ատուծոց  
 հաճոյանալու համար , իր վարձքը ծակ  
 պարկի մը մէջ կը դնէ , որ բանալու ատե-  
 նը մէջը բան չգտնեն , ”<sup>3</sup> : Աւ ասկէց առաջ  
 կու դայ , որ այդպիսիները յետ իրենց աշ-  
 խատանացը՝ ձեռք զարկած գործքին յա-  
 ջողութիւն որ շունենան , շատ անհանդիստ

1 Ձգոյշ լէրուք ողորմութեան ձե-  
 րում , մ' առնել առաջի մարդկան , որ-  
 պէս թէ 'ի ցոյց ինչ նոցա . դուցէ և  
 վարձս ոչ ընդունիցիք 'ի հօրէն ձերմէ՝ որ  
 յերկինսն է : Մատթ . ԳԼ . 2 . 1 :

2 Ամէն ասեմ ձեզ , այն իսկ են վարձք  
 նոցա : Անդ . 5 :

3 Աւ որ զվարձս իւր ժողովէր , 'ի  
 ծրարս ծակոտեալս ժողովէր : Անդէոս  
 ԳԼ . Ա . 6 :

կ'ըլլան : Ասիկակ նշան է որ Աստուծոյ փառքը միայն նայատակ շեն դրած : Այլ որ գործք մը կ'ընէ միայն Աստուծոյ փառացը համար , թէպէտ և չյաջողի , ամենևին չխոռովիր . որովհետև ինքը արդէն իր նայատակին հասած է Աստուծոյ հաճոյանալով , ուղիղ դիտաւորութեամբ գործելովը :

Տ. Իմանալու համար որ երբ մէկը հոգևոր գործողութեան մը կը պարապի , արդեօք միայն Աստուծոյ համար կը գործէ , ասոնք են նշանները : Ա . թմէ որ չխոռովիր երբ իր դիտմանը չհասնիր , որովհետև Աստուած որ չուզէ զայն բանը , ինքն ալ չուզեր : Բ . թմէ որ հաւասարապէս կ'ուրախանայ ուրիշին ըրած բարւոյն վրայ , իբրև թէ ինքը ըրած ըլլար : Գ . թմէ որ մանաւոր պաշտօնի մը աւելի չփախաքիր , հասլա զայն կ'ախորժի ինչ որ մեծաւորաց հնազանդութիւնը կը հրամայէ : Դ . թմէ որ գործքեր ընկէն ետև , չփնտոեր ուրիշներէն ոչ շնորհակալութիւն և ոչ գովեստ . և ընդհակառակն թէ որ ուրիշները շարախօսեն ու սպարսաւեն , չտխրիր , գոհ ըլլալով միայն Աստուծոյ հաճոյքը կատարելուն վրայ : Այլ

Թէ որ գովեստ մըն ալ ընդունի աշխարհքէն,  
չնափառիր, հապայ սնափառութեանը,  
որ առաջ անցնելով կ'ուզէ ընդունելի ըլ-  
լալ, այն բանը կը սլատասխանէ, ինչ որ  
կ'ըսէր երանաշնորհն Յովհաննէս Աւիլա.  
« Մէկդի զնա, ուշ հասար, որովհետև  
արդէն գործքը բոլոր Աստուծոյ տուած էմ »:

6. Այս է Աստուծոյ ուրախութեանը  
մէջ մտնալ, այսինքն Աստուծոյ զուար-  
ճանալուն վրայ զուարճանալ, ինչպէս խոս-  
տացուած է հաւատարիմ ծառայից <sup>1</sup>: Բայց  
Թէ որ մենք Աստուծոյ հաճոյական բան  
մը ընելու երջանկութիւնը ունենալու ըլ-  
լանք, կ'ըսէ Ոսկեբերանը, ուրիշ ալ ինչ  
կը փնտոենք <sup>2</sup>: Այս է մեծագոյն վարձ-  
քը, մեծագոյն բաղդը, որուն արարած  
մը կարենայ հասնիլ, իր Արարչին ախորժ  
սլատաճառել:

<sup>1</sup> Ազնիւ ծառայ բարի և հաւատա-  
րիմ. որովհետև 'ի սակաւուդ հաւատա-  
րիմ ես, 'ի վերայ բազմաց կացուցից  
զքեզ. մուտ յուրախութիւն տեսունքո:  
Մատթ. 16. 23:

<sup>2</sup> Յաղագս զըջման. Գիրք Բ:

7 . Այս է որ կը պահանջէ Յիսուս զինքը սիրող հոգիէ մը : Առդէ որ զինքը դնէ իբրև կնիք իր սրտին վրայ և իր թևին վրայ<sup>1</sup> : Սրտին վրայ , որպէս զի ինչ գործք ընելու ըլլայ , միայն Աստուծոյ սիրոյն համար դիտէ ընելու . թևին վրայ , որպէս զի ինչ գործք որ ընէ , Աստուծոյ հաճոյական բան ընելու համար բոլորն ալ գործէ . այնպէս որ միշտ Աստուած ըլլայ մի միայն նպատակ իր ամէն մտածութեանցը և գործոցը : Սրբուհին թերեզայ կ'ըսէր . “ Ով որ կ'ուզէ սուրբ ըլլալ , պէտք է որ առանց ուրիշ բաղձանաց , միայն Աստուծոյ հաճոյքը ընելու համար ասլրի ” : Այս իրեն առջի դուստրը , երանաշնորհն Արանուհի Սարգեղութեան ըսուած՝ կ'ըսէր . “ Գին չկայ , որով կարելի ըլլայ վճարել , որ և իցէ Աստուծոյ համար եղած գործք մը , թէպէտ և ամենաչնչին ըլլայ ” : Այս իրաւորնէ , որովհետև Աստուծոյ հաճոյանա-

1 Դիր զեա իբրև զինիք 'ի սրտի քում , և իբրև զմատանի յաջոյ ձեռին քոյ : Երգ երգոց . ԳԼ . Ը . 6 :

յու համար եղած ամէն գործքերը , բոլորն ալ սիրոյ ներգործութիւններ են , որ զմեզ Աստուծոյ հետ կը միացընեն , և մեզի յատկ տենական բարիք կը շահեցընեն :

8 . Ա՛րսնն որ դիտաւորութեան մաքրութիւնը երկնային աշխիւս է , որով երկաթը ոսկի կ'ըլլայ , այսինքն աւելի սուրբական գործողութիւնները , ինչպէս աշխատիլ , ուտել , զբօսնուլ , հանգչիլ , Աստուծոյ համար որ ըլլան , սուրբ սիրոյ ոսկի կը դառնան : Ա՛նոր համար ստոյգ կը համարէր սրբուհին Սարիամ Սաղգաղինէ Քացեան , թէ անոնք որ բոլոր ըրածնին մաքուր դիտաւորութեամբ կ'ընեն , շիտակ արքայութիւն կ'երթան , առանց քաւարան հանգիստի : Արտատմուի Հոգևոր գանձարանին մէջ<sup>1</sup> , որ մէկ սուրբ միայնակեաց մը ո և իցէ գործք ընելէն առաջ , սուրբութիւն ունէր քիչ մը ատեն կենալ և աչուրները երկինք վերցընել . հարցուցին ինչո՞ւ համար այսպէս կ'ընես . “ Աշան առնելու կը ջանամ ” : Այլ ըսել կ'ուզէր որ ինչպէս

1 Հատ . Դ . ԳԼ . Դ :

աղերհնաւորը նետը արձրկելէն առաջ նշան  
կ'առնէ հարուածը յաջողցնելու համար ,  
այսպէս ինքն ալ գործքի մը ձեռք զարնե-  
լէն առաջ , Աստուած նպատակ կը դնէր ,  
որպէս զի նոյն գործքը իրեն հաճութեամբ  
բը յաջողի : Այսպէս մենք ալ սլարաբկան  
ենք ընելու , մանաւանդ թէ աւելի լաւ է  
որ գործք մը որ սկսած ենք ընելու՝ առաջ  
տանկելու ատեն , մերթ ընդ մերթ Աստու-  
ծոյ ախորժ տալու դիտաւորութիւննիս նո-  
րողենք :

Գ . Անոնք որ իրենց գործոցը մէջ միայն  
աստուածային կամքը կը դիտեն , կը վայ-  
լեն հոգւոյն այն սուրբ ազատութիւնը , որն  
որ Աստուծոյ որդիքը ունին , և այս սուրբ  
ազատութիւնը ամէն բան՝ ինչ որ Յիսուսի  
հաճոյ է՝ զրկել կու տայ , նաև ընդդէմ  
անձնասիրութեան , և մարդկային նկատման  
դժկամակութեանցը : Յիսուսին սէրը՝ զին-  
քը սիրողները բոլորովն անտարբերու-  
թեան վիճակ կը դնէ , որով ամէն բան անոնց  
համար նոյն է , անուշն ու լեղին : Իրենց  
հաճոյ եղած բանը ամենեւին չեն ուզեր , և  
բոլոր Աստուծոյ հաճոյ եղած բաները



կ'ուզեն : Մի և նոյն խաղաղութեամբ սրտի թէ մեծ եղեր է և թէ պզտի պաշտօնները կը կատարեն , թէ ախորժելի եղեր է բանը թէ և անախորժ . միայն թէ Աստուծոյ հաճոյ ըլլան :

10 . Շատերը ընդ հակառակն կ'ուզեն Աստուծոյ ծառայել , բայց այս պաշտօնիս մէջ , այն տեղը , այս ընկերներով , այն պարագաներով , ապա թէ ոչ՝ կամ կը թողուն գործքը , և կամ ակամայ կ'ընեն : Ասոնք հոգւոյ ազատութիւն չունին , հապայ անձնասիրութեան գերի են , և անոր համար քիչ արդիւնք կը շահին ըրածներնուն մէջն ալ . և օրերնին անհանդիստ կ'անցընեն , ու Քրիստոսի լուծը իրենց ծանր կու գայ : Նշմարիտ սիրողք Յիսուսի կը փափաքին այն բանը միայն ընել՝ որ ախորժելի է Յիսուսին , և որովհետև հաճոյ է Յիսուսին . երբ ուզէ , ուր որ ուզէ և ինչ կերպով որ ուզենայ Յիսուս , թէ ուզենայ Յիսուս աշխարհքիս պատուաւոր վիճակի մը մէջ զիրենք գործածել , և թէ հասարակ ու անշուք վիճակի մը : Ասիկայ է զՅիսուս մարտիր սիրով սիրել . և այս բանիս համար

պարտական ենք միշտ աշխատիլ՝ անձնա-  
սիրութեան հրապուրանաց դէմ պատերազ-  
մելով, որն որ կը փափաքի որ պատուոյ  
ու մեր յօժարութեանցը համեմատ մեծա-  
մեծ գործողութեանցը մէջ զբաղինք :

11. Այս պէտք է որ ամէն կրթու-  
թիւններէ դադրինք, թէպէտ և հոգևոր  
ալ ըլլան, հրբոր Աստուած ըստ իւրոյ  
հաճոյից կ'ուզէ զմեզ ուրիշ գործքերու  
զբաղեցնել : Օր մը Հայրն Ալուարէզ  
շատ զբաղած ըլլալով, կ'ուզէր պրծիլ ու եր-  
թալ աղօթք ընել, որուհետև իրեն կու գար  
որ նոյն ատենը Աստուծոյ հետ չէ, բայց  
Տէրն մեր իրեն ըսաւ այն ատենը . « Թէ-  
պէտ և ես զքեզ հետս չընեմ, բայց այդ-  
ալ բաւական է՝ որ զքեզ իմ բանիս կը  
գործածեմ », : Ասիկայ այն անձանց համար  
է, որոնք երբեմն անհանդիստ կ'ըլլան, 'ի  
հնազանդութենէ կամ 'ի սիրոյ ընկերին  
ստիպուած ըլլալով սովորական ջերմեռան-  
դութիւննին թողլու, գիտնան որ այդպի-  
սի անհանգստութիւնը ստուգիւ Աստուծմ,  
չգար, հասլա կամ սատանայէն և կամ  
իրենց անձնասիրութենէն : Աստուծոյ հա-

Ճոյական բան ընենք , ու մեռնինք : Այս է ահա սուրբերուն առաջին սկզբունքը :

ԻՂԶՔ ԵՒ ՊԱՂԱՏԱՆԷՔ

Ատուած իմ յաւիտենական , ես քեզի կ'ընծայեմ բոլոր իմ սիրտս . բայց նմ Տէր , ինչպիսի՞ սիրտ քեզի կ'ընծայեմ . թէպէտ և զքեզ սիրելու համար ստեղծուած է սիրտս , բայց քանի՞ անգամ զքեզ սիրելու տեղ , քեզմէ ապստամբած է : Բայց նայէ , Յիսուս իմ , որ թէ որ ատեն մը առ իմ սիրտս քեզի դէմ ապստամբ եղաւ նէ , հիմակ բոլորովին կը ցաւի ու կը զղջայ քեզի առած տհաճութեանցը վրայ : Այո , սիրելի Փրկիչ իմ , կը զղջամ զքեզ արհամարհելուս վրայ , և հաստատապէս կ'առաջագրեմ հնազանդիլ ու սիրել զքեզ ամէն բան աչք առած : Ա՛ղղաչեմ առ քո սէրդ բոլորովին ձգէ զիս , շնորհէ ինձի այս բանս այն սիրոյն համար , որով սիրեցիր զիս խաչին վրայ մեռած ատենդ : Ար սիրեմ զքեզ , Յիսուս իմ , կը սիրեմ զքեզ բոլորով սրտիւ իմով , կը սիրեմ զքեզ ինծմէ աւելի , նմ

ճշմարիտ և միակ սիրող Հոգւոյ խնոյ . դու  
ես միայն , որ իմ սիրոյս Համար կեանքդ զօ-  
հեցիր : Դառն արցունքով կու լամ տեսնա-  
լով իմ ապերախտութիւնս ուր քեզի դէմ  
բանեցուցեր եմ : Այն ինձի , արդէն կոր-  
սուած էի , բայց կը յուսամ որ դու քու  
շնորհքովդ նորէն ինձի կեանք շնորհած  
ըլլաս : Այս սխտի ըլլայ ասկէց ետև իմ  
կեանքս , միշտ զքեզ սիրել , իմ գերագոյն  
բարիս : Ա՛ղաչեմ տուր ինձի զքեզ սիրել ,  
ո՛վ սէր անսպառ , և ալ ուրիշ բան չեմ  
խնդրեր քեզմէ :

Ո՛վ Մարիամ , մայր իմ , ընդունէ զես  
քեզի ծառայ , և Յիսուսի քու Արդւոյդ  
ալ ընդունելի ըրէ զես :



## ԳԼՈՒԽ Ը .

ՍԷՐ ՈՉ ԱՄԲԱՐ ՀԱՒԱՃԷ

Ո՛վ որ կը սիրէ զՅիսուս , զաղջոյննէկ  
կը փախչի , և կատարելոյնքիւնը կը  
սիրէ , որուն միջոցնէրն են . Ա .  
Փախաք . Բ . Առաջադրոյնքիւն . Գ .  
Մտածակիսն աղօթք . Դ . Հաղոր-  
դոյնքիւն . Ե . Աղօթք :

1 . Սուրբն Գրիգոր աս կտորս մեկնե-  
լով , ոչ աճիւրհա-աճէ , կ'ըսէ որ սէրը  
աստուածսիրութեամբ միայն գործածուե-  
լով՝ չգիտեր այնպիսի բան ընել որ հա-  
մաձայն չըլլայ ուղղութեան և սրբու-  
թեան <sup>1</sup> : Այս բանս լաւ գրեց առաջուց  
Առաքեալն ըսելով , թէ սէրը կապ մըն է  
որ 'ի հողին միատեղ կը կապէ աւելի կա-  
տարելագոյն առաքինութիւնները : «Վայել  
ցէք որ սէր ունենաք որ կատարելութեան

<sup>1</sup> Սուրբ Գրիգոր . Բարոյ . Գիւրք .  
Ժ . ԳԼ , Ը :

կապն է <sup>1</sup> : Աւ որովհետեւ սէրը կը սիցի՛ գկատարելութիւնը , հետեաբար կ'ատէ՛ գգաղջութիւնը , որով ոմանք կը ծառային : Աստուծոյ և մեծ վտանգի մէջ կ'ընան կորսընցընելու Աստուծոյ սէրը , աստուածային շնորհքը , հոգին և ամէն բան :

2 . Անոր համար պէտք է գիտնալ որ երկու տեսակ է գաղջութիւնը , մէկը անխորշելի , իսկ մէկայլը խորշելի : Անխորշելին այն է ուսկից և ոչ սուրբերը ազատ են , և ասով կ'խնայուի այն ամէն պակասութիւնները , զորոնք կը գործենք առանց մեր բովանդակ կամայը , հապա միայն մեր բնական տկարութեանը պատճառաւ : Այսպիսի են աղօթքի ատեն մտաց ցնդմունքը , ներքին յուզմունքները , անօգուտ խօսքեր , սնոտի հետաքրքրութիւններ , երևան ելլալու փափաք , ուտելու ու խմելու ատենի ախորժ , ցանկութեան մէկէն 'ի մէկ չզուպուած խըրամունքներ , և ուրիշ ասոնց նման բաներ : Արչափ որ կրնանք , պիտի

<sup>1</sup> Եւ 'ի վերայ ամենայնի զսէրն , որ է զօգ կատարման : Աւ Կողոս . Գ . 14 :

զգուշանանք այս պակասութիւններէն, բայց մեր մեղքով ասպականեալ բնութեան տկարութեանը պատճառաւ, անկարելի է ամենէն ալ բոլորովին ազատ մնալը : Բայց պարտական ենք սխալելէն ետեւ ցաւիլ ասոնց վրայ, որովհետեւ Աստուծոյ տհաճելի են . բայց ինչպէս որ նախընթաց գլխուն մէջ ըսինք, պիտի նայինք որ ասոնց համար չխոռովինք : Սուրբն Ֆրանչիսկոս Սալեզեան կը գրէ . “ Այն ամէն մտածութիւնները որ մեզի անհանգստութիւն կու տան, Աստուծմէ չին, որ խաղաղութեան է աղբիւր, հասկա միշտ առաջ կու գան կամ սատանայէն, կամ անձնասիրութենէ և կամ մեր վրանիս ունեցած համարմունքէն ,, :

3 . Այդ տեսակ մտածութիւնները՝ որ զմեզ անհանգիստ կ'ընեն, պէտք է մէկէն գուրս ձգել, և բանի տեղ չսեպել : Ա՛րտէնոյն սուրբը, թէ առանց որոշողութեան եղած պակասութիւնները, ակամայ ըլլալով այսպէս ալ ակամայ կը ջնջուին : Ա՛րդման ներգործութիւն մը, սիրոյ ներգործութիւն մը բաւական է զանոնք ջնջելու : Այրա-

Նաշնորհ Մայրն Մարիամ Մսաչեալ, Յննե  
 դիկտեանց կարգէն, անգամ մը տեսաւ կրա-  
 կէ գունտ մը, որուն վրայ շատ մը յարդի  
 շուղեր թափած ըլլալով, տեսաւ որ ամէնն  
 ալ մոխիր դարձան: Աւ օրինակաւը հաս-  
 կրցաւ որ աստուածային սիրոյ եռանդա-  
 գին ներգործութիւն մը մեր հոգւոյն ամէն  
 պակասութիւնները կը ջնջէ: «Այն բանը  
 կ'ընէ սուրբ հաղորդութիւնն ալ, ինչպէս  
 որ Տրիտենդեան սուրբ ժողովքն ալ կը  
 կոչէ զսուրբ հաղորդութիւնը «Ղեղթափ  
 որով կ'ազատինք ամէն օրուան մեղքե-  
 րէն»,<sup>2</sup>: Անանկ որ այսպիսի պակասութիւն  
 ները թէպէտև իրաւցրնէ պակասութիւն  
 են, բայց կատարելութեան արգելք չեն  
 ըլլար, այս ինքն ՚ի կատարելութիւն դի-  
 մելու. որովհետև աս աշխարհքիս մէջ ոչ  
 ոք կատարելութեան կը հասնի, ինչուան  
 որ առաջ երանութեան չհասնի:

4. Իսկ կատարելութեան արգելք եղող  
 դաղջութիւնն է խորշիկ գաղջութիւնը,  
 երբ որ մէկը կամաւոր ներելի մեղքեր կը



գործէ . որովհետեւ այն ամէն կամաւոր մեղքերէն նաեւ ներկայ վիճակիս մէջ Աստուծոյ շնորհքովը դիւրաւ կրնայ մարդ զգուշանալ : Այնոր համար սրբուհին թերեղա կ'ըսէր . « Կամաւոր մեղքէ , որչափ ալ պզտիկ ըլլայ , Աստուած գրեղ ազատ պահէ » : Այսպիսի են օրինակի համար կամաւոր ստախօսութիւն , թեթեւ քրթմնջալ , չարամաղթութիւն , խօսքով նեղանալ , ընկերը ծաղր ընել , խայթող խօսքեր , սնասպարծութեան խօսքեր , սրբտին մէջ պահած ոխ , տարբեր սեռի անձանց վրայ անկարգ յօժարութիւններ : Ասոնք քանի մը որդեր են , կ'ըսէ նոյն սրբուհին թերեղա , որոնք չեն իմացուիր քանի որ առաքինութիւնները չեն կրծած : Այնոր համար սրբուհին ուրիշ տեղ ալ կը զգուշացնէ . « Պզտի բաներով կը սկսի ստատանան ծակեր բանալ , ուսկից մեծ բաներ կը մտնան » :

Ծ . Պէտք է ուրեմն ստակալ այսպիսի կամաւոր պակասութիւններէ , որովհետեւ Աստուած ասոնց պատճառաւ ձեռքը կը բաշէ ու աւելի պայծառ լոյս և աւելի

Կորաւոր օգնութիւն չտար, ու զմեզ հոգևոր քաղցրութիւններէ կը զրկէ. և ասկէց առաջ կու գայ որ հոգին կը սկսի հոգևոր գործքերը շատ ձանձրութեամբ ու դժուարութեամբ ընել, և այսպէս սով ետևէ ետև կը սկսի աղօթքը ձգել, սուրբ հաղորդութիւնը, սուրբ խորհրդոյն այցելութիւնները, իննօրեայ ջերմհոանդութիւնները, և վերջապէս դիւբաւ ամէն բան ձգելու կ'ըլլայ, ինչպէս որ այս բանս քիչ սրտասած չէ շատ դժբաղդ հոգիներու :

6. Ե՛ր կը ցուցնէ այն սպառնալիքը որ կ'ընէ Տէրն մեր գաղջկոց . “ Աչ ցուրտ ես, և ոչ տաք . երանի՛ թէ սրաղ ըլլայիր . . . բայց որովհետև գաղջ ես . . . պիտի սկսիմ փախել զքեզ, ”<sup>2</sup> : Ի՞նչ սոսկալի բան . կ'ըսէ, “ Արանի՛ թէ ցուրտ ըլլայիր, ” :

1 Գիտեմ՝ զգործս քո՝ զի ոչ ցուրտ ես և ոչ ջերմ . սպարս էր քեզ ցուրտ լինել՝ և կամ ջերմ, այլ դու գաղջ ես՝ և ոչ ջերմ և ոչ ցուրտ . հանդերձեալ ես փախիլ ՚ի բերանոց խմիկ : Յայտն . Գ . 15, 16 :

Ի՞նչ, միթէ լաւագոյն է ցուրտ ըլլալ, այսինքն զուրկ ՚ի շնորհաց քան թէ գաղջ: Այո՛, կերպով մը լաւագոյն է ցուրտ ըլլալ, վասն զի ցուրտը խղճմտանաց խայթովը ցնցուելով աւելի դիւրութեամբ կրնայ ճամբու գալ. բայց գաղջը ունակութիւն մը կ'ընէ իրեն սակասութեանցը մէջ անխուով մնալ առանց հոգ մը ընելու ու առանց մտածելու զգաստանալու համար, և այսպէսով գրեթէ իրեն դարմանը յուսահատելի կ'ըլլայ: “Գաղջին, կը գրէ սուրբն Գրիգոր, եռանդը սակսած է, և ինքը յուսահատութեան մէջ է”: Ա՛րքէր երանաշնորհ Հայրն Առդովիկոս Փոնթեան, թէ ինքը անթիւ սակսութիւններ գործած էր կենացը մէջ, բայց ոչ երբէք սակասութեանցը վրայ անհոգ կեցեր էր: Ամանք անհոգ կը կենան սակասութեանց վրայ, և անկէց առաջ կու գայ իրենց կործանումը, մանաւանդ երբ սակսութիւնը ըլլայ անձնասիրութիւն, սնափառութիւն, ստակ դիզելու փոյթ, ռիսակալութիւն, կամ տարբեր սեռի անձի մը վրայ անկարգ յօժարութիւն:

Ան ատենը մեծ վտանդ կայ, որ մազերը շղթայ ըլլան այն հողւոյն համար, ինչպէս կ'ըսէր սուրբ Յրանչիսկոս Ասիղացին, և զինքը դէպ 'ի դժոխք քաշեն տանին: Վէ՛թ նոյն հողին ալ սուրբ չկրնար ըլլալ, և կը կորսնցընէ այն մեծ պսակը, որ Աստուած պատրաստեր էր իրեն համար, թէ որ իրեն շնորհացը հաւատարիմ մնալու ըլլար: Թողունը, երբ որ ամէն կասէ ազատ կ'ըլլայ, մէկէն կը թռչի. հողին ալ երբ ամէն երկրաւոր յօժարութիւններէ ազատ ըլլայ, մէկէն առ Աստուած կը թռչի. բայց թէ որ կասուած մնայ, որ և իցէ կասլ ալ բաւական է որ արգելք ըլլայ առ Աստուած դիմելու: Ա՛հ, որչափ հողւոր անձինք սուրբ չեն ըլլար, որովհետեւ բռնութիւն չեն ընել քանի մը սղտի յօժարութիւններու յաղթելու:

7. Այս ամէն վնասը առաջ կու գայ Յիսուսի վրայ քիչ սէր ունենալէն: Անոնք որ ինքիւրենցմով ուռած են, անոնք որ ստէպ կը տխրին իրենց բաղձանայ դէմ դիպուածնէրէն, անոնք որ շատ կը զիջանին իրենց առողջութեան վախովը, անոնք որ արտաքին

իրաց սրտերնին բաց կը թողուն, և միաբեր-  
 նին միշտ տարտընած, բաղձանօք խնա-  
 նալու և գիտնալու այնչափ բաներ, որոնք  
 Աստուծոյ ծառայութեանը չեն պատշա-  
 ճիր, հասլա միայն իրենց ակտորժակը կա-  
 տարելու. անոնք որ կը նեղանան ու և իյէ-  
 ամենաթեթեւ անհոգութիւնն որ մէկն ի-  
 րենց ընելու ըլլայ. ուսկից առաջ կու գայ  
 որ ստէս կը խոռովն, աղօթքէ կամ մտաց  
 ամփոփմունքէ ետ կը մնան, մերթ բոլորո-  
 վին ջերմեռանդ ու զուարթ, մերթ աչ-  
 բոլորովն անհամբեր ու տխուր, ինչպէս  
 որ բաները իրենց կամայք համեմայն  
 կամ հակառակ հանդիպին. ասոնք չեն  
 սիրեր, կամ խիստ քիչ կը սիրեն զՅիսուս,  
 ու ճշմարիտ ջերմեռանդութեան անունը  
 կ'աւրեն :

8. Բայց թէ որ մէկը գտնուելու  
 ըլլայ գաղջութեան աս խեղճ միճակին  
 մէջ, ի՞նչ պիտի ընէ : Իբաւ շատ դժուա-  
 րին բան է որ մէկ գաղջ հոգի մը նորէն  
 ձեռի առնու հին եռանդը. բայց Տէրն  
 մեր ըսաւ, թէ զայն որ մարդիկ չեն  
 կրնար ընել, Աստուած շատ լաւ կրնայ

ընել<sup>1</sup> : Այլ որ աղօթք կ'ընէ , և հարկաւոր միջոցները ձեռք կ'առնու , ամէն փափաքածին դիւրաւ կը հասնի : Հինգ միջոց կան գաղջութենէ ազատելու և կատարելութեան դիմելու : Ա . Փափաք առ կատարելութիւն . Բ . Առաջադրութիւն առ այն հասնելու . Գ . Մտածական աղօթք . Դ . Ստէպ ընդունելութիւն սուրբ հաղորդութեան . Ե . Աղօթք :

Գ . Առաջին միջոցը ուրեմն կատարելութեան փափաքն է : Սուրբ իղձերը թեկեր են որ գմեղ երկրէս վեր կը բարձրացրնեն . որովհետեւ , ինչպէս որ կ'ըսէ սուրբն Աւարենատիտ Յուստինեան , սուրբ փափաքը ուժ կու տայ և աշխատութիւնը թեթեւ կ'երևցնէ . մէկ կողմանէ ուժ կու տայ կատարելութեան դիմելու , և մէկայ կողմանէ ճամբուն նեղութիւնը կը թեթեւցնէ : Այլ որ իրաւցնէ կը բաղձայ կատարելութեան , անոր մէջ յառաջադիմելէն չդադրիր բնաւ . և թէ որ չդադրիր ,

<sup>1</sup> Անհնարինք առ ՚ի մարգկանէ , հնարաւորք են յԱստուծոյ : Ղուկ . ԺԸ . 27 :

վերջապէս հարկ է որ համնի : Ընդ հա-  
կառակն ավ որ չբաղձար անոր , միշտ ետև  
կ'երթայ , և միշտ առջինէն և ել անկատար  
կը գտնուի : Ա՛րսէ սուրբն ( ) ղոտախնոտ որ  
Աստուծոյ ճամբուն մէջ առաջ չերթայր՝  
ետև երթալ է : Այլ որ բռնութիւն չըներ  
առաջ երթալու համար , միշտ ասպակա-  
նեալ բնութեան հեղեղէն քշուելով ետ ետ  
կ'երթայ :

10 . Աւտաի մեծ սխալ է ոմանց ըսա-  
ծը . Աստուած չուզեր որ ամէնքը սուրբ  
ըլլան : Չէ , կ'ըսէ սուրբն Պօղոս . “ Այս  
է Աստուծոյ կամքը , ձեր սրբութիւնը <sup>1</sup> :  
Աստուած կ'ուզէ որ ամէնքն ալ սուրբ ըլ-  
լան , և ամէնն ալ իրենց վիճակին մէջը , կրօ-  
նաւորը՝ կրօնաւորութեամբ , աշխարհականը՝  
աշխարհականութեամբ , քահանայն՝ քա-  
հանայութեամբ , ամուսնացեալը՝ ամուս-  
նութեամբ , վաճառականը՝ վաճառականու-  
թեամբ , զինուորը՝ զինուորութեամբ , և նոյն-  
պէս ուրիշ ամէն վիճակի վրայօք ալ հասկը

<sup>1</sup> Չի այս են կամք Աստուծոյ , սրբ-  
ութիւն ձեր : Ա . Թեասաղ . Դ . 3 :

նայու է : Հատ աղուոր յիշատակարաններ  
 են զօրոնք կու տայ աս նիւթիս վրայօք իմ  
 մեծ փաստաբանս սրբուհին թերեզա : Տեղ  
 մը կ'ըսէ . “ Մեր մտածութիւնները՝ մեծ  
 պէտք է ըլլան , վասն զի ասկէց պիտի գայ  
 մեր բարիքը , : Ուրիշ տեղ մը կ'ըսէ .  
 “ Պէտք չէ նուաստացնել իղձերը , հա-  
 սրս վստահանալ յԱստուած , վասն զի  
 բռնութիւն ընելով մեզի , կրնանք կամայ  
 կամայ հասնիլ ուր որ Աստուծոյ շնորհքո-  
 վը հասան շատ սուրբեր , : Աւ աս ըսածը  
 հաստատելու համար կը վկայէր թէ քա-  
 ջասիրտ անձինք քիչ ատենի մէջ մեծ յա-  
 ոաջագիւտութիւն ըրած էին . “ Վասն զի ,  
 կ'ըսէր , Աստուծոյ այնպէս հաճոյ են իղ-  
 ձերը , որպէս թէ 'ի գործ դրուած ըլլայ-  
 ին , : Ուրիշ տեղ մըն ալ կ'ըսէ . “ Աս-  
 տուած անոր միայն մեծամեծ շնորհքներ  
 կ'ընէ , որ իրեն սիրոյն շատ փափաք ցուցը-  
 ցած ըլլայ , : Աւելին ալ կ'ըսէ ուրիշ տեղ .  
 “ Աստուած անվարձ չթողուր որ և իցէ  
 բարի փափաք այս աշխարհքիս մէջ , մա-  
 նաւանդ որ ինքը վեհանձն հոգիներու բա-  
 րեկամ է , միայն թէ իրենք իրենց վրայ



չվստահին , : Այլ ճիշդ այսպիսի վեհանձն  
 հոգևով զարդարուած էր սրբուհին , որով  
 կրցաւ անդամ մը ըսել առ Տէրն , թէ  
 արքայութեան մէջ ուրիշները տեսնալու  
 ըլլայ որ իրմէ աւելի վայելմունք ունին ,  
 փոյթը չըլլար . բայց թէ որ տեսնալու ըլ-  
 լայ որ ուրիշ մը իրմէ աւելի զՄատուած կը  
 սիրէ , չէր գիտեր՝ թէ ինչպէս աս բանիս  
 պիտի համբերէ :

11 . Պէտք է ուրեմն մեծ արիութիւն  
 ունենալ . « Բարի է Մատուած զինքը  
 փնտոող հոգեոյն <sup>1</sup> , : Մատուած շատ  
 բարի ու առատաձեռն է զինքը սրբ-  
 տանց փնտոողին : Այլ ոչ խիսկ գործած  
 մեղքերնիս կրնան մեզի սուրբ ըլլալու ար-  
 գելք ըլլալ , թէ որ իրաւյրնէ կը փափա-  
 քինք սուրբ ըլլալ նէ : Ար ծանուցանէ մե-  
 զի սրբուհին (ձերեզա , թէ « Ստանան  
 կը ջանայ , որ հպարտութիւն երեցրնէ

1 Բարեբար է Մատուած 'ի վերայ  
 համբերողաց իւրոց . զի անձն որ խըն-  
 դրէ զնա՝ բարի է որ համբերէ նմա ճըշ-  
 մարտութեամբ , և հանգչի նա 'ի փրկու-  
 թեան Տէառն : Ողբք Երեմ . Գ . 25 :

մեծ փափաքներ ունենալը, ու սուրբերուն նմանել ուզելը. բայց շատ օգուտ կ'ընէ մեծ բաներու սիրտ ընելը, որ թէպէտ և հոգին մէկէն ուժ ալ չունենայ, այսու ամենայնիւ արիական թուիչ մը կ'ընէ, և շատ առաջ կ'անցնի, : Առաքեալն ալ կը գրէ. «Աստուած զինքը սիրողներուն, ամէն բանի մէջ 'ի բարին գործակից կ'ըլլայ»,<sup>1</sup> : Արյաւելու մեկնիչը, թէ մեղքը, նաև ըրած մեղքերն ալ կրնան գործակից ըլլալ մեր սրբութեանը, որովհետև անոնց յիշատակը զմեզ աւելի խոնարհ կը բռնէ, և աւելի երախտագէտ կ'ընէ, տեսնելով Աստուծոյ մեղի սարգևած շնորհքները, յետ այնչափ իրեն դէմ գործելու : Աս բան մը չեմ կրնար ընել, պէտք է որ ըսէ մեղաւորը, և ոչ բանի մը արժանաւորութիւն ունիմ, միայն դժոխքի արժանի եմ. բայց անհուն բարութիւն ունեցող Աստուծոյ հետ է իմ

<sup>1</sup> Բայց գիտեմք, եթէ որոց սիրենն զԱստուած յամենայնի գործակից լինի 'ի բարիս՝ որք հրաւիրանաւն կոչեցան : Հռովմ. Ը. 28 :

բանս , որն որ խոստացած է ամէն իրեն  
 պաղատողին ըսել . հիմայ՝ որովհետև դա-  
 տապարտութեան վիճակէն դուրս հանեց  
 զիս և կ'ուզէ որ սուրբ ըլլամ և արդէն իր  
 օգնութիւնը ինձի կու տայ , կրնամ շատ  
 դիւրաւ սուրբ ըլլալ , ոչ իմ զօրութեամբս ,  
 հասկա Մտուծոյ շնորհօքը որ զիս կը  
 զօրացնէ . “ Ամէն բանի կարող եմ իր-  
 մով , որ զիս կը զօրացնէ <sup>1</sup> . ” : Աւրեմն երբ  
 բարի փափաքներ ունենանք , պէտք է որ  
 սիրտ ընենք և Մտուծոյ վստահանալով  
 ջանանք զանոնք ՚ի գործ դնել . բայց թէ որ  
 արդելք մը դէմ ելլալու ըլլայ հոգևոր գործ-  
 քի մը մէջ , աստուածային կամայը հսկա-  
 տակելով անշփոթ մնանք : Մտուծոյ կամ-  
 քը պէտք է նախադասել քան զամէն մեր  
 բարի իղձերը : Սրբուհի Մարիամ Մագ-  
 դաղինէ Քացեան աւելի գոհ կ'ըլլար զուրիկ  
 մնալ ամենայն կատարելութենէ , քան թէ  
 առանց Մտուծոյ կամայը կատարելութիւն  
 մը ունենալ :

<sup>1</sup> Յամենայնի կարող եմ այնու որ  
 զօրացոյցն զիս : Փիլիպ . Դ . 13 :

12. Կատարելութեան երկրորդ միջոցն է բոլոր ինքը զինքը Աստուծոյ նուիրելու Առաջադրութիւնը : Շատերը կատարելութեան կոչուած են . շնորհքը զիրենք առայն կը մղէ անոր փափաքը կը վառէ . բայց որովհետեւ չեն առաջադրիր , անուր կեանքերնին իրենց դաղջ ու անկատար կենացը գարշահոտութեանը մէջ կ'անցնին ու անանկ ալ կը մեռնին : Կատարելութեան փափաքը չբաւեր, թէ որ զայն շահելու հաստատ առաջադրութիւն մ'ալ չը լայ : Մ'ըջափ հողիներ միայն իղձերով կը սպարարին , բայց մէկ քայլ մըն ալ երբէք չեն ընիր Աստուծոյ ճամբուն մէջ : Ասոնք են ան իղձերը որոնց համար կ'ըսէ Իմաստունը . « Բաղձանքները կը սպաննեն զձոյլը »<sup>1</sup> : Օոյլը միշտ կը բաղձայ և բնաւ չորոշեր սուրբ ըլլալու համար իր միճակին յատուկ միջոցները ձեռք առնուլ . կ'ըսէ միշտ . Ո՛հ , թէ անապատտ մը ըլլայի և ոչ աս տանա մէջ : Ո՛հ , թէ կարենայի երթալ ուրիշ վանք մը ապրիլ .

1 Յանկութիւնք սպանանեն զվատ : Առակք . ԻԱ . 25 :

և հոն զիս բողոքովնն Աստուծոյ տալ :  
 Բայց միանգամայն իր այն ընկերոջը չկըր-  
 նար համբերել, իրեն հակառակ խօսք մը  
 չկրնար լսել, աւելորդ հոգերու կը զբա-  
 ղէ, հաղարումէկ պակսութիւններ կ'ընէ,  
 հպարտութեան, հետաքրքրութեան, որ-  
 կրամոլութեան . և ետեւէն պարապ տեղը  
 կը հառաչէ . Ա՛հ թէ ունենայի, ա՛հ թէ  
 կարենայի, և այլն : Այդպիսի իղձերն աւելի  
 վնաս կ'ընեն, քան թէ օղուտ, վասն զի  
 այնպիսին ասոնցմով գոհ եղած կ'ապրի, և  
 կը շարունակէ այն անկատար վարքը :  
 Սուրբն Քրիստոսիս Սալուեան կ'ըսէր .  
 “ Ես չեմ ախարժիր որ մէկը պարտաւո-  
 րութեան կամ կոչման մը կապուած ըլ-  
 լալով կենաց ուրիշ վիճակի մը բաղձայ  
 իրեն վիճակէն դուրս, և ոչ այնպիսի  
 կրթութիւններ որ իրեն ներկայ վիճակին  
 անլծորդիլի են . որովհետեւ աս բանս իրեն  
 սիրտը կը թուլցնէ, և զինքը կը քուցանէ  
 հարկաւոր կրթութեանց մէջ ” :

13 . Արեմն պէտք է կատարելու  
 թեան փափաքիլ, և հաստատուն մտ-  
 քով ձեռք առնուլ անոր միջոցները : Ար

դրէ սրբուհին թմբեղա . “ Աստուած ուրիշ բան մեզմէ չուզեր , բայց եթէ առաջադրութիւն մը . ետեւէն ինքք իր կողմանէ կ'ընէ ամենայն բան : Տարտամ հոգիներէն չխախնար սատանան , : Այս բանիս կը ծառայէ մտածական աղօթքը , որպէս զի մեզ կատարելութեան հասցընող միջոցները ձեռք բերենք : Ոմանք շատ աղօթք կ'ընեն , բայց աղօթքին ատենը հաստատ բան մը չեն որոշեր : Ա'ըսէր նոյն սրբուհին . “ Այս կ'ուզէի այնպիսի կարճ աղօթք , որ շատ աւելի մեծ արդիւնքներ առաջ կը բերէ , քան թէ շատ տարիներու աղօթք , որուն մէջ հոգին Աստուծոյ համար արժանի բան մը ընելու առաջադրութիւնը չկատարեր , : Ուրիշ տեղ կ'ըսէ . “ Այս փորձեր եմ , որ ուլ որ սկզբան կը ջանայ բան մը ընելու համար առաջադրութիւն ընել , որչափ ալ դժուարին ըլլայ , թէ որ Աստուծոյ հաճոյիցը համար միայն ըլլայ , ալ լիախնայու բան չմնար , :

14 . Առաջին առաջադրութիւնը պիտի ըլլայ , որ մարդ ամէն ուժը թափէ ու մեռնիլ ալ յանձն առնու , քան թէ կամա-

ւորապէս մեզք մը դործէ՝ թէպէտ և ամս-  
 նամանք : Իբաւ է որ մեր ամէն ջանքը ա-  
 ոանց աստուածային օգնութեան բաւական  
 չէ փորձութեանց յաղթելու համար , բայց  
 Աստուած կ'ուզէ որ ստէպ մենք մեր կող-  
 մանէ ընենք աս բռնութիւնը , որպէս զի  
 ինքը ետեւէն իր շնորհօքը սպակասը լեցնէ  
 և օգնէ մեր տկարութեանը , ու յաղ-  
 թութիւնը մեզի առնել տայ : Այս առա-  
 ջադրութիւնը՝ առաջ երթալու արդելքէն  
 զմեզ կը խաղըսէ և միանդամայն մեզի մեծ  
 արիութիւն մը կու տայ , որովհետեւ կ'ա-  
 պահարկընէ զմեզ թէ Աստուծոյ շնորհացը  
 մէջն ենք : Ար գրէ սուրբն Ֆրանչիսկոս  
 Սալեզեան . “ Կեծագոյն ասպահարկ-  
 թիւնը որ կրնանք աս աշխարհքիս մէջ ու-  
 նենալ Աստուծոյ շնորհաց մէջ ըլլանու  
 համար , չկայանար մեր իրեն սիրոյն ունե-  
 ցած զգացմանցը վրայ , հասլա՝ որ մեր բո-  
 լոր էութիւնը անսխալիս և մաքուր սրտիւ  
 Աստուծոյ ձեռքը թողունք ու բնաւ ոչ  
 մեծ և ոչ սղտիկ մեղքի մը հաւանութիւն  
 տալու հաստատ առաջադրութիւն ունե-  
 նանք , որ ըսել է՝ փախուկ խղճմանք

ունենալ: Բայց զխանալու է որ ուրիշ բան է բարակ խղճմտանք ունենալ և ուրիշ բան է խղճահար ըլլալ: Բարակ խղճմտանք ունենալը սուրբ ըլլալու համար հարկաւոր է . բայց խղճահար ըլլալը սրահասութիւն է ու մնաս կ'ընէ . և ասոր համար պէտք է հոգևոր հարց հնազանդ ըլլալ և խղճահարութեանց յաղթել, որոնք միայն սնուտի ու անպատճառ կասկածներ են:

15. Ատքը հարկաւոր է լաւագոյնը ընտրելու առաջադրել, չէ թէ միայն այն որ Աստուծոյ հաճոյ է, հապա այն որ աւելի հաճոյագոյն է Աստուծոյ, առանց ետ քաշուելու: Սուրբն Ֆրանչիսկոս Սալեզեան կ'ըսէ. «Պէտք է հաստատ ու զօրաւոր առաջադրութեամբ մը սկսիլ ինքը զինքը բողբոլիւն Աստուծոյ տալ. ու իրեն մկայել որ ասկէջ մերջը կ'ուզենք միշտ իրենը ըլլալ առանց բանէ մը ետ քաշուելու. և այս մի և նոյն առաջադրութիւնը պէտք է ալ ստէյլ նորոգել»:  
 Սուրբն Անդրէաս Ալէլլինեան ուխտ ըրաւ որ ամէն օր կատարելութեան մէջ



յառաջագիմէ : Սուրբ ըլլալ ուզողը ,  
 հարկ չէ որ սրբութեան ուխտ ընէ , բայց  
 հարկ է որ ամէն օր ջանայ կատարելու  
 թեան մէջ բանի մը քայլ ընելու : Սուրբ  
 Աւրինտիոս Յուստինեան կը գրէ . “ Ար-  
 բոր մէկը իրաւցընէ լաւ կը քալէ , յինքեան  
 փափաք մը կը զգայ անդադար յառաջա-  
 դիմելու . և որչափ զարգանայ կատարե-  
 լութեան մէջ , նոյնչափ ալ կ’աւելնայ աս  
 փափաքը . վասն զի ամէն օր իր լոյսը ա-  
 ճելով , միշտ իրեն կ’երևնայ թէ ամենևին  
 առաքինութիւն մը չունի և ամենևին բա-  
 րիք մը չընէր . ու թէ որ տեսնէ ալ թէ  
 բարիք մը ըրեր է , միշտ իրեն շատ անկա-  
 տար կ’երևնայ և բանի տեղ չգնէր : Ասոր  
 համար անդադար կ’աշխատի առանց յոգ-  
 նելու կատարելութիւն վաստակելու հա-  
 մար , :

16 . Այլ պէտք է շուտ մը ընել , վա-  
 ղուան օրը չսպասել : Ո՛ր գիտէ , ետքը  
 թերևս ատեն ալ չենք ունենար : Ար-  
 խրատէ Ալկլեսիաստէսը . “ Այն օր  
 կրնաս ընել , շուտ մը ըրէ , մի ուշացը-

ներ,,<sup>1</sup> . և սլատճառ կու տայ . “ Որովհետև անդիլի աշխարհքն ալ գործելու ատեն չկայ , ոչ վարձուց իրաւունք , ոչ լաւ ընելու խմաստութիւն , ոչ գիտութիւն կամ փորձ քեզի լաւ խորհուրդ տալու՝ որովհետև մահու ընէ վերջը՝ եղածը եղած է,,<sup>2</sup> : Հոռմայու թօրրէ տէ Սրէքքի ըսուած վանքը մայրապետ մը Պոնալինդուրա անուամբ շատ գաղջ կեանք կ'անցընէր : Հայր Վանչիցիոս անունով կրօնաւոր մը եկաւ մայրապետներուն հոգևոր կրթութիւն ընելու համար , և որովհետև մայրն Պոնալինդուրա ամենևին չէր փափաքեր գաղջութենէն ելլալու , շատ գժուարութեամբ սկսաւ կրթութիւններուն մտիկ ընել : Բայց աստուածային շնորհքը առջի քարոզին զինքը շահեցաւ , ուստի մէկէն քարոզիչ քահանային ոտքը ինկաւ , և ըսաւ ճշմարիտ առաջա-

1 Չամենայն ինչ որ ինչ գացէ ձեռնքս գործեւ , որչափ 'ի կարի քում իցէ գործեաջիւր : Ժողովող . Թ . 10 :

2 Զի ոչ է խորհուրդ և գիտութիւն և խմաստութիւն 'ի գժոխս յոր գու երթալոցն ևս : Անդ :

դրութեամբ . “ Հայր , կ'ուզեմ սուրբ ըլլալ ու շուտ սուրբ ըլլալ , ” : Եւ աստուածային օղնութեամբը այնպէս ալ ըրաւ . վասն զի անկէց ետքը ութը ամիսի չափ ասարեցաւ , ու այն քիչ ատենը իբրև սրբուհի օրերը անցուց , և իբրև սրբուհի մեռաւ :

17 . Կ'ըսէր Դաւիթ . “ Ըսի , որ հիմա սկսայ <sup>1</sup> , ” : Եւ յսպէս ստէպ կ'ըսէր սուրբն Կարոլոս Պորրոմէոս ալ . “ Եւս օր սկսայ Եստուծոյ ծառայելու , ” : Եւ այնպէս պէտք է վարուիլ , իբրև թէ առաջուց և ոչ բարիք մը ըրած ըլլանք : Ինչպէս որ իրաւքնէ ինչ բան որ Եստուծոյ համար կ'ընենք , ամէնն ալ ոչ ինչ է , որուհետև պարտրկան ենք այն ամէն բանն ընելու : Ուրեմն ամէն օր առաջադրենք բոլորովին Եստուծոյ ըլլալ սկսելու : Ու չնայինք թէ ինչ կ'ընեն ու ինչպէս կ'ընեն ուրիշները : Քիչ են անոնք որ իրաւքնէ սուրբ կ'ըլլան : Սուրբ Տեոնարդոս կ'ըսէ . “ Կատարեալը եզակիան կ'ըլլայ , ” : Թէ

<sup>1</sup> Ասացի թէ այժմ սկսայ : Սաղմ . հ. 2 , 11 :

որ սուխրական մարդկանց ուզենանք նստ  
 նիլ, միշտ անկատար կը մնանք, ինչպէս  
 որ են մարդիկ ընդհանրապէս : Աէտք է  
 ամէն բանի յաղթել, ամէն բանէ հրաժա  
 րիլ, ամէն բան շահելու համար : Արբու  
 հին Թերեզա կ'ըսէր . « Արուճեան բո  
 լոր մեր սիրտը Աստուծոյ շնոր տար, անոր  
 համար իրեն սէրն ալ բոլոր մեզի չը  
 տրուիր ,, : Ա՛լ Տէր, որչափ քիչ բան է  
 ինչ որ Յիսուսի համար կ'ըլլայ, որ մեզի  
 համար իր կեանքը ու արիւնը տուաւ :  
 « Բոլորն ալ գանձելի բան մըն է, կը գրէ  
 նոյն սրբուհին, ինչ որ կրնանք ընել,  
 համեմատելով Տեառն մերոյ մեզի համար  
 թափած կաթիլ մը արեան հետ ,, : Աուր  
 բերը իրենք իրենց չեն խնայեր, երբ որ հա  
 ճոյանալու վրայ ըլլայ խօսքը, այն Աստու  
 ծոյ որ բոլորովին ինքը զինքը մեզի տուաւ  
 առանց բանի մը խնայելու, որպէս զի նաև  
 զմեզ ալ ստիպէ իրեն բան մը չժխտելու :  
 Ար գրէ սուրբն Ասկեբերան . « Ամէն բան  
 քեզի տուաւ, բան մը իրեն չսպասեց ,, :  
 Աստուած բոլոր ինքը զինքը քեզի տուաւ,  
 իրաւունք է որ դուն ճշդելով երթաս Աս

առժոյ հետ : “ Ինքը ինչուան մեր ամենաւ  
համար մեռաւ , կ'ըսէ Մաթեոսը , որպէս  
զի մեր ամէն մէկն ալ իրենք իրենց համար  
չապրին , հասլա միայն անոր համար որ  
մեզի համար մեռաւ . , <sup>1</sup> :

18 . Սուրբ ըլլալու համար երբորդ  
միջոյն է Մտածական աղօթքը : Ար գրէ  
Յովհանն Գերսան թէ “ Ով որ յաւիտենա  
կան ճշմարտութիւններուն վրայ մտածու  
թիւն չընէր , չկրնար առանց հրաշքի . քրիս  
տոնէաբար ասրիլ , ” <sup>2</sup> : Պատճառն այս է ,  
որ առանց մտածական աղօթքի լոյսը կը  
սրակսի և մարդ մութի մէջ կը մնայ : Հա  
ւատքի ճշմարտութիւնները մարմնոյ ա  
չուրներով չեն տեսնուիր , հասլա հոգւոյ  
աչօք , երբոր հոգին անոնց վրայ մտածե  
լու ըլլայ . ով որ մտածութիւն չընէր ա  
նոնց վրայ , չտեսնար զանոնք , ու անոր

1 Եւ 'ի վերայ ամենեցուն մեռաւ , զի  
որ կենդանիքն իցեն , մի անձանց իցեն  
կենդանիք , այլ այնմ որ 'ի վերայ նոցայն  
մեռաւ , և յարեաւ : Բ . Կորնթ . Ե .  
15 :

2 Յղ . Միսիթ . Մտած . աղօթից . Է :

Համար մութի մէջ կը մնայ . և մութի մէջ կենալով՝ դիւրաւ զգալի առարկաներու կը փակչի , որոնցմով ետքը յախտննականնէրը կ'անարգէ : Արթուհին թերեզա կը գրէ <sup>1</sup> Օզմայի եպիսկոպոսին . « թէ սլէտե մեզի կ'երենայ որ մեր վրայ անկատարութիւններ չեն գանուիր , բայց երբոր Մտուած բանայ մեր հոգւոյն աչուրները , ինչպէս ընդհանրապէս կ'ընէ աղօթքի մէջ , մեր անկատարութիւնները լաւ երեւան կ'ելլան » : Բան զայն առաջ գրեց սուրբ Բեռնարդոս թէ անիկա որ մտածական ջըներ , ինքն իրմէ չիզուիր , որովհետեւ չճանչնար զինքը : Աղօթքը , կ'ըսէ սուրբը , հոգւոյն իղձերը կը կանոնաւորէ և գործքերը կ'ուղղէ : Բայց առանց աղօթքի իղձերը աշխարհքիս կը կսպչին , գործքերն ալ իղձերուն կը համաձայնին , և ստանկով ամէն բան կը շփօթի :

19 . Շատ սարսափելի դիպուած է՝ որ Սիկիլիոյ երանաշնորհ Սաչեան Մարիամու վարքին մէջ կը կարդանք <sup>2</sup> , որ երբոր

1 Թուղթ . Ը :

2 Գիրք Բ . ԳԼ . Ը :

Աստուծոյ աղախինը աղօթքի կեցած էր ,  
 ըսեց որ սատանայ մը կը սլարծէր , թէ  
 մայրապետի մը հատարակաց աղօթքը զանց  
 ընել տուեր է . և հոգւով տեսաւ որ յետ  
 աս պակասութեանս սատանան զինքը  
 փորձութեան մէջ էր ձգեր մէկ մեծ մեղքի  
 մը հաւանութիւն տալու , և անիկայ ալ  
 արդէն մտաւ էր հաւանելու . շուտ մը  
 վազեց , ու զինքը խրատելով խաղըսեց այն  
 մեղքի մէջ իյնալէն : Ա՛րտէ սրբուհին թմե-  
 րեզա , թէ “ Ո՛վ որ աղօթքը կը ձգէ ,  
 քիչ աստնուան մէջ կամ անբան կամ  
 սատանայ կը դառնայ ” :

20 . Ուրեմն ուլ որ աղօթքը կը ձգէ ,  
 պէտք է որ Յիսուս սիրելէն դադրի : Ա-  
 ղօթքն է այն երանելի հնօցը , ուր որ կը  
 բորբոքի ու կը պահուի սուրբ սիրոյն  
 կրակը : “ Իմ մտածութեանս մէջը կրակ  
 մը ելաւ <sup>1</sup> ” : Պօլոնեացի սրբուհի Աա-  
 տարինէն կ'ըսէր . “ Ո՛վ որ ստէպ աղօթք  
 չընէր , կը զբիւռի այն կապէն որ զհոգին

1 Եւ 'ի խորհուրդս իմ վառեցաւ  
 հուր : Սաղմ . ԼԸ . 4 :

Աստուծոյ հետ կը կապէ , : Արուլ շատ  
 դժուարին չըլար սատանային , որ զհոգին  
 աստուածային սիրոյն մէջ պաղ գտնալով ,  
 թունաւոր պտուղ մը ուտելու համոզէ :  
 Բնդ հակառակն սրբուհին թփերեզա կ'ը-  
 սէր . “ Ով որ կը յարատեւէ աղօթքի  
 մէջ , որչափ մեղք որ սատանան դէմը  
 հանէ , ասպհով կը սեպեմ որ վերջա-  
 պէս Աստուած այնպիսոյն փրկութեան  
 նաւահանդիտոր կ'առաջնորդէ , : Աւ-  
 րիշ տեղ մ'ալ կ'ըսէ . “ Ով որ աղօթքի  
 ճամբուն մէջ կանկ շառներ , թէպէտ  
 և ոչ , բայց կը համնի , : Աւ ուրիշ  
 տեղ մը կը դրէ որ սատանան անոր հա-  
 մար այնչափ կ'աշխատի հոգիները աղօթ-  
 քէն հեռացընելու , որով հետեւ “ Վիտէ  
 սատանան որ յարատեւութեամբ աղօթքի  
 մտադիր եղող հոգին՝ իր ձեռքէն ելած  
 է , : Ո՛հ , աղօթքէ որչափ բարկք կ'ել-  
 լեն : Աղօթքի ատեն սուրբ մտածութիւն-  
 ները միտք կու գան , ջերմեռանդ իղձերը՝ ի  
 գործ կը դրուին , մեծ փափաքներ կը  
 վառուին և հաստատ առաջադրութիւն-  
 ներ կ'ըլլուին ինքը վնքը բոլորովն Աս-



տուժոյ տալու . և այսպէսով հողին Աստուծոյ կը նուիրէ երկրաւոր հաճոյքները , և բոլոր անկարգ ախորժակները : Սուրբն Մովսիսի Կոնժակայ կ'ըսէր . “ Հատ կատարելութիւն չըլլար , առանց շատ աղօթքի ” : Ով որ կատարելութիւն կը սիրէ պէտք է լաւ հասկընայ սրբոյն աս մեծ խօսքը :

21 . Բայց պէտք չէ աղօթքի երթալ աստուածային սիրոյն քաղցրութիւնները զգալու համար . ով որ աս վախճանաւ աղօթք կ'ընէ , ժամանակը կը կորսնցընէ , կամ շատ քիչ օգուտ կը քաղէ անկէց : Մարդս պէտք է աղօթք ընէ միայն Աստուծոյ հաճոյական բան ընելու համար , այս ինքն միայն Աստուծոյ իրմէ ուզածը իմանալու համար , և իրեն օգնութիւնը խնդրել զայն 'ի դորձ գնելու համար : Արանաշնորհ հայրն Տէր Աստուն թարրէս կ'ըսէր . “ Առանց մխիթարութեան խաչ կրելը , զհողիները առ կատարելութիւն կը թողնուի ” : Առանց զգալի մխիթարութեանց աղօթքը աւելի սրտաբեր կ'ըլլայ հողւոյն : Բայց վայ այն հողւոյն , որ ա-

խորժ մը շառնելուն համար կը թողու ա-  
ղօթքը : Ա՛րսէր սրբուհին թօնրեղա .  
“ Ա՛յն հողին որ աղօթքը զանց կ’ընէ ,  
ինքրզինքը իբրև թէ իր ձեռքովը դժոխք  
կը դնէ , առանց սատանաներու հարկա-  
ւորութեան , , :

22. Աղօթից կը թուժիւնը անանկ կ’ընէ  
որ մարդ միշտ զԱստուած կը խորհի :  
“ Ճմարխտ սիրողը , կ’ըսէ սրբուհին թօն-  
րեղա , կը յիշէ միշտ զսիրելին , , : Այս է  
պատճառը որ աղօթասէր անձինք միշտ  
Աստուծոյ վրայ կը խօսին , գիտնալով թէ  
որչափ հաճոյ է Աստուծոյ , որ զինքը սի-  
րողները իր վրայ և իր մեր վրայ ունեցած  
սիրոյն վրայ խօսելով զուարճանան . և ա-  
նանկով ջանան ուրիշներն ալ նոյն սիրով  
վառել : Նոյն սրբուհին կը գրէ . “ Աս-  
տուծոյ ծառայից խօսակցութեանցը Յի-  
սուս միշտ ներկայ կը գտնուի , և շատ կը  
հաճի որ իրմով զուարճանան , , :

23. Աղօթքէն դարձեալ առաջ կու գայ  
առանձին տեղուանք քաշուելու փափաքը ,  
Աստուծոյ հետ մինակ խօսելու համար և  
միանգամայն արտաքին հարկաւոր գործոց

մէջ ալ մտաց ամփոփմունքը պահելու .  
 հարկաւոր կ'ըսեմ, կամ ընտանեաց կտա-  
 վարութեան պատճառաւ , և կամ հնա-  
 ղանդութեան դրած պաշտամանցը հա-  
 մար . որովհետև աղօթասէր մարդը պէտք  
 է առանձնութիւնը սիրէ , աւելորդ ու  
 անօգուտ բաներուն չի ցրուի . ասլա թէ  
 ոչ կը կորսնցընէ մտաց ամփոփման հոգին ,  
 որ այս բանս մեծ միջոց մըն է Մտուծոյ  
 հետ միութիւնը պահելու : « Պարտէզ փա-  
 կեալ , քոյր իմ հարսն »<sup>1</sup> : Յիսուսի հարսնա-  
 ցեալ հոգին ամէն արարածներու դէմ փա-  
 կուած պարտէզ մը պիտի ըլլայ , ու իր  
 սրտին մէջ ուրիշ մտածութիւններ և ուրիշ  
 դործողութիւններ պիտի չընդունի , բայց  
 եթէ Մտուծոյ մտածութիւնը , կամ  
 ինչ որ Մտուծոյ համար է : Բաց սրբ-  
 անքը սուրբ շնն ըլլար : Սուրբերը որ  
 կ'աշխատին հոգիք առ Մտուած շահե-  
 լու , իրենց քարոզութիւն , խոստովանու-  
 թիւն ընելու , թշնամիք հաշտեցընելու ,  
 հիւանդաց օգնելու աշխատանայ մէջն

ալ իրենց մտաց ամփոփմունքը շնն կար-  
 սընցըններ : Ասանկ են անոնք ալ որոնք որ  
 ուսման կը զգաղին : Քանիններ շատ սոր-  
 լիելու , գիտուն ըլլալու համար , ոչ սուրբ  
 կ'ըլլան և ոչ գիտուն , իման զի ճշմարիտ  
 իմաստութիւնը սուրբ գիտութիւնն է , այս  
 ինքն զՅիսուս սիրել զիմնալը . իսկ Աս-  
 տուծոյ սէրը իրեն հետ կը բերէ իմաստու-  
 թիւն և ամենայն բարիք : “ Անոր հետ  
 մէկ տեղ եկան ինծի ամէն բարիք , ” .<sup>1</sup> այս  
 ինքն սուրբ սիրոյն հետ : Արանաշնորհն  
 Յովհաննէս Աերդմանս շափազանց տննչ  
 մը ունէր ուսման , բայց իր առաքինու-  
 թեամբը թող չի տուաւ որ ուսմունքը  
 հողևոր յառաջադիմութենէն զինքը ար-  
 գելու : Ար գրէ Առաքեալը . “ Հարկաւոր  
 եղածէն աւելի բան չի մտածել , հասլա  
 ամէն մարդու մտածութիւնն ըլլայ զգաս-  
 տանալ , ”<sup>2</sup> : Մասնաւորապէս ուլ որ քա-

1 Եւ եկին ինձ բարութիւնք միանգա-  
 մայն ընդ նմա : Իմաստ . Է . 11 :

2 Մի առաւել ինչ խորհել քան զար-  
 ժանն խորհելոյ , այլ ի խորհելն զգաստա-  
 նալ իւրաքանչիւր : Հ.Ու.Մ. Ժ.Բ. 3 :

Հանայ է, պէտք է որ գիտութիւն ունենայ, որովհետեւ քահանան սլարտական է նաև զայս յօրէնս Աստուծոյ կրթելու. «Քահանային շրթունքները գիտութեան փոյթ ունենան, և անոր բերնէն փրնտուն օրինաց բաներ»,<sup>1</sup>: Պէտք է որ գիտուն ըլլայ և իմաստուն, բայց կարգով կանոնով: Ով որ ուսման համար աղօթքը զանց կ'ընէ, յայտնի կ'ընէ որ ուսման մէջ զԱստուած չի փրնտուեր, այլ ինք զինքը: Ով որ զԱստուած կը փնտուէ, աղօթքը չի թողլու համար, կը թողու ուսմունքը երբոր նոյն ատենը հարկաւոր չէ:

24. Դարձեալ մեծագոյն չարը այս է, որ առանց մտաւորական աղօթքի, աղօթք չըլար: Իմ հոգևորական գիրքերուս մէջ շատ տեղ աղօթից հարկաւորութեան վրայ խօսեր եմ, և մասնաւորապէս առանձին գրքոյկի մը մէջ Աշուկից Տեժ

1 Զի շրթունք քահանային զգուշացին գիտութեան, և օրէնս խրնդրեացեն ՚ի բերանոյ նորա: Մաղաք. Բ. 7:

Դժոյշը կոչուած և սա գլխուս մէջն ալ հա-  
 մառօտ կերպով մը բանի մը բաներ պիտի  
 ըսեմ: Տաւական է հոս իմացընելը միայն,  
 թէ Արանաշնորհ Օգմայի եպիսկոպոսը  
 Գեր . Փաղափօքս կ'ըսէ <sup>1</sup> . « Սէրը ի՞նչ  
 պէս կրնայ դիմանալ, թէ որ Աստուած  
 մեզի յարատեութիւն չի տայ: Ի՞նչպէս  
 Աստուած մեզի յարատեութիւն պիտի  
 տայ, թէ որ մենք իրմէն չի խնդրենք: Ա-  
 ի՞նչպէս իրմէ կրնանք խնդրել առանց ա-  
 ղօթքի: Առանց աղօթքի Աստուծոյ հետ  
 հաղորդակցութիւն չըլլար առաքինութիւն,  
 ները անարատ սլահելու համար,»: Այ-  
 յիրաւի ասանկ է . որովհետե ուլ որ  
 մտաւորական աղօթք չընեն, իր հո-  
 գւոյն հարկաւորութիւնները քիչ կը տես-  
 նայ, քիչ կը ճանչնայ իր կորստեանը մտան-  
 վները, քիչ՝ այն միջոցները որ պէտք է բա-  
 նեցընէ: փորձութեանց յաղթելու համար,  
 և այսպէս աղօթք ընելու հարկաւորու-  
 թիւնը որ ունի քիչ ճանչնալով, զանց

<sup>1</sup> Սրբուհւոյն Թեքիզայի Ը . թղթոյն  
 ծանօթութեանը մէջ . համար 10:

կ'ընէ՝ արթթքը ու անտարակոյս կը կորսուի:

25 . Իսկ մտածականի նիւթին վրայ դալով մեր վերջինքը մտածելէն աւելի օգտակար մտածական չիկայ, մահը, դատաստանը, դժոխքը, արքայութիւնը: Բայց բուն օգտակար է մահը մտածելը, երևակայելով որ կիսամեռ անկողնին վրայ պառկած ենք, խաչին սյր լուած, և յաւիտենականութիւն մտնալու մտ: Բայց ասոնցմէ ալ վեր, անոր որ կը սիրէ զՅիսուս և կը բաղձայ միշտ որ սուրբ սէրը աճի իր սրտին մէջ, Փրկչին մերոյ չարչարանքները մտածելէն աւելի ազդու մտածութիւն չկայ: Սուրբն Ֆրանչիսկոս Սալեզացի կ'ըսէ՝ թէ “Գողգոթա լեռը սիրողաց լեռ է”: Ամէն զՅիսուս սիրողները միշտ այս լեռան վրայ սիրով վառուեր են, ուր որ ուրիշ օդ չի շնչեր մարդ՝ բայց եթէ երկնային սէրը: Տեսնալ հոն Աստուած մը որ մեր սիրոյն համար կը մեռնի, և կը մեռնի՝ որովհետև զմեզ կը սիրէ<sup>1</sup>,

<sup>1</sup> Սիրեաց զմեզ, և մատնեաց զանձն իւր վասն մեր: Եփեսոս . Ե . 2 :

կարելի չէ զինքը եռանդագին չի սիրել :  
 Նաչեցելոյն վերքերէն միշտ այնպիսի սիրոյ  
 կայծակներ կ'ելան, որ քարէ սիրտերն ալ  
 կը խոցեն : Աշրանի՛ անոր որ այս աշխարհ-  
 քիս մէջ միշտ Գողգոթա լերան վրայ կ'ան-  
 ցընէ կեանքը : Ա՛յլ երջանիկ լեռ, սիրելի  
 լեռ, մ՛յլ քաղցր լեռ, և մ՛յլ պիտի թողու  
 զքեզ ասկէջ վերջը : Ա՛յն՝ որ կրակ կ'ար-  
 ձրկես և կը բորբոքես այն հողինները, որոնք  
 որ միշտ հոն կը կենան :

26 . Կատարելութեան և Աստուծոյ  
 շնորհացը մէջ յարատեւելու շորրորդ մի-  
 ջոցն է՝ ստէպ սուրբ խորհրդոյն՝ մերձե-  
 նալ, որուն վրայ արդէն Բ գլխուն մէջ  
 խօսեցանք, ուր ըսինք թէ հողի մը չի  
 կրնար աւելի հաճոյական բան ընել  
 Յիսուսի, բայց եթէ ստէպ սուրբ խոր-  
 հրդուլը զինքը ընդունել : Սրբուհին թե-  
 րեզա կ'ըսէր . « Կատարելութեան հա-  
 մար՝ ստէպ սրբութեան մերձենալէն ա-  
 ւելի օգնականութիւն չըլար . ո՛հ, ինչպէս  
 հրաշալի կերպով կը կատարելագործէ զա-  
 նիկայ Աստուած » : Ալ կ'աւելցընէ թէ  
 ընդ հանրապէս խօսելով, այն անձինքը որ



աւելի ստէպ կը հաղորդուին կատարելութեան մէջ աւելի առաջ կ'երթան . և թիւ այն մենատասններուն մէջ, ուր որ շատ յաճախ է սրբութիւն առնելը, հոն կատարելութեան հոգին աւելի կը տիրէ : Այս բանիս համար, ինչպէս կ'ըսէ Կննովկենտիոս ժԱ, 1679 տարուան կոնդակին մէջ, սուրբ հարբ խիստ շատ գովեցին ու ծաղկեցուցին սուրբ հաղորդութեան ստէպ և հանապազօրեայ մերձեցալը : Հաղորդութիւնը, կ'ըսէ Տրիտենդեան սուրբ ժողովրդը, հանապազօրեայ մեղքերէն կ'ազատէ զմեզ և մահու չափներէն կը պահպանէ <sup>1</sup> : Սուրբն Բեռնարդոս կ'ըսէ որ հաղորդութիւնը բարկութեան և անժուժկալութեան շարժմունքները կը սանձէ . և այս երկու կը բերն են, որ յաճախ և սաստիկ զօրութեամբ մեր վրայ կը յարձակին : Սուրբն Թոմմաս կ'ըսէ, թէ հաղորդութիւնը սատանային հրապոյրները կը կործանէ <sup>2</sup> : Ա' երջապէս կ'ըսէ սուրբն Յովհանն

<sup>1</sup> Եփեսոս . ժԳ . ԳԷ . Բ :

<sup>2</sup> Մատն Գ . Խնդ . 79 . Եօդ . 1 :

Սակեբերան որ հաղորդութիւնը առաքիւ-  
նութեան սաստիկ յօժարութիւն մը կը բե-  
րէ, և դիւրութիւն զայն ՚ի դորձ դնելու,  
միանգամայն մեծ խաղաղութիւն մը կու  
տայ մեզի. և այսպէս դիւրին և քաղցր  
կ'ընէ մեզի կատարելութեան ճամբան:  
Այն բանէ եւել՝ մէկ խորհուրդ մը այն-  
չափ չի վառեր զհոգիս երկնային սիրով,  
որչափ սուրբ հաղորդութեան խորհուր-  
դը. որով որ Յիսուս անոր համար ինք  
զինքը բողբոջման մեզի կու տայ, որպէս զի  
զամէնքնիս իրեն հետ միացնէ սուրբ սի-  
րոյն ձեռքով: Աւտի կ'ըսէր երանաշնորհ  
Հայրն Յովհաննէս Տաւիլա. « Այլ որ  
զհոգիս ստե՛պ հաղորդուելէն կը հեռացը-  
նէ, սատանային սրաշուն կ'ընէ, »: Այլ ի-  
րաւ է, վասն զի սատանան խիստ կ'ատէ  
այս խորհուրդը, ուսկից որ հոգիք մեծ  
զօրութիւն կ'ընդունին, երկնային սիրոյն  
մէջ առաջ երթալու:

27. Իսկ լաւ կերպով հաղորդուելու  
համար, հարկաւոր է պատշաճ պատրաս-  
տութիւն: Առաջին պատրաստութիւնը,  
կամ թէ հեռաւոր պատրաստութիւնը ա-

մէն օր հաղորդութիւն առնելու համար ,  
 կամ շարժուն մէջ շատ անգամ , այս է ,  
 հրաժարել , նախ՝ ամէն կամաւոր անկարգ  
 յօժարութենէ , այսինքն միտքը վրան ըլ-  
 լալով եղած յօժարութիւններէ : Արդոր-  
 դը՝ ստէպ մտաւորական արթօնից կրթու-  
 թիւն : Արդորդն՝ զգայարանքները և կիր-  
 քերը մահացնել : Սուրբն Քրանչիսկոս  
 Սալեզացին կը սորվեցնէ <sup>1</sup> . “ Ով որ իր  
 չար յօժարութեանցը մեծ մասին յաղթեր  
 է , և բաւական կատարելութեան աստի-  
 ճանին հասեր է , կրնայ ամէն օր հաղոր-  
 դուիլ ,” : Հրեշտակայինն սուրբն թուլմաս  
 կը սորվեցնէ որ կրնայ մէկը ամէն օր հա-  
 ղորդուիլ , երբոր փորձած է որ հաղոր-  
 դուելով սուրբ սիրոյ եռանդը կ'աճէ 'ի  
 նմա <sup>2</sup> : Ուստի Իննուկենտիոս ԺԱ . յի-  
 շեալ կոնդակին մէջ կ'ըսէ , թէ “ Սրբու-  
 թեան ստէպ կամ ուշ մերձենալը պէտք  
 է որ խոստովանահայրը որոշէ , և խոս-

1 Աստուածասէր . ԳԼ . Ի :

2 Զանաղ . Բ . Խնդ . ԺԳ . յօդ . Ա .  
 ԸԼԾ . 2 :

տողանահայրը այս բանիս մէջ իրեն յան-  
ձնուած հոգւոյ օգուտը դիտելով՝ ըստ  
այնմ պիտի ձամբայ բռնէ : Արքութիւն  
առնելու մերձաւոր պատրաստութիւնն է ,  
նոյն սրբութիւն առնելու առաւօտը եղած  
պատրաստութիւնը . ուստի պէտք է գոնէ  
կէս ժամ մտաւորական աղօթք ընէ ,, :

28 . Դարձեալ սրբութենէն մեծ օգուտ  
քաղելու համար , հարկաւոր է երկայն մը  
շնորհակալութիւն ընել : Ա՛րքէր Հայրն  
Յովհաննէս Աւիլա որ սրբութենէն վերջի  
ժամանակը “ Շնորհաց դանձեր վատը-  
կելու ժամանակ է ,, : Արքուհին Սա-  
րիամ Սաղգաղնացի Ռայեան կ’ըսէր ,  
թէ չկայ առելի յարմար ժամանակ եր-  
կնային սիրով զմեզ վառելու , ինչպէս սըր-  
բութիւն առնելնէս վերջի ժամանակը : Աւ  
սրբուհին Տօբեղա կ’ըսէ . “ Արքութենէն  
վերջը Աստուծոյ հետ վաճառաշահութիւն  
ընելու այնպիսի պատուական առիթը չկոր-  
սընցընենք : Թէ որ իրեն լաւ հիւրընկա-  
լութիւն ընենք , Աստուծոյ մեծ վայելու-  
թիւնը այս հիւրընկալութեան վարձքը լի-  
ովին կը վճարէ ,, :

29 . Արքեմն փոքրոցի անձինք խոստովանահօր յորդորանքը լսելով որ աւելի յաճախ սրբութեան մերձենան , կը պատասխանեն . Բայց ես արժանի չեմ : — Բայց , եղբայր իմ , չես գիտեր որ որչափ հաղորդութիւն առնելու ուշանաս , այնչափ աւելի զքեզ անարժան կ'ընես . որովհետեւ առանց սրբութեան քիչ զօրութիւն կ'ունենաս , և աւելի պակասութիւններ կը գործես : Այ՛ , հնազանդէ քու առաջնորդիդ , և թող որ ինքը քեզի առաջնորդութիւն ընէ , պակասութիւնները երբոր բուրովն կամաւոր չեն , հաղորդուելու արդեք չեն ըլլար . մանաւանդ թէ քու պակասութեանցդ մէջ մեծագոյնն այն է , որ հոգևոր հօրդ քեզի ըսած բանին չես հնազանդիր :

30 . Բայց ես առաջները կեանքս գէշ անցուցեր եմ : — Բայց չես գիտեր , կը պատասխանեմ քեզի , թէ ուլ որ աւելի հիւանդ է , բժշկի ու դեղերու աւելի հարկաւորութիւն ունի : Յիսուս սրբութեան մէջ , բժիշկ և դեղ է : Ա՛րքեմ սուրբն Ա՛մբրոսիոս . “ Ար միշտ կը մեղանչեմ , սէպ

է միշտ դեղ առնեմ, <sup>1</sup> : Թերևս ըսէ .  
 Քայց խոստովանահայրս չըսեր ինծի թէ  
 ստէպ սրբութիւն առ : — Քայց թէ որ  
 ինքը չըսեր , դուն քու կողմանէդ հրա-  
 ման ուզէ ստէպ հաղորդուելու : Թէ որ  
 չտայ , հնազանդէ , բայց դուն քու խն-  
 դիրքդ ըրէ : — Հպարտութիւն կ'երև-  
 նայ : — Հպարտութիւն կ'ըլլար , թէ որ իր  
 հրամանացը դէմ հաղորդուելու ըլլայիր ,  
 բայց չէ թէ երբոր դուն խոնարհութեամբ  
 զայն կը խնդրես : Այս երկնային հայր  
 անթութիւն կ'ուզէ : Յիսուս կ'ուզէ փա-  
 փաբելի ըլլալ , ծարաւի զի ծարաւեալ լի-  
 ցի , կ'ըսէ մէկ ջերմեռանդն մտտնադիր  
 մը : Ստածելը թէ այսօր ես սրբու-  
 թիւն առի , կամ վաղը սրբութիւն պիտի  
 առնեմ , ո՛հ , այս մտածութիւնը ինչպէս  
 արթուն կը պահէ հոգին պակսութիւններէ  
 փախչելու , և Աստուծոյ կամբը կատա-  
 րելու : — Քայց ես եռանդ չունիմ : —  
 Թէ որ զգայի եռանդ կը հասկընաս , ա-  
 սիկայ հարկաւոր չէ , և Աստուած և ոչ

խակ իր սիրելի հոգևոցը միշտ կու տայ զայն . բաւական է որ եռանդն ունենաս , յոժար կամօք բողբոլիին Աստուծոյ ըլլալու , և երկնային սիրոյն մէջ առաջ երթալու : Ա՛լ ըսէ Յուհաննէս Գերսոն թէ Ա՛լ որ հաղորդութենէ կը հրաժարի , որովհէտև չըզգար այն եռանդը որ կ'ուզէր զգալ , անոր կը նմանի , որ կրակին չի մերձենար , որպէս զի չի տաքնայ :

ՅԱ . Ա՛լ Աստուած իմ , սրչափ հոգիք աւելի զգաստութեամբ օրերնին անցընելու և երկրային բաներէ բողբոլիին հեռանալու հոգ չունենալնուն համար՝ չեն ուզիր խրնդրել սուրբ հաղորդութիւնը : Այս է ահա ճշմարիտ պատճառը ստէպ հաղորդութիւ չուզենալուն : Ար ճանչնան որ ստէպ հաղորդուելով պատշաճ չէ բան ծախելու փափաքը , հազուելու սղուելու մնապարծութիւնը , ուտելու խմելու , դիւրութեանց և զուարճալի ընկերութեանց յարուիլը : Ար ճանչնան որ աւելի աղօթք պէտք է , աւելի ներքին և արտաքին մահացուցումն , աւելի առանձնասիրութիւն . և այս բանիս համար կ'ամչնան շատ ան .

դամ սուրբ սեղանոցն մերձենալ : Տարա-  
կոյս չի կայ , որ այսպիսի հոգևոց , որոնք  
որ այսպէս դաղջութեան խեղճ վիճակի մէջ  
կը դանուին աւելի լաւ է ստէսլ հաղոր-  
դուելէն ետ կենալ . բայց այս դաղջու-  
թենէն պէտք է ամենայն ջանքով ազատիլ ,  
ով որ կատարելագոյն կենաց կոչուած ըլ-  
լալով , չուզեր մեծ վտանգի մէջ դնել իր  
յաւիտենական փրկութիւնը :

32 . Հատ օգտակար է դարձեալ  
հոգին եռանդուն պահելու համար՝ ստէսլ  
հոգևոր հաղորդութիւն ընել , որ խիստ  
շատ գոված է Տրիտենդեան ժողովքը <sup>1</sup> ,  
և կը յորդորէ զամէն հաւատացեալները  
միշտ ՚ի գործ դնելու զայն : Հոգևոր  
հաղորդութիւնը , ինչպէս կ'ըսէ սուրբն  
Թովմաս , եռանդուն իղձ մըն է ըն-  
դունելու զ՛Յիսուս սուրբ խորհրդովն <sup>2</sup> . և  
աս բանիս համար սուրբերը օրուան մէջ  
շատ անգամ կ'ընէին : Այսկայ ընելու

1 Նխատ ԺԳ . ԳԼ . Լ :

2 Գ . Մասն . խնդ . 2 . յօդ . 1 .  
առ 3ն :



կերպը այս է . “ Յիսուս իմ , կը հառա-  
տամ որ ՚ի սուրբ խորհրդեան ես , կը սիրեմ  
դքեզ , և կը ցանկամ քեզի . եկուր բնակե-  
իմ հողուոյս մէջ : Ար դրկեմ դքեզ , և կ’ա-  
ղաչեմ որ թող չի տաս որ երբէք քեզնէ  
բաժնուիմ , , : Աւելի համառօտ . “ Յիսուս  
իմ , եկ առ իս , քեզի կը ցանկամ , կը դրկեմ  
դքեզ , միշտ մէկտեղ մնանք , , : Այս հողև որ  
հաղորդութիւնը օրուան մէջ շատ անգամ  
կրնայ ըլլուիլ , աղօթք ընելու ժամանակ ,  
սրբութեան այցելութիւն երթալու ժամա-  
նակ , և մասնաւորապէս երբոր առաջիկայ  
ըլլայ սխտարագին , և այն մասին՝ որ քահա-  
նան կը ճաշակէ : Ա՛րսէր երանուհին Ան-  
ճէրա խաչեան Դոմենիկեան մայրապետը .  
“ Թէ որ խոստովանահայրս սորիցուցած  
չըլար ինձի աս կերպով օրուան մէջ շատ  
անգամ հաղորդուիլը՝ ասլբելուս վրայ ա-  
պահով չէի ըլար , , :

33 . Հինգերորդ միջոյր և աւելի  
հարկաւորը հողև որ կենայ , և Յիսու-  
սի սէրը ստանալու համար , աղօթքն  
է : “ Ախիս կ’ըսեմ , որ այս միջոյով Աս-  
տուած կը ճանչցնէ մեզի իր սաստիկ սէրը

որ մեր վրայ ունի : Ի՞նչ անելի սիրոյ ցոյց  
 մը կրնայ տալ մէկը իր բարեկամին , բան  
 թէ ըսէր . Բարեկամ իմ , խնդրէ ինձմ ,  
 ինչ որ կ'ուզես , և ինձմէ կ'ունենաս :  
 Արդ աս բանս կ'ըսէ մեզի Աստուած .  
 “ Խնդրեցէք և կը տրուի ձեզի , ուղեցէք  
 և կը գտնաք ,”<sup>1</sup> : Ուտտի աղօթքը Աս-  
 տուծոյ առջև ամենակարող կ'ըսուի , ամէն  
 բարիք ընդունելու համար : “ Աղօթքը մէկ  
 բան է , բայց ամէն բանի կարող է ,” կը գրէ  
 Թէոդորետոս : Ով որ կ'աղօթէ , ինչ որ  
 կ'ուզէ Աստուծմէ կ'ընդունի : Գեղեցիկ  
 են Դաւթի խօսքերը . “ Օրհնեալ է Աս-  
 տուած որ չի մերժեց իմ աղօթքս , և ոչ  
 իրեն ողորմութիւնը ինձմէ ,”<sup>2</sup> : Սուրբն  
 Օգոստինոս այս կտորս մեկնելու ատենը  
 կ'ըսէ . “ Արբոր կը տեսնաս որ աղօթքէ  
 չես սրակսիր , հաստատ գիտցիր , որ երկ-

<sup>1</sup> Խնդրեցէք և տացի ձեզ , հայցեցէք  
 և գտնեք : Ղուկ . ԺԱ . 9 :

<sup>2</sup> Օրհնեալ է Աստուած որ ոչ 'ի  
 բացէ արար զաղօթս իմ , և ոչ զո-  
 ղորմութիւն իւր յինէն : Սղմ . ԿԵ .  
 20 :

նային ողորմութիւնը քեզնէ չխալիսիր „ :  
 Աւ սուրբն Յովհաննէս Ասկերերան կ'ա-  
 ժըյրնէ . “ Միշտ կ'ընդունինք քանի որ  
 կ'աղօթենք „ : Արքոր Աստուծոյ աղա-  
 ջնք , աղօթքը լըմնցրնելէն ալ առաջ ,  
 ինքը կու տայ մեզի այն շնորհքը որ իրմէ  
 կը խնդրենք : Աւտի թէ որ աղքատ ենք ,  
 չի գանգատինք , բայց եթէ մեր վրայ , ո-  
 թովհետև կ'ուզենք աղքատ ըլլալ , և այս  
 պատճառաւ գթութեան ալ արժանի չենք :  
 Ի՞նչ գթութեան արժանի է այնպիսի մու-  
 թացիկ մը , որ հարուստ տէր մը ունենայ ,  
 որն որ կ'ուզէ իրեն ամէն պիտոյքը հոգալ  
 միայն թէ իրմէ խնդրէ , և ինքը աղքատու-  
 թեան մէջ մնալ ուզէ իր հարկաւոր եղած  
 բաները չի խնդրելու : Ահա կ'ըսէ առա-  
 քեալը . “ Մեր Աստուածը պատրաստ է  
 միշտ հարստացրնել զանիկայ որ առ նա  
 կը դիմէ „ <sup>1</sup> :

34 . Թէպէտև խոնարհ աղօթքը Աս-  
 տուծմէ ամէն բան կ'ընդունի , բայց գիտ-

<sup>1</sup> Բաւական յամենեսին ոյք կարդան  
 առ նա : Հռոմ . Ժ . 12 :

նալու է ալ, որ որչափ որ մեղի օգտա-  
 կար է, այնչափ ալ հարկաւոր է փրկ-  
 կութեան հասնելու համար: Իրաւ է որ  
 թշնամեաց փորձութիւններուն յաղթելու  
 համար, բացարձակապէս երկնային օգնա-  
 կանութեան կարօտ ենք. և երբեմն աւելի  
 սաստիկ յարձակմանց ատենն ալ, բաւա-  
 կան շնորհքն որ Աստուած ամենուն կու-  
 տայ՝ կ'օգտէր դէմ դնելու, բայց մեր շար-  
 հակառիտութեանը համար՝ մեղի բաւական  
 չըլլար, և մասնաւոր շնորհաց կարօտ կ'ըլ-  
 լանք: Ով որ աղօթք ընէ, զայդ շնորհքը  
 կ'ընդունի, բայց ով որ աղօթք չընէր՝ չըն-  
 դունիր ու կը կորսուի: Այլ մասնաւորապէս  
 վախճանական յարատեութեան շնորհքը՝  
 Աստուծոյ շնորհաց մէջ մեռնելու համար,  
 որն որ մեր փրկութեան բացարձակապէս  
 հարկաւոր շնորհքն է, և առանց այն շնոր-  
 հաց յաւիտեանս կը կորսուինք. կ'ըսէ սուր-  
 բըն Օգոստինոս, որ այս շնորհքս մէկու-  
 մի չի տար Աստուած, բայց ՚ի անկէց որ  
 աղօթք կ'ընէ: Այս է սլատճաւոր որուն  
 համար որ այնչափ քիչ մարդ կը փրկուի.  
 վասն զի քիչ են անոնք, որոնք որ Աս-

տուձմ, այս յարատևութեան շնորհքը խընդրելու փոյթ ընեն :

35 . Միտլ բանիւ կ'ըսեն սուրբ Հարբ, որ աղօթքը մեղի հարկաւոր է չէ թէ միայն հարկաւորութեամբ պատուիրանի, (ուստի վարդապետք կ'ըսեն, որ ուլ որ անփոյթ կ'ըլլայ ամսուան մը չափ իրեն յաւիտենական փրկութիւնը Աստուծոյ յանձնելու, մահուչափ մեղքէ ազատ չէ), հապա նաև միջոցի հարկաւորութեամբ . ըսել կ'ուզեմ, որ ուլ որ աղօթք չըներ, անկարելի է որ փրկուի : Աւ պատճառն է, մէկ խօսքով, որովհետև չենք կրնար փրկութեան հասնիլ առանց աստուածային շնորհաց օգնութեանը, և այս շնորհքներս Աստուած չի տար, բայց եթէ անոր որ աղօթք կ'ընէ : Այս որովհետև փորձութիւնները ու Աստուծոյ աչքէն ելլալու վտանգները անդադար են, անոր համար ալ մեր աղօթքը սլիտի անդադար ըլլայ : Աւստի սուրբ Թովմաս կ'ըսէ, որ մարդուս փրկութեան հասնելու համար ամենաճարկաւոր է անդադար աղօթելը : Այս նախ Յիսուս ըսաւ . « Պէտք է միշտ ա-

ղօթք ընել ու չի ձանձրանալ, <sup>1</sup> : Աւ առ  
 ուրբեալն ալ . “ Անդադար աղօթք ը-  
 րէք <sup>2</sup> ” : Այն միջոցին որ զմեզ Աստու-  
 ծոյ յանձնելէն դադրելու ըլլանք , սատա-  
 նան մեզի կը յաղթէ : (Ծէպէտե մենք յա-  
 րատուութեան շնորհքին չենք կրնար ար-  
 ժանաւորութիւն ունենալ , ինչպէս որ կ'ը-  
 սէ Տրիտենդեան սուրբ ժողովքը , բայց  
 'ի վերայ այսր ամենայնի , կ'ըսէ սուրբն  
 Օգոստինոս , աղօթք ընելով կերպով մը  
 կրնանք արժանաւորիլ . “ Աստուած կ'ու-  
 զէ մեզի իրեն շնորհքները բաշխել , բայց  
 կը պահանջէ , որ մենք իրեն աղաչենք ” .  
 մանաւանդ թէ , ինչպէս որ կ'ըսէ սուրբն  
 Վրիգոր , կ'ուզէ որ իրեն թախանձենք ,  
 և զրեթէ բռնադատենք զինքը մեր աղօթ-  
 քովը : Սուրբն Մարիամ Մագդաղենացի  
 Նացեան ալ կ'ըսէր , որ երբոր մենք Աս-  
 տուծմէ շնորհք կը խնդրենք , չէ թէ

1 Պարտ է յամենայն ժամ յաղօթս  
 կալ և մի ձանձրանալ : Ղուկ . ԺԸ . 1 :

2 Անդադար աղօթս արարէք : Ա .  
 Թեո . Ե . 17 :

միայն մեզի կը լսէ, հապա նաև կերպով մ'ալ մեզի շնորհակալ կ'ըլլայ : Այս որովհետև Աստուած անվախճան բարութիւնը ըլլալով, որ կ'ուզէ ուրիշներուն ալ տարածուիլ, կրնանք ըսել, որ անհուն փափաք մը ունի իր բարիքները մեզի բաշխելու . բայց կ'ուզէ որ իրեն աղաչենք : Աւստի երբոր տեսնայ որ մէկը իրեն կ'աղաչէ, այնչափ հաճութիւն կ'ունենայ այդ բանէն՝ որ նաև կերպով մը անոր շնորհակալ կ'ըլլայ :

36 . Արեմն եթէ կ'ուզենք որ միշտ Աստուծոյ շնորհացը մէջ մնանք մինչև ցմահ, հարկ է որ միշտ մուրացկանութիւն ընենք, ու բերաննիս միշտ բաց բռնենք զԱստուած աղաչելու, որ միշտ մեզի օգնական ըլլայ, ու անդադար այսպէս ըսենք . “ Յիսուս իմ, ողորմեա, թող մի տար որ ես քեզնէ հեռանամ . Աստուած միշտ ինձի մօտ եղիր . Աստուած իմ, օգնէ ինձի ,, : “ Այննի անասպատաւոր հարց ըրած անդադար պաղատանքը այս էր . “ Աստուած, յօգնել ինձ նայեաց, և տէր, յընկերել ինձ փութա ,, : Աստուած, օգնէ

ինձի, ու շուտ օգնէ, վասն զի թէ որ  
ինձի օգնելու ուշանաս, ես կ'լինամ, ու  
կը կորսուիմ: Այլ ասիկակ պէտք է  
զըուցիլ մասնաւորապէս փորձութեանց ա-  
տեն. ով որ այսպէս չընե՛ր՝ անշուշտ կը  
կորսուի:

37. Այլ աղօթքի վրայ պէտք է մեծ  
հաւատք ունենանք: Աստուծոյ խոստ-  
մունք է որ իրեն աղօթք ընողին կը լսէ.  
« Խնդրեցէք և տացի ձեզ », : Ի՞նչ կը  
տարակուսինք կ'ըսէ սուրբն ( ) գոստինոս,  
որովհետև Աստուած իրեն խոստմամբը ինք  
զինք պարտքի տակ ձգած է ու չի կրնար  
մեր խնդրած շնորհքները մեզի չընել. « Իբ  
խոստմունքովը զինքը մեզի պարտաւոր ը-  
լաւ », <sup>1</sup>: Արբոր մենք զմեզ Աստուծոյ կը  
յանձնենք պէտք է որ ստոյգ վստահութիւն  
ուրեւանք, որ Աստուած մեզի կը լսէ, ու  
խնդիրքնիս պիտի ընդունինք: Ահաւասիկ  
ինչ կ'ըսէ Յիսուս. « Այն ամէն բանին

<sup>1</sup> Սուրբ Օգոստոս. յղ. Բանին Աստու-  
ծոյ. Ճառ Բ:



Համար որ աղօթք ընէք և հաւատաք թէ կ'առնէք, ըլլայ ձեզի, <sup>1</sup> :

38. Բայց մէկը զրուցէ, թէ ես մեղաւոր եմ, արժանի չեմ որ իմ աղաչանքս կատարուի: Բայց Յիսուս կ'ըսէ. « Ըմէն մարդ որ կը խնդրէ, կ'ընդունի, » <sup>2</sup> : Ով որ կ'աղաչէ՝ կ'ընդունի, ով որ ըլլայ, թէ արդար եղեր է և թէ մեղաւոր: Սուրբ Թաովմաս կը սորվեցընէ, որ աղօթքին ուժը շնորհք ընդունելու համար մեր արդեանցը վրայ չի կայանար, հասպա Մստուածային ողորմութեան վրայ, որ խոստացեր է իրեն պաղատողին ըսելու <sup>3</sup> : Ու մեր փրկիչը, որպէս զի աղօթելու ատեննիս մեզմէ ամենայն վախ վերցընէ, կ'ըսէ. « Իբրաւ կ'ըսեմ ձեզի, թէ որ հօրմէս բան մը խըն-

<sup>1</sup> Զամենայն ինչ վասն որոյ աղօթս արարեալ խնդրեցէք, և հաւատայցէք թէ առնուք, եղիցի ձեզ: Մարկ. ԺԱ. 24:

<sup>2</sup> Ամենայն ոք որ խնդրէ ընդունի: Ղուկ. ԺԱ. 10:

<sup>3</sup> Բ. Մասն. Խնդ. ՃՀԸ. յօդուած. 2:

դրէք իմ անուամբս , կը տրուի ձեզի ,<sup>1</sup> 2  
 Ինչպէս թէ ըսեր , մեղաւորք , դուք ար-  
 դիւնք մը չունիք շնորհք ստանալու հա-  
 մար , ուստի այսպէս պէտք է ընէք . երբոր  
 շնորհք մը կ'ուզէք , իմ անուամբս խնդրե-  
 ցէք հօրմէս , այսինքն իմ արդեանցս , ու իմ  
 սիրոյս համար , ու խնդրեցէք ինչ որ կ'ու-  
 զէք , և ձեզի կը տրուի : Բայց միտք  
 պահելու ենք այն յանոան Իճ բառը . ըսել  
 կ'ուզէ , ինչպէս որ սուրբ Թովմաս կը  
 բացատրէ , յանուն Փրկչին , այսինքն ինչ  
 շնորհք որ կը խնդրենք , պիտի վերաբերու-  
 թիւն ունենան մեր յաւիտենական փրկու-  
 թեանը . և անոր համար պէտք է զիտնալ  
 որ խոստմունքը ժամանակաւոր շնորհաց  
 համար չէ . ասոնք , երբոր յաւիտենական  
 փրկութեանը օգտակար են , Աստուած  
 մեզի կը շնորհէ , ու երբոր չէ՝ կը ժխտէ :  
 Աստի ժամանակաւոր շնորհքները պէտք է  
 որ միշտ այս պայմանով խնդրենք . թէ՛ որ  
 հոգւոյն օգտակար պիտի ըլլան : Բայց

1 Ամէն ամէն ասեմ ձեզ , եթէ խնդրե-  
 ցէք ինչ 'ի հօրէ յանուն իմ , տացի ձեզ :  
 Յովհ . ԵԱ . 23 :

երբոր հոգևոր շնորհքներ են , ան ատեն  
 սլայման սկտք չէ , հասլա վստահութիւն  
 և աներկովիս վստահութիւն , և ըսելու է .  
 “ Հայր յաւիտենական , յանուն Յիսուսի  
 փրկէ զիս այս փորձութենէս , տուր ինձի  
 սուրբ յարատևութեան շնորհքը , քու սէրդ ,  
 ու արքայութիւն , ” : Այս շնորհքներս կրը-  
 նանք Յիսուսէն ալ ինդրել յանուն իւր ,  
 այսինքն իւր արդեանցը համար . վասն զի  
 ասոր վրայ ալ Յիսուս խոստմունք ըրած է .  
 “ Թէ որ մէկը իմ անուամբս բան մը խըն-  
 դրէ ինձմէ , կ'ընեմ իրեն , ”<sup>1</sup> : Ալ երբոր  
 Աստուծոյ աղօթք կ'ընենք , յիշենք նաև  
 յանձնել զմեզ սուրբ Աստուածածնայ , որ  
 է բաշխող շնորհաց : Սուրբն Բեռնարդոս  
 կ'ըսէ , Աստուած է որ շնորհք կու տայ ,  
 բայց սուրբ Աստուածածնայ ձեռքովը կու  
 տայ . “ Շնորհք խնդրենք , բայց խնդրենք  
 սուրբ Աստուածածնայ ձեռքով , վասն զի  
 ինչ որ կը խնդրէ՝ կ'առնու , և տամենեին

<sup>1</sup> Եթէ խնդրէ սցէ ինչ ոք յինէն յա-  
 նուն իմ , արարից նմա զայն : Յովհ . ԺԴ .  
 14 :

սլարասլը չի կրնար ելլալ, : Տօ՛ւ որ սուրբ  
 Աստուածածին մեզի համար ալ աղաչէ ,  
 ասպահով ըլլանք . վասն զի Աստուածա-  
 ծնայ աղաչանքները բոլոր ընդունելի եղած  
 են , ու ոչ երբէք մերժուած :

ԻՂԶԻ ԵՒ ՊԱՂԱՏԱՆԻ

Յիսուս, սէր իմ, ես հաստատ կամօք կը  
 փափաքիմ սիրել զքեզ որչափ որ կրնամ,  
 ու կ'ուզեմ սուրբ ըլլալ, և անոր համար  
 կ'ուզեմ սուրբ ըլլալ, որպէս զի քեզի հա-  
 ճոյական բան ընեմ, ու խիստ շատ սիրեմ  
 զքեզ ասդիի և անդիի աշխարհք: Աս բանի  
 մը կարող չեմ, բայց դուն ամէն բանի կա-  
 բող ես, և գիտեմ որ կ'ուզես որ ես սուրբ  
 ըլլամ: Արդ կը տեսնամ որ քու շնորհ-  
 քովդ հոգիս առ քեզ կը հառաչէ, և  
 ուրիշ բան չուզեր բաց 'ի քէն: Ալ չեմ  
 ուզեր ինծի համար ասքիլ . դուն զիս  
 բոլորովն քեզի կ'ուզես, և ես բոլորովն  
 քեզի ըլլալ կը փափաքիմ: Ահուր ու միա-  
 ցուր զիս քեզի, ու զքեզ ինծի հետ: Դուն  
 անհուն բարութիւն ես, դուն այն ես որ

զևս այնչափ սիրեցիր, անոր համար ալ  
 անչափ սիրող ես, ու անչափ ալ սիրելի:  
 Ի՞նչպէս ուրեմն քեզմէ զատ ուրիշ բան  
 կրնամ ես սիրել: Ասելի կը փափաքիմ  
 քու սիրոյդ, քան թէ բոլոր աշխարհքիս  
 բաներուն, դուն ես միակ վախճանն ու  
 միակ նպատակ իմ ամէն ախորժակնե-  
 բուս: Ամէն բան կը թողում, որպէս զի  
 միայն քու սիրոյդ սրարապիմ, իմ ստեղ-  
 ծիչս, իմ փրկիչս, իմ մխիթարիչս, իմ  
 յոյսս, իմ սէրս ու իմ ամէն բանս: Սուրբ  
 Ըլլալու չեմ վհատիր այս նախատանացը  
 համար, որ ըրեր եմ քեզի իմ առջի անցած  
 գացած տարիներս. գիտեմ որ, դուն Յի-  
 սուս իմ, մեռար, որպէս զի զղջացողին  
 ներես: Այս հիմա բոլոր հողուովս զքեզ կը  
 սիրեմ, բոլոր սրտով զքեզ կը սիրեմ, ինձ-  
 մէ աւելի զքեզ կը սիրեմ, և ամէն թշուա-  
 ռութենէ աւելի անոր կը ցաւիմ, որ զքեզ  
 զանհուն բարիդ անարգեցի: Արդ ես ալ  
 իմն չեմ, ես քուկդ եմ, ո՞ր Աստուած  
 սրտի խնոյ, գործածէ զիս ինչպէս որ հա-  
 ճոյ է քեզի: Քեզի հաճոյ Ըլլալու համար  
 սիրով կ'ընդունիմ, ամենայն վիշտ, որ

կ'ուզես ինձի խրկել հիւանդութիւն , ցաւ ,  
անձկութիւն , նախատինք , աղքատու-  
թիւն , հալածանք , երեսէ ինկնալ , բո-  
լորն ալ կ'ընդունիմ , միայն թէ քեզի հա-  
ճոյական բան ընեմ . ինչպէս նաև կ'ըն-  
դունիմ այն մահը , զոր ինձի պատրաստե-  
րես , ամենայն վիշտերովն ու խաչերովն ,  
որ մահուան հետ պիտի դան . բաւական է  
որ ինձի շնորհք տաս զքեզ շատ սիրելու :  
Օգնէ ինձի , տուր ինձի զօրութիւն որ  
աս կենացս մէջ իմ սիրտիս հատուցանեմ  
այն դառնութիւններուն փոխարէնը , զոր  
քեզի պատճառեր եմ անցած կենացս մէջ ,  
ն՛վ միակ սէր հոգւոյս իմոյ :

Ա՛վ թագուհի երկնից , ն՛վ մայր Աս-  
տուծոյ , ն՛վ մեծ փաստարան մեղաւորաց ,  
ես քու վրադ եմ դրեր իմ յոյսս :



## ԳԼՈՒԽ Թ .

ՍԷՐ ՈՁ ՀԳՆՐՏՆԵՆՆԵ :

Ով որ ՉՅխառնս կը սիրէ չհայարտանար իր արժանաշարժքեանցը հաւնար , հասցա կը խոնարհի , ոչ ինքզինքը ոչրիչներէն աչ խոնարհած տեսնաշուն վրայ կը գոշարձանայ :

1 . Հպարտը կը նմանի օդալից փամփուշտի մը , որ իր աչքին դիմացը մեծ կ'երևնայ , բայց բոլոր իր մեծութիւնն է քիչ մը օդ , և երբոր փամփուշտին բերանը բացուի , մէկէն 'ի մէկ կը ցնդի : Ավ որ զԱստուած կը սիրէ այն է ճշմարիտ խոնարհը , որ թէ որ իր վրայ արժանաւորութեան բան մը տեսնայ նէ՛ չուրի ամէնեւին , վասն զի յայտնի կը տեսնայ որ ինչ որ ունի բոլորն աչ Աստուծոյ շնորհքն են , ու իրմէն՝ ոչինչ էն ու մեղքէն զատ ուրիշ բան չունի . ուստի Աստուծոյ իրեն ըրած

Հնորհքները ճանչնալով, ալ աւելի կը խոնարհի, ինքզինքը այնպէս անարժան տեսնալով, ու այնպէս Աստուծոյ սիրելի :

2. Արքուհին Թերեզա Աստուծոյ իրեն ըրած առանձնական Հնորհաց վրայ խօսելով՝ այսպէս կ'ըսէ . « Աստուած ինձի այն բանը կ'ընէ, ինչ որ կ'ընեն տան մը, երբոր կործանելու վրայ ըլլայ, որ նեցուկներով վեր կը բռնեն », : Թէ որ հոգի մը Աստուծոյ մէկ սիրալիր այցելութեանը արժանի ըլլայ իրեն կարգէ դուրս աստուածային սիրոյ եռանդ մը դալով հանդերձ արտասուօք, կամ թէ սրտի մեծ գորովով մը, զգոյշ կենայ չըլլայ թէ մտքէն անցնէ, որ Աստուած իրեն մէկ բարի գործքին համար զինքը կը գգուէ . հապա ան ատենը ալ աւելի պիտի խոնարհի, մտածելով որ Աստուած զինքը կը փայփայէ, որպէս զի չի թողու զԱստուած . ապա թէ ոչ, եթէ այդպիսի Հնորհաց համար սնապարծութիւն մը ունենայ, ինքզինքը աւելի սիրելի սեպելով, ուրիշներէն աւելի լաւ վարք ունենալուն համար, այդպիսի պակասութիւնը զինքը բողբոլին Աստուծոյ Հնորհքներէն կը զրկէ :



Տունը պահելու համար, երկու ամենա-  
հարկաւոր բան կայ, հիմը ու տանիքը .  
հիմը պիտի ըլլայ մեր խոնարհութիւնը,  
ճանչնալով որ բան մը չենք արժեր, ու  
բանի մ'ալ կարող չենք . իսկ տանիքը  
է աստուածային պաշտպանութիւնը, ու  
բուն վրայ միայն պիտի դնենք մեր բոլոր  
յոյսը:

3. Արբոր տեսնանք որ Աստուած մեր  
վրայ աւելի խնամք կը ցուցնէ՛ պէտք, է որ  
ալ աւելի խոնարհինք: Արբուհին (ձերեղա  
առանձնական շնորհք մը ընդունելու որ  
ըլլար, նոյն ատեն կը ջանար իր աչքին  
դիմացը դնել իր բոլոր գործած մեղքերը,  
և այսպէսով՝ ալ աւելի Աստուած իր հե-  
տը կը միացնէր: Արչափ որ հոգի մը ինքը  
զինքը անարժան կը խոստովանի շնորհաց,  
այնչափ ալ Աստուած շնորհքներով զինքը  
կը զարդարէ: Տայաս որ նախ պոռնիկ  
էր ու ետքը սուրբ եղաւ, Աստուծոյ առ-  
ջին այնչափ կը խոնարհէր որ նաև Աս-  
տուծոյ անունը բերանը առնելու զինքը  
անարժան կը սեպէր, անոր համար չէր  
համարձակեր ըսել, Աստուած իմ, հապա

կ'ըսէր . Արարիչ իմ , որ ստեղծեր զիս ,  
 օղորմեա ինձ : Աւ սուրբն Հերոնիմոս կ'ըսէ  
 թէ այս խոնարհութեանը սրատճառաւ տե-  
 տաւ որ իրեն համար փառաւոր դահ մը կը  
 պատրաստուէր երկինքը : 'Նոյնպէս նաև  
 դորդոնացի սրբուհի Մարգարիտային վար-  
 քին մէջ կ'ըսեն՝ թէ որ մը Աստուած իրեն  
 այցելութիւն ընելով սաստիկ սիրալիր դո-  
 ւովով , ինքը այսպէս աղաղակեց . " Բայց  
 ինչպէս , Տէր իմ , մոռցեր ես իմ ինչ  
 ըլլար . ինչպէս այդչափ մարդասիրու-  
 թիւններով կը հատուցանես քեզի ըրած  
 անհամար նախատինքներս , : Աստուած ալ  
 պատասխան տուաւ , որ երբոր հոգի մը  
 զինքը կը սիրէ , ու սրտանց կը զղջայ ի-  
 րեն դէմ մեղանչելուն համար , ինքը բո-  
 լոր դործած մեղքերը կը մոռնայ . ինչպէս  
 նաև Ազնկիէլ մարգարէին ձեռքովը զրու-  
 ցեր է . " թէ որ անօրէնը իր ամէն անօ-  
 րէնութիւններէն դառնալու ըլլայ . . , իրեն  
 ամէն անօրէնութիւնները որ ըրեր է , կը  
 թողուին , " <sup>1</sup> : Աւ ասոր ապացոյց ցուցուց

1 " Եւ եթէ անօրէնն դարձցի յամե .

սրբուհւոյն որ իրեն համար երկինքը սե-  
րովբէից մէջ փառաւոր դահ մը պատրաս-  
տեր է : Ո՛հ , թէ կարենայինք խոնարհու-  
թեան արժէքը իմանալ : Խոնարհութեան  
գործ մը աւելի կ'արժէ , քան թէ աշխարհ-  
քիս բոլոր հարստութիւնները :

4. Սրբուհին թերեզա կ'ըսէր . « Զկար-  
ծես որ կատարելութեան մէջ յառաջադի-  
մութիւն ըրեր ես , թէ որ զքեզ ամենէն  
անպիտան չի սեպես , ու թէ որ չես փա-  
փաքիր ամենէն յետինը սեպուելու . » : Ու  
այսպէս կ'ընէր սրբուհին ու նմանապէս  
ամենայն սուրբերը այսպէս ըրին : Սուրբն  
Պրանչիսկոս Ասիղացին , սրբուհի Սա-  
րիամ Սաղդաղենացի Բացեան , և ուրիշ  
սուրբերը , աշխարհքիս էն մեղաւորները դրե-  
ին իրենք զիրենք ու կը զարմանային որ  
երկիրս ինչպէս զիրենք իր վրան կը բռնէր ,  
ու չէր բացուեր որ զիրենք կ'ըլլէ . ու ա-  
տիկակ ճշմարիտ զգացմամբ կ'ըսէին : Ա-

նայն անօրէնութեանց իւրոց . . . ամենայն  
անիրաւութիւնք նորա զոր անիրաւեալ  
իցէ , մի յիշեսցին , » : Ազեկ . ԺԸ . 21 . 22 :

բանաշնորհ Հայրն Յովհաննէս Տաւրա ,  
 որ պղտիկութենէն 'ի վեր սուրբ կեանք  
 մը անցուցած էր , մահուան մօտ ըլլալով ,  
 քահանայ մը եկաւ որ իրեն քօլը կենայ ,  
 ու խիստ զերազանց բաներ կը զրուցէր ի-  
 րեն , իբրև Աստուծոյ մեծ ծառայի մը ու ի-  
 բրև մեծ գիտուն անձի մը , ինչպէս որ էր :  
 Բայց Հայրն Տաւրա այս պատասխանեց  
 իրեն . “ Հայր , կ'աղաչեմ զքեզ որ հոգիս  
 այնպէս Աստուծոյ յանձնես , ինչպէս որ  
 կ'ընեն 'ի մահ դատասպարտուած չարա-  
 գործի մը հոգին , վասն զի ես ալ այնպէս  
 եմ ,, : Այս է ահա այն զգացմունքը ,  
 զորն որ սուրբերը իրենք իրենց վրայ ունէին  
 թէ կենդանութեան և թէ մահուան ատեն :

Ծ . Պէտք է որ մենք ալ այսպէս  
 ընենք , թէ որ փրկուիլ կ'ուզենք , ու մինչ-  
 չև ցմահ Աստուծոյ շնորհացը մէջ մնալ ,  
 մեր բոլոր վստահութիւնը միայն Աս-  
 տուած դնելով : Հպարտը իր ուժին վրայ  
 կը վստահի , անոր համար ալ կ'իյնայ .  
 բայց խոնարհը որովհետև միայն Աս-  
 տուած կը վստահի , թէպէտ և ամէն տե-  
 սակ ծանր փորձութեանց մէջ ալ ըլլայ ,

միշտ ուժով կը կենայ, ու ամենեին չիյնար, միշտ այսպէս ըսելով. « Ամէն բանի կարողութիւն ունիմ անով որ զիս զօրացուց », <sup>1</sup> : Սատանան երբեմն յանձնապաստանութեամբ զմեզ կը փորձէ, երբեմն ալ վճատութեամբ. երբոր ինքը մեզի զուրկէ որ ալ իյնալու վախ չկայ, ան ատենը ալ աւելի դողանք, վասն զի եթէ մէկ վայրկեան մ'ալ Աստուած մեզի չօգնէ իւր շնորհօքը, կորսուած ենք : Արբոր վճատութեամբ զմեզ կը փորձէ, ան ատենը դառնանք Աստուծոյ ու մեծ վստահութեամբ մը ըսենք իրեն. « Տէր, քու վրայ դրի իմ յոյսս, յաւիտեան պիտի չամբհնամ », <sup>2</sup> : Աստուած իմ, քու վրայ դրած եմ իմ յոյսս, կը յուսամ որ ամենեին ամօթով չեմ մնար և զուրկ քու շնորհքէդ : Այս մեր վրայ չի վստահանալու ու Աստուծոյ վրայ վստահանալու

1 « Ամենայնի կարող եմ այնու որ զօրացուցն զիս », : Փիլ. Դ. 13 :

2 « Ի քեզ, տէր, յուսացայ մի ամաչեցից յաւիտեան », : Սաղ. Լ. 21 :

ներդործութիւնները , պիտի 'ի գործ դը-  
նենք մինչև մեր կենաց էն վերջի կէտը ,  
միշտ զԱստուած աղաչելով որ մեզի սուրբ  
խոնարհութիւնը սլարգւէ :

6. Բայց խոնարհ ըլլալու համար բաւա-  
կան չէ մեր վրայ դէշ համարմունք ունե-  
նալը , ու զմեզ այնպէս թշուառ սեպիլ ,  
ինչպէս որ ենք ալ . ճշմարիտ խոնարհը ,  
կ'ըսէ Թովմաս Գեմբացին , կ'արհամար-  
հէ ինք զինքը , ու կը փափաքի որ ուրիշ-  
ներն ալ զինքը արհամարհեն : Այնչափ  
պատուիրեց Յիսուս որ իր օրինակին հե-  
տեկով այս բանս 'ի գործ դնենք . “ Սոր-  
վեցէք ինձմէ որ սիրտս հեզ ու խոնարհ է<sup>1</sup> , ” :  
Ով որ կ'ըսէ որ աշխարհքիս էն մեծ մե-  
ղաւոր մարդն է , ու ետքը ուրիշներուն  
կը բարկանայ զինքը արհամարհելուն հա-  
մար , նշան է , որ բերնով միայն խոնարհ  
է և ոչ սրտով : Սուրբ Թովմաս Ագուի-  
նացին կը գրէ որ եթէ մէկը արհամարհուե-  
լուն համար զայրանայ նե , նաև հրաշք

1 “ Ուսարուք յինէն զի հեզ եմ և խո-  
նար սրտիւ , ” : Մատ . ԺԱ . 29 :

ալ դործէ այնպիսին , ստոյգ զխոնայ որ  
 դեռ շատ հեռու է կատարելութենէ : Սուրբ  
 Աստուածածին Այոյղացի սուրբ Իգնա-  
 տիոսը խաւրեց Ռացեան սրբուհի Մա-  
 ըիամ Մագդաղենացւոյն որ իրեն խո-  
 նարհուծիւնը սորվեցրնէ . և ահաւասիկ  
 սուրբին անոր տուած դասը . “ Խոնար-  
 հուծիւնն է ուրախանալ այն ամենայն բանի  
 վրայ որ զմեզ արհամարհելու կը ծառայէ , ” :  
 Աւ գիտելու է ուրախանալ բառը , թէ որ  
 զգայութիւնը ընդունած անարգանքներէն  
 առնուի , գէթ հոգւով պէտք է անոնց  
 վրայ ուրախանալ :

7 . Այլ ինչպէս հոգի մը որ կը սի-  
 րէ զՅիսուս , տեսնալով որ իր Աստուածը  
 ապտակներու և երեսի թքնելուն կը համ-  
 բերէ , ինչպէս որ քաշեց շարչարանայ ժա-  
 մանակը , ու չսիրէ նախատուիլ . “ Այն  
 ատենը թքին իր երեսը , ու բորնցի զար-  
 կին , ոմանք ալ ապտակեցին ” <sup>1</sup> : Այ

1 “ Յայնժամ թքին ընդ երես նու-  
 րա , և կռփեցին զնա , և ոմանք ապտա-  
 կեցին ” : Մատ . ԻԶ . 67 :

վիսիւճանիս համար ուզեց Վրկիչն մեր որ  
խորաններուն վրայ դրուի իր պատկերը, չէ  
փառաց կերպարանքով, այլ խաչեալ, որ  
պէս զի միշտ աչքերնուս առջև ունենանք  
իրեն նախատինքները, որոնց տեսութեամբը  
կ'ուրախանան սուրբերը, երբոր աս աչ-  
խարհքիս վրայ անարդուին: Այս խրն-  
դիրը ըրաւ Յիսուսի սուրբն Յովհաննէս  
Խաչեան, երբոր խաչը ուսը իրեն երևցաւ.  
“Տէր, քեզի համար շարչարուիլ ու նախա-  
աուիլ,”: Տէր իմ, երբոր կը տեսնամ զքեզ  
այսպէս անարդուած իմ սիրոյս համար,  
քեզմէ ուրիշ բան չեմ խնդրեր, բայց եթէ  
շարչարուիլ, ու քու սիրոյդ համար նա-  
խատուիլ:

8. Սուրբ Ֆրանչիսկոս Սալեզացին  
կ'ըսէ. “Նախատանաց համբերելը խո-  
նարհութեան և ճշմարիտ առաքինութեան  
փորձաքար է,”: Թէ որ մէկը հոգևոր  
կը ձևանայ, աղօթք կ'ընէ, ստէպ կը  
հաղորդուի, ծոմ կը սրահէ, մարմինը կը  
ճ'նչէ, բայց ետքը նախատանաց, կ'ծու-  
խօսքի մը չի կրնար համբերել, ինչ կընշա-  
նակէ. կընշանակէ թէ դատարկ եղէդ մ'է



առանց խոնարհութեան , առանց առաքի-  
նութեան : Այլ ի՛նչ կրնայ ընել զՅիսուս  
սիրող հոգի մը , թէ որ Յիսուսի սիրոյն  
համար չի կրնար նախատանայ մը համբե-  
րել որ իրեն համար այնչափ նախատինք  
քաշեր է : Այլ գրէ Գեմբացին Յիսուսի  
նմանելու ոսկի գրքին մէջ . “ Արուհեակ  
այդչափ կը սոսկաս խոնարհելէն , նշան  
է , որ մեռեալ աշխարհի չես , խոնարհու-  
թիւն չունիս , Աստուած աչքիդ առջևը չես  
բռներ : Այլ որ Աստուած իր աչքին առջևը  
չիրոներ , ամէն լսած նախատական խօսքէն  
կը խռովի , : Թէ որ չես կրնար դու Աս-  
տուծոյ համար ապտակներու և վէրքերու  
համբերել , գոնէ քանի մը խօսքի համբերէ :

Թ . Ի՛նչ զարմանք և ի՛նչ գայթակղու-  
թիւն կու տայ այնպիսին , որ ստե՛պ սրբու-  
թիւն կ'առնէ , և ետքը ամէն իրեն եղած  
նախատանայ խօսքերուն դժարը կու գայ :  
Ընդհակառակն ի՛նչ լաւ շինութիւն կու  
տայ այն , որ նախատինք որ ընդունի՝ քա-  
նի մը քաղցր խօսքով պատասխան կու  
տայ իր թշնամանողին սիրտը առնելու  
համար . կամ չի պատասխաներ , և ոչ

ուրիշներուն . կը գանգըտի . հասլա ան խոռլ կը պահէ երեսը առանց դառնու թիւն մը ցուցնելու : Ա՛րսէ սուրբն Յովհանն Ասկերերան . “ Հեզը չէ թէ իր ան ձին միայն օգտակար է , հասլա նաև ուրիշներուն ալ իր բարի օրինակովը , որ իր նախատուած ժամանակը իր քաղցրութեամբը կու տայ , : Անբայլին աս նիւթիս վրայօք շատ առիթներ կը բերէ , որոնց վրայ պէտք է խոնարհինք . այսպէս կ'ըսէ . “ Ինչ որ ուրիշները կ'ըսեն , անոնց խօսքը հաճոյ անցնի , իսկ քուկինդ անարդուի : Աւրիշները խնդրեն և ընդունին , իսկ դու խնդրես և քեզի չէ ըսեն : Աւրիշները մարդկանց բերանը մեծ սեպուին , իսկ քու վրադ ըուծիւն ըլլայ : Աւրիշներուն աս կամ ան բանին հոգատարութիւնը յանձնուի , իսկ դու բանի մը յարմար չի սեպուիս : Այս փորձերով իր հաւատարիմ ծառան կը փորձէ Աստուած , թէ կրնայ արդեօք ինքզինքը զտպիլ և հանդարտ մնալ : Արբեմն բնութիւնը կը տխրի , բայց մեծ վարձք կ'ունենաս , թէ որ ըութեամբ այս ամէն բանի համբերես , :

10. Կըսէր սրբուհին Յուհաննա  
 Շանտալ. « Ալ որ ճշմարիտ խոնարհ է,  
 որչափ որ նուաստացրնեն զինքը՝ ինքն ա-  
 լելի կը խոնարհի, »: Ըստ որովհետև ճշ-  
 մարիտ խոնարհը ոչ երբէք միտքը կը դնէ  
 թէ այնչափ կը նուաստացրնեն զինքը որչա-  
 փին որ ինքն արժանի է: Ալ որ այսպէս  
 կ'ընէ, Յիսուսին երանութեանը արժանի  
 կ'ըլլայ. երանելի չեն ըսուիր անոնք, զո-  
 րոնք աշխարհք կը յարդէ, կը սրատուէ ու  
 իբրև սգնուական, իբրև գիտուն, իբրև  
 կարող կը գովէ, հասարակ անոնք զորոնք որ  
 աշխարհք կ'անիծէ, կը հալածէ, ու վրա-  
 նին չար կը խօսի: Այս ան զի այդպիսինե-  
 րը թէ որ այս ամէն բան համբերութեամբ  
 քաշին, արքայութիւնը իրենց մեծ վարձք  
 սրատրաստած է ըստուած: « Արանի է  
 ձեզի՝ երբոր նախատեն զձեզ և հալածեն,  
 և ինձի համար ամէն զրպարտութիւն ձեր  
 վրայ ընեն, ցնծայէք ու ուրախ կեցիք,  
 վասն զի ձեր վարձքը շատ է երկինքը, »<sup>1</sup>:

<sup>1</sup> « Երանի է ձեզ՝ յորժամ նախատի-  
 ցեն զձեզ և հալածեցեն, և ստիցեն զա-

11 . Բայց գլխաւորապէս խոնարհու  
 թիւն պիտի ընենք , երբոր մեծաւորները  
 կամ ուրիշները պակսութեան մը համար  
 զմեզ յանդիմանեն : Ամանք ոգնիի կը նմա  
 նին , որ երբոր իրենց չես դպչիր , հանդարտ  
 ու հեզ կ'երևան , բայց երբոր մեծաւորը  
 կամ բարեկամ մը իրենց դպչի ազդա  
 րարութիւն մը ընելով իրենց գէշ գործքի  
 մը համար , մէկէն բոլոր փուշ կը դառ  
 նան , և դժկամակութեամբ պատասխան  
 կու տան թէ իրաւ չէ այդ բանը , կամ թէ  
 պատճառ ունէին զայն բանը այնպէս ընե  
 լու , և թէ քեզի չէր իյնար այն ազդարա  
 րութիւնը ընելու . միով բանիւ ուլ որ կը  
 յանդիմանէ անոր թշնամի կը դառնայ ,  
 անոնց նման որ վիրաբուժին կը նեղանան ,  
 որովհետև վէրքը բժշկելու ժամանակ ցաւ  
 կու տայ , ինչպէս կ'ըսէ սուրբն Բեռնար  
 դոս : Սուրբ ու խոնարհ մարդը , կ'ըսէ  
 սուրբն Յովհանն Ասկերերան , երբոր յան

մենայն բան չար զձէնջ սուտ վասն իմ ,  
 ցնծացէք և ուրախ լերուք , զի վարձք ձեր  
 բազում են յերկինս : Մատ . Է . 11 . 12 :

դիմանուի, կը ցաւի ըրած սխալանայր  
 վրայ, իսկ ընդհակառակն հարարտը յանդի-  
 մանուելու որ ըլլայ՝ իրաւ կը ցաւի, բայց կը  
 ցաւի իր սղակասութիւնը երեւան գալուն հա-  
 մար, ասոր համար կը խռովի, դէմ սլատա-  
 խան կու տայ և ազդարարողին կը բար-  
 կանայ : Այս է ահա գեղեցիկ կանոնն  
 որ սուրբ Վիլիպպոս Ներեանը կու տար  
 ամբաստանուող անձին . « Այլ որ կ'ուզէ  
 իրաւցնէ սուրբ ըլլալ, ամենեին պէտք  
 չէ զինքը արդարացնէ, թէպէտև սուա  
 ալ ըլլայ, ինչ բանի համար որ մեղադրեն  
 զինքը » : Արիշ բան է, երբոր գայթակ-  
 ղութիւնը վերցնելու համար հարկաւոր  
 երեւայ ինքզինքը ջատագուելը : Ահ, ինչ  
 վարձք կ'ունենայ Աստուծոյ առջև անիկայ  
 որ կը յանդիմանուի, թէպէտև անիրաւու-  
 թեամբ, և կը լուէ, և զինքը չարդարացներ :  
 Ա՛րաէր սրբուհին թերեզա . « Հողին  
 երբեմն աւելի յառաջագէմ՝ կ'ըլլայ ու կը  
 կատարելագործուի ինք զինք չարդարա-  
 ցնելով, քան թէ տասը քարող լսելով :  
 Այն զի ինք զինքը չարդարացնելով՝ կը  
 սխի հողին ազատութիւն ստանալ, և ալ

չնտածել, թէ արդեօք լա՞ն թէ՛ գէշ վրան  
կը խօսին ,, :

ԻՂՁՔ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Ո՛վ բանդ մարմնացեալ, կ'աղա-  
չեմ քու սուրբ խոնարհութեանդ ար-  
դեանցը համար որով այնչափ նախա-  
տինքներ ու անիրաւութիւններ մեր սիրոյն  
համար ընդունեցար, ազատէ զիս հպար-  
տութենէս, և հաղորդ ըրէ քու սուրբ  
խոնարհութեանդ : Ի՞նչ կը վայէ ինձի  
զանգատիլ նախատուելուս համար որ այն-  
չափ անգամ դժոխքի արժանի եղեր եմ :  
Ո՛հ, Յիսուս, չարչարանացդ ատեն քա-  
շած նախատանացդ արդեանցը համար  
տուր ինձի խոնարհութեամբ ապրելու և  
մեռնելու շնորհքը աս աշխարհքիս վրայ,  
ինչպէս որ դու ապրեցար ու մեռար խո-  
նարհութեամբ ինձի համար : Ար վախա-  
քեմ քու սիրոյդ համար նախատուիլ, ու  
ամէնուն երեսէն ինկնալ, բայց առանց  
քեզի չեմ կրնար բան մը ընել : Ար սիրեմ  
զքեզ, ո՛վ անհուն բարիդ իմ, կը սիրեմ

զքեզ, սիլ իմ հոգւոյս սէրը, ես զքեզ կը սիրեմ, և քեզմէ կը յուսամ որ բոլորովին քեզի համար նախատանաց, մատնութեան, հալածանաց, վշտաց, եռանդի սլաղութեանց ու երեսէ ինկնալու համբերեմ, և այս է ահա իմ հաստատ առաջադրութիւնս, միայն թէ դու զիս երեսէ չձգես, սիլ իմ հոգւոյս միակ սէրը: Մի թողուր որ ալ քեզմէ հեռանամ: Տուր ինձի փափաք քու հաճոյքդ կատարելու: Տուր ինձի եռանդն սիրելու զքեզ: Տուր ինձի հանդարտութիւն սրտի վշտաց ատեն: Ա՛մէն ձախորդութեանց մէջ տուր ինձի վտտահոթիւն քու կամացդ: Ողորմէ ինձի: Այս ամէն բանի անարժան եմ, բայց ամէն բան քեզմէ կը յուսամ, որ զիս քու արիւնտուղ գնեցիր:

Նոյնպէս բոլոր յոյսս քու վրագ եմ դրած, թագուհի և մայր իմ Մարիամ, որ մեղաւորաց ասպաստանն ես:

Գ ԼՈՒԽ Ժ .

Ս Է Ր Ո Չ Ա Մ Պ Ա Ր Հ Ա Ի Ա Ճ Է .

Ով որ զՅիսուս կը սիրէ , ոչրիշ բանի յիցանկար բայց երէ Յիսուսին :

1 . Ով որ կը սիրէ զՄատուած , հոգ շննոր որ մարդիկ զննքը յարգեն ու սիրեն . միակ իր փափաքն է Մատուծոյ սիրելի ըլլալ , որ իր սիրոյն մէկ հատիկ նսլատակն է : Սուրբն Իլարիոս կը գրէ թէ աշխարհքիս ամէն սրտախը սատանայի առուտունն է : Այլ իրաւ է . վասն զի թշնամին երբոր մարդուն սիրտը կը ձգէ յարգելի ըլլալու փափաքը , դժոխքի համար առուտուր կ'ընէ . որովհետեւ հոգին խոնարհութիւնը կորսնցնելով , ամէն չարեաց զահալիւթիւ վտանգի մէջ կ'լինինայ : Սուրբն Յակոբոս կը գրէ՝ թէ ինչպէս որ Մատուած խոնարհաց կ'առատաձեռնէ իր շնորհքները , ասանկ ալ բոլորովին կը զա-



նայ զանիկայ հպարտներէն ու անոնց ներհակ կ'ըլլայ <sup>1</sup> : Աճաբարասանից հահառակ հայ կ'ըսէ , այս ինքն և ոչ իսկ իրենց աղօթքին մտիկ կ'ընէ : Այլ հպարտութեան գործքերուն մէկն ալ այս է . փափաքիլ որ մարդիկ զինքը յարգեն , ու սնափառիլ մարդկանցմէ ընդունած պատուոյն վրայ :

2 . Այս կողմանէ խիստ զարհուրելի է Յուստինոս անուշտով ֆրանչիսկեանին օրինակը , որ թէ և հոգևոր մտածութեան բարձր աստիճան հասած էր . բայց թերևս , մանաւանդ թէ անշուշտ սրտին մէջ աշխարհքիս առջև պատիւ գտնալու փափաք ունենալուն , նայէ թէ գլուխը ինչ եկաւ : Օր մը Ալեգինէոս Ռ . սրայրը իրեն կանչեց զինքը , և վրան սուրբի համարմունք ունենալով զինքը շատ պատուեց , և զրկելով առաւ քովը նստեցուց : Իսկ Յուստինոս այսպիսի պատուոյն վրայ շատ սնափառութիւն զգաց .

<sup>1</sup> Տէր ամբարտաւանից հակառակ կայ , տայ շնորհս խոնարհաց : Յակ . Ղ . 6 :

անոր համար սուրբն Յովհաննէս Քարեա  
 թրանոյ իրեն ըսաւ . “ Այլ եղբայր Յուս  
 տինոս , հրեշտակ գայիր , և սատանայ դար  
 ձար ,, : Այլ իրաւ , թշուառ կրօնաւորին  
 հպարտութիւնը օրէ օր աւելի շատնալով ,  
 կը պահանջէր որ ինքն իր վրայ ինչ հա  
 մարմունք որ ունէր , ուրիշներն ալ ըստ  
 այնմ իրեն հետ վարուին . և այն աստիճա  
 նի հատաւ որ եղբայր մ’ ալ դանակով սպան  
 նեց . վերջը կրօնը թողուց ու՝ Վարդիլի փա  
 խաւ , հոն ուրիշ շատ անզգամութիւններ ը  
 նեղէն ետե՛ վերջապէս բանտի մէջ կարդ  
 ընկէց մեռաւ : Ասոր համար շատ իմաս  
 տութեամբ կը զուրցէր Աստուծոյ մեծ ծա  
 րան՝ թէ երբոր լսենք կամ կարդանք Վ իբա  
 նանու մայր ծառերուն կործանումը , ինչպէս  
 էին Սողոմոն , Տերտուղիանոս , Ազիա ,  
 որոնք ամէնէն սուրբ կը սեպուէին , նշան  
 է որ իրենք զիրենք Աստուծոյ չէին նուխ  
 րած , և ներսէն հպարտութեան հոգի  
 ունեցեր են , ու անոր համար մեծ մեծ  
 յանցանքներ գործեր են : Գողանք ու  
 բնմն , երբոր իմանանք որ ցուցամուր  
 թեան սէրը , ու աշխարհքէս պատիւ

դանաբու ողին վրանիա տիրել կը սկսի .  
ու թէ որ աշխարհք մեղի պատիւ մը տայ ,  
զգուշանանք որ չըլլայ թէ վրան ուրախա-  
նանք , վասն զի այդ ուրախութիւնը մեր  
կործանմանը պատճառ կրնայ ըլլալ :

5. Չգուշանանք մասնաւորապէս մանր  
սնտոի բաներու փառասիրութենէ : Աբր-  
բուհին թերեզա կ'ըսէր . “ Աւր որ սնա-  
փառութիւն կայ , հոն երբէք հոգևոր ե-  
ռանդ չըլլար , : Հատերը հոգևոր կենաց  
ետեէ կ'ըլլան , բայց դեռ իրենց պատիւը  
կը պաշտեն : Դուրսէն քանի մը առա-  
քինութիւն կը ցուցնեն , բայց աս փառա-  
սիրութիւնը ունին որ իրենց ամէն ընթաց-  
քներնուն մէջ գոյութիւն . և երբոր զիրենք  
գոյտղ չի գանուի , իրենք զիրենք կը գո-  
վեն . միտլ բանիւ՝ կը նային որ ուրիշնե-  
րէն աղէկ երևնան . և թէ որ յանկարծ  
իրենց պատուոյն դէմ բան մը ըլլայ , խա-  
ղաղութիւննին կը կորսնցնեն , հաղորդու-  
թենէ կը հեռանան , բոլոր իրենց ջերմե-  
ւանդութիւնները կը թողուն , և չեն հան-  
դարտիր՝ ինչուան որ մտքերնին չգնեն որ  
նորէն ստացան իրենց կորսնցուցած պա-

տիւր : Բայց ճշմարիտ Քրիստոսի սիրողները այսպէս չեն ընկեր : Չէ թէ միայն կը զգուշանան որ չըլլայ թէ իրենք զիրենք գովելու խօսք մը բերներնուն հաննն , և կամ ախորժին գովութեան խօսք մը լսել , հասկա կը տրտմին ալ թէ որ մէկը այնպիսի խօսք ըսէ . ու կ'ուրախանան երբոր տեսնան որ մարդիկ իրենց վրայ լաւ համարմունք չունին :

4 . Շատ ստոյգ է ինչ որ կը զուրցէր սուրբն Ֆրանչիսկոս Աստիզայի . “ Ես այնչափ եմ , որչափ որ եմ Աստուծոյ առջևը ,, : Ի՞նչ օգուտ է որ աշխարհք զմեզ մեծ բանի տեղ դնէ , թէ որ Աստուծոյ առջև անարդ ու արհամարհ ենք : Եւ ընդհակառակն ի՞նչ մնաս ունի որ աշխարհք անարդէ զմեզ , թէ որ սիրելի ու հաճոյ ենք Աստուծոյ աչայր առջև : Սուրբն Օգոստինոս կը գրէ . “ Գովողին գովեստը գէշ խղճմտանքը չկաւրներ , և ոչ արհամարհողին նախատինքը կը վերաւորէ աղէկ խղճմտանքը ,, : Կնչպէս ով որ զմեզ կը գովէ , չազատեր գէշ գործոյ պատժէն , սասանկ ալ՝ ով որ զմեզ կը նախատէ , բարի

Կործոյ արդիւնքը մեզմէ չի սլակսեցնիր :  
 “ Ի՞նչ վրանուս պէտք է , կ'ըսէ սրբու-  
 Տին թերեզա , որ արարածք զմեզ մեղա-  
 դրեն ու նուաստ սեպեն , թէ որքու առջևդ ,  
 Աստուած մեծ ու անմեղ ըլլանք , ” : Սուր-  
 բերը ուրիշ բանի չէին փափագիր , բայց  
 եթէ անծանօթ , ու ամենէն անարգուած  
 մնալ : Ար գրէ սուրբն Ֆրանչիսկոս Սա-  
 լեզեան . “ Սեզի ի՞նչ նախատինք կ'ըլ-  
 լայ , երբոր գէշ կարծիք ունենան մեր  
 վրայ , երբ մենք մեր վրայ այնպիսի կար-  
 ծիք ունենալու սարտք ունինք : Թերեւս  
 մենք գիտենք թէ գէշ ենք , բայց կը սա-  
 ճանջինք որ ուրիշները զմեզ բարի սե-  
 պեն , ” :

Ծ . Ո՛Տ , սրչափ ապահով բան է ան-  
 ծանօթ կեանք անցնել , թէ որ մէկը կ'ուզէ  
 գՅիտուս սրտանց սիրել : Ինքն իսկ Յի-  
 սուս ասոր օրինակ տուաւ իր անծանօթ  
 ու արճամարճեալ մնալովը երեսուն տարի  
 խանութի մը մէջ : Այս անոր ճամար սուր-  
 բերը որպէս զի մարդկային սլատուէն ա-  
 զատ մնան , քաշուեցան դայլին անապատ-  
 ներու ու այրերու մէջ բնակեցան : Սուրբն

Վիշենցիոս Պաւլայեցի կ'ըսէր թէ աչքի զարնուելու, սրտախ լսելու, մեր կերպը գոլութեան արժանի սխալուելու, և թէ ըսուի որ լաւ յառաջադիմութիւն կ'ընենք ու հրաշքներ կը գործենք, բոլոր այս փափաքները այնպիսի մնասակար բաներ են որ զԱստուած մեր մտքէն կը հանեն, ու մեր սուրբ գործքերն ալ կ'ասպականեն, ու հոգևոր կենաց մէջ քան զայս մոլութիւնը աւելի մեղի մնասակար բան չկայ :

6 . Աւտի ու՛ որ կ'ուզէ Յիսուսի սիրոյն մէջ առաջ երթալու՝ պէտք է ջանաց որ բոլորովին մեռցնէ իր պատուասիրութեան փափաքը : Բայց ի՞նչպէս պիտի մարդ այս փափաքը մեռցնէ : Ահա ինչպէս կը սորվեցնէ սրբուհին Սարիամ Սաղգաղինացի Բացեան . « Պատուասիրութեան փափաքող կեանքն է ամենուն առջև մեծ համարմունք ունենալը . ուրեմն պատուասիրութեան մահն է անձանօթ մնալը որ ուրիշներէն ճանչցուի : Այլ ինչուան որ մարդ աս կերպով չմեռնի, Աստուծոյ ճշմարիտ ծառայ չըլլար » :

7 . Արպէս զի Աստուծոյ աչայր առ

Յև հաճոյ ը ըանք , պէտք է բան ծախելու  
 փառամոլութեան և մարդու աչք մտնա-  
 լու փափագէն զգուշանանք : Այս առա-  
 լել զգուշանալու ենք ուրիշներու վրայ տի-  
 րելու փառամոլութենէն : Արբուհին թե-  
 րեզա կը փափագէր , որ իր վանքը կու-  
 սաններուն հետ էրի մրկի , քան թէ  
 աս անպիտան փառամոլութիւնը մէջերնին  
 մտնայ : Այս պէս բանիս համար կ'ուզէր  
 որ թէ որ իր մայրապետներէն մէկը՝ մեծա-  
 ւոր ըլլալու վրայ խօսի , վանքէն վճռտնն ,  
 կամ թէ միշտ բանտի մէջ պահեն : Արբ-  
 բուհին Մարիամ Մագդաղենացի Բա-  
 ցեան կ'ըսէր թէ « Հոգևոր անձի մը  
 պատիւը ամենէն նուաստ համարուիլն է ,  
 և ուրիշներէն վեր սեպուելէն զարհուրիլը » :  
 Աստուածասէր հոգւոյ մը փառասիրու-  
 թիւնը պէտք է ըլլայ բոլոր ուրիշները խո-  
 նարհութեամբ գերազանցել , ինչպէս որ կ'ը-  
 սէ սուրբն Պօղոս . « խոնարհութեամբ ու-  
 րիշները մեզմէ աւելի լաւ պիտի սկսենք »<sup>1</sup> :

<sup>1</sup> Այլ խոնարհութեամբ զմիմեանս լաւ  
 համարել քան զանձինս : Փիլ . Բ . 3 :

Ահով բանիւ ուլ որ զՄատուած կը սիրէ՝  
սէտք է որ Մատուծմէ զատ ուրիշ բանի  
չփասխարի :

ԻՂԶԳ ԵՒ ՊԱՂԱՏԱՆԿ

Յիսուս իմ, տուր ինծի քեզի հաճոյս  
կան բան ընելու փառասիրութիւնը . և  
մոռցուր ինծի ամէն արարածք , նաև զիս :  
Ինծի ի՞նչ օգուտ է բոլոր աշխարհքիս  
սիրելի ըլլալ , թէ որ դու զիս չսիրես ,  
միակ իմ հոգեցոյս սէրը : Յիսուս իմ ,  
դու աս աշխարհքս եկար մեր սիրտը շա-  
հելու համար . թէ որ ես չեմ գիտեր իմ  
սիրտս քեզի տալ , դուն քեզմէ առ ու  
քու սիրովդ լեցուր , և ամենեկն մի թու-  
ղուր որ ես քեզմէ հեռանամ : Առաջները  
քեզմէ հեռացայ , բայց հիմայ ճանչնալով  
ըրած չար գործքս՝ կը ցաւիմ բոլոր սրտով .  
և ամէն բանէն աւելի կը մշտացնէ զիս յի-  
շիւր որ քեզի դէմ այնչափ մեղք գործեցի :  
Ասով միայն կը միտի թարուիմ որ գիտեմ  
թէ անհուն բարութիւն ես , որ չես ետ  
կենար սիրելէն այնպիսի մեղաւոր մը որ



զքեզ կը սիրէ : Արեւելի Փրկիչ իմ , նմ  
 հոգւոյս քաղցր սէրը , իրաւ առաջ զքեզ  
 նախատեցի , բայց հիմայ քան զիս աւելի  
 զքեզ կը սիրեմ : Օհա ու իմ ամէն գործ-  
 քերս քեզի կը նուիրեմ . ուրիշ բանի չեմ  
 փափագիր բայց միայն զքեզ սիրելու , ու  
 հաճոյական բան ընելու : Այս է իմ փա-  
 ռասիրութիւնս , ընդունէ՛ զայն , ու դուն  
 աճեցուր , և ջնջէ՛ իմ սրտէս աշխարհա-  
 սիրութեան փափագները : Դու ես միայն  
 արժանի սիրելի ըլլալու , ու զիս շատ կեր-  
 սով սրարտական ըրիր որ զքեզ սիրեմ : Ա-  
 հաւասիկ կը փափագիմ բոլորովին քուկդ  
 ըլլալու , և կ'ուզեմ նեղութիւն կրել որչափ  
 որ դուն կ'ուզես , դուն որ իմ սիրոյս հա-  
 մար չարչարանօք մեռար խաչին վրայ :  
 Դու կ'ուզես որ սուրբ ըլլամ , դու միայն  
 կրնաս զիս սուրբ ընել , անոր համար քեզի  
 կը վստահիմ :

Կան քուկին սաշտաղանութեանդ վրայ  
 դրած եմ իմ յոյսս , նմ Մարիամ մայր  
 Աստուծոյ :

## ԳԼՈՒԽ ԺԱ .

ՍԷՐ ՈՉ ԽՆԴՐԷ ԶԻՒՐ .

Ո՛վ որ զՅիսուսս կը սիրէ , կ'ուզէ  
բոլոր ստեղծուածներէն բաժնուիլ :

1 . Ո՛վ որ կը փափաքի զՅիսուսս բոլորով սրտիւ սիրել , պէտք է որ ամէն բան իր սրտէն հեռացընէ ինչ որ Աստուած չէ , հասլա անձնասիրութիւն : Այս ոչ խնդրել զիւրն ըսելովը կը հասկըցնէ ինքը զինքը չփնտոել , հասլա ինչ որ Աստուծոյ հաճոյ է : Եւ զայս Տէրն մեր մեղմէ կը պահանջէ , երբոր մեզի կը զուրցէ . “ Պիտի սիրես քու Տէր Աստուածդ բոլորով սրտիւ , : Բոլորով սրտիւ զԱստուած սիրելու համար երկու բան հարկաւոր է . մէկ մը՝ աշխարհք սրտէն հանել . և երկրորդ՝ սիրտը սուրբ սիրով լնցընել : Աւտի այն սիրտը որ երկրաւոր փափազ մը ունի , ամենեւին չիկրնար բոլորով

Վին Աստուծոյ ըլլալ : Սուրբն Փիլիպպոս  
 ‘Ներեան կ’ըսէր թէ որչափ որ արարա-  
 ծոց վրայ սէր ձգենք , այնչափ Աստուծոյ  
 սէրը կը սպակեցնենք : Բայց սիրտը ինչ-  
 պէս աշխարհքիս բաներէն կը մաքրուի .  
 կը մաքրուի մահացուցմամբ , և ստեղծա-  
 կան բաներէ հեռանալով : Կան ոմանք որ  
 կը դանդաւան թէ զԱստուած կը վնասուն  
 ու շին գտնար . այնպիսիները մտիկ ընեն  
 ինչ որ իրենց կ’ըսէ սրբուհին Սերեզա .  
 “ Արարածներէն սիրտդ հեռացու , զԱս-  
 տուած խնդրէ՛ կը գտնաս , , :

2 . Ատրեւթիւնը հոն է , որ ոմանք  
 կ’ուզեն սուրբ ըլլալ , բայց իրենց ուզա-  
 ծին պէս . կ’ուզեն զՅիսուս սիրել , բայց  
 իրենց խելքին յարմար , առանց ետ կե-  
 նալու իրենց զուարճութիւններէն . կը սիրեն  
 զԱստուած , բայց թէ որ այն ուզած սաշ-  
 տոնին չի հասնին , անհանդարտ կ’ըլլան .  
 խալ թէ որ մէկը իրենց սլատուոյն դալի ,  
 կրակ կը կտրին . թէ որ այն հիւանդու-  
 թենէն չի բժշկուին՝ համբերութիւնը կը  
 կորսնցնեն : Օ Աստուած կը սիրեն , բայց  
 հարստութեան փափայն , աշխարհքիս

սլափուր , ու անուախան , խնաստուն , և  
 քան զուրիշները դերագանց սեպուելու ըն-  
 դունայնութիւնը շէն թողուր : Այսպիսի-  
 ները աղօթք կ'ընեն , սրբութիւն կ'առնեն ,  
 բայց սրտերնին աշխարհքին բաներով  
 լցուած ըլլալով , քիչ օգուտ կը քարեն :  
 Այսպիսիներուն հետ Տէրն մեր ամեննին  
 չխօսիր , որովհետեւ գիտէ որ խօսքերը  
 սրտապր կ'երթան : Տիրի սոյն բանս  
 ըսաւ Յիսուս առ սրբուհին Թերեզա .  
 “ Ես կ'ուզէի խօսիլ շատերուն հետ ,  
 բայց աշխարհք անոնց ախանջին տակը  
 ստատիկ աղաղակ կը հանէ , որով իմ  
 ձայնս չեն կրնար ըսել : Արանի թէ քիչ  
 մը աշխարհքէ հեռանային , : Արեմն ուլ  
 որ երկրաւոր փափաքներով լեցուն է ,  
 Աստուծոյ ձայնը չի կրնար ըսել երբ որ  
 իրեն հետ խօսի : Բայց վայ անոր որ այս  
 աշխարհքիս զգալի բարեացը հետ կալած  
 է , այնպիսեոյն վտանգ կայ որ որ մը ա-  
 նոնցմէ կուրնալով Յիսուսի սէրը թողու ,  
 և այս անցաւոր մեծութիւնները չի կոր-  
 սրնցրնելու համար , զԱստուած անհուն  
 բարին յախտեան կորսնցրնէ : Արբուհին

Թերեղա կ'ըսէ . « Տարակոյս չկայ որ կուրստական բարեաց ետևէն զացողը , ինքն ալ անոնց հետ կը կորսուի » :

3 . Սուրբն Օգոստինոս կը գրէ թէ Տիբերիոս կայսրը կ'ուզէր որ Հռովմայ ծերակոյտը Յիսուան ալ աստուածներուն կարգը դասէ , բայց ծերակոյտը չուզեց , ըսելով թէ հսկարտ Աստուած մին է որ ինքը միայն կ'ուզէ երկրպագութիւն առնուլ առանց ուրիշ ընկերի մը : Ղշմարիտ է , Աստուած ինքը միայն կ'ուզէ սլաշտուիլ , ու սիրուիլ մեզմէ , բայց չէ թէ հրպարտութեան համար , հապա որովհետև ինքն է միայն արժանի , նաև այն սիրոյն համար ալ որ մեր վրայ ունի : Արովհետև զմեզ սաստիկ կը սիրէ ինքը , ասանկ ալ մեր բոլոր սէրն ալ կ'ուզէ , և անոր համար նախանձաւոր է ու չուզեր տեսնալ որ ուրիշները այն սրտերէն մասն ունենան որոնք որ բոլորովին իրեն համար են : Ախանձաւոր է Յիսուս , կ'ըսէ սուրբն Հերոնիմոս , և անոր համար չուզեր որ իրմէ զատ ուրիշ բանի մը վրայ սէր կապենք : Այլ թէ տեսնաց որ ստեղծուած

մը սրտէն մաս մը յափշտակած է՝ կերպ  
 պով մը կը նախանձի, ինչպէս որ կը գրէ  
 սուրբ առաքեալն Յակոբոս, որովհետեւ  
 չուզէր իր սիրոյն նախանձորդ մը ունենալ,  
 հասցա ինքն միայն կ'ուզէ սիրելի ըլլալ.  
 “ Ի՞նչ, պարանայ բան կը սեպէք սուրբ  
 Գրքին ըսածը թէ ‘Նախանձով կը սիրէ  
 զձեզ հողին’ որ ’ի ձեզ կը բնակի,,<sup>1</sup> :  
 Արդ երգոյ մէջ Տէրը կը դուրս իր հար-  
 սը ըսելով. “ Գոյ պարտէզ մըն է խմբոյրս  
 հարսս,,<sup>2</sup> : Գոյ պարտէզ կ'անուանէ,  
 որովհետեւ Յիսուսի հարս եղած հողին դոյ  
 կը պահէ իր սիրտը ամէն երկրաւոր սիրոյ  
 դէմ, որպէս զի միայն Յիսուսին սէրը  
 անարատ պահէ : Միթէ Բրիտանոս մեր  
 բոլոր սէրը չա՞րժեր : Ա՛հ, ամէն կիրպով  
 արժանի է, թէ իր բարութեանը և թէ  
 իր մեր վրայ ունեցած սիրոյն համար :

1 Կամ թէ վայրագանք համարելցեք՝  
 զոր ասէ դիրն առ նախանձ ինչ, որում  
 փափաքի հողին՝ որ բնակեաց ’ի մեզ :  
 Յակոբ . Ա . Կաթող . Գ . 5 :

2 Պարտէզ փակեալ քոյր խմ հարսն :  
 Արդ երգոյ . Ե . 12 :

Այս բանս սուրբերը աղէկ զխանն , և անոր համար կ'ըսէր Սաղեզացի սուրբն Ֆրանչիսկոս . “ Թէ որ զխանայի որ սրտիս մէջ թել մը կայ որ Աստուծոյ չէ , մէկէն 'ի մէկ կը խղէի կը հանէի ,, :

4. Գաւիթ կը փափաքէր ամէն աշխարհային իղձերու որոգայթներէն ազատ թե ունենալ որ թուչի ու Աստուծոյ քովը հանգչի . “ Ո՛ւր էր որ մէկը ինծի աղաւնոյ նման թևեր տար որ թուչէի ու հանգչէի ,, <sup>1</sup> : Շատ հոգիներ կը փափաքին ամէն երկրաւոր կասկանքներէն ազատ ըլլալ Աստուծոյ քովը թուչելու համար . և իրաւջրնէ սրբութեան բարձր աստիճան կը թուչէին , թէ որ այս աշխարհքիս ամէն բաններէն հեռանային . բայց որովհետեւ սրտիկ մտիկ անկարգ իղձեր ունին , և փոյթ չեն ըներ անոնցմէ ազատելու , միշտ իրենց թշուառութեան մէջ կը հայլին կը մաշին առանց աշխարհքէս քայլ մը վերանա-

<sup>1</sup> Տայր ոք ինձ թևս սրպէս աղաւնոյ , զի թուչէի վերանայի , հեռացեալ դարէի : Սաղ . ԾԳ . 7 :

լու: Սուրբն Յովհաննէս Խաչեան կ'ըսէր.  
 « Հոգի մը որ փափաքով բանի մը կը կա-  
 պուի թէ և չնչին բան մը ըլլայ, որչափ ալ  
 առաքինութիւն ունենայ, ոչ երբէք աս-  
 տուածային միաւորութեան կրնայ հասնիլ.  
 որովհետեւ տարբերութիւն չունի որ թուոն  
 մը կասուած ըլլայ հաստ կամ բարակ դեր-  
 ձանով. վասն զի որչափ բարակ ալ ըլլա-  
 լու ըլլայ, բանի որ չի կրնար փրցընել դեր-  
 ձանը՝ միշտ կասուած կը մնայ, և ամե-  
 նեին չի կրնար թուչիլ: Ա՛հ, ի՛նչ ցաւալի  
 բան է տեսնալ այնպիսի հոգիներ որ  
 հոգեւոր կրթութիւններով, առաքինու-  
 թեամբք, ու աստուածային շնորհքներով  
 հարուստ են, բայց սիրտ չընելով այն  
 սրտիկ իղձը արմատաքի խելու, չեն  
 կրնար հասնիլ աստուածային միաւորու-  
 թեան, որուն համար ուրիշ բան պէտք չէ,  
 բայց եթէ ուժով մը թուչիլ ու փրցընել  
 բոլորովին այն դերձանը. վասն զի հոգին  
 որ մէյմը ամէն ստեղծական իղձերէն ա-  
 զատի, անկարելի է որ Աստուած իր ա-  
 ստութեամբ անոր հետ չի հաղորդուի »:  
 5. Ալ որ կ'ուզէ որ Աստուած բոլո-



բովին իրեն ըլլայ, պէտք է որ զինքն ալ բողբովին Աստուծոյ տայ, ինչպէս կ'ըսէր հարար. « Իմ սիրելիս ինձի, և ես իրեն », <sup>1</sup> : Ինչպէս որ իմ սիրելիս զինքը ինձի տուաւ, ասանկ ալ ես զիս անոր տուի : Յիսուս զմեզ սիրելու համար կ'ուզէ մեր բոլոր սէրը . և թէ որ սրտերնիս իրեն չտանք. տժգոհ կը մնայ : Անոր համար սրբուհին Թերեզա զրեց իր վանքերէն մէկուն մեծաւորին . « Զանա որ ամէն արարածական բաներէն հեռանալ տաս հոգիներուն, որովհետեւ շատ նախանձաւոր թաղաւորի մը հարս ըլլալու կը կըթուին, որ կ'ուզէ որ իրենք զիրենք ալ մտնան », : Սրբուհի Մարիամ Մաղդաղենացի Քացեան իր նորընծաներուն մէկուն ձեռքէն հոգեւոր գիրք մը առաւ, ուրիշ բանի համար չէ, բայց եթէ տեսաւ որ չափազանց յարում մը ունի անոր : Շատ հոգիներ մտածական աղօթք կ'ընեն, սրբութեան այցելութեան կ'երթան, շատ ան-

<sup>1</sup> Աղբօրորգին իմ ինձ և ես նմա : Արգէրգոց . Բ . 16 :

դամ կը հաղորդուին . բայց որովհետև սրտերնին երկրաւոր իղձի մը կատարած են , կատարելութեան ճամբուն մը կամ քիչ առաջ կ'երթան և կամ ամեննին առաջ չեն երթար . և ասանկ անցնելով կեանքերնին չէ թէ միայն միշտ լուսաւ կ'ըլլան , հասցա ամէն բան կորսնցընելու վտանգին ալ մէջն են :

6 . Արեւմտեան պէտք է որ Ղաւթին հետ Աստուծոյ աղաչենք , որպէս զի մեր սիրտը ամէն երկրաւոր բաներու յարմանքէն մաքրէ . “ Աստուած իմ , մաքուր սիրտ տուր ինձի ” <sup>1</sup> : Արիշ կերպով ամեննին չենք կրնար բոլորովն իրեն ըլլալ : Յիտուա մեզի լաւ հասկրցուց' թէ “ Այլ որ ամէն բաներէն չհրաժարի , իր ճշմարիտ աշկերտը չի կրնար ըլլալ ” <sup>2</sup> : Անոր համար անաստատաւոր նախնի հարք երբոր պատանի մը երթար իրենց միա-

<sup>1</sup> Սիրտ տուրք հաստատեալ յես , Աստուած : Սաղ . Ծ . 12 :

<sup>2</sup> Ար ոչ հրաժարեացէ յամենայն ընչից իւրոց , ոչ կարէ իմ աշակերտ լինել : Ղուկ . ԺԴ . 33 :

բանս ըըլալու, այս էր իրենց հարցմունքը որ իրեն կ'ընէին . “ Ախրող դատարկ է որ Հոգին սուրբ զանիկայ լեցնէ , : Յի սուս սոյն բանս ըսաւ սրբուհի Գեղբրուտային , որ կ'աղաչէր որ իրեն խնայնէ թէ իրմէն ի՞նչ բան կ'ուզէ . “ Աւրիշ բան չեմ ուզեր .բեզմէ, ըսաւ , բայց եթէ սիրող ստեղծուածքներէն դատարկ , : Արեմն հոանդազին և հաստատ սրտիւ պէտք է որ առ Աստուած աղաղակենք . “ Տէր , գքեզ կ'ուզեմ 'ի վեր .բան զամենայն , .բան զառողջութիւն , .բան զհարստութիւն , .բան զիշխանութիւն , .բան զպատիւ , .բան զգոմարութիւն , .բան զգիտութիւն , .բան զմխիթարութիւն , .բան զակրնկալութիւն , .բան զամէն իղձ , նաև .բան զչնորհքներդ ու պարգևներդ , որ .բեզմէ կրնամ ընդունիլ : Միով բանիւ՝ ամէն ստեղծական բարիքներէ աւելի գքեզ կ'ուզեմ , Աստուած իմ : Ինչ պարգև որ ինձի տաս , Աստուած իմ , .բեզմէ 'ի զատ , ինձի բաւական չէ : Օգքեզ միայն կ'ուզեմ , և ուրիշ բան չեմ ուզեր , :

7 . Ամէն արարածական իղձերէ զա-

տուած սրտին մէջ աստուածային սէրը  
 մէկէն կը մտնայ, ու կը լեցնէ զայն :  
 Սրբուհին թերեզա կ'ըսէր զարձակ թէ  
 “ Աչքի տեսութենէն գէշ առիթները վեր-  
 ցուելուն պէս, մէկէն 'ի մէկ հոգին զԱս-  
 տուած սիրելու կը դառնայ, : Իրաւցնէ՛  
 որովհետև հոգին առանց սիրելու չի կրնար  
 կենալ . կամ ստեղծողը պիտի սիրէ, և  
 կամ ստեղծուածները . թէ որ ստեղծուած  
 ները չի սիրեր, անտարակոյս ստեղծողը կը  
 սիրէ : Վերջապէս պէտք է ամէն բան  
 թողուլ բոլորը շահելու համար, ինչպէս որ  
 կ'ըսէ երանելին թաղմաս Վեմբայի . “ Օր-  
 մենայն վասն ամենայնի, : Սրբուհին թե-  
 րեզա քանի որ սրտին մէջ իր մէկ ազգա-  
 կանին իղձ մը ունէր, թէպէտ և համեստ՝  
 բողբոլիկ Մատուծոյ չէր . բայց երբոր արև  
 ութեամբ այն յարմունքը հանեց սրտէն,  
 այն ատենը արժանի եղաւ Քրիստոսէն  
 ըսելու . “ Հիմայ, թերեզա, ամբողջ խն-  
 ես, և ես բողբոլիկ քու կը եմ, : Հատ  
 սկզբիկ բան է սիրտ մը զԱստուած սիրելու  
 համար, որ այնպէս կը սիրէ զմեզ ու այն-  
 պէս սիրելի է, որ անհուն սիրոյ է ար-

ժանի . և միժէ պէտք է այս մեր սիրտը  
 Աստուծոյ ու ստեղծուածներուն բաժնիկ :  
 Արանաշնորհն Վուզովիկոս Տաբանդէ  
 կ'ամչնար Աստուծոյ ըսել , թէ Տէր ,  
 ամէն բանէ , ամէն հարստութենէ , ա-  
 մէն պատուէ , ամէն բարեկամէ , ամէն  
 ազգականէ մեր զքեզ կը սիրեմ . որով  
 հետեւ իրեն այնպէս կու դար , իբրև թէ  
 ըսէր Աստուծոյ թէ Տէր , զքեզ տիրմէ ,  
 ծուխէ , և գեանի որդէն աւելի կը սիրեմ :

8 . Ա' ըսէ Արեմիա մարդարէն թէ « Աս-  
 տուած ամէն բարիք կ'ընէ անոր որ զինքը  
 կը վնասէ , »<sup>1</sup> : Մ'վ երջանիկ կորուստ , ու՛  
 երջանիկ շահ . աշխարհքիս մեծութիւնները  
 կորսնցրնել , որ սիրտը գոհ չեն ընել , ու  
 շուտով մը կ'անցնին , անհուն և յաւի-  
 տենական բարին շահիլ , որ է Աստուած :  
 Ար պատմուի մէկ ջերմեանոյ միայնա-  
 կեցի մը վրայ՝ թէ երբոր իշխան մը ան-  
 տառի մը մէջ կը պարտէր , միայնակեացը

1 Բարերար է Աստուած 'ի վերայ  
 համբերողաց իւրոց . զի անձն որ խնդրէ  
 զնա՝ բարի է որ համբերէ նմա ճշմար-  
 տութեամբ : Ողբք . Գ . 25 :

վաղելով անապատ կ'երթար . իշխանը տեսնալով զանիկայ որ դէպ 'ի հոն տեղուանքը կ'երթայ , հարցուց իրեն ս'լ ըլլալը և հոն ինչ բան ընելը . պատասխանեց միայնակեացը . “ Հապա դուն , պարոն , ինչ բան ունիս այս անապատիս մէջ ” : Պատասխան տուաւ իշխանը . “ Աս կենդանիները կ'որսամ ” : Իսկ միայնակեացը պատասխան տուաւ . “ Աս ալ կ'երթամ զՎստուած որսալու ” : Աւ աս ըսելով դիմացէն աներևոյթ եղաւ , ու սկսաւ իր ճամբան երթալ : Քանի որ աս աշխարհքիս մէջն ենք , միայն այս պիտի ըլլայ մեր մտածութիւնն ալ , մեր միակ նպատակը , որ զՎստուած վնասենք ու սիրենք , և իր կամքը կատարենք , սրտերնէս դուրս հանելով ամէն երկրաւոր բաներու իղձերը : Աւ թէ որ դէմերնիս ելլայ աշխարհքիս բարիք մը մեր սիրտը իրեն քաշելու , պատրաստ ըլլանք ըսելու թէ “ Աշխարհքիս թաղաւորութիւնը և բոլոր ժամանակաւոր զարդերը Տեառն իմոյ Յիսուսի սիրոյն համար արհամարհեցի ” : Աւ ինչ են այս աշխարհքիս իշխանութիւնը ու մեծութիւնը .

նը, բայց եթէ ծուխ, կառ և ընդունայնու-  
 թիւն որ բողոքն ալ մահուամբ կ'ոչնչա-  
 նան : Արանի՛ անոր որ կարենայ ըսել .  
 « Յիսուս իմ, ես քու սիրոյդ համար ամէն  
 բան թողուցի, դու ես իմ միակ սէրս, դու  
 միայն ինձի բաւական ես ,, :

Գ . Ա՛հ, երբոր աստուածային սէրը  
 հողի մը կը գրաւէ, այնպիսի հողին՝ միշտ  
 աստուածային շնորհաց օգնութեամբ կը  
 ջանայ ամէն երկրաւոր բաներէ մերկա-  
 նալ, որ կրնան արգելք ըլլալ իրեն բոլո-  
 բանին Աստուծոյ ըլլալուն : Ա՛րսէր սուրբ  
 Իրանչխակոս Սարգայի, թէ երբոր տուն  
 մը կրակ կ'ինկնայ, պատուհանէն դուրս  
 կը նետեն ամէն բան . ըսել կ'ուզէ թէ երբոր  
 մէկը բողոքովին զինքը Աստուծոյ տայ, ա-  
 ռանց քարոզչաց կամ խոստովանահարց  
 յորդորանքին, ինքն իրեն կը ջանայ ամէն  
 երկրաւոր իղձերէ ազատիլ : Հայրն Աե-  
 նիէրի կրտսերն կ'ըսէր թէ աստուածային  
 սէրը գող մին է, որ բարերադրութեամբ  
 զմեզ ամէն բանէ կը մերկացնէ, սրպէս զի  
 զԱստուած միայն ժառանգենք : Բարի  
 մարդու մը որ իր ստացուածքներէն հրա-

ժարեր, և Յիսուսի սիրոյն համար աղքատացեր էր, հարցուց իրեն մէկ բարեկամ մը՝ թէ ի՞նչպէս այն աստիճան աղքատութեան էր հասեր. ինքն ալ հաննց սուրբ աւետարանը, ու ըսաւ. “ Ահա այս որ ամէն բանէ զիս մերկացուց ” : Ա՛յլ ըսէ Հոգին սուրբ. “ Թէ որ մէկը իր բոլոր ստացուածները սիրոյ համար տայ, զանանք ամենևին բանի տեղ չի սեպիր ”<sup>1</sup> : Արբոր հոգի մը իր բոլոր սէրը Աստուծոյ վրայ ձգէ, ամէն բան կ’արհամարհէ, հարստութիւն, հաճոյք, իշխանութիւն, կալուածք, թագաւորութիւններ, և ուրիշ բան մը չուզեր բայց միայն զԱստուած, ու կ’ըսէ միշտ. “ Աստուած իմ, զքեզ միայն կ’ուզեմ, և ուրիշ բան չեմ ուզեր ” : Սուրբն Յիւանչիսկոս Սալեզացի կը գրէ թէ “ Աստուծոյ մարտեր սէրը կը հալէ կը մաշէ այն ամէն բան որ Աստուած չէ, որպէս զի ամէն բան ՚ի սէր փոխարկէ. վասն զի ինչ

<sup>1</sup> Աթէ տացէ այր զամենայն զկեանս իւր ընդ սիրոյ, անգոսնեւալ անգոսնեսցեն զնա : Երգ երգոց. Ը. 7 :



որ Աստուծոյ սիրոյն համար կ'ըլայ, սէր է, : :

10. Խորհրդական Հարսը կ'ըսէր թէ  
 « Մտուէք զիս գինւոյ սենեակը և վրաս սէր կարգաւորեցէք, »<sup>1</sup> : Աս գինիի սենեակը, կ'ըսէ սրբուհին Թերեզա, աստուածային սէրն է, որ թէ սիրտ մը յափրշտակելու ըլայ, այնպէս կը գինուցընէ, որ ամէն ստեղծական բան կը մոռցընէ : Գինուը զգայարանօք մեռածի նման է, չտեմար, չզգար, չխօսիր, այնպէս կ'ըլայ աստուածային սիրով գինուցած հոգին ալ. զրեթէ ալ զգացմունք չունենար աշխարհքի բաներուն. ուրիշ բան չուզեր մտածել, բայց միայն զԱստուած. ուրիշ բանի վրայ չուզեր խօսիլ, բայց եթէ Աստուծոյ վրան. ուրիշ բան ընել չփափագիր, բայց եթէ զԱստուած սիրել և Աստուծոյ հաճոյակուն բան ընել : Արդ երգոցին մէջ Տէրն մեր կը հրամայէ որ շարթնցընեն իր սիրելին մինչև որ ինքն ու-

1 Մուծէք զիս 'ի տուն գինւոյ, կարգեցէք 'ի վերայ խ' զսէր : Երգ. Բ. 4 :

դէ՛ : Աս երանելի քունը որ Յիսուսի եղած  
 հոգիները կը վայելն ուրիշ բան չէ , կ'ըսէ  
 սուրբ Քարսեղ , բայց եթէ առաքինական և  
 կամաւոր մոռացումն ամենայն ստեղծա-  
 կան բաներու , որով Աստուծոյ միայն ի-  
 րենք զիրենք տան , ու ըսն ինչպէս կ'ը-  
 սէր սուրբն Յրանչիսկոս . “ Աստուած  
 իմ , և ամենայն ինչ . Աստուած իմ , ինչ  
 են աշխարհքիս հարստութիւնները , սլա-  
 տիւնները , մեծութիւնները : Դու ես իմ  
 ամէն բանս , և իմ ամէն մեծութիւններս , , :  
 Թափմա Գեմբային ալ կը գրէ . “ Աս-  
 տուած իմ , և ամենայն ինչ . ինչ անուշ  
 խօսք . Աստուած իմ , իմ ամէն բանս : Այլ  
 որ հասկըցող է , այսչափս ալ շատ է . և ով  
 որ կը սիրէ , քաղցր կու գայ այնախաւոյն ստէսլ  
 ստէսլ կրկնել ըսելով . Աստուած իմ և ա-  
 մենայն ինչ . Աստուած իմ և ամենայն ինչ , , :  
 11 . Աւստի կատարեալ կերպով Աս-  
 տուծոյ հետ միանալու համար հարկաւոր  
 է բոլորովն արարածներէն հեռանալը : Այլ

1 Եթէ յառնիցէք՝ զարթուշիք զսէրն  
 մինչև կամեսցի : Երգ . Բ . 7 :

մանուսորի խճալով՝ պէտք է որ ազգա-  
կանաց անկարգ սէրէն հեռանանք : Յի-  
սուս ըստ . “ Այլ որ ինձի կու գայ ,  
ու շատեր իր հայրը , մայրը , կլինը , զա-  
ւակները , եղբայրները , նաև ինքը վնասն  
ալ , չի կրնար ինձի աշակերտ ըլլալ ,<sup>1</sup> : Այլ  
ինչո՞ւ համար ազգականաց այս ատելու-  
թիւնը . որովհետև շատ անգամ , մեր հո-  
գւոյն օգուտը մտածելով մեր ազգականնե-  
րէն եւել մեզի ուրիշ մեծ թշնամի չունինք .  
“ Կարգուն թշնամին իր ընտանիքն է ,<sup>2</sup> :  
Սուրբ Կարողոս Պորրովէոս , կ'ըսէ թէ  
“ Արքայ ազգականացս տունը կ'երթայի ,  
միշտ հոգիս պաղած կը դառնայի անկէ , , :  
Մէկն ալ երբոր հայր Անտոն Մոնղուց-  
ցային հարցուց թէ ինչո՞ւ չես ուզեր ազ-  
գականացդ տունն երթալ , պատասխան

1. Եթէ ոք գայ առ իս՝ և ոչ ատեաց  
դ՛հայր իւր , և զմայր , և զկլին , և զոր-  
դիս , և զեղբարս և զքորս , նաև զանձն ևս  
իւր , ոչ կ'արէ իմ աշակերտ ընել : Ղուկ .  
ԺԳ . 26 :

2. Եւ թշնամիք առն ընտանիք իւր :  
Մատթ . Ժ . 36 :

տուաւ . “ Վ անն զի փորձով գիտեմ թէ չկայ տեղ մը ուր կրօնաւորները իրենց ջերմեռանդութիւնը աւելի կորսնցնեն , ինչպէս ազգականաց տունը , ” :

12 . Իսկ վիճակի ընտրութեան փայ գալով , ստոյգ է , ինչպէս որ կը ցուցնէ սուրբն թափմաս Ագուինացի որ պարտականութիւն չունինք ծնողաց հնազանդելու : Թէ որ երիտասարդ մը կրօնաւոր ըլլալու կոչմունք ունի , և իր ծնողքը թող չտան , ինքը պարտական է Աստուծոյ հնազանդելու , և ոչ ազգականացը , որոնք իրենց շահուն համար , և իրենց յատուկ վախճանին համար , ինչպէս որ կ'ըլէ սուրբն թափմաս , մեր հոգևոր օգտին դէմ կը կենան . “ Հատ անգամ մարմնաւոր բարեկամներ հոգևորական յառաջադիմութեան դէմ կը կենան , ” : Աւ սուրբն Ռեոնարդոս ալ կը գրէ թէ աւելի կ'օւզեն որ իրենց տղաքները դժոխք դատապարտուին , քան թէ անէն հեռանան :

13 . Այս նիւթիս մէջ մարդուն զարմանալը կու գայ երբոր կը տեսնայ որ կան հայրեր ու մայրեր , որ երկիւղած ալ ըլլալով ,

ինչպէս իրենց զգացմունքէն կուրցած կը տագնապին , և հնարք մը չեն թողուր որ արդեւք չգնեն իրենց որդւոյն կոչմանը , որ կրօնաւոր ըլլալ կը փափագի . այս գործքը ( 'ի բաց առեալ քանի մը շատ քիչ դիպուած ) չի կրնար ծանր մեղքէ ազատ ընել մարդը : Բայց մէկը դառնայ զուրցէինձի . Արեւմտեան բոլոր աշխարհական եղողները դատաւարտութիւն սխտի : Ար պատասխանեմ . Անոնք որոնց որ Աստուած կրօնաւորական կոչում չէ տուած , աշխարհական մնալով ալ կը փրկուին , բաւական է որ իրենց վիճակին պարտքերը կատարեն . բայց անոնք որոնց Աստուած կոչում տուած ըլլալով Աստուծոյ չի հնազանդին , թէպէտ և կրնան ալ փրկուիլ , բայց շատ դժուար կը փրկուին : Այսին զի կը զրկուին այն օգնութիւններէն , որ Աստուած մասնաւոր կերպով պատրաստած էր իրենց կրօնաւորութեան վիճակին մէջ տալու որ առանց անոնց փրկութեան չեն կրնար հասնիլ : Հաբերդ աստուածարանը կը զրէ թէ , ով որ չի հնազանդիր աստուածային կոչմանը , եկեղեցւոյ մարմնոյն

մէջ իր տեղէն խախտած անդամի մը պէս  
կը մնայ, որ շատ դժարութեամբ հազիւ  
կ'ըլլայ իր գործքը կատարել, և մեծ  
աշխատութեամբ իր փրկութիւնը ստա-  
նալ :

14. Վիճակի ընտրութիւնը, հայրն  
Արանադա, գլխաւոր անիւն, է կ'ըսէ .  
ժամացոյցի գլխաւոր անիւր որ խանդարի,  
բողորովն ժամացոյցը կ'աւրուի, ասանկ է  
նաև մեր փրկութեանը նայելով . մէյ մը  
որ վիճակին ընտրութիւնը ծուռ ըլլայ, բո-  
լոր կեանքը խառնակ կ'երթայ : Քանի  
խեղճ պատանիներ իրենց ազգականներուն  
պատճառաւ իրենց կոչումը կորսնցոյցի-  
րն, և ետքը գէշ վախճան ունենալով իրենց  
տանն ալ կործանում եղեր են : Պատանի  
մը հօրը ետևէն ինկնալովը կրօնաւորական  
կոչումը կը կորսնցընէ, բայց ետքը հօրը  
հետ ալ չարաչար աւրուելով, ինքը իր ձեռ-  
քովը իր հայրը կը սպաննէ ու դատապար-  
տուած կը մեռնի : Աւրիշ տղայ մըն ալ որ  
կղերիկոսական դպրոցի մը մէջ էր, նայն-  
պէս Մատուծմէ կոչմունք ունեցաւ որ աշ-  
խարհք թողու : Իսկ ինքը անհող ըլլալով

այս կոչմանը, նախ սրաղեցաւ ջերմեռան, դուժենէ, աղօթքէ ու սուրբ հաղորդութենէ. ետքը մօլութեանց անձնատուր եղաւ, և վերջապէս գիշեր մը գէշ կնիկան մը տունէն ելլալու ասին, նախանձորդէն սարաննուեցաւ. շատ քահանաներ վազեցին, բայց մեռած գտան: Այսպիսի օրինակներ գեո սրչափ կրնայի բերել:

15. Բայց դառնանք մենք մեր խօսքին: Հրեշտակային վարդապետն սուրբն Թաովմաս զանոնք որ կատարելագոյն կենաց կոչմունք ունին՝ կը յորդորէ որ այս բանիս վրայ ազգականաց հետ խօսք չունեն, վասն զի աս նիւթիս մէջ իրենց թշնամի կը դառնան: “Այս խորհուրդէս պէտք է հեռու բանել, կըլտէ, ըստ մարմնոց մերձաւորքը . . . վասն զի ազգականք այս գործքիս մէջ՝ ալ բարեկամ չեն, հապա թշնամի, ինչպէս Տէրն մեր վճիռ տուաւ .” Թշնամիք առն ընտանիք իւր ,, : Այլ թէ որ կատարելագոյն վիճակի կոչմանը վրայօք որ գիք իրենց ծնողացը պարտական չեն խորհուրդ հարցնել, ևս առաւել պարտական չեն իրենց հրամանին սպասել, և ոչ խել

Հրաման խնդրել, թէ որ վախ ունենան  
 որ առանց իրաւանց կրնան չէ ըսել ու  
 իրենց կոչմունքը արդելու: Սուրբն Տափ  
 մաս Աղուինացի, սուրբն Պետրոս Աւ  
 կանդարացի, սուրբն Յրանչիսկոս Քսաւե  
 րեան, սուրբ Աղուիկոս Պելղրանտոս,  
 և ուրիշ շատ անձինք կրօնաւոր եղան, ա  
 ռանց ամենեւին իրենց ծնողացը բան մը ի  
 մացընելու:

16. Գարձեալ սէտք է դիտնալ՝ որ  
 ինչպէս դատաւարտուելու վտանգի մէջ  
 կ'ինկնայ, ու որ ազգականաց կամքը կա  
 տարելու համար կը թողու ատուածային  
 կոչումը. աասնկ ալ ընդհակառակն մեծ  
 վտանգի մէջ կը ձգէ իր յաւիտենական  
 փրկութիւնը, ու որ ազգականաց կամացը  
 գէմ չընելու համար եկեղեցական վնձակը  
 կ'ընտրէ՝ առանց ատուածային կոչման:  
 Իրեք նշան կայ, որոնցմով կը ճանչցուի  
 այսպիսի սքանչելի վնձակի մը ճշմարիտ  
 կոչումը. գիտութիւն, Աստուծոյ միայն  
 ծառայելու դիտաւորութիւն, ու բարի  
 վարք: Բայց հոս մասնաւորապէս բարի  
 վարուց փայ խօսելով, Տրիտենդեան ժո



ղուլքը սահմանեց՝ որ եպիսկոպոսները սուրբ աստիճան տան անոնց միայն որ բարի վարուց մէջ փորձուած են : “ Այս սասարկաւազ ու սարկաւազ անոնք ձեռնադրուին որ բարի վկայութիւն ունին ու փոքր աստիճաններու մէջ փորձուած են ,”<sup>1</sup> : Այնոյն բանը առաջուց ալ ուրիշ եկեղեցական կանոն մը հրամայած էր որ կ’ըսէր . “ Չըլլայ թէ մէկը ձեռնադրուի , քանի որ փորձուած չէ ,” : Այս թէպէտ այս բանս բուն արտաքին փորձին վրայ կը հասկըցուի , որ եպիսկոպոսը պէտք է ձեռնադրելի անձին բարելաւութեանը վրայ ունենայ , բայց տարակոյս չկայ որ ժողովքը ոչ այնչափ արտաքին բարելաւութիւնը կ’ուզէ , որչափ որ ներքինը . վասն զի առանց ասոր արտաքին բարեկրթութիւնը պարզ խարէական բան մըն է : Այս ասոր համար կ’ըսէ դարձեալ ժողովը . “ Վիտնանս եպիսկոպոսք որ այս աստիճանները արժանաւորներուն միայն պէտք է տան . և անոնց որոնց բարի վարքը ձեռնութեան

<sup>1</sup> Նիստ . ԻԳ . ԺԳ :

տեղ կը բռնէ „<sup>1</sup> : Այս ալ յայտնի է , որ այս նպատակիս համար , որ ձեռնադրեւ ըոյն բարի վարքը փորձուի , նոյն ժողովքը կը հրամայէ որ աստիճանները հեռու հեռու տրուին . “ Արպէս զի , կ'ըսէ , հասակին հետ արժանաւորութիւնը ու գիտութիւնն ալ անձի „ :

17 . Ասոր պատճառը կը բացատրէ սուրբն Ստովմաս , վասն զի ձեռնադրելին ամէն մէկ սուրբ աստիճանն առնելուն բարձրագոյն սպասաւորութեամբ : Յիսուսի ծառայութեան մէջ կը մտնայ սուրբ սեղանոյն խորհրդովը . ուստի կ'ըսէ եկեղեցականի վարուց սրբութիւնը պէտք է կրօնաւորէն ալ գերազանց ըլլայ . “ Վասն զի այդ սրբազան աստիճանաւոր մարդ նմին իսկ Քրիստոսի կը ծառայէ 'ի խորհուրդ սուրբ սեղանոյն . այս բանիս համար մեծագոյն սրբութիւն կը պահանջուի , քան զոր կը պահանջէ կրօնաւորութեան վիճակը „<sup>2</sup> :

1 Նիստ . ԻԳ . ԺԲ :

2 Մասն Բ . խնդ . ՃՁԳ . Պր :

Դեռ այս նիւթիս մէջ իր խօսքը կ'երկնցընէ ոչ այնչափ ձեռնադրուածնե-  
րուն՝ որչափ ձեռնադրուելիքներուն վրայ ,  
և կ'ըսէ թէ սուրբ աստիճանները նա-  
խապատրաստ սրբութիւն կը պահան-  
ջեն : « Ախապատրաստ սրբութիւն ըսե-  
լովը կը հասկցընէ թէ ձեռնադրուե-  
լէն առաջ սուրբ պիտի ըլլայ ձեռնա-  
դրուելիքը , և թէ կրօնաւորական վիճակին  
սուրբ աստիճանաց վիճակէն տարբերու-  
թիւնը այս պատճառիս վրայ կը դնէ որ  
կրօնաւորական վիճակաւ մոլութիւնները  
կը մաքրուին . բայց սուրբ աստիճանները  
ընդունելու համար պէտք է որ մարդ  
սուրբ վարքով մաքրուած ըլլայ : Ահա  
հրեշտակային վարդապետին խօսքերը .  
« Սուրբ աստիճանները առաջուց սրբու-  
թիւն կը պահանջեն , բայց կրօնաւորական  
վիճակը կըթութիւն է առ սրբութիւն . ուս-  
տի սուրբ աստիճանաց բեռը կը դրուի այն  
պարիսպներուն վրայ որ արդէն սրբութեամբ  
չորցած են . իսկ կրօնաւորութիւնը թաց պա-  
րիսպը կը չորցընէ , կ'ուզեմ ըսել զմարդիկ  
մոլութեանց հիւթերէն կը մաքրէ , , : Դար-

ձեալ նոյն սուրբն թափմաս նոյն բանը կը բացատրէ ու կ'ըսէ . « Ինչպէս աստիճան առնողները աստիճանին զօրութեամբը ժողովրդեան վրակեցու կ'ըլլան , ասանկ սրբութեան արդեամբն ալ անոնցմէ վեր պիտի ըլլան ,<sup>1</sup> : Այս սրբութեան արդիւնքը ձեռնադրութենէ առաջ իբրև հարկաւոր պահանջելը անոր համար չէ միայն՝ որ ձեռնադրուածը ըստ արժանւոյն աստիճանները գործածէ , հասցա նաև որպէս զի ձեռնադրելին արժանապէս Յիսուսի պաշտօնէից կարգը կարենայ մտնել : Այս վերջապէս ասով խօսքը կը կնքէ . « Իսկ այդ սրբազան աստիճանին մէջ մտնողները առաւելագոյն շնորհաց պարգև կ'ընդունին , որով աւելի մեծագոյն բաներու յարմար կ'ըլլան , : Մտադրութիւն ընելու է Տեճագոյն Բանէրու ըսածին , որով սուրբը կը բացատրէ թէ խորհրդոյն շնորհքը որ ետքը կ'ընդունի , չէ թէ անօգուտ կ'ըլլայ , հասցա ձեռնադրուելոյն առաւելագոյն օգնութիւններ

1 Մասն Գ . Յաւել խնդ . ԼԵ . Ա . առ երրորդն :

կու տայ մեծամեծ արդիւնքներ շահելու .  
բայց քան զայն յառաջ կ'ըսէ՝ որ 'ի ձեռ-  
նագրելին կը պահանջուի նախընթաց հա-  
ճոյարար շնորհք որով կարող ըլլայ արժա-  
նաւորապէս Յիսուսի պաշտօնէից խումբին  
մէջ մտնալու :

18 . Իմ բարոյական աստուածաբա-  
նութեանս մէջ <sup>1</sup> այս նիւթիս վրայ ընդար-  
ձակ ձառ մը գրած եմ ցուցընելով թէ ա-  
նոնք որ առանց փորձուելու բարի վարուց  
մէջ՝ սուրբ աստիճան մը կ'ընդունին ,  
ծանր մեղքէ ազատ չեն կրնար ըլլալ , ո-  
րովհետեւ առանց աստուածային կոչման  
կ'ընեն ինչ որ կ'ընեն . և Աստուծ-  
մէ կոչումն ունեցած չըսուիր անիկայ ,  
որ առանց ունակացեալ՝ մանաւանդ ողջա-  
խոհութեան դէմ մոլութիւններէն մաքրու-  
ելու , սուրբ աստիճաններ կ'ընդունի : Թէ-  
պէտ և այսպիսիներէն ըլլայ մէկը որ ա-  
պաշխարութեան խորհուրդք զղջմամբ կա-  
տարելով առ այն պատրաստ դտնուի ,  
այսու ամենայնիւ այնպիսի վիճակի մէջ

1 Գիրք 2 . Ա . Թիւ 62 :

Ըրջարով՝ յարմար չէ սուրբ աստիճան ըն-  
 դունելու . որուն համար հարկաւոր է նաև  
 բարի վարք , որ շատ ատենէ՝ ի վեր առա-  
 ջուց փորձուած ըլլայ . ապա թէ ոչ մա-  
 հուչափ մեղքէ ազատ չկրնար ըլլալ այն-  
 պիսին ծանր յանդգնութեանը համար որ  
 առանց աստուածային կոչման սուրբ սրշ-  
 տօն կ'ընդունի . ուստի սուրբն Աստուծոս  
 կ'ըսէ . « Ավ որ ինքը զինքը առաջ կրնետէ ,  
 և իր փառքը կը փնտտէ , Աստուծոյ շնորհ-  
 քը կը յափշտակէ . և ասոր համար չէ թէ  
 օրհնութիւն , հապա անէծք կ'ընդունի , » :  
 Բայ ասկէց նաև դատաւարտութեան  
 վտանգին մէջ ինքը զինքը կը ձգէ , ինչպէս  
 որ կը գրէ Ապոկալիպսիկոսը . « Ավ որ  
 գիտնալով թէ աստուածային կոչմունք  
 չունի (ինչպիսի է անիկայ որ աստիճան  
 մը կ'ընդունի ծանր մղութեան մը ունա-  
 կութիւն մը ունենալով) քահանայ ըլլայ ,  
 տարակոյս չիկայ որ իր փրկութիւնը վտան-  
 գի մէջ կը դնէ . » : Այն բանը Սոսիոս  
 ալ կ'ըսէ ու Աարգին խորհրդոյն վրայ խօ-  
 սելով կ'ըսէ թէ ձեռնադրիչոյն դրական  
 սրբութիւնը գրական սլատուիրան է .

« Թէպէտ և վարուց անարատութիւնը խորհրդոյն էական մասը չըլայ, բայց մեծապէս հարկաւոր է յաստուածային հրամանաց . . . : Այլ իրաւցրնէ սրբազան աստիճաններուն նուիրելոց յարմարութեանը վրայոք, այն սովորական կարգադրութիւնը չէ, որ ո և իցէ խորհրդոյ ընդունելութեան ատեն կը սլահանջուի, որպէս զի խորհրդական շնորհաց արգելք մը չըլայ, հասլա որովհետև ասով մարդս սուրբ աստիճանաց շնորհքէն զատ աւելի գերագոյն աստիճան կը բարձրանայ, անոր համար կը սլահանջուի ՚ի նմա և վարուց մաքրութիւն և սլայծառութիւն առաքինութեանց », : « Աոյն բանը կը գրեն նաև Թովմաս Սանբեզ, հայրն Հօղման ու Սալմագիկեանք : Աւստի ինչ որ գրեցի բանի մը վարդապետի առանձնական կարծիք չէ, հասլա հասարակաց վճիռ . և ամենուն հիմը սրբոյն Թովմայի վարդապետութիւնն է :

19 . Աւստի թէ որ ձեռնադրելոյն վրայ բարի վարուց փորձառութիւն չէ եղած, չէ թէ միայն ծանր կը մեղանչէ նոյն անձը որ Վարդը կ'ընդունի, հասլա նաև եպիս-

կոպտան ալ կը մեղանչէ , որ զինքը կը ձեռնադրէ : Այստառականահայրն ալ մեծասէս կը մեղանչէ որ այնպիսի ձեռնադրելոյն ունակացեալ մեղացը արձակում կու տայ , որն որ առանց իր բարի վարուցը երկայն փորձին , կ'ուզէ սուրբ աստիճան ընդունիլ : Նաև այն ծնողքը կը մեղանչեն , որ իրենց որդւոց գէշ վարքը գիտնալով , ետեէն կ'ինկնան որ սուրբ աստիճան ընդունին իրենց ընտանեացը օգնելու վախճանաւ : Այլեղեցական վիճակը Յիսուս Տաստատեց աշխարհականաց տըները հողալու համար , հասրա միայն Աստուծոյ փառքը անկեցնելու , ու հողւոց փրկութեանը վրայ հող ունենալու համար : Ամանք կը կարծեն թէ եկեղեցական վիճակը մէկ պաշտօն մըն է կամ աշխարհային արհեստ մը՝ փառք պատիւ կամ ժամանակաւոր մեծութիւն շահելու համար , բայց կը սխալին . և անոր համար երբոր ազգականները կու գան զեպիսկոպոսը ձանձրացնելու , որպէս զի տգէտ մը կամ զեղծ վարք ունեցող մը ձեռնադրէ , սխտճառ բերելով թէ տունը աղքատ է և ինչ ընե-



լիքնին շնն գիտեր, այս բանս սխտի և սխտիպար իրենց պատասխանէ. « Եւ որդեակ, եկեղեցական վիճակը տան աղքատութեան օգնելու համար չէ, հասրա եկեղեցւոյ պայծառութեանը համար է », : Աւատանկով պէտք է բոլորովին իրենց յոյսը կտրել տայ, և ամենևին իրենց ականջ չկախէ. վասն զի սովորաբար այսպիսի անարժան անձինք ետքը կորստեանս պատճառ կ'ըլլան, չէ թէ միայն իրենց հոգւոյն, այլ նաև իրենց ընտանեացը, և իրենց քաղքին ալ :

20. Աւ այն քահանայներուն գալով, որ իրենց տունը կը կենան, և իրենց ալ գականներն ալ կը փախագին որ ոչ այնչափ իրենց պաշտամանցը զլաղին, որչափ տունը եկամուտներով ու պատիւներով ճոխացրնեն, անոնց տալու պատասխանը սխտի այն ըլլայ ինչ որ Յիսուս պատասխանեց իր աստուածամօրը. « Եւթք գիտեր որ իմ հօրս տանը մէջ պէտք է որ կենամ », <sup>1</sup> : Արեմն ասանկ սխտի պա-

1 Ո՞չ գիտէիք եթէ 'ի տան հօր իմոյ պարտ է ինձ լինել : Ղուկ . Բ : 49 :

տասխանէ թէ ես քահանայ եմ, իմ պաշտօնս այն չէ որ տտակ դիզեմ ու պատիւ ստանալու ետեւէ ըլլամ, և ոչ ալ տանը մատակարարութեան հոգը տանիլ, հասլա առանձնացած կենալ, ու աղօթից, ուսման, և հոգւոց օգնելու փոյթ տանիլ: Շատ շատ թէ որ տունը օգնութեան խիստ կարօտութիւն ունենայ, ձեռքէն եկածին չափ պէտք է որ օգնէ, բայց առանց ձգելու իր գլխաւոր զբաղանքը, որ է զինքն ու զայլս սուրբ ընելու աշխատիլ:

21. Դարձեալ ուլ որ կ'ուզէ բոլորովին Աստուծոյ ըլլալ, աշխարհքիս համար մունքէն պէտք է որ հեռու կենայ: Քանիներ այս անիծեալ համարման համար Աստուծմէ կը հեռանան, ու քանիներ ալ կը կորանցնեն զԱստուած: ( ) Երկնակի համար՝ թէ որ իրենց մէկ սրակասութեանը վրայ խօսք մը լսեն, ինչէր չեն ըներ իրենք զիրենք արդարացընելու համար, ու հատացընել տալու որ ստութիւն ու զրպարտութիւն է խօսածնին: Իսկ թէ որ բարի բան մը ընելու ըլլան, ի՞նչ չեն ըներ ամենուն իմացընելու համար. կ'ուզեն որ բոլոր

աշխարհք գիտնայ, ու զերենք գովէ :  
 Սուրբերը ասանկ չեն ընեի . կ'ուզեն որ  
 բոլոր աշխարհք գիտնայ իրենց պակասու-  
 թիւնները, որպէս զի անանկ ողորմելի  
 սեպէ զերենք, ինչ որ իրենք զերենք կը սե-  
 պին . և ընդհակառակն թէ որ առաքինի  
 գործք մը ընեն, կ'ուզեն որ Աստուած  
 միայն գիտնայ զայն, որուն միայն կը փա-  
 փաքին հաճոյ ըլլալ . և ասոր համար է որ  
 այնչափ կը սիրեն առանձնական կեանքը՝  
 յիշելով Յիսուսի վարդապետութիւնները  
 որ ըսաւ թէ . “ Արբոր դուն ողորմութիւն  
 կ'ընես՝ ձախ ձեռքդ չգիտնայ ինչ որ աջդ  
 կ'ընէ ,”<sup>1</sup> : Աւ մեցերորդ տան մէջ . “ Տայց  
 դուն երբոր աղօթք կ'ընես՝ խուցդ մտիր ու  
 դուռդ գոցէ, և 'ի ծածուկ աղօթք ըրէ  
 Հօրդ ,”<sup>2</sup> :

1 Ա.ՅԼ դու յորժամ ողորմութիւն չառ-  
 նիցես, մի գիտասցէ ձախ քո զինչ գործէ  
 աջ քո : Մատթ . 2 . 3 :

2 Ա.ՅԼ դու յորժամ կայցես յաղօթս,  
 մուտ 'ի սենեակ քո, և փակեա զդուռս  
 քո, և կայ յաղօթս առ Հայր քո 'ի ծա-  
 ծուկ : Անդ . 6 :

22. Բայց ևս առաւել պէտք է որ մենք մեզմէ հրաժարինք, այսինքն կամքերնէս : Ով որ իր անձին կը յաղթէ, դիւրաւ ուրիշ ամէն դժուարութեանց կը յաղթէ : Սուրբն Ֆրանչիսկոս Քսաւերեան այս խրատս կու տար ամենուն . “ Դունքէ զի յաղթէ ,, : Յիսուս ալ ըսաւ . “ Ով որ ետէէս կ’ուզէ գալ՝ ուրանայ զինքը ,, <sup>1</sup> : Ահա այս է սուրբ ըլլալու համար ամէն ընելիքնիս որ մենք զմեզ ուրանանք, ու մեր կամացը չհետեւինք : “ Քու ցանկութեանցդ ետէէն մի երթար, ու կամքէդ հրաժարէ ,, <sup>2</sup> : Մարդուս Աստուծմէ ընդունած սպարդէներուն մեծագոյնն այն է, կ’ըսէր սուրբն Ֆրանչիսկոս Ասիզացի, որ կամքը ուրանալով յաղթէ իր անձին : Սուրբն Բեռնարդոս կը գրէ որ եթէ ամէն մարդիկ իրենց կամացը դէմ ելլէին, մէկը չէր ըլլար

1 Եթէ որ կամիցի զկնի իմ գալ՝ ուրասցի զանձն : Մատթ . Ժ. 2 . 24 :

2 Զհետ ցանկութեանց քոց մի դնար, և ՚ի կամաց քոց հրաժարեաց : Սիր . Ժ. Լ . 30 . ըստ Լտ :

որ դատապարտուէր . “ Դադրի կամքը ,  
 կ'ըսէր , ու ալ դժոխք չմնար , , : Այն  
 սուրբը կը գրէ որ կամքդ ինչուան քու  
 բարի գործքերդ ալ քեզի համար սրակա-  
 սաւոր կ'ընէ . “ Անծ չարիք է , կ'ըսէ ,  
 մարդուն կամքը , որ անանկ կ'ընէ որ իրեն  
 բարի գործքերը իրեն համար բարի չը-  
 լան , , : Ինչպէս թէ որ ասպաշխարող մը  
 ընդդէմ կամաց հողևոր հօրը ուզենայ  
 մահացուցմունք մը , ծոմասպահութիւն մը ,  
 ձաղկանք մը ընել , այն մահացուցմունքը՝  
 որ կամքը կատարելու համար կ'ըլլայ , կը  
 դառնայ սրակսութիւն կ'ըլլայ : Բայց վնյ  
 անոր որ իր կամացը գերի է . որովհետև  
 շատ բանի կը փափագի , ու չի կրնար ձեռք  
 ձգել , ու ընդհակառակն շուզեր քաշել շատ  
 ուրիշ անհաճոյ բաներ , որ բռնադատեալ  
 պիտի քաշէ . “ Ինչէն է այն պատերազմնե-  
 ըր , ու ինչէն է ձեր մէջը այն կռիւները .  
 ձեր այդ ցանկութիւններէն չէ , որ ձեր  
 մարմնոյն մէջ զօրացած են : Ար փափա-  
 քիք , ու չունիք , , <sup>1</sup> : Առաջին պատերազ-

<sup>1</sup> Ուստի՞ պատերազմունք , և ուստի՞

մը կու գայ մեզի զգայական հաճոյից ա-  
խորժակէն: Ա հրցրնենք առիժը, մահայը  
նենք աչուրնիս, Աստուծոյ յանձնենք զմեզ,  
և ահա պատերազմը կը դադրի: Արրորդ  
պատերազմը կու գայ մեզի ընչից ցանկու-  
թենէն. ջանանք աղքատութիւնը սիրել,  
և ահա պատերազմը կը դադրի: Արրորդ  
պատերազմը կու գայ մեզի փառասիրու-  
թենէ. խոնարհութիւնն ու քաշուած կեանք  
սիրենք, և ահա պատերազմը կը դադրի:  
Չորրորդ ու աւելի մնասակար պատերազ-  
մը կու գայ մեզի մեր կամքէն. ամէն հան-  
դիպած բանի մէջ հպատակիմք Աստուծոյ  
կամայը, և ահա պատերազմը կը դա-  
դրի: Ար գրէ սուրբն Ռեոնարդոս՝ որ  
երբ մարդ մը խռոված տեսնենք՝ իր խռ-  
վելու պատճառը ուրիշ բան չէ՝ բայց  
եթէ իր կամքը չկրնալ կատարելը: « Ին-  
չէն է խռովութիւնը, կ'ըսէ սուրբը,  
եթէ ոչ վասն զի կամքերնուս կը հետև-

կուիւք ՚ի ձեզ. ո՞չ յայդպիսի ցանկութեց  
ձերոց որ զօրացեալ են յանդամս ձեր:  
Յանկայք, և ոչ ունիք: Յակ. Դ. 1. 2:

ինք ,, : Այս բանիս վրայ Յիսուս անգամ մը գանգատ ըրաւ սրբուհի Մարիամ Մագդաղենացի Քայեանին՝ ու ըսաւ .  
 “ Ոմանք իմ հոգիս կ'ուզեն՝ բայց իրենց հաճոյիցը համեմատ , անոր համար ալ չեն կրնար ընդունիլ , , :

23 . Ուրեմն Աստուծոյ ուզածին պէս՝ չէ ինչպէս որ մենք կ'ուզենք՝ պիտի սիրենք զԱստուած : Աստուած կ'ուզէ որ հոգին ամէն բանէ մերկացեալ ըլլայ , որպէս զի իրեն հետ կարենայ միացնել ու իր աստուածային սիրովը լի ընել : Ասանկ կը գրէ սրբուհին թերեզա . “ Միաւորութեան աղօթքը ինձի ուրիշ բան չերենար , բայց եթէ բոլորովին մեռնիլ մը ամէն երկրային բաներու՝ զԱստուած միայն վայելէ լու համար : Այս ստոյգ է՝ որ որչափ արարածներէ դատարկանանք՝ Աստուծոյ սիրոյն համար հրաժարելով՝ այնչափ աւելի Աստուած իրմով զմեզ կը լեցնէ , և աւելի կը միանանք իրեն հետ , , : Աստ հոգևոր անձինք կ'ուզեն Աստուծոյ միաւորութեան հասնիլ , բայց չեն ուզիր ոչ այն ձախորդութիւնները , զորոնք Աստուած իրենց կը

խաբէ, ոչ այն հիւանդութիւնները, որ  
 զերենք կը նեղեն, ոչ քաշած աղքատու-  
 թիւննին, և ոչ ալ կրած նախատինքնին .  
 բայց չհստատակելով Աստուծոյ կամայր ոչ  
 երբէք կատարելապէս Աստուծոյ հետ կը  
 միանան : Ասնք ինչ որ կ'ըսէր սրբուհին  
 Կատարինէ Գննուացի . «Աստուծոյ հետ  
 միաւորութեան հասնելու համար՝ հարկա-  
 ւոր են այն ձախորդութիւնները, զորոնք  
 որ Աստուած մեզի կը խաբէ . որովհետեւ  
 անոնցմով մեր ամէն ներքին ու արտաքին  
 թիւր շարժմունքները կ'ուզէ վերցընել : Աւ-  
 անոր համար ամէն արհամարհանք, հի-  
 ւանդութիւն, աղքատութիւն, փորձու-  
 թիւն, ու այլ ուրիշ ձախորդ բաներ՝ ա-  
 մէնն ալ մեզի շատ հարկաւոր են, որպէս զի  
 սրտերազմինք, ու յաղթութիւններով ա-  
 նանկ մը նուաճուին մեր թիւր շարժմունք-  
 ները՝ որ ալ չզգանք . մանաւանդ ինչուան  
 որ նեղութիւնները մեզի՝ ոչ թէ դառն՝  
 հասկա Աստուծոյ համար անոյշ՝ չերևնան,  
 ոչ երբէք աստուածային միաւորութեան  
 կրնանք հասնիլ, » :

24 . Վաւելցընեմ հոս ինչ կը թու թիւն



որ սուրբն Յովհաննէս խաչեան կը սորվեցրնէ . կ'ըսէ սուրբը թէ կատարեալ միաւորութեան համար “ Հարկաւոր է զգայութեանց ու ախորժակաց կատարեալ մահացուցմունք : Օգայութեանց գալով՝ ինչ հաճոյք որ առջևնիս գայ՝ թէ որ Աստուծոյ փառացը համար միայն չէ , Յիսուսի սիրովը մէկէն 'ի մէկ մերժել . զոր օրինակ թէ որ անանկ բաներ տեսնալու կամ լսելու փափագ մը գայ որ մասնաւոր կերպով մը առ Աստուած չեն ուղղեր զմեզ՝ զանց ընելու է : Իսկ ախորժակաց մահացուցմունք որ ըսինք՝ ջանալու է որ մարդ միշտ յոռեզոյն աւելի անհաճոյ կամ նուաստագոյն բանին յօժարութիւն ունենայ , և ուրիշ բանի չփափագի , բայց եթէ ներութիւն կրելու և արհամարհուելու ,, : Մէկ խօսքով՝ ուր որ ճշմարտապէս զՅիսուս կը սիրէ , ամէն երկրաւոր բարեաց ցանկութիւնը կը մարէ , ու կը ջանայ ամէն բանէ մերկանալ՝ որպէս զի միայն Յիսուսի հետ միացեալ մնայ : Իր ամէն փափագները առ Յիսուս ուղղուած են , զՅիսուս միշտ կը մտածէ , միշտ առ Յիսուս կը հառաչէ ու ամէն

տեղ՝ ամէն տտեն՝ ամէն առթի մէջ՝ կը ջա-  
նայ միայն Յիսուսի հաճոյ ըլլալ : Բայց  
աս բանիս հասնելու համար պէտք է ան-  
դադար աշխատիլ այն ամէն ցանկութենէ  
սիրտը դատարկացնելու , որ Աստուծոյ  
համար չէ : Ար հարցընեմ թէ ինչ բան  
հարկաւոր է որ հոգի մը բոլորովին Աս-  
տուծոյ տայ ինքզինքը : Պէտք է նախ՝  
Աստուծոյ անհաճոյ եղած ամէն բաներէն  
փախչիլ ու այն բանը ընել որն որ աւելի  
հաճոյ է իրեն : Արկրորդ՝ պատրաստ սրը-  
տիւ ընդունիլ այն ամէն բան՝ որ իրեն  
ձեռքէն կու գայ մեզի՝ որչափ որ խիստ ու  
անհաճոյ երևայ մեր բնութեանը : Արկրորդ՝  
ամէն բանի մէջ Աստուծոյ կամքը վեր սե-  
պիլ քան զմեր կամքը , այս է ահա բոլոր-  
ովին Աստուծոյ ըլլալը :

ԻՂԶԲ ԵՒ ՊԱՂԱՏԱՆԻՔ

Ահ Աստուած իմ , և ամենայն ինչ ,  
կ'իմանամ որ գուն՝ իմ ասերախտու-  
թեանցս ու քու ծառայութեանդ մէջ ը-  
րած անհոգութեանցս չինացելով՝ դար-

ձեալ չես դադրիր զիս քու սիրոյդ կան-  
 չելու : Ահաւասիկ եմ, ալ չեմ ուզեր դէմ  
 կենալ քեզի : Ամէն բան թողուլ կ'ուզեմ,  
 որ բողբոլիս քուկինդ ըլլամ : Ալ ինծի  
 համար ասորիլ չեմ ուզեր : Օ՛հա շատ կեր-  
 սով բռնադատեցիր զքեզ սիրելու : Հոգիս  
 բորբոքած է քու սիրովդ, Յիսուս իմ, ու  
 քեզի կը հառաչէ : Ի՞նչպէս ուրիշ բան  
 կրնամ սիրել, տեսնելով որ զիս փրկելու  
 համար խաչին վրայ մեռար : Ի՞նչպէս  
 կարելի է որ զքեզ չարչարանօք հալած ու  
 մեռած տեսնեմ ու չսիրեմ զքեզ իմ ամէն  
 սրտովս . այո, կը սիրեմ զքեզ բոլոր հո-  
 գւովս, և ուրիշ բանի չեմ փափաքիր՝ բայց  
 եթէ զքեզ սիրել, աս կենացս ու բոլոր յա-  
 լիտենականութեան մէջ : Աէր իմ, յոյս  
 իմ, զօրութիւն իմ և մխիթարութիւն իմ,  
 տուր ինծի ուժ, որպէս զի քեզի հաւատա-  
 ըիմ մնամ : Այոս տուր ինծի, ու ճանչ-  
 ցուր թէ ի՞նչ բանէ պիտի հրաժարիմ . և  
 ուժ տուր ինծի, վասն զի յամենայնի  
 կ'ուզեմ քեզի հնազանդ ըլլալ : Ա՛լ սէր  
 հոգւոյս, ես զիս քեզի կ'ընծայեմ, ու բոլո-  
 բովն քեզի կու տամ . որովհետև կը փա-

փաբիս ինծի հետ միանալ, որպէս զի  
 բոլորովն միացընես զիս ալ քեզի հետ,  
 Աստուած իմ, և ամենայն ինչ: Ա՛հ, եկու,  
 Յիսուս իմ, բոլորովն զիս ժառանգէ, ու  
 իմ ամէն խորհուրդներս, իմ ամէն ցան-  
 կուծիւններս քեզի քաշէ: Աս կը հրաժա-  
 րիմ ամէն իմ հաճոյքներէս, իմ ամէն մխի-  
 թարովծիւններէս ու ամէն արարածական  
 բաներէ. դուն միայն կը բաւես ինծի:  
 Հնորհք տուր ինծի որ քեզմէ զատ ուրիշ  
 բան չի մտածեմ, քեզմէ զատ ուրիշ բանի  
 չփափագիմ, քեզմէ զատ ուրիշ բան չը-  
 վնտոեմ, սիրելիդ իմ, ու իմ մի միայն  
 բարիս:

Մայր Աստուծոյ Մարիամ, առ ինծի  
 համար սուրբ յարատեւութեան Հնորհք:

## Գ Լ ՈՒ Խ Ժ Բ .

Ս Է Բ Ո Ձ Գ Բ Գ Ռ Ի .

Ով որ կը սիրէ զՅիսուս , ոչ կրթէք կը  
բարկանայ ընկերին :

1 . Չախորդ բաներու մէջ Հնդանա-  
լու առաքինութիւնը հեղութեան դու-  
արըն է : Այս հեղութեան ներգործու-  
թեանցը վրայ արդէն երկայն բարակ խո-  
սեցանք առջի գլուխներուն մէջ . բայց որով  
հետեւ այս անանկ առաքինութիւն մըն է  
որ շարունակ 'ի գործ պիտի դնէ ով որ  
մարդկանց մէջ կեանքը կ'անցընէ , հոս ալ  
քանի մը ուրիշ բաներ ալ զուրցենք , որ ա-  
ւելի մասնաւորի կ'իջնան , ու աւելի օգտա-  
կար են 'ի գործ դնելու :

2 . Խոնարհութիւնն ու հեղութիւնը  
Յիսուսի սիրած առաքինութիւններն եղան ,  
անոր համար ըսաւ իր աշակերտներուն , որ  
“ Սորվեցէք ինձմէ , ինչպէս հեղ ու խո-

նարհ սիրտ ունիմ ,<sup>1</sup> : Փրկիչն մեր գառն  
 որ կոչուեցաւ , ըստ այնմ “ Ահա գառն Աս-  
 տուծոյ ,<sup>2</sup> , մէյ մը անոր համար է որ մեր  
 մեղաց քառութեանը համար խաչին վրայ  
 պիտի զոհուեր . մէյ մ’ ալ հեղութեանը հա-  
 մար , զորն որ բոլոր իր կենացը մէջ ցրցուց , և  
 մասնաւորապէս չարչարանաց ատենը : Ար-  
 բոր Այախափայի տան մէջ ասպտակը կերաւ  
 այն ծառայէն որ միանգամայն զինքը յան-  
 դուզն կանչեց ըսելով . “ Ատանկ կերպ պա-  
 տասխան կու տաս քահանայապետին , ,  
 Յիսուս աս խօսքս միայն զուրցից . “ Տէ-  
 որ գէշ խօսեցայ՝ գեշութիւնը ցուցուր .  
 իսկ թէ որ աղէկ՝ ինչո՞ւ կը վարնես ին-  
 ծի ,<sup>3</sup> : Աւ աս հեղութիւնը ինչուան ՚ի  
 մահ շարունակեց . խաչին վրայ կեցած ա-  
 տենը՝ երբոր ամէն մարդիկ կը ծաղրէին ու  
 կը հայհոյէին զինքը՝ ինքը ուրիշ բան չէր

1 Ուսարուք յինէն զի հեզ եմ և խո-  
 նարհ սրտիւ : Մատթ . ԺԱ . 29 :

2 Յովհ . Ա . 29 :

3 Եթէ չար ինչ խօսեցայ , վկայեա  
 վան չարին . իսկ եթէ բարի , ընդէր  
 հարկանես զիս : Յովհ . ԺԲ . 23 :

ընեք բայց եթէ կ'աղաչէր յաւիտենական  
 Հօրը որ թողութիւն տայ անոնց . “ Հայր  
 իմ, ներէ ասոնց , վասն զի ըրածնին չին  
 գիտեր ,”<sup>1</sup> :

3 . Ո՛վ, ինչպէս սիրելի են Յիսուսի  
 Հեղ սրտերը, որ նախատինք, ծաղը, զրպար  
 տութիւն , հալածանք՝ նաև ծեծ ու վէրք  
 առած ատեննին չին սրդողիք զերենք թըշ  
 նամանողին կամ ծեծողին : Հեզերուն  
 աղօթքը Աստուծոյ միշտ հաճոյական է<sup>2</sup> ,  
 այս ինքն թէ՛ միշտ կը կատարուի : Հե  
 զերուն մասնաւոր կերպով արքայութիւնը  
 խոստացուած է :<sup>3</sup> Հայրն Ալլարէզ կ'ըսէր  
 որ արքայութիւնը արհամարհելոց ու նա  
 խատելոց հայրենիքն է . վասն զի անոնց  
 պահուած է այն երկնային թագաւորու  
 թեան ժառանգութիւնը . չէ հպարտներուն  
 որ պատիւ ու համարմունք ունեցան աշ

1 Հայր , թող դոցա զի ոչ գիտեն զինչ  
 գործեն : Ղուկ . ԻԳ . 34 :

2 Ընդունելի եղեն քեզ յամենայն  
 ժամ աղաչանք հեզոց : Յուդ . Թ . 16 :

3 Երանի հեզոց , զի նոքա ժառան  
 գեացեն զերկիր : Մատթ . Ե . 4 :

խարհքիս մէջ : Դաւիթ կ'ըսէ որ հեզերը ոչ միայն յաւիտենական երանութիւնը ձեռք պիտի ձգեն , հապա նաև այս աշխարհքիս մէջ ալ երկար խաղաղութիւն մը պիտի վայեն <sup>1</sup> : Այո , վասն զի սուրբերը ռիս չեն պահեր իրենց հետ խստութեամբ վարուողներուն , հապա առջինէն աւելի կը սիրեն . ու Աստուած իրենց համբերութիւնը վարձատրելու համար՝ ներքին խաղաղութիւնսին կ'աւելցնէ : Ա'ըսէր սրբուհին թերեզա . “ Օչիս բամբաստողներուն վրայ կարծես որ նոր սէր մը կ'ունենամ ” : Ա'նոր համար է որ Սակրա Րուողա ըսուած ատեանը ասանկ զրեց սրբուհոյն վրայ . “ Ա'նիրաւութիւնները իրեն սիրոյ նիւթ կու տային ” . աւելի սիրելով զանիկայ որ զինքը աւելի կը նեղէր : Ասանկ հեզութիւն մարդ չկըրնար ունենալ՝ բայց եթէ այն որ մեծ խոնարհութեան շնորհք ու իրեն վրայ նուաստ

1 Այլ որ հեզքն են նորա ժառանգեացեն զերկիր , և փափկասցին 'ի բազում խաղաղութեան իւրեանց : Սաղմ . Լ, 2 . 11 :



Համարմունք ունի, որով ամենայն արհա-  
մարհանաց արժանի կը սեպէ զինքը . և  
ընդհակառակն ասոր Համար հպարտները  
միշտ բարկացող են ու վրէժխնդիր, վասն  
զի վրանին համարմունք ունին, ու ամե-  
նայն պատուոյ արժանի կը սեպեն իրենք  
զիրենք :

4 . “ Արանի՛ այն մեռելոցը որ յԱս-  
տուած մեռան ,<sup>1</sup> : Արեմն պէտք է յԱս-  
տուած մեռնիլ երանելի ըլլալու , ու այս  
աշխարհքէս երկնաւոր երանութիւնը վայե-  
լիլ սկսելու համար . կ'ուզեմ ըսել այն երա-  
նութիւնը , որ երկինք երթալէն առաջ  
կրնանք ունենալ . որ իրաւ շատ վար է եր-  
կնքի երանութենէն , բայց աս աշխարհքիս  
զգայական հաճոյքներուն ամենէն ալ դե-  
րազանց է : “ Աստուծոյ խաղաղութիւնը որ  
ամէն մտքէ վեր է՝ ձեր սրտին ու մտքին  
մէջ տիրէ ,<sup>2</sup> , ասանկ գրեց Առաքեալը իր

1 Երանի մեռելոցն որք 'ի տէր ննջե-  
ցին : Յայտն . ԺԴ . 13 :

2 Եւ խաղաղութիւնն Աստուծոյ որ 'ի  
վեր է քան զամենայն միտս , պահեսցէ  
զսիրտս ձեր և զմիտս : Փիլիպ . Գ . 7 :

աշկերաններուն : Բայց որպէս զի նախա-  
տանայ ու զըսարտութեանց մէջ ալ աս  
խաղաղութիւնը ձեռք կարենանք ձգել,  
պէտք է Ղստուած մեռեալ ըլլալ, մեռ-  
նողը որչափ որ նախատուի ու կոխուի ու-  
րիշներէն՝ ամենեւին չնեղանար . ասանկ ալ  
հեղը մեռածի պէս, ալ ոչ կը տեսնէ, ոչ  
կը լսէ, և իրեն եղած արհամարհանաց  
կը համբերէ : Այլ որ սրտանց կը սիրէ  
զՅիսուս, անտարակոյս այս աստիճանին կը  
հասնի . որովհետեւ բոլորովին Յիսուսի  
կամայը միաբանելով՝ ինչպէս յաջող բա-  
ները՝ ասանկ ալ ձախորդները, ինչպէս  
Թշնամանքները՝ ասանկ ալ անուշ խօսքերը,  
ամէնն ալ նոյն խաղաղութեամբ ու անվեր-  
դով հոգևով կ'ընդունի : Ըսանկ կ'ընէր  
Մարքեալը, որով ըսաւ . « Մեր ամէն  
նեղութեանց մէջը ուրախութիւնս կ'աւել-  
նայ »<sup>1</sup> : Արանի՛ անոր որ այս աստիճան  
առաքինութեան կը հասնի . կը վայլէ այն

<sup>1</sup> Առաւելեալ եմ ուրախութեամբ յա-  
մենայն նեղութիւնս մեր : Բ . Կորնթ .  
Է . 4 :

պիսին անընդհատ խաղաղութիւն մը , որ այս աշխարհքիս ամէն բարիքներէն վեր է : Ա՛րտէր սուրբն Ֆրանչիսկոս Սալեղեան . “ Ի՞նչ կ’արժէ բոլոր աշխարհքս սրտի խաղաղութեանը քով , : Աւ իրաւ որ աշխարհքիս ամէն հարստութիւններն ու ամէն պատիւները ի՛նչ բանի կը ծառայեն անոր որ անհանդարտ կ’ապրի , ու սրտին մէջ խաղաղութիւն չունի :

Ծ . Վ երջապէս որպէս զի միշտ Յիսուսի հետ միացած մնանք , պէտք է որ ամէն բան հանդարտութեամբ ընենք՝ առանց խռովելու թէ որ ձախորդութիւն մը դիմացնիս ելէ . “ Աւ ոչ դեանաշարժի մէջ է Աստուած ,<sup>1</sup> : Աստուած խռովեալ սրտերու մէջ չընակիր : Ա սենք թէ ի՛նչ գեղեցիկ խրատներ կու տայ մեզի այս նիւթիս վրայ հեղութեան վարժապետը սուրբն Ֆրանչիսկոս Սալեղեան . “ Ամենեւին մի բարկանար , և ոչ ալ որ և իցէ պատճառանքով բարկութեան դուռ բանաս , որովհետեւ

<sup>1</sup> Աւ ոչ ՚ի շարժմանն Տէր : Գ . Թագ . Ժ . Թ . 11 :

մէյ մ'որ մեր ներսը մտնէ՝ ալ ձեռու ընիս  
 չէ՝ որ ուզած աստեննիս զանիկայ վերնտնէք,  
 և կամ չափաւորենք: Ասոր դեղերն են նախ՝  
 մէկէն մէկ դի ընել՝ միտքը ուրիշ տեղ դար-  
 ձնելով, և ոչ խօսք մը բերնէն հանել:  
 Արկորդ՝ Առաքելոց նման՝ որ երբ ծովը  
 մրկակալց տեսան, դիմեցին առ Աստուած,  
 որ միայն կրնար սրտի խաղաղութիւն  
 տալ: Արկորդ՝ երբոր տեսնես որ բարկու-  
 թիւնը քու տկարութեամբդ մտացդ վրայ  
 սկսեր է տիրել, մէկէն դուն քեզի ուժ բրէ-  
 դարձեալ խաղաղելու. և ետքը ջանա որ  
 խոնարհ ու անոյշ կերպեր բանեցընես անոր՝  
 որուն որ կ'իմանաս թէ սրգողեր ես. բայց  
 աս ամէն բան անուշութեամբ, ու առանց  
 բռնութեան սէտք է ընել. որովհետև շատ  
 հարկաւոր բան է վէրքը չզայրացընելը „:  
 Աւ այս բանիս վրայօք կ'ըսէր սուրբը, որ  
 ինքը բոլոր իր կենացը մէջ երկու կիւք  
 յաղթելու շատ աշխատեր է, որոնք որ իրեն  
 վրայ աւելի տիրած են եղեր, այսինքն բար-  
 կութեան ու սիրոյ կը քերը. բարկութիւնը  
 սանձելու համար՝ կը խոստովանի որ տաս-  
 ուերկու տարի աշխատեր է՝ որպէս զի կա-

րենայ նուաճել . իսկ սիրոյ կրից գալով՝ ջանացեր է առարկան փոխել՝ արհամարհելով արարածները , ու իր ամէն իղձերը առ Աստուած դարձրնելով : Ու ասանկով այս սուրբը անանկ ներքին խաղաղութիւն մը ստացաւ , որ դրսուանց ալ կը ցուցնէր՝ գրեթէ միշտ զուարթագէմ՝ ու ծիծաղաշարժ զինքը բռնելով :

6 . “ Չեր անհանդարտութեանց պատճառը ինչ է , եթէ ոչ ձեր ցանկութիւնները , ” <sup>1</sup> : Թէ որ դիպուածով մը մէկուն բարկութիւնը ելլայ , այն բարկութիւնը թէ որ գործքով կամ գոնէ խօսքով դուրս տայ , կարծէ թէ թեթևութիւն ու խաղաղութիւն կը գտնէ . բայց չէ՛ կը խաբուի . վասն զի բարկութիւնը դուրս տալէն ետև՝ առջինէն շատ աւելի խռովութեան մէջ կ'ինկնայ : Ով որ կ'ուզէ միշտ խաղաղութեան մէջ մնալ , պիտի զգուշանայ խռոված կենայէն : Այլ երբոր կ'իմանայ որ նեղացած է , պիտի ջանայ որ մէկէն

1 Ուստի՞ պատերազմուէք . ո՞չ 'ի ցանկութեանց ձերոց : Յակ . Դ . 1 . 2 :

'ի մէկ վնասէ ու թող չտայ որ անօլ  
 անկողին մանէ , պիտի միտքը ուրիշ բանի  
 դարձնէ՝ զիրք մը կարգալով , ջերմե-  
 ոանդական երգ մը երգելով , կամ բա-  
 րեկամի մը հետ զուարճալի բաներու վրայ  
 խօսակցելով : Հոգին սուրբ կ'ըսէ . « Բար-  
 կութիւնը անմիտ մարդուն ծոցը կը հանդ-  
 չի »<sup>1</sup> : Բարկութիւնը երկայն ատեն ան-  
 մտաց սրտին մէջ կը բնակի , որ զՅիսուս  
 քիչ կը սիրեն . իսկ զՅիսուս սիրողներուն  
 սրտին մէջ յանկարծ թէ որ ծածուկ կեր-  
 պով մը մանէ՝ մէկէն 'ի մէկ կը վնասեն ,  
 ու հոն չկրնար կենալ : Հոգի մը որ սրտանց  
 կը սիրէ զՅիսուս , ոչ երբէք նեղացած  
 կը տեսնուի , որովհետեւ Աստուծոյ ուղա-  
 ծէն զատ ուրիշ բան չուզելով՝ ուզածը  
 քովն է միշտ , անոր համար միշտ խա-  
 ղաղ , ու միշտ անխփփօխ է : Աստուա-  
 ծային կամքը ամէն իրեն հանդիսած ձա-  
 խորդութեանց մէջ զինքը կը զուարթայը-  
 նէ . և ասկից է որ ինքը ամենուն հետ  
 ընդհանուր հեղութեամբ կը վարուի : Բայց

այս հեղուծիւնը մարդ չկրնար ձեռք ձգել՝  
մինչև որ Յիսուսի վրայ մեծ սէր չունենայ :  
Իբրք ալ կը տեսնուի որ մենք ուրիշներուն  
հետ այնչափ հեղ ու անոյշ չենք ըլլար  
եթէ ոչ այն ատեն , երբոր մեծագոյն սէր  
մը կը զգանք դէպ 'ի Յիսուս :

7 . Բայց որովհետև միշտ չենք զգար  
այս սէրը՝ պէտք է որ մտաւորական ա-  
ղօթքի մէջ սլատրաստուինք համբերելու  
փորձութեանց որ կրնան մեզի հանդիպիլ :  
Ասանկ ըրին սուրբերը , ու ասով սլատ-  
րաստ գտնուեցան արհամարհանք , ծեծ ու  
վերք համբերութեամբ ու հեղուծեամբ ըն-  
դունելու : Թէ որ առաջուց շատ անգամ՝  
այդ սլատրաստութիւնը տեսած չըլլանք ,  
երբոր մեր ընկերէն նախատուինք , դժուա-  
րաւ կրնանք պէտք եղածը ընել բարկութե-  
նէն չյաղթուելու համար . այն ատեն կիրքը  
մեզի կը ցուցնէ թէ խելքն այն է՝ որ  
յանդգնութեամբ մեզի հետ անիրաւաբար  
վարուողին յանդգնութիւնը նուաճենք .  
բայց սուրբն Յովհան Նսկեբերան կը դրէ  
թէ ընկերին սրտին մէջ բռնկած կրակը՝ բը-  
ռնկած սլատասխանով չմարուիր , հա-

սրա մանաւանդ թէ առելի կը բորնկի :  
 “ Արակով կրակ չմարուիր ,”<sup>1</sup> : Արիւն ըսէ  
 մէկը . բայց խելք չէ յանդուզն մարդու  
 մը հետ մարդաւարութիւն ու անուշութիւն  
 բանեցընել , որ առանց իրաւանց քեզի կը  
 դարչի : Բայց սուրբն Յիւրանչիսկոս Սալե-  
 դեան կը պատասխանէ . “ Ոչ միայն խել-  
 քով , հապա խելքի դէմ ալ հեղութիւն  
 պէտք է բանեցընել ,” :

8 . Ընն առնն պէտք է ջանալ անոյշ  
 խօսքով մը պատասխանել , և այս է կրակը  
 մարելու ճամբան : “ Ասկուղ պատասխա-  
 նը բարկութիւնը կ'ինջեցընէ ,”<sup>2</sup> : Բայց թէ  
 որ միտքը խռոված ըլլայ , լաւագոյնն այն  
 է որ մարդ լուի : Արդրէ սուրբն Բեռ-  
 նարդոս թէ “ Բարկութենէ խռոված աչ-  
 քը՝ շիտակ չտեսներ ,” : Արբոր աչքը բար-  
 կութեամբ խաւարած է՝ ալ չտեսներ ան-  
 իրաւ բանը . կիւքը քող մըն է , որ աչքեր-  
 նուա առջև կը դրուի , ու ալ թող չիտար

1 Ոսկեք . Ճառ ԱԸ 'ի Ծնունդս :

2 Պատասխանի ողորք գարձուցանէ  
 զսրամտութիւն : Առակ . ԵԵ . 1 :



մեզի որոշել իրաւունքը անիրաւութենէն . որոնց համար սուրբ Ֆրանչիսկոս Սալեզեանին իր լեզուին հետ դրած դաշինքը գնելու է . “ Եզուիս հետ դաշինք գրեր եմ, կ'ըսէ, որ սիրտս երբոր խառնուած ըլլայ՝ չխօսի ” :

9 . Բայց երբեմն կ'երևնայ թէ հարկաւոր է դառն խօսքերով անզգամը սանձելը : Դաւիթ ալ ըսաւ . “ Բարկացէք, առանց մեղանչելու ”<sup>1</sup> : Արեւմն պատշաճ է երբեմն բարկանայը, միայն թէ առանց մեղաց ըլլայ : Բայց դժուարութիւնը հոս է . ըստ ինքեան խօսելով՝ երբեմն հարկաւոր կ'երևնայ խստութեամբ խօսիլը կամ սպառտասխանելը ոմանց՝ խելուրնին գլուխնին ժողովել տալու համար . բայց գործքի մէջ շատ դժուար է որ այս բանս առանց մեղաց ըլլայ . ուստի ասպահով ճամբան այն է որ միշտ մարդ կակուղ խրատ կամ անուշութեամբ սպատասխան մը տայ, ու արթուն կենայ որ ամենեւին չսրդողի : Կ'ը

1 Բարկանայք և մի մեղանչէք : Սաղմ. Դ . 5 :

սէր սուրբն Յրանչիակոս Սալեղեան . “ Ամենին չէ եղած որ ես սրբողած ըլլամ , ու ետքը զզջացած չըլլամ , ” : Բայց երբոր տեսնանք որ դեռ վրանիս տաքութիւն կայ , ինչպէս որ վերն ըսի , աւելի ապահով ճամբան ընէն է . խրատն ող կամ պատասխանն ալ աւելի յարմար ժամանակի պահելով երբոր սիրտը ալ չծխար :

10 . Մասնաւորապէս այս հեղութիւնը պիտի բանեցընենք , երբոր մեր մեծաւորներէն կամ բարեկամներէն յանդիմանութիւն ընենք : Սուրբն Յրանչիակոս Սալեղեան կը գրէ թէ “ Յանդիմանութիւն ակտորժիլը՝ կ'իմացընէ որ մարդ կը սիրէ այն պակասութեանց դէմ եղած առաքինութիւնները , որոնց վրայ յանդիմանութիւն կը ըսէ , ու անոր համար ասիկայ մեծ նշան մըն է որ կատարելութեան մէջ կը զարգանայ այն պիտին , ” : Դարձեալ պէտք է որ մենք մեր վրայ ալ հեղութիւն բանեցընենք : Սատանան մեզի անանկ կը ցուցընէ որ գովելի բան է մենք մեզի բարկանալը՝ երբոր պակասութիւն մը ընենք . բայց չէ , ասիկայ թշնամւոյն գործքն է , որ կը ջանայ զմեզ

անհանդարտ բռնելու, որպէս զի անկարող ըլլանք բարի գործք մը ընել: Արևեր սուրբն Վրանչիսկոս Սալեղեան. «Աղէկ գիտցիր որ այն ամէն խորհուրդ որ մեզի անհանգստութիւն կու տայ, Աստուծոյն է, որ տէրն է խաղաղութեան. հասկամ սատանայէն կամ անձնասիրութենէ կամ մեր վրայ ունեցած համարմունքէն առաջ կու գայ: Այս իրեք աղբիւրներն են, որոնցմէ կը ծնանին մեր ամէն շիտթութիւնները: Այլ անոր համար երբոր անանկ խորհուրդներ դան որ զմեզ անհանդարտ կ'ընեն, մէկէն 'ի մէկ պէտք է վճնտել ու արհամարհել», :

11. Դարձեալ շատ հարկաւոր է մեզի հեղութիւնը՝ երբոր յանդիմանութիւն մը պիտի տանք ուրիշներուն: Խիստ նախանձաւորութեամբ եղած յանդիմանութիւնը շատ անգամ աւելի վնաս կ'ընէ, քան թէ օգուտ, մասնաւորապէս երբոր անիկայ՝ որ պիտի յանդիմանենք, խոտլած ըլլայ. այն ատեն պէտք է թողուլ յանդիմանութիւնը ու սպասել ինչուան որ անոր բարկութեան բոցը մարի: Սմանապէս պէտք է որ

զգուշանալք զուրիշը յանդիմանելէն, երբոր նեղացած ենք. որովհետև այն ատեն ազգարարութիւնը միշտ դառնութեամբ 'ի գործ կը դրուի, ու յանցաւորը տեսնելով որ այսպիսի կերպով զինքը կը յանդիմանենք, շատ փոյթ չընենք ազգարարութեանը՝ կիրքէ առաջ եկած սեպելով: Այս մեր ընկերոջը բարւոյն կողմանէ հարկաւոր է, բայց մեր շահուն նայելով՝ ցույրնենք որ կը սիրենք զՅիսուս Քրիստոս՝ խաղաղութեամբ և ուրախութեամբ տանելով նեղութեանց, թշնամանաց ու արհամարհանաց:

### ԻՂԶՔ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Ո՛վ Յիսուս իմ, որ արհամարհանօք լցուեցար, ո՛վ սէր, ո՛վ ուրախութիւն հոգւոյս, դուն քու օրինակովդ շատ սիրելի ըրիր արհամարհանքը քու սիրելիներուդ: Աս ալ այսօրուրնէ սկսեալ կը խոստանամ քեզի որ ամէն նախատինք քաշեմ քու սիրոյդ համար, քու սիրոյդ՝ որ այս աշխարհքիս վրայ այդ կերպով արհամարհուեցար

մարդիկներէն իմ սիրոյս համար: Աւտուր ինծի կատարելու աս իմ խոստմունքս: Ճանչցուր ու ընել տուր ինծի այն ամէն բան որ կ'ուզես ինծմէ: Աստուած իմ, և ամենայն ինչ, ես ուրիշ բարի չեմ ուզեր փնտոել՝ բաց ՚ի քեզմէ, որ յաւիտենական բարի ես: Դուն որ իմ օղտիս այնչափ փոյթ ունիս՝ դուն տուր որ ես ուրիշ հոգ չունենամ՝ բայց եթէ քեզի հաճոյական բան ընելու: Դուն տուր որ իմ ամէն խորհուրդներս միշտ գործածեմ քեզի դէմ մեղք ընելէն փախչելու, ու ամէն բանի մէջ քեզի հաճոյ ըլլալու կերպը գտնելու: Հեռացուր ինծմէ այն առիթները, որ զիս ՚ի քօ սիրոյդ կը հեռացնեն: Աս իմ ազատութենէս կը մերկանամ, ու բոլորովին քու աստուածային հաճոյիցդ կը նստիմ: Ար սիրեմ զքեզ, բարութիւն անսահման, կը սիրեմ զքեզ, սիրելիք իմ, ո՛վ մարմնացեալդ Քան, ես զքեզ ինծմէ աւելի կը սիրեմ: Ողորմէ վրաս, ու բժշկէ զիս այն ամէն վէրքերէն, որով հոգիս ըսցուած է քեզի դէմ գործած մեղքերուս պատճառաւ: Օխ բոլորովին քու զիրկդ

կը յանձնեմ, սկի Յիսուս իմ. կ'ուզեմ բո-  
լորովին քու կիկնդ ըլլալ, կ'ուզեմ ամէն բան  
քու սիրոյդ համար քաշել, ու ուրիշ բան  
չեմ ուզեր՝ բայց եթէ զքեզ :

Սուրբ Աղոս, և մայր իմ Մարիամ, կը  
սիրեմ զքեզ, և յոյսս քու վրայդ դրած եմ.  
օգնէ ինծի քու հզօր բարեխօսութեամբդ :



## ԳԼՈՒԽ ԺԳ .

ՍԷՐ ՈՉ ԽՈՐՀԻ ԶԶԱՐ , ՈՉ ԽՆԳԱՅ ԸՆԴ  
ԱՆԻՐԱՒՈՒԹԻՒՆ , ԱՅԼ ԽՆԳԱՅ ԸՆԴ  
ՍՏՈՒԳՈՒԹԻՒՆ :

Ո՛վ որ կը սիրէ զՅիսուս , ոչրիշ բան  
չուզեր , բայց երէ ինչ որ Յիսուս  
կ'ուզէ :

1 . Սէրը ճշմարտութեան հետ միշտ  
մէկ տեղ է , անոր համար սէրը ճանչնա-  
լով թէ Մատուած է մի միայն ու ճշմարիտ  
բարին՝ կը զզուի անօրէնութենէ , որ աս-  
տուածային կամաց հակառակ է . և ուրիշ  
բանով չզուարճանար՝ բայց եթէ Մատու-  
ծոյ ուզածովը : Ասկից է որ զՄատուած  
սիրող հոգին շատ փոյթը չըլար թէ ու-  
րիշները իր վրայ ինչ կ'ըսեն , հասլա միայն  
կը նայի Մատուծոյ ուզածը կատարել :  
Կ'ըսէր երանելին Հենրիկոս Սուզոն .  
« Մատուծոյ հետ անիկա է ճշմարտապէս  
հաշտ , որ զճշմարտութիւնը 'ի գործ դնե-

լու ջանալէն ետքը՝ ամենեւին բանի տեղ չսե-  
պեր ինչ կերպով որ մարդիկ իրեն հետ  
վարուին կամ ինչ կարծիք որ վրան ունե-  
նան , :

2 . Արդէն վերը շատ անգամ ըսինք ,  
որ հողւոյ մը բոլոր սրբութիւնն ու կատա-  
րելութիւնը զինքը ուրանալն ու Աստուծոյ  
կամայը հետեւին է . բայց հոս աւելի յար-  
մար է անոր վրայ խօսիլը : Աւրեմն թէ որ  
կ'ուզենք սուրբ ըլլալ՝ այս պիտի ըլլայ մեր  
ամէն փոյթը , որ ամենեւին մեր կամայը  
չհետեւինք , հասլա միշտ Աստուծոյ կամ-  
քին . որովհետեւ ամէն աստուածային սլա-  
տուիրանաց ու խրատուց հիմը այս է՝ որ  
Աստուծոյ ուզածը , ու Աստուած ինչ  
կերպով որ կ'ուզէ՝ այնպէս ընենք ու  
կրենք . ուրեմն աղաչենք Աստուծոյ , որ  
մտաց սուրբ ազատութիւնը պարզուէ մե-  
զի . այս մտաց ազատութիւնը Յիսուսին ա-  
մէն ուզածները ընել կու տայ մեզի՝ թէպէտ  
և անձնասիրութեան կամ մարդկային նը-  
կատման գրգիռ մը դէմ ելլէ : Յիսուսի սէրը  
անանկ անտարբերութիւն մը կու տայ իր  
սիրելիներուն՝ որ իրենց համար ամէն բան



Հաւասար է՝ անոյշն ալ, դառն ալ . իրենց ուղածներէն ամենեւին մէկ բան մը չեն ուզեր, ու Մատուծոյ ուղածը ամէնն ալ կ'ուզեն . թէ՛ մեծ բաներու և թէ՛ սղգախկներու մէջ, ու ինչպէս հաճոյական բաներու, ասանկ ալ անհաճոյ բաներու նոյն խաղաղութեամբ կը զբաղին . բաւական է որ Մատուծոյ հաճոյ ըլլան :

3 . Կ'ըսէ սուրբն Օգոստինոս . “ Սիրէ՛ զՄատուած , ու ինչ որ կ'ուզես ըրէ ” : Ով որ ճշմարտապէս զՄատուած կը սիրէ , ուրիշ բան չփնտուեր , բայց եթէ Մատուծոյ հաճոյքը . ու Մատուծոյ հաճոյական բան ընելով միայն գոհ կ'ըլլայ : Ու սրբուհին թփերեզա ալ . “ Ով որ իր սիրելոյն գոհ ըլլալը կ'ուզէ՝ գոհ կ'ըլլայ այն ամէն բանով՝ որով իր սիրելին գոհ կ'ըլլայ : Մէրը երբոր կատարեալ է՝ այս զօրութիւնը ունի որ մարդուս մոռցընել կուտայ իր օգուտն ու գոհ ըլլալը , ու իր բոլոր մտածութիւնը անոր զարձընել կուտայ որ սիրելոյն հաճոյքը կատարէ ու աշխատի որ ինչպէս կրնայ ինքն ու այլք անոր սխալիւ տալ : Ով Տէր , աչուրնիա քեզի

չդարձրնենուս համար կու գան մեզի  
ամէն վնասները : Թէ որ քաղելու միայն  
նայէինք , շուտով կը հասնէինք , բայց  
կ'իյնանք ու հազար անգամ՝ ոտուրնիս  
կը զարնենք , և ճամբէն ալ կը մնու-  
րինք՝ ուշադրութեամբ ուղիղ ճամբուն  
չնայելուս համար , : Ահա ուրեմն մեր ա-  
մէն խորհրդոց , գործքերուն , փափագնե-  
րուն ու արժօնից միակ նստատակն Աստու-  
ծոյ հաճոյքը պիտի ըլլայ . և մեր գէպ  
'ի կատարելութիւն ընթացքը՝ Աստուծոյ  
կամայը հտեէն երթալը պիտի ըլլայ :

4 . Աստուած կ'ուզէ որ ամէնքնիս ալ  
զինքը ամենայն սրտով սիրենք <sup>1</sup> : Այն  
հոգին ամենայն սրտով կը սիրէ զՅիսուս ,  
որ ուղիղ սրտով կ'ըսէ իրեն այն խօսքն ,  
որ Յիսուսին ըսաւ Առաքեալը . “ Տէր ,  
ինչ կ'ուզես որ ընեմ ” , <sup>2</sup> : Տէր , իմացուր  
ինձի ինչ որ ինձմէ կ'ուզես , որովհետեւ ես

<sup>1</sup> Սիրեսցես զՏէր Աստուած քո յա-  
մենայն սրտէ քու մէ : Բ . Օրէնք .  
2 . 5 :

<sup>2</sup> Զինչ արարից , Տէր : Գործ . ԻԲ .  
10 :

ամէն ուղածդ կ'ուզեմ ընել : Ու միտքերն իս դնենք , որ երբոր մենք Աստուծոյ ուղածը կ'ուզենք՝ մեր մեծագոյն բարին կ'ուզենք . որովհետեւ ճշմարտապէս Աստուած ուրիշ բան չուզեր՝ բայց եթէ մեր լաւագոյն բարին : Ա՛րևէր սուրբն Վինչնցիոս Պաւլայեցի . “ Աստուածային կամաց հետ միաբանութիւնը քրիստոնէի գանձն ու ամենայն չարեաց դեղն է . որովհետեւ անձին ուրացումը և Աստուծոյ հետ միութիւնն ու ամէն առաքինութիւնները կը բովանդակէ այդ առաքինութիւնը ,” : Վերջապէս ահա այս բանիս վրայ հիմնած է բոլոր կատարելութիւնը . “ Տէր , ինչ կ'ուզես որ ընեմ ,” : Յիսուս կը խօստանայ մեզի . “ Վշխերնէդ մազ մը պիտի չկորսուի ,”<sup>1</sup> : Ա՛ուզէ ըսել որ ինչ բարի խորհուրդ որ ունենանք Աստուծոյ հաճոյական բան ընելու , ինչ նեղութիւն որ քաշենք սրտի խաղաղութեամբ միաբանելով զմեզ իր սուրբ կամացը՝ այս ամէն բանին փո-

<sup>1</sup> Եւ մազ մի 'ի գլխոյ ձերմէ ոչ կորեցէ : Աւուկ . ԻԱ . 18 :

խարէն մեզի վարձք պիտի տայ : Ա՛րսէր սրբուհին թօնեղա . “ Աստուած ոչ երբէք նեղութիւն մը կը խաւրէ առանց շնորհք մ’ալ հետը տալու՝ թէ որ մենք իր կամայը հետ միաբանելով ընդունինք , , :

5 . Բայց մեր աստուածային կամայ հետ միաբանութիւնը ամբողջ պիտի ըլլայ առանց բան մը ետք պահելու , ու հաստատուն՝ առանց միտքերնիս փոխելու : Այս բանիս վրայ կը կայանայ կատարելութեան գերազանցութիւնը , ու այս նպատակը պիտի ունենան մեր ամէն գործողութիւնները , մեր ամէն փափաղներն ու մեր ամէն աղօթքները : Ան աղօթասէր անձինք որ սրբուհի թօնեղային , սուրբ Փիլիպպոս՝ Արեանին և ուրիշ սրբոց վերայմունքներն ու յափշտակութիւնները կարգալով՝ կը փափագին այս գերբնական միաւորութիւններուն հասնելու : Ասանկ փափաղները պէտք է մերժել , որովհետև խոնարհութեան հակառակ են . թէ որ կ’ուզենք սուրբ ըլլալ՝ պիտի փափագինք Աստուծոյ հետ ճշմարիտ միաւորութիւնը՝ որ է բողոքովն միաբանել մեր կամքը Աս-

տուժոյ կամայր հետ : Ար գրէ սրբուհին  
 թօնեղա . “ Ար խաբուին անոնք որ կար-  
 ծեն թէ Աստուծոյ հետ միութիւնը վերաց-  
 մանց , յափշտակութեանց ու իրեն զմայլ-  
 մունքներուն վրայ կայացեալ է : Աւրիշ բան  
 չէ , բայց եթէ մեր կամքը Աստուծոյ կամա-  
 ցը տակ ձգել . ու այն ատեն կատարելապէս  
 մեր կամքը Աստուծոյ կամայր կը հար-  
 տակենք , երբոր մեր կամքը ամէն բանէ  
 հեռացած ըլլայ ու միայն Աստուծոյ կա-  
 մայր հետ միացած՝ անանկ որ իր ամէն  
 շարժմունքը միայն Աստուծոյ կամքն ըլ-  
 լայ : Այս է ճշմարիտ ու էական միաւո-  
 թութիւնը որ միշտ փափագեր եմ ու շա-  
 րունակ կը խնդրեմ՝ Աստուծմէ ,, : Աւ-  
 վերջէն կ'աւելցրնէ . “ Ա՛ , որչափ բազ-  
 մութիւն ենք , որ կ'ըսենք ասիկա , ու  
 կարծենք որ ուրիշ բան չենք ուզեր . բայց  
 վայ մեզի՛ որչափ քիչ հողի կը հասնինք ,, :  
 Աւ այս ճշմարիտ է , որ շատերնիս կ'ը-  
 սենք . Տէր , բոլոր կամքս քեզի կու տամ ,  
 ուրիշ բան չեմ ուզեր՝ բայց եթէ ինչ որ դուն  
 կ'ուզես . սակայն երբոր ներհակ բաներ կը  
 հանդիպին մեզի՛ աստուածային կամայ

յիշատակգլխամբրը չենք խողաղիր : Ասակից առաջ կու գան այն գանգաւաները թէ այս աշխարհքիս մէջ բաղդ չունինք , ու այն խօսքերը թէ ամէն թշուառութիւն մեր գլուխը թափեցան ու խեղճ կեանք մը կ'անցընենք :

6 . Թէ որ մենք ամէն ձախորդութեանց մէջ աստուածային կամայը հպատակած ըլլայինք՝ անտարակոյս սուրբ կ'ըլլայինք , ու աշխարհքիս մէջ մեզմէ աւելի երջանիկ մարդ չէր ըլլար : Աւրեմն մեր բոլոր ուշադրութիւնը այս պիտի ըլլայ, որ մեր կամքը Աստուծոյ կամայը հետ հաստատ միաբան պահենք՝ ամէն մեզի պատահած կամ հաճոյական կամ անհաճոյ բաներու մէջ : Ասանկ կը խրատէ զմեզ Հոգին սուրբ . “ Ամէն հովի մի տար գրեզ <sup>1</sup> , , : Ամանք հողմացոյցներու կը նմանին , հովը ուր որ փչէ՝ հոն կը դառնան . թէ որ քամին յաջող է , ինչպէս որ իրենք կը փափագին , ամէնն ալ ուրախ

1 Մի հոսիւր յամենայն հողմ : Սեր . Ե . 11 :

ու հեղ կը դառնան . բայց թէ որ հովիւ  
 դէմ է և ուզածնուն պէս բաները չեն  
 հանդիպիր՝ ամէնն ալ տխուր ու անհամ-  
 բեր կը տեսնես . ու անոր համար սուրբ  
 չեն ըլլար և խեղճ կեանք մը կ'անցընեն ,  
 որովհետև այս կեանքիս մէջ շատ աւելի  
 ձախորդ բաներ կը հանդիպին մեզի քան  
 թէ յաջող : Ա՛րտէր սուրբն Տորոթէոս որ  
 Աստուծոյ ձեռքէն ինչ որ գայ՝ այնպէս  
 ընդունիր՝ միշտ խաղաղ ու սիրտը հան-  
 դիստ մնալու մեծագոյն միջոցն է : Աւ  
 անոր համար կը պատմէ սուրբը որ անա-  
 պատին հին հարբը ոչ երբէք բարկացոտ  
 կամ տխուր տեսնուած էին . վասն զի  
 ինչ որ իրենց կը հանդիպէր՝ ամէնն ալ ու-  
 բախութեամբ Աստուծոյ ձեռքէն կ'ընդու-  
 նէին : Ա՛հ , երանի՛ անոր որ բողորովին  
 աստուածային կամաց հետ միացած ու  
 բողորովին Աստուծոյ կամացը յանձնուած  
 օրերը կ'անցընէ . յաջող դէպքերու վրայ  
 չուռիւր , և ոչ ալ ձախորդներուն համար  
 կը լքանի՛ զխոնարով որ ամէնն ալ Աստու-  
 ծոյ ձեռքէն կու գան . Աստուծոյ կամբը  
 միայն իր կամացը կանսնն է . ու անոր

Համար ուրիշ բան չունի բայց եթէ ինչ որ  
 Աստուած կ'ուզէ . և ուրիշ բան չուզեր՝  
 բայց եթէ ինչ որ Աստուած կ'ընէ : Հաս-  
 բաներու ձեռք չղարներ , բայց միայն կը  
 ջանայ կատարելապէս ընելու ինչ որ դիտէ  
 որ Աստուծոյ հաճոյ է : Անոր համար իր  
 միճակին փոքրագոյն սլարտքերն ալ մեծա-  
 գոյն ու փառաւոր գործողութիւններէն վեր  
 կը դասէ . տեսնելով որ այս ետքիններուս  
 մէջ անձնատիրութիւնն ալ կրնայ մտնել ,  
 խակ առջիններուն վրայ անտարակոյս Աս-  
 տուծոյ կամքը կայ :

7 . Անանկ որ այն ատեն մենք երջա-  
 նիկ կ'ըլլանք՝ երբոր Աստուծոյ ամէն  
 կարգաւորած բաները ընդունինք կատա-  
 ըեալ միաբանութեամբ իր աստուածային  
 կամացը հետ՝ չնայելով ամենեւին որ մեր  
 յօժարութեանը յարմար են կամ հակա-  
 ոակ : Ա՛րաէր սրբուհին Ֆրանչէսքա  
 Հանթալ . “ Ա՛րբ պիտի ըլլայ որ ամէն  
 մեզի պատահած բաներուն մէջ աստուա-  
 ծային կամաց քաղցրութեան ճաշակը առ-  
 նինք՝ աստուածային հաճոյքը միայն մտա-  
 ծելով . վասն զի տարակոյս չկայ որ Աս-



տուած անստիտիտիտի սիրով ու մեր բա-  
 րոյն համար միայն կը կարգաւորէ թէ՛  
 ձախտողութիւնները և թէ՛ յաջողութիւն-  
 ները : Ա՛րբ պիտի ըլլայ որ բողոքողին  
 յանձնենք զմեզ մեր ամենասիրելի երկնա-  
 լոր Հօրը ձեռքը՝ իրեն թողլով մեր անձանց  
 ու մեր դործոց հոգը, մեզի համար ուրիշ  
 բան չսրահելով՝ բայց եթէ Աստուծոյ հա-  
 ճոյանալու փառադր միայն ,, : Սուրբ Հօրն  
 Վինչենցիոսի Պաւլայեցւոյն բարեկամնե-  
 րը կ'ըսէին . “ Վինչենցիոս միշտ Վին-  
 չենցիոս է ,, : Աւ կ'ուզէին ըսել որ սուր-  
 քը ամէն դիպուածի մէջ՝ թէ՛ յաջող ե-  
 ղեր է ու թէ՛ ձախող՝ միշտ դէմքը ուրախ  
 էր ու անայլայելի . որովհետեւ բողոքողին  
 Աստուծոյ յանձնուած օրերը անցընելուն՝  
 բանէ մ'ալ չէր վախնար , ու չէր ուզեր  
 ուրիշ բան՝ բայց եթէ Աստուծոյ հաճոյ  
 եղած բանը : Կը գրէ սրբուհին թերեզա .  
 “ Անձին այս Աստուծոյ ձեռքը լքումը կա-  
 տարեղոց մտաց դեղեցիկ ազատութիւնը կը  
 ծնանի՝ որ ունի այն ամէն երջանակութիւնը ,  
 որուն որ այս կենացս մէջ կրնանք փառա-  
 գիլ . որովհետեւ բանէ մը չվախնալով ու

աշխարհքի բաներէն ոչինչ ուզելով կամ  
փափագելով՝ ամէն բան կը վայլենն , :

8 . Բնդհակառակն շատերը իրենց բնաւորութեանցը նայելով՝ սրբութիւնը ըստ այնմ՝ կը յարմարցընեն . ու որ սեւամաղձոտ է՝ քաշուած ապրելու վրայ կը հաստատէ . ուրիշ մը որ ամէն բանի մէջ մննող է՝ քարոզելու , ու խոսովեալները հաշտեցընելու վրայ . մէկալը որ խիստ բնաւորութիւն ունի՝ ապաշխարութիւններ ու ճնշմունքներ ընելու վրայ . մէկը որ առատաձեռն է՝ ողորմութիւն ընելու վրայ . ուրիշ մը շատ ձայնաւոր աղօթք ընելու վրայ . մէկ մ՝ ալ սրբոց նշխարացը այցելութեան երթալու վրայ . ու ասոնց վրայ կը կայացընեն իրենց բոլոր սրբութիւնը : Արտաքին գործքերը Յիսուսի սիրոյն պտուղներն են , բայց ճշմարիտ սէրը կը կայանայ՝ ամէն բանի մէջ Աստուծոյ կամացը հետ միաբանելուն վրայ և հետևաբար զմեզ ուրանալուն ու Աստուած ինչ բան որ աւելի կը հաճի զայն ընտրելուն վրայ , և անոր համար միայն՝ որովհետև ինքն արժանի է այս բանիս :

9 . Ուրիշները կ'ուզեն ծառայել Աստու-

ծոյ՝ բայց այս կամ այն գործողութեամբ ,  
 սա տեղը՝ այն ընկերներով և կամ ուրիշ  
 կերպ հանգամանքներով . ապա թէ ոչ  
 կամ գործքը կը ձգեն , կամ չուզելով կ'ընեն .  
 ասոնք մտաց ազատութիւն չունին՝ հասար  
 անձնասիրութեան գերի են , ու անոր հա  
 մար բրած գործքովն ալ ոչինչ վարձուց  
 արժանի կ'ըլլան և միշտ անհանգստու  
 թեան մէջ կը մնան , որովհետև իրենց կա  
 մայր կապուած ըլլալով՝ Յիսուսի լուծը  
 իրենց ծանր կու գայ : Յիսուսի ճշմարիտ  
 սիրելիները՝ այն միայն կը սիրեն ինչ որ  
 Յիսուսին հաճոյ է , և միայն անոր համար  
 որ Յիսուսին հաճոյ է . ու երբ որ կ'ու  
 զէ , նա որ կ'ուզէ , ու ինչ կերպով որ  
 Յիսուս կ'ուզէ . թէ ուզենայ զանոնք պա  
 տուաւոր գործքերու գնել , թէ խոնարհ  
 ու ցած սաշտօններու , թէ աշխարհքիս  
 մէջ ամենուն ծանօթ կեանք մը անցընելու ,  
 և թէ ամենէն անծանօթ ու լքեալ մնա  
 լու : Այս բանս զՅիսուս սիրելէն առաջ  
 կու գայ . և ասոր պիտի աշխատինք՝  
 պատերազմելով ընդդէմ անձնասիրու  
 թեան ախորժանացը , որ կ'ուզէ որ այն

բաներուն միայն զլաղինք , ինչ որ փառաւոր կամ մեր յօժարութեանցը յարմար են : Աւ ինչ բանի կու գայ այս աշխարհքիս մէջ աւելի սլատուաւոր , աւելի հարուստ , աւելի մեծ ըլլալը առանց Աստուծոյ կամայը : Ա՛րտէր երանելին Հենրիկոս Սուզոն . “ Աս աւելի կ’ուզեմ գետնի ցած ճճի մը ըլլալ Աստուծոյ կամքովը՝ քան թէ երկնքի սերօքէ մը իմ կամքովս , ” :

10 . “ Հատերը ինծի սլիտի զուրցեն , կ’ըտէ Յիսուս , թէ Տէր , քու անունովդ դեւերը հալածեցինք , ու մեծամեծ հրաշքներ գործեցինք <sup>1</sup> , ” : Բայց Աստուած այն ատենը իրենց սլատասխան սլիտի տայ . “ Արբէք զձեզ չէի գիտեր . ինձմէ հեռու գացէք ո՛վ անօրէններ , ” <sup>2</sup> : Աօրսուեցէք առջևէս , ոչ երբէք զձեզ իմ աշկերաններուս

1 Տէր , տէր , ո՞չ յանուն քո մարդարէացաք , և յանուն քո զօրութիւնս բազումս արարաք : Մատթ . 13 . 22 :

2 Ոչ երբէք գիտէի զձեզ . ՚ի բաց կացէք յինէն ամենեքեան՝ ոյք գործէիք զանօրէնութիւն : Անդ . 23 :

մէջ ճանչցեր եմ . որովհետև դուք աւելի  
 ձեր հաճոյիցը ետևէն ուղեցիք երթալ , քան  
 թէ իմ կամքս կատարել : Այս խօսքս  
 մասնաւորապէս այն խնամակալու քահա-  
 նայից համար կ'ըսուի , որոնք որ կ'աշխա-  
 տին ուրիշներուն փրկութեանն ու կա-  
 տարելութեանը համար , իսկ իրենք միշտ  
 իրենց անկատարութեանց տղմին մէջ կը  
 մնան : Ատարելութիւն ըսածդ կը պա-  
 հանջէ նախ և առաջ՝ անձին ճշմարիտ  
 արհամարհութիւն մը . երկրորդ՝ սրտին  
 բաղձանքները բողորովին մահացընել . եր-  
 րորդ՝ Աստուծոյ կամեցը հետ կատարեալ  
 համակամութիւն . ուլ որ այս առաքի-  
 նութիւններէն մէկը պակսեցընէ , այնպի-  
 սին գիտնայ որ կատարելութեան ճամ-  
 բէն դուրս է : Անոր համար ալ Աստուծոյ  
 մեծ ծառաներէն մէկը կ'ըսէր՝ որ աւելի  
 լաւ է որ մեր գործողութեանց վախճան  
 դնենք միայն Աստուծոյ կամքը կատարե-  
 լը , քան թէ Աստուծոյ փառաւորութիւ-  
 նը . իսկն զի Աստուծոյ կամքը կատարե-  
 լով կը ջանանք նաև իրեն փառքը առաջ  
 տանելու , բայց թէ որ մեր գիմայը Աս-

տուժոյ փառքը զնենք , շատ անգամ՝  
 կը խաբուինք , ինչու որ Աստուծոյ փա-  
 ռայը համար ընենք ըսելու ատեն՝ մէյ  
 մ՝ ալ կը տեսնենք որ մեր կամքը կը կա-  
 տարենք եղեր : Սուրբ Ֆրանչիսկոս Սպե-  
 ղեանը կ'ըսէ թէ “ Շատ մարդիկ կան որ  
 կ'ըսեն Աստուծոյ . Աս դէս Բոլորովէն չեզի  
 էր նուիրէ՛մ ատանոյ ամենեւին Բան Տը ԻնՅի  
 պահէլու . բայց շատ քիչ են անոնք որոնք  
 որ այս անձնութեան թիւնս գործքով կա-  
 տարեն : Այս է ահա այն անտարբե-  
 թութիւնը , որով որ մէկը ո և իցէ գի-  
 սուած մը որ գլխուն հանգիստի անտրո-  
 տունջ կ'ընդունի , գիտնալով որ ամէն  
 բան աստուածային նախախնամութիւնը  
 մեզի կը զըկէ , թէ վիշտ եղեր է և թէ  
 միսթարութիւն , թէ անարգանք ու նա-  
 խատինք եղեր է , և թէ պատիւ ու  
 փառք , :

11 . Ուրեմն Յիսուսի ճշմարիտ սիրողի  
 մը յայտնի նշանը պիտի ըլլայ նեղութիւն  
 քաշելը ու սիրով յանձն առնելը որ և  
 իցէ անհաճոյ ու անձնասիրութեան ներ-  
 հակ երևցած բաները : Թովմաս Գեմ-

բայի կ'ըսէ թէ արժանաւոր սիրող չը-  
կոչուիր այնպիսին , որ յանձն շառնուր ո  
և իցէ բան սիրելոյն համար կրելու , և  
ամէն բանի մէջ սիրելոյն կամքը կատա-  
րելու : Ընդ հակառակն կ'ըսէր Հայրն  
Յաղտասար Արևարէզ թէ ով որ վշտե-  
լու մէջ խաղաղութեամբ ինքրդինքր աս-  
տուածային կամացը կը յանձնէ , այն-  
պիսին իբրև թէ վազուկ կառքի մը մէջ  
նստած՝ առ Աստուած կը դիմէ : Ու սրբ-  
բուհին թփրեզա ալ այսպէս կը զուրցէ .  
« Ի՞նչ մեծ շահ կրնայ ըլլալ քան զայն՝ որ  
բան մը ընելու ատեննիս սրտերնուս մէջ  
վկայութիւն մը ունենանք թէ Աստուծոյ  
հաճոյականն է ատիկա , : Աս ալ կ'ա-  
ւելցրնեմ՝ թէ ուրիշ կերպով չենք կրնար  
սրտերնուս մէջ այս յայտնի վկայութիւնն  
ալ ունենալ թէ Աստուծոյ հաճոյական  
բան է ըրածնիս՝ բայց եթէ Աստուծոյ մե-  
ղի զրկած խաչերը խաղաղութեամբ վեր-  
ցրնելով : Ար հաճի Աստուած , որ մենք  
իրեն բարերարութեանցը համար շնորհա-  
կալ ըլլանք ինչ որ այս երկրիս վրայ մեզի  
կը սլարգէ . բայց Հայրն Յովհաննէս

Այլա կ'ըսէ թէ « Աւելի կ'արժէ մէկ օրհնեալ ըլլայ Աստուծո՛ւ մը ըսելը ձախորդութեան մէջ, քան թէ հազարաւոր շնորհակալութիւններ ընել յաջողութեան առանձն » :

12. Բայց պէտք է գիտնալ, որ ոչ միայն համակամութեամբ պիտի ընդունինք այն ձախորդ բաները, որոնք որ շիփ շիտակ Աստուծո՛ւ մեզի կու գան, ինչպէս են հիւանդութիւն, քիչ հանձար, ունեցածը չունեցածը կորսնցընել, և այլն. հասցա նաև անոնք ալ որ թէպէտ Աստուծո՛ւ բայց մարդկանց ձեռքովը մեզի կու գան. ինչպէս են հարածանք, գողութիւն, նախատինք, և այլն, որոնք լաւ մը մտածելու որ ըլլանք՝ կը տեսնենք որ ամէնն ալ Աստուծո՛ւ կու գան մեզի : Դաւիթ որ մը իր ծառաներուն մէկէն, որուն անունը Սեմէի էր, անարգուեցաւ, որ ոչ միայն նախատական խօսքերով թշնամանեց զինքը, հասցա նաև վրան քարեր կը նետէր : Արքայ Ղաւթի քովի հաւատարիմ՝ մարդիկներէն մէկը այն յանդուգն մարդը կ'ուզէր սպաննել, Դաւիթ պա-



տասխան տուաւ . “ Թող տուէք որ ա-  
նիծէ . վասն զի Աստուած հրամայեց իրեն  
որ զԴաւիթ անիծէ ,” <sup>1</sup> . այսինքն Աս-  
տուած այս մարդուն ձեռքովը կ’ուզէ իմ  
յանցանքներս պատժել , և ասոր համար  
է որ թող կու տայ որ զիս այնպէս ա-  
նարդէ :

13 . Իսկ սրբուհին Մարիամ Մագ-  
դաղինէ Քացեան կ’ըսէր որ մեր բոլոր ա-  
ղօթքը ուրիշ վախճան պիտի շունենայ՝  
բայց եթէ Աստուծմէ շնորհք խնդրել՝ որ  
ամէն բանի մէջ իրեն սուրբ կամայր հպա-  
տակինք : Հոգևոր հաճոյից փափագող  
հոգիներ աղօթքի մէջ ուրիշ բան չեն փրն-  
տուեր , բայց եթէ հաճոյական ու փափուկ  
զգացմունքներով զուարճանալ . բայց զօ-  
րաւոր հոգիները , որ ճշմարտապէս կը  
փափաքին բոլորովին Աստուծոյ ըլլալու ,  
Աստուծմէ այս միայն կը խնդրեն որ իրենց  
լոյս տայ իր սուրբ կամքը ճանչնալու , ու

1 Թոյլ տուք նմա , թող անիծանէ  
այնպէս . զի Տէր ասաց նմա անիծանել  
զԴաւիթ : Բ . Թագ . ԺԶ . 10 :

զօրութիւն՝ կատարեալ ՚ի դորձ գնելու :  
 Սիրոյն մաքրութեան հասնելու համար  
 պէտք է որ ամէն բանի մէջ մեր կամքը  
 Աստուծոյ կամացը հպատակենք : Սուրբն  
 Ֆրանչիսկոս Սալեզեան կ'ըսէ . « Մէ  
 կարծէք ամենեւին թէ ձեզի պէտք եղած  
 մաքրութեանը հասած ըլլաք , ինչուան որ  
 ձեր կամքը նաև բոլորովին հակառակ բա  
 ներու մէջ , ուրախութեամբ աստուածային  
 կամացը հպատակած չըլլաք , » : Արուհե  
 տև ինչպէս որ սրբուհի Թերեզա ալ կ'ը  
 սէ , « Մենք մեր կամքը Աստուծոյ ըն  
 ծայելով կը ստիպենք զԱստուած որ մեր  
 նուաստութեանը հետ դայ միանայ , » : Բայց  
 այդ աստիճանին ուրիշ ճամբով չենք կր  
 նար հասնիլ , բայց եթէ մտաւորական ա  
 ղթքով , և անդադար պաղատելով աս  
 տուածային մեծ վայելչութեանը , ու ճշմա  
 ըխտ փափաք ունենալով որ ամէն կերպով  
 բոլորովին Յիսուսի ըլլանք :

14 . Ա՛յլ իմ փրկչիս ամենասիրելի  
 սիրտը , ս՛յլ սիրտ որ այնչափ վառուած  
 էս մարդկանց սիրովը , որ զմեզ այնչափ  
 դորովանօք կը սիրես . միով բանիւ՝ սիրտ

արժանի լծագաւորելու բոլոր մեր սրտե-  
րուն վրայ ու զանոնք ժառանգելու . ո՛հ ,  
ուր էր թէ կարենայի ամենուն հասկըցընե-  
լու այն սէրը , որով որ դուն զմեզ կը սիրե-  
սես , ու այն գորովը զորն որ սովոր ես  
ցուցընել այն հոգւոց , որ ամենայն կեր-  
պով զքեզ կը սիրեն : Հասպա , ընդունէ ,  
ու՛ր սէր իմ Յիսուս , իմ բովանդակ կա-  
մայս նուէրն ու զո՛հր , զորն որ այսօր  
կ'ընեմ քեզի : Հասկըցուր ինձի ինչ որ  
ինձմէ կ'ուզես , վասն զի կը փափաքիմ զա-  
մէնն ալ քու շնորհքովդ կատարելու :

### ՀԵԱԶԱՆԴՈՒԹԻՒՆ

15 . Բայց թէ որ ուզենք գիտնալ , ու  
տարակոյս շունենալ մեր գործողութեան-  
ցը մէջ թէ Մտուած մեզմէ ինչ բան  
կ'ուզէ արդեօք , և թէ ո՛րն է աւելի ասպա-  
հով միջոցը , պէտք է հաստատ մտքերնիս  
դնենք թէ չկայ միջոց մը որ աւելի ասպա-  
հով ու աւելի ստոյգ ըլլայ քան զայն՝ որ  
մեր մեծաւորաց կամ առաջնորդաց հնա-

զանդելու ջանք ընենք : Սուրբ Վ ինչենցիտս  
Պաւլայեցին այսպէս կ'ըսէ . “ Աստուծոյ  
կամքը ուրիշ կերպով աւելի լաւ չկատա-  
րուիր՝ բայց եթէ մեծաւորաց ձայնին հնա-  
զանդելով ,” : Հողին սուրբ կ'ըսէ . “ Հնա-  
զանդութեամբ խօսքի մտիկ ընելը զոհէն  
աղէկ է ,” <sup>1</sup> : Աստուծոյ աւելի հաճոյ է  
մեր կամաց զոհը , հնազանդութեան տակը  
նուաճելով , քան զայլ ամենայն զոհերը ինչ  
որ կրնանք իրեն մատուցանել . որովհետեւ  
մէկալ բաներու մէջ , ինչպէս են ըսենք ու-  
ղորմութիւն , ծումապահութիւն , ճնշմունք  
մարմնոյ , ու ասոնց նման բաներ , մենք  
մեր բաները Աստուծոյ կու տանք , իսկ մեր  
կամքը իրեն նուիրելով՝ մենք զմեզ իրեն կու  
տանք : Ուստի , երբոր կ'ըսենք Աստու-  
ծոյ . Տէր ի՛մ , հնազանդութեան յեռ-տուլը  
ի՛մացուր ինչի ինչ որ ինչմէ է՛րուչէս , լսան  
չի ես Բոլորն ալ է՛րուչէ՛մ հապարել , իրեն  
ընծայելու ալ ուրիշ բան չմնար :

1 Լաւ է ունկնդրութիւն քան զզոհ  
ընտիր , և հնազանդութիւն քան զճարստ  
խոյոց : Ա . Թադ . ԺԵ . 22 :

16 . Ով որ ուրեմն ինքզինքը հնազանդութեան նուիրեր է , պէտք է որ ամէն բանի մէջ իրեն կարծիքը թողու : Բայց ամէն մարդ , կ'ըսէ սուրբ Ֆրանչիսկոս Սաղեղեան , առանձնական կարծիքներ ունի , ատիկա առաքինութեան դէմ չէ . առաքինութեան դէմ այն է որ մեր կարծեացը կաշկնք մնանք : Բայց ելիր նայէ որ այս կարծեաց յարումը ձգելը ամենէն ծանր բանն է . և ասոր համար քիչ են այն անձինքը , որ իրենք զիրենք բողոքովին Աստուծոյ տան , վասն զի քիչ են անոնք որ ամէն բանի մէջ իրենք զիրենք հնազանդութեան տակ նուաճեն : Կան ոմանք , որ այնպէս կը յարին իրենց կամացը , որ երբոր հնազանդութիւնը իրենց հրաման մը տայ , թէպէտ և այն բանը իրենց մտացն ալ համաձայն ըլլայ , բայց 'ի վերայ այսր ամենայնի՝ որովհետև հնազանդութեան համար ստիպուած են ընելու՝ այն բանը ընելու ախորժինն ու կամբերնին կը դադրի . վասն զի իրենց կամացը թելադրածը ընելու միայն ախորժ կը զգան : Բայց սուրբերը այսպէս չեն ընելու . վասն զի ու-

րիշ բանի մէջ սրտի խաղաղութիւն չին  
 գտնար՝ բայց եթէ այն գործողութեանց  
 մէջ, զորոնք որ հնազանդութիւնը կը հրա-  
 մայէ : Արբուհին Յուհաննա Հանդալ  
 զուարճութեան մը որ ըսաւ իրեն կուսա-  
 նացը , որ նոյն օրը ինչ որ կ'ուզեն այն  
 ընեն : Արբոր իրիկուն եղաւ՝ գնացին ա-  
 ղաչեցին իրեն որ մէյ մ'ալ այնպիսի թոյլ-  
 տուութիւն չտայ իրենց , վասն զի այնպի-  
 սի ձանձրալի օր մը ոչ երբէք անցուցած  
 էին , ինչպէս այն օրն որ հնազանդութե-  
 նէ ազատ մնացեր էին :

17 . Պատրանք է մտածելը , թէ ու  
 իցէ ուրիշ գործք մը կրնայ լաւագոյն ըլլալ  
 քան զայն որ հնազանդութիւնը մեզի կը  
 հրամայէ : Սուրբն Ֆրանչիսկոս Սալեպեան  
 կ'ըսէ թէ “ Հնազանդութեան մեզի տուած  
 սլաշտօնը մէկգի ձգելը՝ Աստուծոյ հետ ա-  
 ղօթքով , հոգևոր ընթերցմամբ , կամ ամ-  
 փոփմամբ մտաց միանալու վախճանաւ ,  
 Աստուծմէ հեռանալ է անձնասիրութեան  
 հետ միանալու համար , : Արբուհին թե-  
 րեղա կ'աւելցրնէ , թէ ով որ գործ մը  
 կ'ընէ , թէ և հոգևոր ըլլայ , բայց հնազան-

դուժեան գէմ՝ առանց տարակուսի այն  
 պիտին սատանային յորդորմամբը կը գոր-  
 ծէ այն գործքը, և ոչ երբէք աստուա-  
 ծային ազգմամբ մը, ինչպէս որ ինքզինք  
 կը խաբէ. վասն զի, կ'ըսէ սրբուհին,  
 « Աստուծոյ ազգմունքները բոլորն ալ  
 հնազանդութեան հետ կը միանան », : Ա-  
 նոր համար ուրիշ տեղ մ'ալ այսպէս կը  
 զրէ. « Աստուած այն հոգիէն, որ հաս-  
 տատութեամբ կը փափաքի զինքը սիրելու,  
 հնազանդելէն զատ ուրիշ բան չուզեր », :  
 Աւելի կ'աժէ հնազանդութեամբ եղած  
 գործ մը, կ'ըսէ Հայրն Առտրիկուէց,  
 քան թէ ո և իցէ ուրիշ միկ բան մը որ  
 կարենանք մտքէ անցնեն. « Աւելի կ'աժէ  
 հնազանդութեամբ գեանէն յարդ մը վեր-  
 ցնեն, քան թէ ինքիր զլխուն երկայն ա-  
 ղօթք ընեն, ու ձաղկանոց տակ արիւն-  
 լուայ ըլլալ », : Անոր համար կ'ըսէր սրբ-  
 բուհին Մարիամ Մագդաղինէ Բա-  
 ցեան, որ ինքը աւելի կը փափաքի հնա-  
 ղանդութեամբ աշխատութիւն մը ընեն,  
 քան թէ աղօթք ընեն. որովհետև, կ'ը-  
 սէր, հնազանդութեամբ Աստուծոյ կամբք

կատարելուս ապահով եմ, բայց նայնպէս  
 ապահով չեմ ուրիշ ու կը իցէ կրթութիւն  
 որ ընեմ: Աւ ամենայն հոգևոր ուսուց-  
 չաց խօսքերուն նայելով՝ լաւազոյն է թո-  
 ղուչ հոգևոր կրթութիւն մը հնազանդու-  
 թեան սիրոյն համար, քան թէ կատարել  
 զայն առանց հնազանդութեան: Սուրբ  
 Աստուածածին յայանեց սրբուհոյն Պրի-  
 ճիտայի, թէ ով որ հնազանդութեան հա-  
 մար մահացուցմունք մը զանց կ'ընէ, կրթ-  
 կին շահ կ'ընէ, վասն զի մէյ մը կ'ըն-  
 դունի մահացուման արդիւնքը զորն որ  
 կը փափաքի ընելու. մէյ մ'ալ կ'ընդունի  
 հնազանդութեան արդիւնքը, որուն հա-  
 մար որ զանց կ'ընէ: Օր մը Արիասեան  
 հռչակաւոր Հայրն Քրանչիսկոս այցելու-  
 թեան պնաց երանաշնորհ Հայրն Յով-  
 հաննէս Ալիլային, որ իրեն սիրելի բա-  
 րեկամն էր, ու տեսաւ որ մտմտուքի մէջ  
 տրտում կեցեր էր. հարցուց իրեն սլատաճա-  
 որ, իսկ Հայրն Յովհաննէս այս սլատա-  
 խանը տուաւ. « Արանի՛ ձեզի որ հնա-  
 զանդութեան տակ էք ու ապահով էք  
 որ Աստուած ինչ որ կ'ուզէ այն կ'ընէք:



Իսկ ինձի գալով ո՞վ զիս ապահով կ'ընէ թէ Աստուծոյ աւելի հաճոյ է որ զեղերը պտրտելով խեղճ գեղացիները մի կրթութեմ, չէ նէ խոստովանարանի մը մէջ քամուած ամէն եկողին խոստովանանքը լսեմ: Բայց ով որ հնազանդութեան տակ է, ապահով է որ ինչ որ հնազանդութեամբ կը գործէ, ամէնն ալ Աստուծոյ կամայը համաձայն է, մանաւանդ թէ ըրածը Աստուծոյ աւելի հաճոյական բանն է,, : Այս բանս մխիթարութիւն ըլլայ անոնց որ հնազանդութեան տակն են :

18. Բայց որպէս զի հնազանդութիւնը կատարեալ ըլլայ՝ պէտք է կամքով և մտքով հնազանդիլ. հաճա՞՞ զհնազանդութիւն ըսելը՝ ըսել է հնազանդիլ յօժար կամքով, չէ թէ բռնի՝ չուզելով, ինչպէս որ գերիները կ'ընեն : Իսկ հաճա՞՞ զհնազանդիլը այն է որ մեր միտքը մեծաւորին մտայը հետ միաբանենք՝ առանց ամենեւին քննելու ինչ որ մեզի կը հրամայուի, ու ինչ կերպով որ կը հրամայուի : Աստի կ'ըսէ սրբուհին Սարիամ Սազգաղինէ

Բայեան . “ Կատարեալ Հնազանդութիւնը այնպիսի հոգի մը կը պահանջէ որ մտքի դատմունք չունենայ , : ‘ Այնպէս սուրբ Փիլիպպոս ‘Ներեան ալ կ’ըսէր՝ որ Հնազանդելու համար բաւական չէ միայն Հնազանդութեան հրամայածն ընելը , հապա պէտք է ընել առանց խօսք մը ըսելու . ստոյգ սեպելով՝ որ ինչ որ մեզի կը հրամայուի , մեզի համար կարելի եղած կատարելագոյն բանն է , թէպէտ և ըստ ինքեան այն հրամայուած բանին ներհակը Աստուծոյ առջին մեծագոյն ալ եղած ըլլայ :

19 . Եւ ասիկա չէ թէ միայն կրօնաւորներուն համար է , հապա նաև աշխարհականաց համար , որոնք որ իրենց հոգևոր հարցը Հնազանդութեան տակն են : Իրենց հոգևոր հօրը խորհուրդ կը հարցընեն թէ ինչ կանոնով պէտք է վարուին թէ հոգևոր կրթութեանց մէջ և թէ ժամանակաւոր բաներու մէջ . անանկով միշտ ապահով կ’ըլլան թէ ըրածնին լաւագոյնն է : Սուրբ Փիլիպպոս ‘Ներեան կ’ըսէ թէ “ Անոնք որ Աստուծոյ ճամբուն

մէջ առաջ երթալ կ'ուզեն , պէտք է խնայու  
տուն խոստովանաճօր մը գլուխ ծռեն ,  
և հնազանդին իրեն այնպէս՝ իբրև թէ  
Մատուծոյ հնազանդէին : Այլ որ այս  
ճամբան բռնէ , ասպաճով ըլլայ որ ըրա  
ծին վրայ Մատուծոյ համար տալիք չունի ,  
Վ'ըսէր դարձեալ թէ « Պէտք է մարդ  
խոստովանաճօրը վրայ վստահութիւն ունե  
նայ , վասն զի Մատուած չթողուր որ սխա  
լի . ու սատանային որոգայթները պարապը  
հանելու համար մի միայն ասպաճովագոյն  
ճամբայ մըն է՝ բարի գործքի մը մէջ ուրի  
շին կամքը կատարել . ինչպէս որ նաև ան  
կէջ աւելի վտանգաւոր բան չկրնար ըլլալ ,  
որ մարդ ուզենայ իր մտացը յարմար ե  
րեցած կերպովը ինքզինքը կտաւարել ,<sup>1</sup> :  
Նոյնպէս սուրբ Իրանչիսկոս Սալեզեանն  
ալ Մատուծոյ ճամբուն մէջ ասպաճովու  
թեամբ առաջ երթալու համար հոգևոր  
հօր առաջնորդութեանը վրայ խօսելով՝ « Մ  
սիկա , կ'ըսէ , ամէն խրատներու գլուխ է .  
որչափ որ փնտռես , կ'ըսէ ջերմեռանդն Մ

1 Վարք . Գերք Ա . ԳԼ . Ի :

Վիլյա, շեռ կրնար ամենեւին այնպէս ապա-  
 հովարար Աստուծոյ կամքը խմանալ, ինչ-  
 պէս որ այս խոնարհ հպատակութեան ճառ  
 բուլը, զոր նախնի բարեպաշտները գործ-  
 քով կը կատարէին և ուրիշներուն կը սոր-  
 վեցընէին, : « Աոյն բանը կ'ըսեն նաև սուրբ  
 Բեռնարդոս և սուրբ Բեռնարդինոս Աե-  
 նային, սուրբ Անտոնինոս, սուրբ Յովհանն  
 նէս Խաչեան, սրբուհին Թերեզա, Յովհանն  
 նէս Գերսոն, ու բոլոր աստուածաբանք  
 և հոգևոր կենաց վարժապետք, և սուրբ  
 Յովհաննէս Խաչեան կ'ըսէ թէ այս ճըշ-  
 մարտութեանս վրայ տարակուսիլը գրե-  
 թէ հաւատքի վրայ տարակոյս հանել մըն  
 է. « Խոստովանահօրը ըսածին վրայ գոհ  
 չըլլալը, կ'ըսէ սուրբը, հպարտութիւն է,  
 ու հաւատոյ սրկասութիւն, »<sup>1</sup> : Ուստի  
 Սաղեզեան սուրբ Ֆրանչիսկոսի առաճնե-  
 լուն մէջ կան աս երկու առաճներն ալ որ  
 խղճահարներուն մեծ մխիթարութիւն կու  
 տան. Ա. « ճշմարիտ հնազանդ մը ա-

1 Ճառ յազագու Փշոց. հա. Գ. հէք.  
 Ե. Պր. Բ. Թիւ 8 :

մենեին չէ կորսուած , : Բ . “ Պէտք է  
 գոճ ըլլալ՝ գիտնալով հոգևոր հօրմէն , որ  
 աղէկ ճամբու մէջ առաջ կ'երթայ , առանց  
 խորունկը փնտոելու , : Հատ վարդա-  
 պետներ , ինչպէս Գերսոն , սուրբ Լստո-  
 նինոս , Գայեթանոս , Ելաւարբ : ս , Սան-  
 քէզ , Պօնաչինա , Քորտուպա , Քաստրո-  
 բալայ , և Սալմագիլիեանք <sup>1</sup> , ուրիշներն  
 ալ կ'ըսեն թէ խղճահարին ծանր պարտք  
 է որ իր խղճահարութեանցը դէմ գործէ ,  
 երբոր վախ ըլլայ որ այն խղճահարու-  
 թեանցը պատճառաւ հոգին , կամ մար-  
 մնոյ առողջութիւնը և կամ միտքը մեծ  
 վնաս պիտի քաշէ . և ասոր համար խղ-  
 ճահարք այն ատենը աւելի խիղճ պէտք է  
 ունենան , երբոր իրենց խոստովանահօրը  
 չհնազանդին , քան թէ երբոր իրենց խղ-  
 ճահարութեանցը դէմ գործեն :

Ահա այս գլխուս մէջ ըսածներնուս վերջ  
 տալով՝ գիտնալու է որ մեր փրկութեանն  
 ու կատարելութեանը հարկաւորն այս է :  
 Ա . Մենք զմեզ ուրանալ : Բ . Լստուծոյ

<sup>1</sup> Գերք Ի . ԳԼ . Է . Թիւ 10 :

կամայր հետևիլ : Գ . Միշտ աղաչել Աստուծոյ , որ մեզի ուժ տայ , որպէս զև այս երկու բանը կարենանք կատարել :

ԻՂՁԲ ԵՒ ՊԱՂԱՏԱՆԲ

“ Արկիները ի՞նչ ունիմ ես , կամ երկրիս վրայ ի՞նչ բան կը խնդրեմ քեզմէ , ուլ իմ սրտիս Աստուածը , Աստուած իմ , իմ յաւիտենական բաժինս ,<sup>1</sup> : Իմ սիրեցեան՝ Փրկիչս , ո՛վ անվախճան սիրելի , որովհետև դուն յերկնից իջար որ ինքը զինքդ բոլորովն ինձի տաս , ուրիշ ի՞նչ բան քեզնէ դուրս երկրիս վրայ կամ երկինքը վնասելու պիտի ելլեմ . դու ես իմ գերագոյն բարիս . միակ բարիս , արժանաւոր սիրոյ : Դուն ես իմ սրտիս միակ

<sup>1</sup> Զի՞նչ կայ իմ բնաւ յերկինս , կամ ՚ի քէն զի՞նչ ևս խնդրեցից յերկրէ . . . Աստուած սրտի իմոյ , բաժին իմ Աստուած յաւիտեան : Սղմ . հ Բ . 25 , 26 :

տէրը, դուն բոլորովին զբաւէ զանիկա .  
 ու իմ հոգիս զքեզ միայն սիրէ, քեզի  
 միայն հնազանդի, ու ջանայ քեզի միայն  
 հաճոյ ըլլալ: Թող ուրիշները այս աշխարհ  
 քիս հարստութիւնը վայելեն, ես քեզի  
 միայն կը փափաքիմ: Դուն միայն ես,  
 ու դու միայն պիտի ըլլաս իմ հարստու  
 թիւնս այս կենացս մէջ ու յաւիտեան:  
 Քեզի կը նուիրեմ, ո՛վ Յիսուս իմ, իմ,  
 բոլոր սիրտս, ու իմ բոլոր կամքս: Ատեն  
 մը քեզի դէմ ելաւ կամքս, բայց հիմա  
 բոլորովին քեզի կ'ընծայեմ: “Ո՛վ տէր  
 իմ, ինչ կ'ուզես որ ընեմ”, : Բսէ ինչ  
 որ ինծմէ կ'ուզես, ու օգնէ ինծի, վասն  
 զի բոլոր ուզածդ կը փափաքիմ ընել: Իմ  
 ու իմ գործքերուս վրայ ըրէ ինչ կար  
 գաւորութիւն որ քեզի հաճոյ է. բոլորն  
 ալ կ'ընդունիմ, ու բոլորին ալ հպատակ  
 եմ: Ո՛վ սէր, յաւիտենական սիրոյ ար  
 ժանի, դուն զիս այնչափ սիրեցիր որ ինծի  
 համար մեռնիլ յանձն առիր. ես ալ բո  
 լոր սրտովս զքեզ կը սիրեմ, զքեզ բիւր ան  
 գամ ինծմէ աւելի կը սիրեմ, ու քու ձեռքդ  
 կը յանձնեմ իմ հոգիս: Այսօրուան օրս

ամէն աշխարհային ախորժակներէ կը հրա-  
 ժարիմ, բոլոր ստեղծուածներէն կը հեռա-  
 նամ, ու բոլորովին զեա քեզն կը նուիրեմ.  
 Ընդունէ զեա քու չարչարանացդ արդեան,  
 ցը համար, ու մինչև ցմահ հաւատարիմ  
 պահէ զեա: Յիսուս իմ, իմ Յիսուս, աս  
 օրուրնէս սկսեալ կ'ուզեմ քեզն համար  
 միայն ապրիլ. քեզմէ զատ ուրիշ բան չեմ  
 ուզեր սիրել, ու չեմ ուզեր ուրիշ բանի  
 ետնէ ըլլալ՝ բայց միայն քու կամբդ կա-  
 տարելու: Օգնէ ինձի քու շնորհքովդ:  
 Դուն ալ, սիլ յոյս իմ Մարիամ, օգնէ  
 ինձի քու կին զօրաւոր ու մայրական սլաշու-  
 պանութեամբդ:



## ԳԼՈՒԽ ԺԴ .

ՍԷՐ ԱՄԵՆԱՅԻՆ ՏԵՒԷ

Ո՛վ որ զՅիսուս կը սիրէ , ամէն բանի  
Յիսուսին համար կը համբերէ , և  
մասնաւորապէս հիշանդոշքեանց ,  
աղքատոշքեան , ոչ ևսխառնեաց :

1 . Հինգերորդ գլխուն մէջ ընդհանուր  
կերպով մը համբերութեան առաքինու-  
թեանը վրայ խօսեցանք : Հոս պիտի խօ-  
սինք քանի մը մասնաւոր բաներու վրայ ,  
որոնց վրայ առանձին կերպով պէտք է  
համբերութիւն ունենալ : Հայրն Ազատա-  
սար Ալվարէզ կ'ըսէր՝ որ քրիստոնեայ մը  
միտքը չգնէ թէ յառաջադիմութիւն բեր-  
է , թէ որ այն աստիճանի չէ հասած որ  
սրտին մէջ հաստատուն բռնէ Յիսուսին  
քաշած ցաւերը , աղքատութիւնն ու նա-  
խատինքները , որպէս զի սիրալիր համբե-  
րութեամբ ամէն ցաւ , աղքատութիւն , և  
անարգանք Յիսուսին սիրոյն համար համ-

բերութեամբ տանի : Նախ և առաջ ցաւե-  
րու , և մարմնոյն հիւանդութեանց վրայ  
խօսինք , որոնց պատճառաւ մեծ արդեանց  
պսակ կը շահինք , եթէ համբերութեամբ որ  
քաշելու ըլլանք : Սուրբն Վինչնցիոս Պա-  
լայեցի կ'ըսէր . “ Թէ որ ճանչնայինք այն  
ազնիւ զանձը , որ հիւանդութեանց մէջ  
պահուած է , այնպիսի ուրախութեամբ  
կ'ընդունէինք զանոնք , ինչ ուրախութեամբ  
որ մեծամեծ բարիք կ'ընդունէինք , : Անոր  
համար այս սուրբս որ անդադար հիւան-  
դութիւններէ կը տառասպէր՝ անանկ որ  
շատ անգամ ոչ ցորեկը և ոչ գիշերը հան-  
գիստ կը գտնար , այնպիսի հանգարտու-  
թեամբ , ու զուարթ գիւժօք , առանց ա-  
մենն ին զանգըտելու կը համբերէր , որ  
կարծես թէ ամենն ին ցաւ մը չէր զգար :  
Ո՛հ , ի՛նչ մեծ շինութիւն կու տայ հի-  
ւանդ մը , որ հանգարտ գէմքով հիւան-  
դութիւնը կը քաշէ , ինչպէս որ կ'ընէր  
սուրբն Ֆրանչիսկոս Սալեղեան : Հիւան-  
դութեան աստնը պարզ կերպով կը բացա-  
տրէր բժշկին իրեն ցաւը , կը հնազանդէր  
անոր՝ իրեն հրամայած դեղերը ամենայն

զգուշութեամբ առնելով որչափ որ ընդ թաներ ալ ըլլային . ու հանդարտ կը կենար առանց ամենևին ձայն մը հանելու . քաշած ցաւերուն վրայօք : Իսկ ընդ հակառակն ումանք սղտիկ անհանգստութիւն մը որ ունենան՝ չեն դադրիր ամենուն գանգրտելէն , և կ'ուզեն որ իրենց ազգականքն ու բարեկամները՝ միշտ իրենց չորս կողմը կեցած իրենց քաշածին ցաւակից ըլլան : Բայց սրբուհին Թերեզա այսպէս կը յորդորէր իր կուսանները . “ Սիրելի քուրբրս , կ'ըսէր , սորվեցէք Քրիստոսի սիրոյն համար բանի մը համբերել առանց ուրիշներուն դիտնալուն , ” : Արանաշնորհ Հօրն Ազգովիկոսի Տաբոնդէ աւագ ուրբաթ օր մը Յիսուս այնչափ մարմնաւոր ցաւեր ստացեց՝ որ մարմնոյն վրայ մաս մը չկար որ առանձին մէկ ցաւ մը չկրէր . ու իրեն այս քաշած սաստիկ ցաւը իր բարեկամներէն մէկուն պատմեց , բայց պատմելէն ետե այնպէս զղջացաւ որ ուխտեց որ մէյժմ՝ ալ ամենևին մէկու մը իր քաշածներուն վրայօք բան մը չզուրցէ :

2 . Վերը պարգևեց ըսի , վասն զի

սուրբերը պարզե կը սեպեն հիւանդութիւնն  
 ներն ու ցաւերը որ Աստուած իրենց կը  
 խրկէ : Օր մը սուրբն Ֆրանչիսկոս Աս-  
 սիզային սաստիկ ցաւերու մէջ անկողն-  
 նը պառկած էր . իր ընկերներէն մէկն որ  
 քօլը կեցած էր ըսաւ իրեն . “ Հայր ,  
 Աստուծոյ աղաչէ , որ քու այդ ցաւդ թե-  
 թեցրնէ ու այնչափ չճանրացրնէ վրագ իր  
 ձեռքը ” : Այս լսելուն պէս սուրբը , մէ-  
 կէն ’ի մէկ անկողինէն ցատքեց , ու գետի-  
 նը ծնկան վրայ դարձի՛ սկսաւ Աստու-  
 ծոյ շնորհակալ ըլլալ այն ցաւերուն հա-  
 մար . ու վերջը ընկերոջը դարձաւ ըսաւ .  
 “ Վիտնաս որ , թէ որ չգլխոնայի որ  
 պարզմտութեամբ խօսեցար , մէյմ՛ալ ե-  
 րեսդ նայիլ չէի ուզեր ” :

3 . Վուցէ հիւանդ մը ըսէ . Այնչափ  
 չեմ՛ վշտանար այս հիւանդութիւնը քաշե-  
 լուս , որչափ որ չեմ՛ կրնար ժամ երթալ  
 ջերմեռանդութիւններս ընել , սրբութիւն  
 առնել , պատարագ տեսնալ . չեմ՛ կրնար  
 դասն երթալ որ իմ եղբարցս հետ ժամա-  
 սացութիւն զուրցեմ՛ , ոչ պատարագ ը-  
 նել , և ոչ ալ աղօթք . անհ , գլուխս բոլոր

կը ցաւի , ու մեծ նեղութեան մը մէջ եմ :  
 Բայց կ'աղաչեմ զուրցէ ինձի , սիրելի , ինչ  
 չո՞ւ համար կ'ուզես ժամ կամ դաս երթալ .  
 ինչո՞ւ համար կ'ուզես հաղորդուիլ , պա-  
 տարագ ընել կամ տեսնալ . Աստուծոյ հա-  
 ճոյ ըլլալու համար : Բայց հիմակ Աստու-  
 ծոյ հաճոյն այն չէ որ ժամերգութիւն ը-  
 սես , հաղորդուիս , կամ պատարագ տես-  
 նաս . հասկա համբերութեամբ այդ անկող-  
 նին մէջը մնաս , ու այդ հիւանդութեան  
 ցաւերուն սիրով համբերես : Բայց իմ այս  
 կերպ խօսիլս կը տեսնամ որ քեզի անուշ  
 չգար . ուրեմն դուն չես նայիր որ Աստու-  
 ծոյ հաճոյական բանը ընես . հասկա ինչ որ  
 քեզի հաճոյ է : Արանաշնորհ Հայրն Ա-  
 լիլա այսպէս կը գրէ . քահանայի մը որ սոյն  
 գանգատս կ'ընէր . “ Սիրելի , մի մտածեր  
 ամենեւին ինչ որ առողջ ըլլալով պիտի ը-  
 նէիր , հասկա դո՛հ եղիր հիւանդ ըլլալուդ ,  
 որչափ ժամանակ որ Աստուած ուզէ : Թէ  
 որ Աստուծոյ կամբը կը վնասուես , ի՞նչ հողդ  
 է ուրեմն հիւանդ կամ առողջ ըլլալդ ” :

4 . Կ'ըսես որ և ոչ աղօթք կրնաս ը-  
 նել , որովհետեւ գլուխդ կը ստորտի , չդիմա-

նար : Իրաւ է , չես կրնար մտածել , բայց  
ինչո՞ւ պիտի չկրնաս Աստուծոյ կամացը  
համակամութեան ներգործութիւններ ը-  
նել . և թէ որ այս ներգործութիւնները ը-  
նես , ասկէց աւելի աղէկ աղօթք մը չէիր  
կրնար ընել , սիրով գրկելով այն ցաւերը՝  
որ գքեզ կը չարչարեն : Այսպէս կ'ընէր  
սուրբն Վինչենցիոս Պաւլայեցի . երբոր  
ծանր հիւանդ կ'ըլլար՝ քաղցրութեամբ մը  
Աստուծոյ առջին զինքը կը բռնէր , առանց  
ամենեւին բռնութիւն ընելու որ միտքը մաս-  
նաւոր բանի մը վրայ կապէ . և միայն կը  
ջանար երբեմն երբեմն ներգործութիւն մը  
ընելու , մերթ սիրոյ , մերթ յուսոյ , մերթ  
զոհութեան , և շատ անգամ ալ Աստուծոյ  
կամացը հպատակութեան՝ քանի որ ցաւերը  
վրան սաստկանային : Սուրբ Ֆրանչիսկոս  
Սալեզեան կ'ըսէր . « Վիշտերը ըստ ինքեան  
մտածելով սարսափելի են . բայց ըստ կամաց  
Աստուծոյ մտածելով սէր ու հեշտութիւն  
են » : Չիս մի կրնար աղօթք ընել .  
ի՞նչ աւելի աղէկ աղօթք կրնայ ըլլալ , որ  
երբեմն երբեմն մարդ խաչելութեան վրայ  
աչքը վերցընէ , ու սրտին վիշտերը անոր

նուիրէ , իր այն քիչ մը քաշածը Յիսուսի  
խաչին վրայ քաշած անչափ ցաւերուն հետ  
միացընելով :

Ծ . Բարեսպաշտ կնիկան մը , որ սաստիկ  
ցաւերով անկողինն ինկած էր , խաչելու  
թիւն մը ձեռքը տուաւ իր աղախինը , ու  
կը յորդորէր զինքը որ աղաչէ Յիսուսի , որ  
պէս զի զինքը այն ցաւերէն ազատէ . սրա  
տասխան տուաւ հիւանդը . “ Բայց ի՞նչ  
պէս կ'ուզես որ ես ջանամ խաչէն վար  
իջնալ , որ ձեռքս բռնեմ եմ զխաչելեալ  
Մտուածն իմ Յիսուս . Մտուած հեռի  
ընէ : Ա'ուզեմ չարչարուիլ Մ'որ սիրոյն  
համար , որն որ ինձի համար յանձն ա  
ռաւ այնչափ անհնարին չարչարանքներ  
քաշել որ իմ քաշածներէս բիւր անգամ  
սաստիկ էին , : Սոյն բանս Յիսուս զուր  
ցեց սրբուհի Թերեզային , երբոր հիւանդ  
պառկած չարաչար կը տանջուէր : Ա ի  
րալից երեցաւ իրեն Յիսուս ու զուրցեց .  
“ Տես , դուստր իմ , ցաւոցս սաստիկութիւ  
նը և մտածէ թէ քու քաշածներդ կրնան մի  
խմիններուս հետ բաղդատուիլ , : Մ'որ  
համար սրբուհին երբոր հիւանդութեամբ

մը նեղուէր՝ սովորութիւն ըրեր էր որ կ'ըսէր . “ Արբոր կը մտածեմ թէ ինչ բիւր տեսակ չարչարանք քաշեց Տէրն մեր որ բոլորովն անմեղ էր , չեմ գիտեր թէ խեղքս ո՞ր է՝ երբոր վշտացս վրայ գանգտիմ , , : Սրբուհին Վ իդուսնէ երեսունըութը տարի անդադար հիւանդութիւններ քաշեց , ջերմ , ոտնառութիւն , ձեռնացաւութիւն , և այլն , ու բոլոր մարմինը վերքերով լեցուն : Արովհետև միշտ իր գիմացը ունէր Յիսուսին քաշած ցաւերը , անկողնին մէջ միշտ ուրախ ու զուարթ էր : “ Այնպէս ըրաւ սուրբ Յովսէփ Վ էոնեսսացին վեղարաւորը (քարուհին) . որովհետև վերաբուժը մեծ մը պիտի կտրէր իրեն մարմինը՝ կրօնաւորները զինքը չուաններով կապել կ'ուզէին , որպէս զի չըլլայ թէ ցաւուն սաստիկութեանը պատճառաւ շարժմունք մը ընէ . իսկ ինքը խաչը ձեռքը առած ըսաւ . “ Չուանն ի՞նչ է , ի՞նչ է չուանը . ահաւասիկ սա է որ կը կապէ զիս որ հանգարտութեամբ համբերեմ իր սիրոյն համար ամէն ցաւերու , , . և այսպէս առանց ձայն հանելու կտրուածքին համբերեց : Սուրբ վկայն Յովնան բոնաւորին



հրամանաւ գիշեր մը ամբողջ սառերու մէջ  
 թաղուած կենալէն ետեւ, երբոր առտու ե-  
 ղաւ՝ ըսաւ որ քան զայն աւելի հանդարտ  
 գիշեր ամենևին չէր անցուցած, վասն զի  
 մտաց առջևն էր բերեր Յիսուս խաչէն  
 կախուած, և այսպէս իրեն ցաւերը Քրիս-  
 տոսի ցաւոցը համեմատութեամբ՝ աւելի  
 զրդանք երեցեր էին իրեն քան թէ տան-  
 ջանք :

6. ՄՏ, որչափ արդիւնք կրնայ մարդ  
 վաստակիլ՝ հիւանդութիւնը համբերու-  
 թեամբ քաշելով : Հայրն Բաղտասար  
 Արարէզ տեսիլք տեսաւ թէ ինչ մեծ  
 փառք Աստուած սրտորաստեր էր մէկ  
 ջերմեռանդն կուսանի մը՝ հիւանդութիւն  
 մը մեծ համբերութեամբ քաշելուն համար .  
 և ըսաւ որ այն կուսանը ան հիւանդութեան  
 ութը ամսուանը մէջ աւելի շատ վարձք  
 շահեր էր քան թէ ուրիշ ջերմեռանդն կու-  
 սաններ շատ տարիներու մէջ : Մեր հի-  
 ւանդութեանց ցաւերը համբերութեամբ  
 քաշելով, այն սրտակին մեծ մասը և դուցէ՛  
 մեծադոյն մասը կը կատարուի, ինչ որ  
 Աստուած մեզի կը սրտորաստէ երկինքը :

Եւ այս բանս յայտնուեցաւ սրբուհւոյն  
 Լիզուլինէի : Այս սրբուհին այնչափ  
 ցաւալից հիւանդութիւններ քաշելէն ետեւ ,  
 ինչպէս որ վերը ըսինք , կը փափաքէր որ  
 Յիսուսին համար մարտիրոս ըլլար . և որ  
 մը այս մարտիրոսութեան փափաքով մտա-  
 ծական որ կ'ընէր , տեսաւ գեղեցիկ պսակ  
 մը , բայց դեռ չէր լինցած , և իմացաւ որ  
 այն պսակը իրեն համար կը պատրաստէին .  
 այն ատեն սրբուհին սաստիկ փափաքելով  
 որ ամբողջ կատարուի , աղաչեց Աստուծոյ  
 որ ցաւերը սաստկացնէ : Աստուած իրեն  
 աղաչանացը լսեց , ու շատ մը վնասներ  
 վրան խրկեց , որ չէ թէ միայն նախատինք-  
 ներով , հասլա նաև ծեծելով վնասը շատ  
 չարչարեցին : Ատքը հրեշտակ մը երևցաւ  
 լինցած պսակը ձեռքը , ու ըսաւ իրեն , որ  
 այն վերջի նախատինքները պսակին այն  
 անխիւ գոհարներն եղան որոնք որ պակաս  
 էին , ու քիչ մը վերջը մեռաւ :

7 . Ա՛հ , այն սրտերուն՝ որոնք որ  
 սաստիկ կը սիրեն զՅիսուս , շատ հաճոյ  
 ու քաղցր են ցաւերն ու նախատինքները :  
 Եւ ասոր համար սուրբ մարտիրոսները այն

սլիսի ուրախութեամբ ճանկեր, երկթէ ալ-  
 ոաներ, կրակ դարձած թիթեղներ ու տա-  
 սպարներ սիրով յանձն կ'առնուին: Սուրբ  
 Պրովոպիոս մարտիրոսը, բռնաւորը զինքը  
 չարչարելու ատեն ըսաւ անոր. « Որչափ  
 որ կ'ուզես զիս չարչարէ, բայց զխոցիր,  
 որ ով որ զՅիսուս կը սիրէ, այնպիսոյն  
 աւելի ցանկալի բան մը չկայ՝ ինչպէս որ ա-  
 նոր սիրոյն համար չարչարուիլ,»: «Այնպէս  
 նաև սուրբն Գորգիանոս մարտիրոս, բռ-  
 նաւորին որ իրեն մահ կը սպառնար, այս  
 ըսաւ. « Գառն ինձի մահ կը սպառնաս,  
 բայց ինձի մեծ ցաւն այն է որ Յիսուսիս  
 համար մէկ անգամէն աւելի չեմ կրնար  
 մեռնիլ,»: «Բայց կը հարցնեմ ես. միթէ  
 այս սուրբերը, որ այսպէս կը խօսէին,  
 տանջանքներու անզգայ էին, չէ նէ մի  
 խելութիւն կորսնցուցեր էին: Ըէ, կը  
 սլատասխանէ սուրբ Բեռնարդոս. «Այդ  
 բանը ապուշ միտքը չէր, հասկա սէրն էր  
 որ կ'ընէր,»: «Անզգայ չէին, հասկա ա-  
 ղէկ կը զգային իրենց տրուած չարչարանաց  
 ցաւը. բայց որովհետև զԱստուած կը սի-  
 րէին, մեծ շահ կը սեպէին ամէն բան քա-

շել, ամէն բան կորսնցնել, մինչև նաև  
իրենց կեանքը՝ Աստուծոյ սիրոյն համար :

8. Ամէն բանէն եւել՝ հիւանդութեան  
ժամանակ պիտի պատրաստ ըլլանք մահն  
ալ ընդունելու, և ինչ մահ որ Աստուծոյ  
հաճոյ է : Հարկ է մեռնիլ, և վերջին հիւ-  
անդութեամբ կեանքերնիս պիտի ըմնայ,  
և չենք գիտեր թէ ո՞րը պիտի մեր վերջի  
հիւանդութիւնը ըլլայ : Աւտի պէտք է  
որ ամէն հիւանդութեան ատեն պատրաս-  
տուինք սիրով ընդունելու մահն որ Աս-  
տուած սահմաներ է : Ա՛րսէ հիւանդ մը .  
— Բայց ես շատ մեղքեր գործեր եմ, իսկ  
ապաշխարութիւն ամենեւին ոչ : Ար փա-  
փաքիմ ողջ մնալ, չէ թէ ողջ մնալու հա-  
մար, հասցա մեռնելէս առաջ ապաշխա-  
րանք մը ընելու համար : — Բայց, եղբայր  
իմ, ըսէ ինձի, ինչէն գիտես որ ողջ որ  
մնաս ապաշխարութիւն պիտի ընես, և  
առջինէն գէշ բան պիտի չգործես : Չե՞ս  
մի կրնար յուսալ որ Աստուած քեզի թու-  
ղութիւն տուած ըլլայ . ասկէջ աղէկ ա-  
պաշխարանք կրնայ ըլլալ, որ Աստուծոյ  
կամայը հսկատակութեամբ ընդունիս մա-

Տը , թէ որ Աստուած այսպէս կ'ուզէ :  
 Սուրբ Լուիսի Գոնցակա , որ քսանուի-  
 րեք տարեկան մեռաւ , այս մտածութեամբս  
 ուրախութեամբ ընդունեցաւ մահը . “ Հի-  
 մակ , ըսաւ , յուսամ որ Աստուծոյ շնորհա-  
 ցը մէջն եմ : Բայց ետքը չեմ գիտեր թէ  
 ինչ կը հանդիպի . ուստի գոհ կը մեռնիմ ,  
 թէ որ հիմակ Աստուծոյ կամքն է զիս ան-  
 գիի աշխարհքը կանչել , : Հայրն Յովհան-  
 նէս Աշիլեան կ'ըսէր՝ թէ ուր որ աղէկ սլատ  
 քաստութիւն ունի , թէսլէտ և միջակ ըլլայ  
 սլատրատութիւնը , սլիտի մահուան փա-  
 փաքի , որպէս զի վտանգէն խալըսի . որու-  
 հեռե քանի որ այս աշխարհքս ենք՝ միշտ  
 մեղանչելու ու Աստուծոյ շնորհքը կոր-  
 սընցնելու վտանգին մէջն ենք :

9 . Դարձեալ՝ մեր բնական տկարու-  
 թեանը նայելով՝ այս աշխարհքս չենք կրը-  
 նար ապրիլ առանց մեղք գործելու , գոնէ  
 ներելի մեղք . ուստի գէթ այս մտածու-  
 թեամբ՝ որ մէկ մ'ալ Աստուծոյ դէմ չմե-  
 ղանչենք սլիտի՝ ուրախութեամբ յանձն  
 առնենք մահը : Դարձեալ թէ որ ճշմար-  
 տապէս կը սիրենք զԱստուած , սլիտի սաս-

տիկ փափագինք որ երթանք զինքը տես-  
նանք, ու մեր ամենայն զօրութեամբը զին-  
քը սիրենք արքայութեան մէջ. որովհետեւ  
այս աշխարհքիս վրայ չենք կրնար կատա-  
րեալ կերպով զինքը սիրել. և թէ որ մահը  
մեզի դուռը չբանար, չենք կրնար մտնել  
այն սիրոյ երանելի հայրենիքը: Ասոր հա-  
մար կ'աղաղակէր սուրբն Օգոստինոս վա-  
ռեալ աստուածային սիրով. « Հանա, թող  
մտնիմ, Տէր, որ զքեզ տեսնամ », : Տէր,  
սուր ինձի մահ, վասն զի թէ որ չմտ-  
նիմ, չեմ կրնար գալ տեսնալ զքեզ, և  
դէմ յանդիման սիրել զքեզ:

10. Արկրորդ, պէտք է համբերու-  
թեան կրթութիւն ընել աղքատութիւն  
քաշելով: Ստոյգ է որ մեծ համբերու-  
թեան կրթութիւն պէտք է թէ որ ժամա-  
նակաւոր բարիքներու պակսութիւն քա-  
շենք: Սուրբն Օգոստինոս կ'ըսէ. « Ով  
որ Աստուած չունի, բան մը չունի. իսկ  
ով որ զԱստուած ունի՝ ամենայն բան ու-  
նի », : Ով որ զԱստուած ունի, ու աս-  
տուածային կամայը հետ միացեալ է՝ Աս-  
տուած ամենայն բարին կը գտնայ: Ահա

սուրբ Ֆրանչիսկոս բոկոսն , քորձ հա-  
 գած , և ամէն կողմանէ աղքատ , որ  
 “ Աստուած է՛մ և ամենայն է՛նչ ,” ըսելով ,  
 բոլոր աշխարհքիս թագաւորներէն հա-  
 բուստ կը սեպէր զինքը : Աղքատ կ'ըսուի  
 անիկա , որ կը փափաքի այն բարիքներու ,  
 զորոնք որ չունի . բայց ով որ բանի մը  
 չփափաքիր , ու իրեն աղքատութեանը  
 փայ գոհ է , լիով հարուստ է այնպիսին :  
 Ասոնց համար ըսաւ սուրբն Պօղոս . “ Բան  
 մը չունինք ու ամէն բան ունինք ,”<sup>1</sup> : Աս-  
 տուծոյ ճշմարիտ սիրողները բան մը չու-  
 նին , ու ամէն բան ունին . վասն զի թէ  
 որ ժամանակաւոր բարիք մը սրակսի՝ կը  
 դառնան առ Յիսուս , ու կ'ըսեն իրեն .  
 “ Տէր իմ , դու միայն ինձի բաւական ես ,”  
 և ասանկով սրտերնին գոհ կը մնայ :  
 Սուրբերը չէ թէ միայն աղքատութեան  
 համբերեցին , հասցա նաև ջանացան որ  
 ամէն բանէ մերկանան , որպէս զի ամէն  
 բանէ սրտերնին հեռացուցած՝ միայն Աս-

<sup>1</sup> Իբրև ոչինչ ունիցիմք , և զամենայն  
 ինչ ունիմք : Բ . Կոր . 2 . 10 :

տուժոյ հետ միանան : թէ որ աշխարհ-  
քիս ամէն բարիքներէն հրաժարելու հոգին  
չունինք նէ , գէթ գոհ ըլլանք այն վիճա-  
կին , որ Աստուած կ'ուզէ . և մեր հոգը  
երկրային հարստութեանց համար չըլլայ ,  
հապա արքայութեան բարեացը համար ,  
որ անհնապէս աւելի մեծ են , ու անվախ-  
ճան են . ու սրբուհի թերեղային ըսածը  
լաւ հասկընանք , թէ “ Որչափ որ հոս  
քիչ ունենանք , անդին այնչափ աւելի  
կ'ունենանք , ” :

11 . Սուրբն Բոնավենդուրա կ'ըսէր ,  
որ ժամանակաւոր բարեաց լիութիւնը ու-  
տրդ մըն է հոգւոյն , որ կ'արգիլէ առ Աս-  
տուած թուչելու : Այլ ընդհակառակն կ'ը-  
սէ սուրբ Յոհաննէս Ալիմարոս , որ աղքա-  
տութիւնը ճամբայ մըն է առանց արգել-  
քի առ Աստուած երթալու : Տէրն մեր ալ  
ըսաւ . “ Աբանի՛ հոգւով աղքատներուն ,  
վասն զի երկնից արքայութիւնը անոնցն  
է <sup>1</sup> , ” : Սէկալ երանութիւններով , հեղե-

<sup>1</sup> Երանի՛ աղքատաց հոգւով , զի նոցա  
է արքայութիւն երկնից : Մատթ . Ե . 3 :



րուն , սրտով մաքուրներուն՝ ՚ի հանդերձ  
 ձեալն խոստացուած է արքայութիւնը . բայց  
 հոգւով աղքատներուն խոստացուած է եր-  
 կինք (այսինքն երկնային զուարճութիւնը)  
 նաև աս աշխարհքիս վրայ . “ երկնից ար-  
 քայութիւնը անոնց է , , . և իրաւ , վասն  
 զի աղքատները նաև այս աշխարհքիս վրայ  
 առաջուց կը վայելեն արքայութիւնը : “ Հո-  
 գւով աղքատներ , , . կ’ուզէ ըսել՝ թէ ոչ  
 միայն երկրաւոր բարիքներէ աղքատ են ,  
 հասլա նաև փափաք ալ չունին անոնց , և  
 կերակրելու ու հագուելու բաւականը ու-  
 նենալով գոհ կ’ապրին , ինչպէս որ Մու-  
 ջիսալը կը յորդորէ . “ Աերակուր ու զգեստ  
 ունինք , անով գոհ ըլլանք , , <sup>1</sup> : Ա՛ազազա-  
 կէ սուրբն Վարենախոս Յուսափնեան .  
 “ Ո՛վ երանելի աղքատութիւն որ ամենեկին  
 բան մը չունի , և բանէ մը չվախնար . միշտ  
 զուարթ է և միշտ հարուստ . որովհետև  
 ինչ անհանգստութիւն որ կրէ , բոլորն ալ  
 հոգւոյն օգտին կը ծառայեցընէ , , : Սուրբն

<sup>1</sup> Աւելիմք կերակուր և հանդերձս , և  
 այնու շատասցուք : Ա . Տիմ . 2 . 8 :

Բեռնարդոս կ'ըսէ . “ Ագասը մուրացկանի մը պէս երկրաւոր բաներու քաղցած է . իսկ աղքատը հարուստ տիրոջ մը պէս զանոնք կ'արհամարհէ : Ագասը մուրացկանի մը պէս միշտ անօթի է . վասն զի ցանկացած բարիքներուլը ամենեւին չկըշտանար . ընդհակառակն աղքատը իբրու ամէն բանի տէր՝ կ'արհամարհէ զանոնք , որովհետեւ ամենեւին բանի մը չիտփաքիր :

12 . Օր մը Յիսուս Փուլինեոցի երանուհւոյն Անգեղայի ըսաւ . “ Թէ որ աղքատութիւնը մեծ բարիք մը չըլար , ես զան չէի ընտրեր , և ոչ իմ ընտրելոյս զանիկա բաժին կը թողուի , : Աւ իրացընէ սուրբերը զՅիսուս աղքատ տեսնելով՝ անոր համար աղքատութիւնը այնչափ սիրեցին : Սուրբն Պօղոս կ'ըսէ , որ հարրստն ալու փափաքը սատանայի որոգայթ մըն է , որով որ անհամար մարդիկներ կորսուեր են . “ Այլ որ հարստնալ կ'ուզէ՝ սատանային որոգայթը կ'ինկնայ , ու վնասակար փափաքներու ետեւէ կ'ըլլայ , որ զայնպիսիները կը սպաննեն ու կը կորսնցը .

նեն ,<sup>1</sup> : Այդպիսի դժբաղդները այս աշխարհքիս փուճ բարեացը համար անխաճան բարին կը կորսնցնեն որ է ինքն Աստուած : Ուստի իրաւամբք զուրցեց սուրբ Բարսեղ մարտիրոսը, երբոր Վիկիանոս կայսրը կը խոստանար իրեն՝ որ եթէ զՅիսուս ուրանայ, զինքը իրեն քրմապետը կ'ընէ .  
 “ Կայսեր ըսէք որ եթէ իր ինքնակալութիւնը ամբողջ ինձի տալու ըլլար՝ ինձի այնչափ բան չէր տար, որչափ որ ինձմէն կ'առնէր, զԱստուած կորսնցնել տալով ինձի , : Ուրեմն մեղի բաւական ըլլայ Աստուած, ու այն բարիքը որ ինքը մեզի կուտայ . ուրախանալով մեր աղքատութեանը վրայ թէ որ սլակսի մեզի այն որ կ'ուզէինք, ու չունինք . որովհետեւ յայսմ կայացեալ է արդիւնքը : Սուրբն Բեռնարդոս կ'ըսէ .  
 “ Աղքատութիւնը առաքինութիւն չսե-

1 Որք կամինն մեծանալ, անկանին յորոգայթ սատանայի և 'ի բազում ցանկութիւնս վնասակարս, որք ընկզմեն զմարդիկ 'ի սատակումն և 'ի կորուստ : Ա. Տիմ. 2 . 9 :

պուիր , հասլա աղքատութեան սէրը ,<sup>1</sup> :  
 Հատերը աղքատ են , բայց որովհետեւ ի-  
 րենց աղքատութիւնը չեն սիրեր , վարձք  
 մը չեն շահիր . անոր համար սուրբն Քնու-  
 նարդոս կ'ըսէ , որ աղքատութեան առա-  
 քինութիւնը աղքատ ըլլալուն վրայ չէ ,  
 հասլա աղքատութիւնը սիրելուն վրայ :

13 . Եւ այս աղքատութեան սէրը  
 մասնաւորապէս կրօնաւորները պիտի ու-  
 նենան , որ աղքատութեան ուխտ ըրած  
 են : Հատ կրօնաւորներ , կ'ըսէ՝ նոյն սուրբն  
 Քնունարդոս , “ Աղքատ ըլլալ կը փախա-  
 քին՝ բայց այս պայմանաւ որ իրենց բան մը  
 չսլակսի , ”<sup>2</sup> : Կ'ուզեն աղքատ ըլլալ ,  
 բայց չեն ուզեր որ բանի մը պակասութիւն  
 քաշեն : Այնպէս որ , կ'ըսէ սուրբն Պրան-  
 շիսկոս Սալեզեան , կ'ուզեն աղքատութեան  
 պատիւը , բայց ոչ աղքատութեան նսու-  
 թիւնները : Այսպիսիներուն վրայ է սրը-  
 բուհւոյն Քլարայի կարգէն երանուհւոյն  
 Սողոմէի ըսածը . “ Հրեշտակք ու մարդիկ

1 Թուղթ առ դուքսն Կոնրադոս :

2 Ճառ . 37 . դալստ . Տեառն :

ծաղը պիտի ընեն այն մայրապետը, որ  
 կ'ուզէ աղքատ ըլլալ, ու թէ որ իր մէկ  
 բանը սրահաս ըլլայ, կը սկըսի գանգա-  
 տիլ,, : Բարի մայրապետները անանկ չեն  
 ընեն, իրենց աղքատութիւնը ամէն հարըս-  
 տութենէ աւելի կը սիրեն : Մաքսիմիանոս  
 Բ կայսեր աղջիկը որ սրբուհւոյն Քլարայի  
 կարգէն բոկոտն մայրապետ ըլլալով Նա-  
 չեան Մարգարիտա կոչուեցաւ, երբոր իր  
 եղբորը Արշիգոսը Ալեքսանտրոս կար-  
 կըտած զգեստով մը ելաւ, եղբայրը քրոջը  
 ակնուականութեանը այս բանս անխայել  
 սեպեց. բայց կուսանը սրատասխան տուաւ .  
 “ Աղբայր իմ, ես այս սրատառատուն զգես-  
 տով աւելի գոհ եմ, քան թէ բոլոր ինքնա-  
 կալները իրենց ծիրանիներովը ,, : Սրբուհին  
 Մարիամ Մագդաղինէ Բացեան կ'ըսէր .  
 “ Աշրանի՛ կրօնաւորաց, որ սուրբ աղքա-  
 տութեամբ ամէն բանէ հեռացած ըլլալով,  
 կրնան ըսել. “ Տէր բաժին ժառանգութեան  
 իմց ,, : Աստուած իմ դու ես իմ բաժինս  
 ու իմ ամէն մեծութիւնս ,, : Սրբուհին Թե-  
 րեզա վաճառականէ մը շատ ողորմութիւն  
 ընդունելով, լուր խաւրեց իրեն ու ըտաւ ,

որ իր անունը կենաց դպրութեան մէջ  
 դրած է, և ասոր նշան այս աշխարհքիս  
 բաներուն սխտի սրակասութիւն քաշէ. և  
 իրօք վաճառականը բացը ելաւ, ու աղքատ  
 ութեամբ անցուց բոլոր կեանքը: Սուրբն  
 Առիճի Գոնցակա կ'ըսէր թէ մէկու մը  
 ընտրելոյ թիւէն ըլլալու հաւաստի նշանն  
 է՝ աստուածաւախ ըլլալը և միանդամայն  
 այս աշխարհքիս մէջ միշտ ու թշուառու  
 թիւն քաշելը:

14. Կերպով մը սուրբ աղքատութեան  
 կը պատշաճի այս աշխարհիս վրայ իր ազ-  
 գականաց ու բարեկամաց մահուամբը ա-  
 նոնցմէ զուրկ մնալ. այս բանիս մէջ ալ  
 պէտք է համբերութիւն ունենալ: Ոմանք  
 թէ որ ազգական մը կամ բարեկամ մը  
 կորսնցընեն, ալ չեն կրնար հանդարտիլ.  
 Խուց մը կը փակուին ու կու լան, ու իրենք  
 զիրենք տրտմութեան տալով՝ այնպէս ան-  
 համբեր կ'ըլլան, որ ալ հետերնին վա-  
 րուիլ չըլլար: Կ'ուզեմ հարցընիլ այդպի-  
 սիներուն, թէ այն կերպով տրտմելով, ու  
 այնչափ արցունք թափելով՝ որո՞ն հաճոյ  
 կ'ըլլան. Աստուծոյ. Աստուծոյ չէ. վասն

զի Աստուած կ'ուզէ որ իրեն կամայր հպա-  
 տակինք : Արդեօք այն վախճանեալ ան-  
 ձին . և ո՛չ . թէ որ հոգին կորսուեր է ,  
 կ'ատէ զքեզ ու քու արցունքներդ : Իսկ  
 թէ որ փրկութեան հասեր է , ու երկինքն  
 է , կը փափաքի որ Աստուծոյ շնորհակալ  
 ըլլաս իրեն համար . իսկ եթէ քաւարանն  
 է , կը փափաքի որ քու աղօթքովդ իրեն  
 օգնես , ու հպատակիս աստուածային  
 կամայր , ու ջանաս սուրբ ըլլալ , որպէս  
 զի օր մը արքայութիւնը նորէն իրեն ընկերն  
 ըլլաս : Ուրեմն այնչափ լալդ ի՛նչ բանի  
 կու գայ : Թէապինեանց կարգէն երա-  
 նաշնորհ Հայրն Յովսէփ Գարաշչիողոյ եր-  
 բօր իրեն մկ եղբայրը մեռաւ , ինքն ալ  
 իր ազգականացը քով գանուելով՝ որ լա-  
 լէն չէին դադրեր , ըսաւ անոնց . « Ե՛հ ,  
 այս արցունքները աւելի աղէկ բանի մը  
 համար սլահենք , Յիսուսի մահը լալու ,  
 որ մեզի հայր , եղբայր ու փեսայ եղաւ , ու  
 մեր սիրոյն համար մեռաւ ,, : Այսպիսի  
 դիպուածներու մէջ Յօբին ըրածն ընե-  
 բաւ է , որ իր բոլոր որդւոցը մեռնելուն  
 գոյժը առնելով , բոլորովն Աստուծոյ կա-

մայր հարտակուժեամբ՝ ըսաւ . “ Տէր  
 ետ , և տէր էաւ , , : Ըստուած տուաւ ին-  
 ծի այս որդիքս , և Ըստուած առաւ :  
 “ Ինչպէս որ Ըստուծոյ հաճոյ երևեցաւ ,  
 այնպէս եղաւ . Ըստուծոյ անունը օրհ-  
 նեալ ըլլայ , , <sup>1</sup> : Ինչ որ հանդիպեցաւ ,  
 Ըստուծոյ կամօքն եղաւ , և նոյնը հաճոյ  
 է ինծի ալ . ուստի միշտ կ’օրհնեմ զՄ-  
 տուած :

15 . Արբորդ՝ համբերութիւն պիտի ը-  
 նենք , ու ցուցրնենք Ըստուծոյ մեր սէրը՝  
 հանդարտ սրտով մարդկանց մեզի ըրած  
 անարգանքները կրելով : Արբոր մէկը ինք-  
 ղինքը բոլորովին Ըստուծոյ տայ , ինքն իսկ  
 Ըստուած կ’ընէ , կամ թոյլ կու տայ որ  
 մարդիկ արհամարհեն ու հալածեն զայնպի-  
 սին : Օր մը երանելի Հենրիկոս Սուզոնին  
 հրեշտակ մը երևցաւ , ու ըսաւ . “ Հեն-  
 րիկոս , մինչև հիմակ ուղածիդ պէս ինք-  
 ղինքդ մահացուցիր . ասկէ վերջը ուրիշնե-

1 Որպէս Տեառն հաճոյ թուեցաւ՝  
 նոյնպէս և եղև . եղիցի անուն Տեառն  
 օրհնեալ : Յօբ . Ա . 22 :



րուն ուզածին պէս պիտի մահանաս , :  
 Ու երկրորդ օրը երանելին պատուհանի մը  
 դիմաց կեցած ատեն՝ շուն մը տեսաւ որ  
 անպիտան լաթի կտոր մը առեր էր բերանը,  
 ու բօլորովին բզկկ բզկկ կ'ընէր . նոյն ա-  
 տեն ձայն մը լսեց , որ այսպէս կ'ըսէր ի-  
 րեն . “ Ետը պէս դուն ալ պիտի սպտառ  
 պատառ ըլլաս մարդկանց բերնէն , : Ըն  
 ատենը երանելի Հենրիկոսը վար իջաւ և  
 առաւ լաթին կտորն ու սլահեց , սրպէս  
 զի այն դուշակեալ վիշտերը քաշելու ատե-  
 նը իրեն մխիթարութիւն ըլլայ :

16 . Նախատանաց ու արհամարհանաց  
 սուրբերը զուարճութեան պէս կը փափա-  
 դին ու կը փնտռեն զանոնք : Սուրբն  
 Փիլիպպոս՝ Ների , որովհետև Հոով երե-  
 սուն տարիի չափ սրբոյն Հերոնիմոսի ը-  
 սուած տանը մէջ շատ նեղութիւններ կը  
 քաշէր , չուզեց այն տունէն ելնել և երթալ  
 իրեն նոր շինած Աղթալանքը , որ կ'ըսուի  
 Նոր եկեղեցի <sup>1</sup> , ուր արդէն կը բնակէին

1 Իտ. Chiesa nuova, որ Հոով Փիլիպպոսեան  
 Աղթալանից երկրանցը եկեղեցին է :

իրեն սիրելի որդիքը ու զինքը կը հրաւիրէին որ իրենց հետ մէկտեղ հոն քաշուի . մինչև որ շտախուրտեցաւ հոն երթալու Պապին յայտնի հրամանաւր : Սուրբն Յովհաննէս Ղազեան հարկադրուելով օգտփոխութիւն ընել հիւանդութեան մը պատճառաւ (որ ետքը իր մահուանն ալ պատճառ եղաւ)՝ չուզեց աւելի հանդիստ վանք մը երթալ , որուն մեծաւորն ալ իրեն բարեկամ էր , հասլա ընտրեց աղքատ վանք մը , մեծաւորն ալ իրեն ներհակ մարդ մը , որ իրաւցրնէ երկայն ատեն , ու գրեթէ մինչև սրբոյն մահը՝ չարչորկեց ու շատ կերպով նեղութիւն տուաւ իրեն , ինչուան նաև իր կրօնաւորացն ալ արգիլեց որ անոր այցելութեան չերթան : Սրբուհին թերեզա այս յիշատակաց արժանի խօսքը գրած է . “ Ով որ կատարելութեան կը բաղձայ , շատ պիտի զգուշանայ ըսելու՝ թէ Այս բանս ինձի առանց իրաւանց ըրին : Թէ որ միայն իրաւացի եղած խաչերը կ'ուզես քաշել , կատարելութիւնը քեզի համար չէ ” : Հռչակաւոր է այն սլատասխանը որ սուրբ Պետրոս մարտիրոսին

տուաւ խաչելեանն Յիսուս , երբոր սուրբը  
 կեցիւր կը գանդատէր թէ անիրաւ տեղը  
 զինքը բանտ գրեւ էին , որովհետեւ ինքը  
 յանցանք մը չունէր . Տէրն իրեն պատաս-  
 խան տուաւ . “ Այս ի՞նչ յանցանք ըրի ,  
 որ այս խաչիս վրայ ելայ չարչարուեցայ ու  
 մարդկանց համար մեռայ , : Ա՛հ , սուր-  
 բերը երբոր անարդու թիւն կրեն , ի՞նչպէս  
 կը մխիթարուին Յիսուսին մեղի համար  
 կրած նախաախնքներովը : Արքայն Աղիա-  
 զարի հարցուց իր ամուսինը , թէ ի՞նչ կ'ը-  
 նէ որ այնպիսի համբերութեամբ այնչափ  
 նախատանայ կը համբերէ , որ մինչև իր  
 ծառաներն ալ զինքը կը նախատէին . պա-  
 տասխան տուաւ . “ Ախարս կը վերացը-  
 նեմ ու կը մտածեմ զՅիսուս արհամար-  
 հեալ , ու կը տեսնամ որ խլին քաշած ա-  
 նարգանքներս իրեն մեղի համար քաշած  
 ներուն գիմացը ոչ ինչ են . և այսպէս  
 Աստուած ինձի ուժ կու տայ որ բոլորն  
 ալ հանդարտութեամբ սրտի քաշեմ , :  
 Ախով բանիւ՝ արհամարհանք , աղքատու-  
 թիւն , ցաւք , և ամենայն վիշտք թէ որ  
 այնպիսուց մը հանդիպին որ զԱստուած

չսիրեր, սրտածառ կ'ըլլան որ Աստուծով  
 աւելի հեռանայ. բայց աստուածասէր հո-  
 գւոյ մը հանդիպելու որ ըլլան՝ սրտածառ  
 կ'ըլլան աւելի Աստուծոյ հետ միանալու,  
 և աւելի զԱստուած սիրելու: «Շատ ջու-  
 րեր սէրը չեն կրնար մարել»,<sup>1</sup>: «Նեղու-  
 թիւնները որչափ ալ շատ ու ծանր ըլլան,  
 չէ թէ միայն չեն շիջուցաներ, հասլա ա-  
 ւելի կ'աճեցընեն սիրոյն բոցը այնպիսի  
 սրտի մը մէջ, որ ուրիշ բան չսիրեր բայ  
 Աստուծոյ:

17. Բայց Աստուած ինչո՞ւ համար մեր  
 կռնակը այսչափ խաչեր կը դնէ. միթէ  
 կ'ուրախանայ երբոր զմեզ աշխարհիս մէջ  
 վշտացած, նախատուած, հալածեալ ու  
 չարչարեալ տեսնայ. միթէ ինքը այնպիսի  
 անգութ բռնաւոր մըն է որ ուրախանայ  
 մեր վշտացը վրայ: Չէ, Աստուած բրու-  
 նաւոր չէ, և ոչ անգութ, ինքը մեր վրայ  
 բոլորովին գթութիւն և սէր է. բաւական  
 է միայն ըսել որ զմեզ այնչափ սիրեց, մինչ

1 Զուրք բազումք ոչ կարասցեն զսէր  
 շիջուցանել: Երգ. Ը. 7:

չև մեզի համար կեանքն ալ տուաւ : Իրաւ  
կ'ուրախանայ , երբոր տեսնէ որ կը չարչա-  
րուինք , բայց մեր օգտին համար , որպէս  
զի հոս նեղութիւն քաշելով՝ հանդերձեալ  
կեանքը քաշելու պատիժներէն ազատ ըլ-  
լանք , որուն որ արժանի ենք աստուա-  
ծային արդարութեան դէմ գործածնուս  
համար . կ'ուրախանայ , որպէս զի համ-  
բերութեամբ ու համակամութեամբ նեղու-  
թիւն քաշելով՝ մեր սիրոյն իրեն ապացոյց  
մը տանք . կ'ուրախանայ վերջապէս , որ-  
պէս զի չարչարուելով՝ մեծագոյն փառք  
ստանանք արքայութեան մէջ : Այս վախ-  
ճաններուս համար , որոնք բոլորն ալ գը-  
թութեան ու սիրոյ ցոյց են , կ'ուրախա-  
նայ Աստուած երբոր տեսնայ որ նեղութիւն  
կը քաշենք :

18 . Արդ այս գլխոյս կնիքը գնենք :  
Սեզի հանդիպած ամէն իշտաց մէջ լաւ  
համբերութիւն ընելու համար՝ պէտք է  
խելունիս պառկեցրնենք , որ ամէն տա-  
ռապանք Աստուծմէ կու գան՝ կամ ուղղա-  
կի՝ որ է ըսել շիտակ Աստուծոյ ձեռքէն ,  
և կամ անուղղակի՝ մարդկանց ձեռքով .

ու ասոր համար երբոր նեղութիւն ունե-  
 նանք, պէտք է Աստուծոյ շնորհակալ ըլ-  
 լանք, և ուրախ սրտիւ ընդունինք ինչ որ  
 ինքը մեզի համար յաջողութիւն կամ դժ-  
 բաղդութիւն կը կարգաւորէ. վասն զի ա-  
 մէն բան մեր օգտին կը դարձնէ: “Ու-  
 բոնք զԱստուած կը սիրեն՝ անոնց ամէն  
 բանի մէջ ՚ի բարին գործակից կ'ըլլայ,”<sup>1</sup>:  
 ‘Դարձեալ՝ երբոր միշտ մը մեզ նեղացընէ,  
 շատ օգտակար է որ մէկ մը աչուրնիս դէպ  
 ՚ի դժոխք դարձնենք, որուն երբեմն  
 արժանի եղեր ենք. վասն զի ամէն միշտ  
 դժոխքին համեմատութեամբ միշտ անհուն  
 կերպով նուազ է: Բայց ամէն ցաւ, ամէն  
 նախատինք, ամէն ընդդիմութիւն համբե-  
 րութեամբ քաշելու համար, ուրիշ մտա-  
 ծութիւններէ եւել աղօթքն է օգտակար.  
 աղօթքէն ետեւ է որ աստուածային օգնու-  
 թիւնը մեզի կը հասնի ու այնպիսի ուժ մը  
 կու տայ, որ մենք մեզմէ չունինք: Սուր-

<sup>1</sup> Որոց սիրենն զԱստուած, յամե-  
 նայնի գործակից լինի ՚ի բարիս: Հռ.  
 Ը. 28:

բերը ասանկ ըրած են . իրենք զիրենք Աստուծոյ յանձնելով՝ ամէն նեղութեանց ու հալածանաց յաղթեցին :

### ԻՂՁՔ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Տէր իմ, արդէն խեղքս լաւ պառկած է որ առանց նեղութիւն քաշելու ու նեղութեանց համբերելու արքայութեան պսակը չեմ կրնար շահիլ : Դաւիթ քեզի համար կ'ըսէր, թէ « Իբրմէն է իմ համբերութիւնս », <sup>1</sup> : Աս ալ կ'ըսեմ՝ նոյն բանը . դուն պիտի պարգևես ինծի նեղութեանց մէջ համբերութիւն : Ա՛տաջադրեմ անվերջ սրտիւ ամէն վիշտ ընդունելու, բայց ատենն որ կու գայ կը տրտմիմ, ու կը սոսկամ . ու թէ որ նեղութիւնն ալ քաշեմ, առանց արդեանց ու առանց սիրոյ կը քաշեմ . վասն զի քու հաճոյիցդ համար չեմ

1 Ձի 'ի նմանէ է ինձ համբերութիւն : Սղմ. ԿԱ. 6 :

կրնար քաշել : Ա՛հ , Յիսուս իմ , իմ սիրոյս համար այնչափ քաշած չարչարանացդ համբերութեանը համար ըլլայ՝ տուր ինձի շնորհք որ ինչ խաչ որ ըլլայ՝ քու սիրոյդ համար տանիմ : Բոլոր սրտանց կը սիրեմ՝ զքեզ , փրկիչ իմ սիրելի . կը սիրեմ զքեզ , իմ գերագոյն բարիքս . կը սիրեմ զքեզ , իմ սէրս , արժանիդ անհուն սիրոյ : Ամէն թշուառութենէ եւել կը ցաւիմ ինչ որ քեզի դէմ գործեր եմ : Կը խոստանամ քեզի համբերութեամբ ընդունելու ինչ տառապանք որ ինձի խաւրելու ըլլաս , բայց յոյսս քու օգնութեանդ վրայ է որ այս խոստմունքս կարենամ կատարել , մանաւորապէս անվրդով կրելու իմ հոգեվարքի ու մահուան ցաւերս : Սարիամ , թագուհի իմ , դու ընդունէ ինձի համար աստուածային կամաց ճշմարիտ հպատակութեան շնորհքը ամէն նեղութեանց մէջ որ կենացս ու մահուանս ատեն սլիտի քաշեմ :



## ԳԼՈՒԽ ԺԵ

ՍԷՐ ԱՄԵՆԱՅԵՒ ՀԱՒԱՏԱՅ

Ով որ կը սիրէ զՅիսուս՝ իրեն ամէն  
խօսքերուն կը հաւատայ :

1 . Ով որ սէր ունի՝ իրեն սիրելոյն  
ամէն ըսածին կը հաւատայ . այս պատճա-  
ռաւ հոգւոյ մը սէրը որչափ որ մեծ ըլլայ  
առ Յիսուս , այնչափ աւելի հաստատուն  
ու կենդանի կ'ըլլայ իրեն հաւատքը : Տա-  
րի աւագակը երբոր տեսաւ որ փրկիչն մեր  
խաչին վրայ կը մեռնէր առանց մէկ յան-  
ցանքի մը , ու այնչափ համբերութիւն ու-  
նէր , սկսաւ սիրել զինքը . ու այս սիրովս  
վառեալ , ու աստուածային լուսով լուսա-  
ւորեալ՝ հաւատայ որ ճշմարտապէս Արդի  
Աստուծոյ է . ուստի աղաչեց որ զինքը յի-  
շէ՛ երբոր իր արքայութեանը հասնի :

2 . Հաւատքը սիրոյ հիմն է , ու թէ-  
պէտ սէրը հաւատքի վրայ հիմնած է ,

բայց սէրը զհաւատքը կը կատարելագործէ : Այլ որ աւելի կատարեալ կը սիրէ զԱստուած՝ աւելի կատարեալ հաւատք կ'ունենայ : Սէրը կ'ընէ որ մարդ չէ թէ միայն մտքով հաւատայ , հասցա կամքով ալ : Անոնք որ մտքով միայն կը հաւատան , բայց ոչ կամքով , ինչպէս որ են մեղաւորները , որ կը ճանչնան թէ իրաւ ճշմարիտ են հաւատոյ ճշմարտութիւնները , բայց չեն ուզեր ըստ աստուածային սրտուիրանաց օրերնին անցընել . այսպիսիներուն հաւատքը շատ տկար է . վասն զի թէ որ կենդանի հաւատք ունենալու ըլլային , ու հաւատային թէ աստուածային շնորհքն է բարիք մը գերազանց քան զամենայն բարիս , և թէ մեղքը թշուառութիւն մըն է չար քան զամենայն թշուառութիւնս՝ որ զմեզ աստուածային շնորհքէն կը զրկէ , տարակոյս չկայ որ վարքերնին կը փոխէին : Արեմն քան զԱստուած մեծ որ կը համարին այս աշխարհքիս խեղճ բարիքը , անկէց է որ կամ հաւատք չունին , և կամ ունեցածնին ալ շատ տկար է : Իսկ ընդհակառակն ուլ որ չէ թէ միայն մտք

քով, հասկա կամքով ալ կը հաւատայ, անանկ որ չէ թէ միայն կը հաւատայ, հասկա կ'ուզէ հաւատալ Աստուծոյ յայտնութեանը՝ զԱստուած սիրելուն համար, ու հատալուն վրայ կ'ուրախանայ. այնպիսին կատարելասէս կը հաւատայ, ու անոր համար կը ջանայ իրեն վարքը հաւատացած ճշմարտութեանը հետ համաձայնել:

3. Սակայն մեղայ մէջ օրերնին անցընողներուն հաւատքի պակասութիւնը չէ թէ հաւատքի մթութենէն առաջ կու գայ, որովհետեւ հաւատքի բաները Աստուած մեզի թէ որ մթին ալ թողուց ու գաղտնի ալ որ պահեց, որպէս զի վարձք ստանանք անոնց հաւատալով, բայց սակայն հաւատքի ճշմարտութիւնը այնպէս յայտնի է իր բայայայտ նշաններուն պատճառաւ՝ որ չհաւատալը չէ թէ միայն անխոհեմութիւն կ'ըլլայ, հասկա ամբարշտութիւն ու կատարեալ խենդութիւն: Աւստի շատերուն հաւատքի տկարութիւնը իրենց գէշ վարքէն է: Ալ որ արգելած հեշտութիւններէ չզրկուելու համար աստուածային բարեկամութիւնը կ'արհամարհէ՝ կը փափաքի որ

զանոնք արգելող օրէնք մը դրուած չըլլար, և ոչ մեղանշողներուն՝ փոխարէն պատիժ . անոր համար կը ջանայ միտքը հեռու բռնել յաւիտենական ճշմարտութիւններէն, մահուան, դատաստանի, դժոխքի, աստուածային արդարութեան մտածութիւններէն . և որովհետեւ այս նիւթերը զինքը շատ կը սարսափեցնեն, ու իրեն հեշտութիւնները կը դառնացնեն, բոլոր խելքը կը թափէ որ գէթ հաւանական պատճառներ գտնայ, ու անոնցմով կարենայ համոզուիլ կամ զինքը խաբել որ ոչ հողի կայ, ոչ Աստուած, և ոչ դժոխք, որպէս զի անասնոց պէս ապրի ու մեռնի, որոնք ոչ օրէնք ունին և ոչ բանավարութիւն :

4 . Այս վարուց մեղկութիւնն է աղբիւրը, ուսկից որ առաջ եկած են, ու օր աւուր առաջ կու գան նիւթակրօնից, անտարբերականներու, քաղաքագէտներու, աստուածեանց ու բնակրօնից գրքերն ու համադրութիւնները . ասոնցմէ ոմանք Աստուծոյ գոյութիւնը կ'ուրանան, ոմանք աստուածային նախախնամութիւնը կ'ու-

բանան ու կ'ըսեն թէ Աստուած զմարդ ստեղծելէն ետքը՝ անոր վրայ ամենևին հոգ մը չընեն, զինքը սիրեն են, իրեն դէմ գործեր են՝ փոյթն ալ չէ կ'ըսեն, ուզին փրկուին ուզեն կորսուին . ոմանք ալ Աստուծոյ բարութիւնը կ'ուրանան ու կ'ըսեն թէ Աստուած շատ հոգիներ դժոխքի համար ստեղծեր է, ու ինքը զանոնք մեղքի մէջ կը ձգէ, որպէս զի դատապարտուին ու երթան զինքը միշտ հայհոյեն յաւիտենական կրակին մէջ :

Ծ . Այլ մարդկային աստեղծութիւն ու չարութիւն : Աստուած զմարդ իրեն ողորմութեանը համար ստեղծեց՝ որպէս զի երկինքը յաւիտեան երանելի ընէ . իրեն այնպիսի առատութեամբ լոյս, բարեբարութիւն ու շնորհք տուաւ, որպէս զի յաւիտենական կենաց արժանի ըլլայ . նոյն վախճանին համար այնչափ չարչարանօք ու այնպիսի սիրով զինքը փրկեց . բայց մարդը կ'աշխատի որ բանի մը չհաւատայ, որպէս զի ուզածին պէս մոլութեանց մէջ կեանքը անցընէ : Բայց որչափ ալ որ աշխատելու ըլլայ՝ ողորմելին չկրնար խրդ՝

մտանքին խայթերէն ու աստուածային  
 վիճիմնորութեան վախէն ազատիլ : Այս  
 նիւթիւս վրայ առանձին գիրք մը գրած եմ  
 որ կ'ըսուի Ճշմարտութիւնն Հասարակ . այն  
 գրքին մէջը բացայայտ ցրցուցի թէ հիմա  
 կուան ջնչահաւատից համադրութիւնները  
 որչափ խախուտ են : Ա՛հ , թէ որ մնու  
 թիւնները թողու ըլլան , ու սկսին զՅի  
 սուս սիրել , անտարակոյս հաւատքի բա  
 ներուն վրայ երկբայութիւն չէին ունենար ,  
 ու հաստատութեամբ կը հաւտային Աս  
 տուծոյ յայտնած ամէն ճշմարտութեան  
 քը :

6 . Ա՛լ որ զՅիսուս սրտանց կը սիրէ ,  
 աչքին դիմացէն ոչ երբէք կը հեռացընէ  
 յաւիտենական ճշմարտութիւնները , և ա  
 նոնց կը յարմարցընէ իրեն գործողութիւն  
 ները : Ա՛լ որ զՅիսուս կը սիրէ , ա՛հ , ինչ  
 պէս ըս կը հասկընայ իմաստնոյն այն խօս  
 քը , թէ “ Ամէն բան բոլորովին սլարասլ  
 է ”<sup>1</sup> : Ար ամէն երկրաւոր մեծութիւն

1 Աւնայնութիւն ունայնութեանց՝ ա  
 մենայն ինչ ընդունայն է : Ժող . Ա . 2 :

ծուխ է, տիղմ՝ ու խաբէութիւն . ու հոգւոյն միակ բարիքն ու երջանկութիւնը իր ստեղծողը սիրելն է ու անոր կամքը կատարել . ու մենք այն ենք ինչ որ ենք Աստուծոյ առջին . ու բանի չգար բոլոր աշխարհքս վաստակիլ, թէ որ հոգին կորսուի . ու բոլոր երկրաւոր բարութիւնները գոհ չեն կրնար ընել մարդուս սիրտը, բայց միայն Աստուած . վերջապէս, պէտք է թողուլ ամէն բան՝ ամէն բան վաստակելու համար :

7 . Սէր ամենայնի հաւասարայ : Կան ուրիշներ ալ որ թէպէտ այնպէս ասպականեալ չեն՝ ինչպէս անոնք որ քիչ մը առաջ յիշեցինք, որոնք որ կ'ուզեն բանի մը չհաւատալ, որպէս զի համարձակ ու անխիղճ մտութեանց մէջ օրերնին անցընեն . կան ուրիշներ ալ կ'ըսեմ որ կը հաւատան, բայց թոյլ հաւատք մը ունին . կը հաւատան սրբազան խորհուրդներու, Աստարանի մէջ յայտնուած ճշմարտութեանց, Աբրորդութեան, Մարդեղութեան, սուրբ խորհրդոց և ուրիշ ճշմարտութիւններու, բայց բոլորին չեն հաւատար : Յիսուս ը-

սաւ . “ Արնե՛կ աղքատաց . երնե՛կ վշտացեալոց . երնե՛կ անոնց որ իրենք զիրենք կը մահացընեն . երանի՛ անոնց զորոնք որ մարդիկ կը հալածեն , կը բամբասեն ու կը չարախօսեն ,”<sup>1</sup> : Յիսուս Աւետարանին մէջ այսպէս կ’ըսէ : Բայց ի՞նչպէս կրնանք ըսել թէ Աւետարանին կը հաւտան անոնք՝ որ կ’ըսեն . երնե՛կ անոր որ ստակ ունի . երնե՛կ անոր որ նեղութիւն չքաշեր . երնե՛կ անոր որ զուարճութեամբ օրերը կ’անցընէ . վնձ անոր որ կը հալածեն ու կը չարչարեն : Ասոնց համար պէտք է ըսել որ կամ Աւետարանին չեն հաւտար , կամ թէ կէս մը միայն կը հաւտան : Այլ որ բոլոր Աւետարանին կը հաւտայ՝ իրեն բաղդ ու ստուածային շնորհք կը սեպէ այս աշխարհքիս մէջ աղքատ , հիւանդ , մահացեալ ,

1 Երանի՛ աղքատաց : Ղկ . 2 . 20 : Երանի՛ որ լան : Անդ . 21 : Երանի՛ որ քաղցեալ և ծարաւի իցեն : Մտթ . Ե . 5 : Երանի՛ որ հալածեալ իցեն : Անդ . 10 : Երանի՛ է ձեզ յորժամ նախաստիցեն զձեզ և ասիցեն զամենայն բան չար զձե՛նջ : Անդ . 11 :



ու մարդիկներէ նախատեալ ու բամբա-  
սեալ ըլլալը : Ասանկ կը հաւտայ ու ա-  
սանկ կ'ըսէ՝ ուլ որ Աւետարանին մէջ ը-  
սուած ամէն բանին կը հաւտայ , ու ճիշ-  
մարտապէս կը սիրէ զՅիսուս :

### ԻՂՁՔ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Փրկիչ իմ սիրելի , ո՛վ կեանք խմին հո-  
գւոյս , կը հաւատամ ես որ դուն ես մէկ  
հատիկ բարութիւն արժանի սիրուելու :  
Ար հաւատամ որ դուն ես միակ բարի  
արժանի ամենայն սիրոյ : Ար հաւատամ  
որ դուն ես իմ հոգւոյս անհուն սիրողը ,  
որովհետեւ սիրոյդ համար միայն յանձն  
առիր չարչարանօք հալիլ ու մեռնիլ վասն  
սիրոյ իմոյ : Ար հաւատամ որ այս ու  
հանդերձեալ կեանքը ուրիշ երանութիւն  
չկայ՝ բայց եթէ զքեզ սիրել , ու քու-  
կին կամքդ կատարել : Այս ամէն բա-  
նիս հաստատութեամբ կը հաւտամ , ու  
անոր համար ամէն բանէ կը հրաժարիմ ,

որ բոլորովին քուկդ ըլլամ ու զքեզ միայն  
 ժառանգեմ: Քուկին չարչարանացդ ար-  
 դեամբքը օգնէ ինձի, ու զիս ինչպէս որ  
 դուն կ'ուզես՝ անանկ ըրէ: Մ'ի ճշմար-  
 տութիւն անխաբելի, կը հաւտամ քեզի .  
 ո՛վ անսահման ողորմութիւն, քու վրագ-  
 դրած եմ բոլոր յոյսս . ո՛վ անսահման բա-  
 րութիւն, կը սիրեմ զքեզ . ո՛վ անսահման  
 սէր, որ չարչարանօքդ ու սուրբ սեղանոյն  
 խորհրդովը զքեզ բոլորովին ինձի սլար-  
 գեւեցիր, ես ալ զիս բոլորովին քեզն՝ կու-  
 տամ: Քեզի ալ կը յանձնեմ զիս, ո՛վ  
 ապաստանարան մեղաւորաց, և մայր Աս-  
 տուծոյ Ս'արիամ:



## ԳԼՈՒԽ ԺԶ.

ՍԵՐ ԱՄԵՆԵՒԻՆ ՅՈՒՍԱՅ

Ով որ զՅիսուս կը սիրէ, Յիսուսէն  
ամէն բանի յոյս կ'ունենայ :

1. Յոյսն զսէրը կ'աճեցընէ, ու սէրն  
ալ զյոյսը կ'աճեցընէ : Անտարակոյս Աս-  
տուծոյ բարութեանը վրայ յոյս դնելով  
կ'աճի սէրն առ Յիսուս : Սուրբն Թով-  
մաս կը գրէ թէ երբոր մէկէ մը բարիք մը  
յուսանք, կը սկսինք զանիկա սիրել ալ .  
“ Վասն զի այն սրատճառին համար, կ'ը-  
սէ սուրբը, որ կը յուսանք թէ մէկէ մը  
մեզի բարիք մը կրնայ գալ, անոր կը յա-  
րուինք իբրև առ բարին մեր, և ասանկով  
կը սկսինք զանիկա սիրել <sup>1</sup> : Անոր հա-  
մար ատէրն մեր չուզեց որ յոյսերնիս արա-  
բաճոց վրայ դնենք . “ Իշխանաց վրայ յոյ-

1 Սուրբ Թովմ. Ագուին . Մասն Բ .  
Խնդ . Խ . յօդ . Բ :

սերնիդ մի գնէք ,<sup>1</sup> : Ու կ'անիծէ ուլ որ  
 յոյսը մարդու վրայ կը դնէ . “ Անիծեալ  
 ըլլայ այն մարդը՝ որ իր յոյսը մարդու վրայ  
 կը դնէ ,”<sup>2</sup> : Աստուած չուզեր որ արարա-  
 ծոց վրայ յոյս դնենք , վասն զի չուզեր որ ա-  
 րարածոց սիրովը կասուինք : Անոր համար  
 սուրբն Վինչենցիոս Պաւլայեցին կ'ըսէր .  
 “ Ար զգուշացրնենք որ չըլլայ թէ մարդ-  
 կանց պաշտպանութեանը վստահանանք .  
 վասն զի Աստուած տեսնալով որ մարդ-  
 կանց վստահացեր ենք , կը հեռանայ մեզ  
 մէ : Իսկ ընդ հակառակն որչափ աւելի  
 Աստուծոյ վրան դնենք մեր վստահութիւ-  
 նը , այնչափ աւելի Աստուծոյ սիրոյն մէջ  
 կը յառաջանանք : “ Սիրտս որ հանդար-  
 տեցուցիր՝ քու պատուիրանացդ ճամբուն  
 մէջ վազելով առաջ գացի ,”<sup>3</sup> : Ո՛հ , կա-

1 Մի յուսայք յիշխանս : Սղմ. ՃԻԵ . 3 :

2 Անիծեալ լինի մարդ , որ արասցէ  
 զյոյս իւր ՚ի մարդ : Երեմ. ԺԷ . 5 :

3 Ի ճանապարհս պատուիրանաց քոց  
 ընթացայ , զի անդորր արարեր սրտի ի-  
 մոյ : Սղմ. ՃԺԸ , 32 :

տարելութեան ճամբուն մէջ ինչպէս վազելով առաջ կ'երթայ անիկա , որ Աստուծոյ վստահացած՝ սիրտը հանդարտ կը պահէ : Չէ թէ միայն վազելով առաջ կ'երթայ , հասպա կը թռչի ալ . վասն զի բոլոր յոյսը իր Աստուծոյն վրայ դրած ըլլալով , իր ունեցած տկարութիւնը կը թողու , ու Աստուծոյ զօրութեամբը կը զօրանայ . վասն զի ուր որ Աստուծոյ կը վստահի , կը հաղորդէ անոր իր զօրութիւնը : “ Ալ որ աչքը Աստուծոյ տնկած է , նոր ուժ կ'առնէ . արծուի պէս նոր փետուրներ կ'առնէ , կը վազէ ու չյողնիր . առաջ կ'երթայ ու չտկարանար ”<sup>1</sup> : Արծիւը բարձրէն թռչելով աւելի արեւուն կը մտննայ . ասանկ ալ Աստուծոյ վստահանալով զօրացած հոգին երկրէս կը վերանայ , ու սիրով Աստուծոյ հետ աւելի կը միանայ :

2 . Այլ ինչպէս որ յոյսը կ'աճեցընէ

<sup>1</sup> Որ սպասէն Տեառն՝ նորոգեացին զօրութեամբ . նորափետուր զարդարեացին իբրև զարծուիս . ընթացին , և մի վաստակեացին . գնացեն և մի քաղցիցեն : Եսայ . Խ . 31 :

զսէրն առ Աստուած , ասանկ ալ սէրը  
կ'աճեցրնէ յոյսը , վասն զի սէրը զմեզ  
Աստուծոյ որդեգիր կ'ընէ : Բնական կար-  
գին մէջ Աստուծոյ ձեռացը գործքերն  
ենք մենք . բայց գերբնական կարգին  
մէջ Յիսուսի արդեամբքը Աստուծոյ որ-  
դի եղած ենք , ու աստուածային բնու-  
թեանը՝ հաղորդ , ինչպէս որ կը գրէ Պե-  
տրոս Առաքեալ . Անու՛ աստուածային  
բնութեանը հաղորդ ըլննք ,<sup>1</sup> : Եւ թէ  
որ սէրը զմեզ Աստուծոյ որդի կ'ընէ , կը  
հետևի որ արքայութեան ալ ժառանգ կ'ը-  
նէ . ինչպէս որ կ'ըսէ Պողոս Առաքեալ .  
« Թէ որ որդիք ենք , ուրիմն ժառանգ ալ  
ենք , »<sup>2</sup> : Արդ որդւոց հօրը տունը բնա-  
կել կ'ինկնայ , ժառանգներու ալ՝ ժառան-  
գութիւնը , ասոր համար է որ սէրը ար-  
քայութեան յոյսը կ'աճեցրնէ . ուստի Աս-

1 Զի նոքիմք աստուածեղէն բնու-  
թեանն լինիցիմք հաղորդակեցք : Բ .  
Պետր . Ա . 4 :

2 Եթէ որդիք , ապա և ժառանգք :  
Հռոմ . Ը . 17 :

տուժոյ սիրովը վառուած հոգիք անդա-  
դար կ'աղաղակեն առ Աստուած . “ Ահես-  
ցէ՛ արքայութիւնքո՛ւ , , :

3 . Դարձեալ՝ ուլ որ զԱստուած կը  
սիրէ , Աստուած ալ զինքը կը սիրէ . “ Ուլ  
որ զիս կը սիրէ , ես ալ զինքը կը սիրեմ , ”<sup>1</sup> :  
Աւ ուլ որ սիրով զինքը կը փնտուէ , զա-  
նիկա շնորհօք կը լեցնէ . “ Ուլ որ Աս-  
տուժոյ համար նեղութեան կը համբերէ ,  
անոր բարերարութիւն կ'ընէ , ”<sup>2</sup> : Ուստի  
կը հետեւի որ ուլ որ աւելի կը սիրէ զԱս-  
տուած , Աստուժոյ բարութեանը վրայ ա-  
ւելի յոյս կը դնէ : Ու սրբոց սրտին մէջ  
այն անայլայլելի հանդարտութիւնը առաջ  
կու գայ այսպիսի վստահութենէ , եւ ա-  
նով ձախորդութեանց մէջ ալ միշտ ուրախ  
ու միշտ խաղաղ կը մնան : Վ՛յ ասն զի զՅի-  
սուս կը սիրեն , ու գիտեն թէ Յիսուս սը-

1 Ես՝ որ զիսն սիրենն՝ սիրեմ : Առաւի-  
ճ . 17 :

2 Բարերար է Աստուած 'ի վերայ  
համբերողաց իւրոց : Ողբ Երեմ . Գ .  
25 :

չափ առատաձեռնութեամբ իր շնորհքը կուտայ անոր՝ որ զինքը կը սիրէ . ու իրեն վրայ միայն յոյսերնին դնելով՝ հանգիստ կը գրտնան : Այս պատճառիս համար հարսնն խորհրդական լին էր զուարճութեամբ, վասն զի իր սիրելիէն զատ ուրիշ չսիրելովը , անոր վրայ միայն վստահացած էր . և գիտնալով թէ զինքը սիրողին որչափ երախտագէտ է , բոլորովին գոհ էր . անոր համար այսպէս գրուած է այս խորհրդական հարսին վրայ . “ Ո՞վ է ատ որ բոլորովին լուսի պէս փայլուն կու գայ . իր սիրելոյն կոթնած ելեր կու գայ ,”<sup>1</sup> : Իմաստունին ըսածը շատ ճշմարիտ է . “ Ինձի ամէն բարիք անոր հետ մէկ տեղ եկան ,”<sup>2</sup> : Սիրոյն հետն ամէն բարիք կու գան հոգւոյն :

4 Քրիստոնէական յուսոյն գլխաւոր

1 Ո՞վ է այն որ ելեալ գայ սալիտակացեալ . յենու գայ յեղբորորդին իւր : Երգ երգոց . Ը . 5 :

2 Եկին ինձ բարութիւնք միանգամայն ընդ նմա : Իմաստ . Է . 11 :



առարկայն Աստուած է, զոր երանելեաց  
 Հոգիք արքայութեան մէջ կը վայելն: Բայց  
 չըլլայ թէ մէկը կարծէ որ արքայութեան  
 մէջ Աստուած վայելելու յոյսը սիրոյ դէմ  
 է. վասն զի 'ի սիրոյն անբաժանելի է ար-  
 քայութեան յոյսը. և այն սէրը արքայու-  
 թեան մէջ սլիտի կատարելագործուի, ու  
 իր լուսնը սլիտի գտնայ: Սէրը այն անհուն  
 գանձն է, որ ինչպէս իմաստունը կ'ըսէ՝  
 զմեզ Աստուծոյ բարեկամ կ'ընէ. «Մար-  
 գուս անսպական գանձ է. ու ով որ այս  
 գանձս գործածեց, Աստուծոյ Հետ բա-  
 րեկամութեամբ կապուեցաւ», <sup>1</sup>: Հրեշ-  
 տակայինն սուրբ Թովմաս կը գրէ <sup>2</sup>, թէ  
 բարեկամութեան Հիմն է իրարու բարեաց  
 մասնակցութիւնը. վասն զի բարեկամու-  
 թիւնը ուրիշ բան չէ՝ բայց եթէ բարեկա-  
 մաց իրարու վրայ փոխադարձ սէր. և

1 Անսպական գանձ է նա մարդկան .  
 որով որք վարեցան՝ առ Աստուած ա-  
 ռաքեցին զբարեկամութիւն: Իմաստ .  
 է . 14 :

2 Մասն Բ . Խնդ . 4Ե . 107 . Ե :

հարկ է որ իրարու բարիք ընեն, որչափ որ իւրաքանչիւրոց ձեռքէն կու գայ : Ուստի կ'ըսէ սուրբը . « Թէ որ մշտնջին հաղորդակցութիւն չըլլայ, բարեկամութիւն չկրնար ըլլալ » : Այս բանիս համար ըսաւ Յիսուս իրեն աշակերտացը . « Չձեզ բարեկամ անուանեցի, վասն զի հօրմէս ինչ որ ըսեցի ձեզի յայանեցի »<sup>1</sup> : Որովհետեւ զիրենք իրեն բարեկամ էր ըրեր, իրեն գաղտնիքները անոնց հաղորդեր էր :

Ծ . Կ'ըսէ սուրբ Իրանչլիակոս Սալեզեան . « Անկարելի բան մը ենթադրելով, թէ որ ըլլար անսահման բարութիւն մը (այսինքն Աստուած մը), որուն հետ ամենեւին կերպով մը վերաբերութիւն մը չունենայինք, ու հետը չկարենայինք միութիւն ունենալ և ոչ հաղորդակցութիւն մը, անտարակոյս մեզմէ վեր կը սեպւէինք զանիկա . և թերեւս փառիաք մ'ալ մեզի

<sup>1</sup> Չձեզ կոչեցի բարեկամս, զի զամենայն զոր լուսայ 'ի հօրէ իմմէ, ծանուցի ձեզ : Յովհ . ԺԵ . 15 :

գար զինքը սիրելու . բայց չէինք սիրեր , ինչու որ սէրը միութիւն կը պահանջէ . որովհետեւ սէր ըսածդ բարեկամութիւն մըն է , և բարեկամութեան հիմը՝ հաղորդակցութիւնն է , և վախճանը՝ միութիւն , : Աւտի կ'ըսէ սուրբն Թովմաս՝ որ սէրը վարձուց փափաքը դուրս չձգեր , որն որ Աստուած երկինքը մեզի համար պատրաստեր է . հապա մանաւանդ թէ զայն վարձքը մեր սիրոյն գլխաւոր առարկայն սեպելու տայ , որ է Աստուած , զորն որ կը վայելն երանեալ հոգիք . վասն զի բարեկամութիւնը կը պահանջէ որ բարեկամք զիրար վայելն . “ Բարեկամաց սեփական է որ ջանան մէկզմէկ վայելել . իսկ մեր վարձքը ուրիշ բան չէ , բայց եթէ վայելել զԱստուած՝ զինքը տեսնելու . ուրեմն սէրը ոչ միայն վարձքը դուրս չձգեր , հապա անանկ կ'ընէ որ աչուրնիս վարձքին տնկնիք ” <sup>1</sup> :

6 . Այլ ասիկա բարեաց այն փոխա-

1 Սուրբ Թովմ . Գ . Աճիւ . Զա-  
նազ . ԻԹ . Խնդ . Բ . Եօդ . Դ :

զարձ հաղորդակցութիւնն է, որուն վրայ կը խօսէր Արգ երգոցին հարսը. “ Սիրելիս՝ իմն է, ու ես ալ իրենն եմ”,<sup>1</sup> : Հոգին երկինքը բոլորովին ինքզինքը Աստուծոյ կու տայ, Աստուած ալ բոլոր ինքզինքը հոգւոյն կու տայ, որչափ որ հոգին ընդունակ է՝ իրեն արդեանցը չափուն համեմատ : Բայց հոգին Աստուծոյ անսահման սիրելութեանը նայելով կը ճանչնայ իր ոչնչութիւնը . և անոր համար տեսնելով որ Աստուած անհուն առաւելութեամբ արժանի է սիրուելու, իսկ ինքը ամենեւին արժանաւորութիւն մը չունի Աստուծմէ սիրուելու՝ աւելի կը փափաքի որ Աստուծոյ հաճոյքն ըլլայ, քան թէ իր վայելքը . ու ասոր համար աւելի կ'ուրախանայ բոլոր զինքը Աստուծոյ տալով՝ զԱստուած հաճելու համար, քան թէ Աստուած ինքզինքը այն հոգւոյն տալովը . և անոր համար աւելի կ'ուրախանայ որ Աստուած զինքը բոլոր

1 Եղբօրորդին իմ ինձ և ես նմա : Երգ երգոց • Բ • 16 :

իրեն կը պարզուէ, վասն զի անով աւելի կը բորբոքի ինքը զինքը բոլոր Աստուծոյ տալու աւելի սաստիկ սիրով: Ա՛ռախանայ այն փառացը վրոյ որ Աստուած իրեն կը հաղորդէ, բայց կ'առախանայ նորէն Աստուծոյ մատուցանելու համար. ու ասանկով որչափ որ ձեռքէն կու գայ՝ Աստուծոյ փառքը կ'աճեցնէ: Արկինքը հոգին զԱստուած որ տեսնայ՝ չկրնար զինքը չսիրել բոլոր զօրութեամբը. իսկ Աստուած չկրնար ատել զայն որ զինքը կը սիրէ. բայց անկարելի բան մը ենթագրելով՝ թէ որ Աստուած կարենար ատել զինքը սիրող հոգին, ու երանեալ հոգին կարենար առանց զԱստուած սիրելու մնալ, շատ աւելի դո՛հ կ'ըլլար դժոխքին բոլոր պատիժները. քաշել, միայն թէ կարող ըլլար զԱստուած սիրել, թէպէտ և Աստուած զինքը ատէ, քան թէ առանց զԱստուած սիրելու մնալ, թէպէտ նաև կարենար վայելել արքայութեան մէկալ ամէն զուարճութիւնները: Ա՛յն ան զի հոգին ճանչնալով որ Աստուած անհուն կերպով աւելի քան զինքը արժանի է սիրուելու, աւելի կը փա-

փաբի զՄտուած սիրել, քան թէ Մտուածմէ սիրուիլ :

7 . Սէր աճնիւն յոսայ : Քրիստոսաւ կան յոյսը , ինչպէս որ սուրբն թաւմաս ու Վճոոյ Վարդապետը կը սորվեցընեն , այսպէս կը սահմանի . “ Յաւտենական երջանկութեան աներկբայելի ակնկալութիւն ” : Ալ այս ստուգութիւնը առաջ կու դայ Մտուծոյ անսխալ խոստմունքէն որ յաւտենական կեանք տայ իրեն հաւատարիմ ծառայիցը : Արդ որովհետեւ սէրը մեղքը կը վերցընէ , ասանկ ալ երանութեան հասնելու արգելքն ալ միանգամայն կը վերցընէ . ասոր համար որչափ որ մեծ ըլլայ սէրը , այնչափ աւելի մեր յոյսը հաստատ ու մեծ կ'ընէ . և տարակոյս չկայ որ այս բանը սիրոյն զուտ ըլլալուն ամենեւին արգելք մը չէ . վասն զի ինչպէս որ կ'ըսէ սուրբն Գիորնեսիոս Արիստաղացի , սէրը բնականապէս կը դիմէ սիրելի առարկային հետ միանալու . մանաւանդ թէ սուրբ Օգոստինոսին խօսքին նայելով՝ նոյն խակ սէրը ոսկիէ կապ մըն է , որ իրարու կը միացընէ սիրողին ու սիրելւոյն

սիրտը : Այս որովհետև այս միութիւնը  
 հեռուանց չկրնար ըլլալ, անոր համար  
 այն որ սէր ունի՝ միշտ իրեն սիրելւոյն ներ-  
 կայութեանը կը բաղձայ : Խորհրդական  
 հարսը իր սիրելիէն հեռու որ մնացեղ էր՝  
 կը հալէր ու կ'աղաչէր իրեն ընկերացը, որ  
 անոր խմացընեն իրեն միշտը, որպէս զի  
 դայ զինքը մխիթարէ իրեն ներկայութեամ-  
 քը . “ Արուսադեմայ դատերքը, ձեզ կ'եր-  
 գունցնեմ որ եթէ սիրելիս գտնաք՝ պատ-  
 մեցէք իրեն որ իր սիրովը կը հալմ”<sup>1</sup> :  
 Հոգի մը որ շատ կը սիրէ զՅիսուս,  
 քանի որ աշխարհքիս վրայ է՝ չկրնար  
 չփափաքիլ ու յուսալ որ շուտով երկինք  
 երթայ ու իրեն սիրելի Աստուծոյն հետ  
 միանայ :

8 . Աւստի մաքուր և կատարեալ սէր  
 է՝ երկինք երթալու ու զԱստուած տեսնել

1 Երգմանեցուցից զձեզ, գատերք Ե-  
 րուսաղէմի . եթէ գտանիցէք զեղբօ-  
 րորդին իմ, պատմեսցիք նմա, եթէ կա-  
 թոգին եմ ես՝ ի սէր քո : Երգ երգոց .  
 Ե . 8 :

լու փափագը , չէ այնչափ մեր զուարճու-  
 թեանը համար որ զՄատուած սիրելով պի-  
 տի ունենանք , որչափ որ այն հաճութեա-  
 նը համար , որ Մատուծոյ պիտի տանք  
 զինքը սիրելով : Այս ոչ իսկ սրբոց սիրոյն  
 մաքրութեանը դէմ է այն ուրախութիւնն  
 որ կը վայլեն երկինքը՝ զՄատուած սիրե-  
 լով : Այդպիսի ուրախութիւն անբաժա-  
 նելի է ՚ի սիրոյ . բայց երանեալք աւելի կը  
 զուարճանան այն սիրովը որով կը սիրեն  
 զՄատուած , քան թէ այն ուրախութեամ-  
 բը որ զՄատուած սիրելով կը վայլեն : Արը-  
 նայ մէկը ըսել . Վարձքի փափագիլը ցան-  
 կութեան ըսուած սէր է , և ոչ թէ բա-  
 րեկամութեան : Բայց մարդկանց խոստա-  
 ցած ժամանակաւոր վարձքը պէտք է զա-  
 նազանել արքայութեան վարձքէն որ Մա-  
 տուած զինքը սիրողին խոստացած է :  
 Մարդկանց տուած վարձքը իրենց անձէն  
 զատ բան է . վասն զի մարդիկ ուրիշները  
 վարձատրելու որ ըլլան՝ իրենք զիրենք չեն  
 տար , հապա միայն իրենց բարկքը . իսկ  
 գլխաւոր վարձքն որ Մատուած երանելեաց  
 կու տայ , ինքըզինքը տալն է . “ Աս պիտի



ըլլամ քու մեծ վարձքդ ,, <sup>1</sup> : Ուստի նոյն բանն է արքայութեան փափագիլ ու Աստուծոյ փափագիլ, որ մեր ետքի վախճանն է :

9 . Ա՛ռ զեմ հոս տարակոյս մը դնել, որ դիւրաւ կրնայ այնպիսւոյն միտքը դալ, որ զԱստուած կը սիրէ, ու կը նայի ամէն բանի մէջ իրեն սուրբ կամայը հպատակելու : Թէ որ այդպիսւոյն յայտնուած ըլլայ իր յաւիտեանական դատապարտութիւնը, պէտք է որ ընդունի զանիկա Աստուծոյ կամայը հպատակելու համար : Չէ, կը սորվեցնէ սուրբն թափմաս . մանաւանդ թէ կը մեղանչէ, կ'ըսէ, թէ որ հաւանելու ըլլայ, վասն զի հաւանած կ'ըլլայ այնպիսի վիճակի մէջ մնալու որ մեղաց հետ մէկ է, ու հակառակ է իրեն վախճանին, որ Աստուած իրեն դրեր է . վասն զի Աստուած հոգիները դժոխքի համար չստեղծեր, ուր որ զինքը կ'ատեն, հապարքայութեան համար՝ որ զինքը սիրեն .

<sup>1</sup> Ծանօդ . ԺԵ . 1 . ըստ Նաթինականին :

ասոր համար և ոչ մեղաւորին մահը կ'ուզէ, հասլա կ'ուզէ որ ամէնքն ալ դարձի գան ու փրկուին : Արտէ սուրբ վարդապետը թէ Աստուած չուզեր որ մէկը գատապարտուի, բայց եթէ մեղաց համար ուստի թէ որ մէկը իրեն գատապարտութեանը հաւանելու ըլլայ, չէ թէ Աստուծոյ կամայը հպատակ կ'ըլլայ՝ հասլա մեղաց կամայը . “Ասոր համար բացարձակապէս ինքն իրեն գատապարտութիւնն ուզելը՝ իր կամքը Աստուծոյ կամայը համակերպել չէր ըլլար, հասլա կամայ մեղաց ,<sup>1</sup> : Բայց թէ որ Աստուած մէկու մը մեղացը նախատես ըլլալով՝ վճռած ըլլայ իրեն գատապարտութիւնը, ու այս վճիռը իրեն յայտնած ըլլայ, սկէտք է որ ասոր հաւանի : Ոչ երբէք, կ'ըսէ Հրեշտակային վարդապետը, վասն զի սկէտք է որ այս յայտնութիւնը չէ թէ անսխալութիւն վճիռ մը սեպէ, հասլա սպառնալէաց ներդրով վճիռ, իբրև թէ սպառնար որ

1 Սուրբ Թովմ . 11 . Ճշմարտ . Խնդ . Գ . 104 . Ը :

պիտի դատապարտէ՝ թէ որ մեղաց մէջ  
մնայ :

10 . Բայց ամէն մարդ պիտի ջանայ  
մտքէն հեռացնել այսպիսի գէշ մտածու-  
թիւններ , որ ուրիշ բանի չեն գար , բայց  
եթէ վստահութիւնն ու սէրը պաղեցընելու :  
Որչափ որ այս աշխարհքս ձեռուրնուս կու-  
գայ՝ ջանանք սիրել զՅիսուս . ամէն վայր-  
կեան փափագինք երթալ տեսնել զինքը  
արքայութեան մէջ՝ հոն կատարեալ կեր-  
պով զինքը սիրելու համար . ու այս ըլլայ  
գլխաւոր առարկայն մեր յուսոյն , երթալ  
հոն զինքը սիրել ամէն զօրութեամբ : Ի՞նչ  
պէտ է երկրիս վրայ ալ հրաման է մե-  
զի զինքը սիրելու ամենայն զօրութեամբ .  
“ Տէրդ ու Աստուածդ պիտի սիրես քու  
բոլոր սրտէդ , բոլոր հոգւովդ , ամէն զօ-  
րութեամբդ , ու բոլոր մտքովդ , ”<sup>1</sup> . բայց  
Հրեշտակային վարդապետը կ'ըսէ՝ թէ

1 Սիրեսցես զՏէր Աստուած քո , յա-  
մենայն սրտէ քումմէ , և յամենայն անձ-  
նէ քումմէ , և յամենայն զօրութենէ  
քումմէ , և յամենայն մտաց քոց : Ղուկ .  
Ժ . 27 :

մարդիկ այս հրամանն Երկրիս վրայ կատարելապէս չեն կրնար կատարել . միայն Յիսուս , որ մարդ ու Մատուած էր , և ամենասուրբ կոյսն , որ շնորհքով լեցուած՝ ազատ էր սկզբնական մեղքէ , կատարելապէս կատարեցին այս պատուիրանն . իսկ մենք Միամայ խեղճ որդիքը մեղքով ապականեալ՝ չենք կրնար զՄատուած սիրել առանց անկատարութեան մը , ու միայն երկինքը , երբոր զՄատուած տեսնենք երեսառ երես՝ ան ատենը պիտի սիրենք , մանաւանդ թէ պիտի բռնադատուինք ամէն զօրութեամբ զինքը սիրել :

11 . Մհաւասիկ այս է նպատակը ուր որ պիտի գիմէ մեր ամէն փափագը , մեր ամէն հառաչանքը , մեր ամէն մտածութիւններն ու մեր ամէն յոյսը , երթալ վայելել զՄատուած արքայութեան մէջ , որպէս զի ամէն զօրութեամբ զինքը սիրենք , ու զմայլինք Մտուծոյ զմայլմունքովը : Իրաւ երանեալք այն զուարճութեանց թագաւորութեանը մէջ իրենց երանութեամբը կը զմայլին , բայց իրենց զլսաւոր զմայլմունքը , որ ուրիշ ամէն

զուարճութիւն իր մէջը պիտի առնէ , պիտի ըլլայ ճանչնալ անհուն երանութիւնն , որ կը վայլէ իրենց սիրելի տէրը . որովհետեւ իրենք անհուն կերպով աւելի կը սիրեն զՄտուած քան թէ իրենք զիրենք : Ամէն մէկ երանեալը այն սիրոյն համար սրով զՄտուած կը սիրէ , գոհ կ'ըլլար կորսնցընել իր ամէն վայելքը , ու ամէն վիշտ քաշել , միայն թէ չպակսի (թէ որ կարելի ըլլար պակսիլ) մէկ պզտիկ մաս մը Մտուծոյ վայելած երանութեանը : Ուստի տեսնելով որ Մտուած անհուն կերպով երանելի է , և ոչ երբէք իրեն երանութիւնը յաւիտեան կրնայ պակսիլ , այս է իրեն արքայութիւնը : Այսպէս կ'իմացուի այն խօսքն որ Յիսուս կ'ըսէ ամէն հոգւոյ՝ փառաց ժառանգութիւնը տալու ատեն . « Բու տիրոջդ ուրախութեանը մտիր »<sup>1</sup> : Զէ թէ ուրախութիւնը յերանելին կը մտնէ , հապա երանեալը կը մտնէ Մտուծոյ ուրախութեանը մէջ , վասն զի Մտուծոյ ուրա

<sup>1</sup> Մուտ յուրախութիւն տեառն քո : Մտթ . ԻԵ . 21 :

խութիւնը երանելոյն ուրախութեանը առարկայն է : Անանկ որ Աստուծոյ բարիքը երանելոյն բարիքը պիտի ըլլայ , Աստուծոյ հարստութիւնը երանելոյն հարստութիւնը , և Աստուծոյ երանութիւնը երանելոյն երանութիւնը :

12 . Մէկէն 'ի մէկ հոգի մը որ արքայութիւն կը մտնէ , ու փառաց լուսովը դէմ յանդիման կը տեսնայ Աստուծոյ անհուն գեղեցկութիւնը , պիտի բոլորովին սիրով վառուի ու հալի : Ան ատենը երանեալ հոգին երանութեամբ Աստուծոյ բարութեան անսահման ծալուն մէջ պիտի ընկղմի : Ան ատենը կը մտնուայ ինքրզինքր , և Աստուծոյ սիրովը արբեալ՝ ուրիշ բան չմտածեր բայց եթէ սիրել իրեն Աստուածը . “ Բու տանդ սարարտութենէն պիտի գինովնան , ”<sup>2</sup> : Գինովները իրենք զիրենք չեն մտածեր , ասանկ ալ երանեալ հոգին ուրիշ բան չմտածեր , բայց եթէ սիրել , ու իրեն սիրելին հաճեցընել , կը ցան-

2 Արբէսցին նոքա 'ի սարարտութենէնէ տան քո : Սղմ . ԼԵ . 9 :

կայ բոլորովին զինքը ժառանգել, ու բոլորովին կը ժառանգէ, զինքը կորսնցընելու վախ մը չունենալով. կը ցանկայ ամէն վայրկեան բոլորովին զինքը իրեն տալ, ու փափաքը կը կատարուի. վասն զի ամէն վայրկեան ինքզինքը բոլորովին ամէն կերպով Աստուծոյ կու տայ. Աստուած ալ սիրով զինքը կը գրկէ, ու այսպէս սիրով գրկախառնեալ կը մնայ ու յաւիտեան պիտի մնայ :

13. Ուստի երկինքը հողին բոլորովին Աստուծոյ հետ միացած կը մնայ, ու իր բոլոր զօրութեամբը զինքը կը սիրէ լի կատարեալ սիրով, ու այն սէրը թէպէտ և սահմանաւոր է, վասն զի արարածը անսահման սէր չկրնար ունենալ, բայց այնպիսի է որ զինքը բոլորովին գոհ կ'ընէ, ու այնպէս կը յագեցընէ, որ ալ ուրիշ բանի չբաղձար: Իսկ Աստուած ինքը զինքը կը հաղորդէ ու կը միանայ բոլորովին այն հոգեւոյն հետ, ու որչափ որ ընդունակ է հողին՝ իրմով զանիկա կը լցընէ արդեանքը համեմատ, ու չէ թէ միայն իրեն սրբագեղն ու լուսովը ու սիրալիր կապերոցը

անոր հետ կը միանայ, ինչպէս որ մեզի այս աշխարհքիս մէջ կ'ընէ, հասլա բուն իրեն գոյութեամբը: Ինչպէս կրակը երկաթին մէջ կը թափանցէ, ու կարծես թէ կրակ կը դարձնէ զանիկա, ասանկ ալ Աստուած կը թափանցէ հոգւոյն մէջ ու իրմով կը լեցնէ. որով հոգին թէպէտ իր գոյութիւնը չկորսնցնէ, բայց սակայն անանկ կը լեցուի ու աստուածային գոյութեան այն անհուն ծովուն մէջ կ'ընկղմի որ իբրև թէ ոչնչացած կը մնայ ու իբրև թէ ալ չկայ ինքը: Այս երանելի վիճակն էր որ Առաքեալը իր աշակերտացը կը մտղթէր. « Որպէս զի Աստուծոյ բովանդակութեամբը լեցուիք », <sup>1</sup>:

14. Այս է մեր վերջին վախճանը որ հանդերձեալ կենաց մէջ պիտի ստանանք Աստուծոյ անհուն բարութեամբը: Անոր համար քանի որ հոգին դեռ երկրիս վրայ է և դեռ միացած չէ Աստուծոյ հետ երկինքը, ուր որ միայն կատարեալ միութիւն

1 Զի լցլեք ամենայն ըրութեամբն Աստուծոյ: Եփես. 9. 19:



կ'ըլայ, անկարելի է որ այս աշխարհքիս վրայ իր կատարեալ հանգիստը գտնէ: Իրաւ է, որ Յիսուսի սիրողները աստուածային կամաց հպատակելով իրենց խաղաղութիւնը կը գտնեն այս կենաց մէջ ալ, բայց ոչ երբէք կատարեալ հանգիստնին, վասն զի այդ հանգստեան կը հասնի մարդ՝ երբս իր վերջին վախճանին հասնելու ըլլայ, այսինքն դէմ առ դէմ զԱստուած տեսնելով, ու բոլորովին աստուածային սիրով հալելով. և քանի որ հոգին այդ վախճանին չհասնի, անհանգիստ կ'ըլլայ, կը հեծէ, ու հառաչելով կ'ըսէ. « Ահա իմ դառնութիւնս հիմա խաղաղութիւն դարձաւ », <sup>1</sup>:

15. Այո, Աստուած իմ, ես այս արտասուաց հովտին մէջ խաղաղութեամբ օրերս կ'անցընեմ, վասն զի այս է քու կամքըդ. բայց չեմ կրնար չզգալ այն ամենասատիկ դառնութիւնը՝ տեսնելով որ քեզմէ հեռու եմ, ու դեռ կատարեալ կերպով միացած չեմ քեզի հետ, որ իմ կե-

1 Ահաւասիկ 'ի խաղաղութիւն դարձաւ դառնութիւն իմ: Ես. 12, 17:

դրոնս ես, իմ ամէն բանս և իմ բողբոլիւն  
 Հանդիստս : Եւ ասոր համար սուրբերը ,  
 թէպէտ և այս աշխարհքիս իրայ ալ Աս-  
 տուծոյ սիրովը բորբոքած էին, սակայն ու-  
 թիշ բան չէին ըներ՝ բայց եթէ արքայու-  
 թիւն երթալու հառաչել : Դաւիթ կ'ա-  
 ղաղակէր . “ Վ այ ինձի , որ երկնցաւ իմ  
 օտարութիւնս ,”<sup>1</sup> : “ Այն ատեն պիտի  
 կշտանամ՝ երբոր քու փառքդ երևնայ ,”<sup>2</sup> :  
 Եւ Պօղոս Առաքեալը՝ թէ “ Աւելի լաւ  
 կը սեպեմ փափաքիլ Քրիստոսի քովը եր-  
 թալու ,”<sup>3</sup> : Եւ սուրբ Ֆրանչիսկոս Ասի-  
 ղացին կ'ըսէր . “ Այնչափ մեծ է իմ՝ յու-  
 սացած բարիքս , որ ամէն լիշտ ինձի հա-  
 մար զուարճութիւն է ,” : Ասոնք բոլոր կա-  
 տարեալ սիրոյ ներգործութիւններ են : Սուր-  
 բն թաղմաս կ'ըսէ , թէ “ Այս աշխարհ-

1 Վ այ ինձ , զի ընդ երկար եղև սղան-  
 դրիստութիւնս իմ : Սղմ . ՃԺԹ . 5 :

2 Յագեցայց յերևել փառաց քոյ :  
 Անդ . ԺԶ . 15 :

3 Զ ցանկալն ելանել և ընդ Քրիստո-  
 սի լինել առաւել լաւ համարիմ : Փիլիպ .  
 Ա . 23 :

քիս վրայ սիրոյ բարձրագոյն աստիճանն է սաստիկ փափաքով եռալ որ երթայ և Աստուծոյ հետ միանայ և վայելէ զանիկա երկինքը : Բայց հոգւոյն այս երկինքը առած Աստուծոյ վայելքը, ինչպէս ըսինք ուրիշ տեղ, ոչ եթէ Աստուծմէ ախորժ իմանան է, հասլա տեսնալը Աստուծոյ ունեցած վայելքը, զորն որ իրմէ աւելի կը սիրէ :

16 . Արդար հոգւոյ քաւարանին մէջ քաշած մեծագոյն պատիժը Աստուծոյ համար ունեցած կարօտնին է, թէ երբ պիտի ըլլայ որ դտնան զինքը : Այս պատիժը այն հոգիները աւելի պիտի ունենան, որոնք այս աշխարհքիս վրայ շատ չնն փափաք ունեցած արքայութեան : Մանաւանդ թէ Բելարմինոս ծիրանաւորը կ'ըսէ թէ քաւարանը բանտ մըն է, Արժէլան քաւարը ըսուած, ուր հոգիներէն ոմանք առանց զգայական պատիժ մը ունենալու, միայն Աստուծոյ տեսութենէն զուրկ կը մնան : Այս բանիս շատ օրինակներ կը բերեն սուրբն Վրիգոր, երանելին Պէտա, սուրբ Վինչնյուտ Պերերեան, և սրբուհին Պրիծիտա : Իսկ այս պատիժը ոչ եթէ գործած

մեղացը համար է, հասկա արքայութեան  
 չփափաքելուն համար : Շատ հոգիներ  
 կան որ կատարելութեան կը փափաքին ;  
 բայց մէկալ կողմանէ ալ անտարբեր են  
 երթալու զԱստուած տեսնելու կամ այս  
 աշխարհքիս վրայ մնալու : Բայց յաւիտե-  
 նական կեանքը ամենամեծ բարիք է, որուն  
 զմեզ արժանի ըրաւ Յիսուս իր մահուամ-  
 բը . անոր համար կը պատժէ այն հոգի-  
 ները, որ քիչ փափաքած են անոր իրենց  
 կենացը մէջ :

ԻՂԶԳ ԵՒ ՊԱՂԱՏԱՆԻՔ

Ո՛վ Աստուած, ստեղծիչ իմ, և փրկիչ  
 իմ, դու զիս արքայութեան համար ստեղ-  
 ծեցիր, և փրկեցիր դժոխքէն որ արքայու-  
 թիւն տաս ինձի, և ես այնչափ անդամ  
 զքեզ անարգելով, յայտնի կերպով հրածա-  
 րեր եմ արքայութենէն, և ուզեր եմ դժոխ-  
 քին մէջ դատապարտած զիս տեսնել : Բայց  
 միշտ օրհնեալ ըլլայ քու անհուն ողորմու-

Թիւնդ , որ ներումն շնորհելով ինծի , ինչպէս կը յուսամ , այնչափ անգամ զիս գժոխքէն ազատեր ես : Ա՛հ , Յիսուս իմ , սէր էր որ զքեզ անարգած չըլլայի . սէր էր որ զքեզ միշտ սիրած ըլլայի : Ասով կը մխիթարուիմ որ դեռ ժամանակ ունիմ զայդ 'ի գործ դնելու : Ար սիրեմ զքեզ , սէր հոգւոյ իմոյ , կը սիրեմ զքեզ իմ բոլոր սրբտուլս , կը սիրեմ զքեզ իմ անձէս աւելի : Ար տեսնեմ որ իմ փրկութիւնս միշտ կ'ուզես , որպէս զի յաւիտեան այն սիրոյ թագաւորութեան մէջ զքեզ սիրեմ : Շնորհակալ եմ քեզի , և կ'աղաչեմ որ ինծի օգնես իմ մնացած կենացս մէջ , որ զքեզ շատ սիրեմ , որպէս զի կարենամ ետքը յաւիտեան ալ զքեզ շատ սիրել : Ա՛հ , Յիսուս իմ , երբ պիտի ըլլայ այն օրը , որ զիս ազատ տեսնեմ զքեզ կորսնցընելու ամէն վտանգներէ , և քու սիրովդ հալիմ՝ դէմ յանդիման տեսնելով քու անհուն գեղեցկութիւնդ , անանկ որ ալ հարկաւոր իմ զքեզ սիրելու : Ա՛յլ քաղցր հարկաւորութիւն . երջանիկ , սիրելի և անձկալի , որ քեզի դէմ անհաճոյ բան ընելու վախէ՞

այիտի ազատ ընէ զևս , և բռնադատէ որ  
 իմ ամէն զօրութեամբս զքեզ սիրեմ : Իմ  
 խիղճս զևս կը սոսկացրնէ , և ինծի կ'ըսէ .  
 Ի՞նչպէս կրնաս դուն սլաճանջել արքայու-  
 թիւնը : Բայց քու , փրկիչ իմ սիրելի , քու  
 արդիւնքներուդ վրայ է իմ ակնկալու-  
 թիւնս :

Ա՛յլ թաղուհի արքայութեան Աս-  
 րիամ , առ քեզ կ'ապաւինիմ , քու բա-  
 րեխօսութիւնդ ամենակարող է Աստուծոյ  
 առջին :



# ԳԼՈՒԽ ԺԷ .

ՍԷՐ ԱՄԵՆԱՅՆԻ ՀԱՄԲԵՐԻ

Ով որ զՅիսուս կը սիրէ սերտ սիրով ,  
ամեն փորձոչքեանց և ամենայն  
մխիթարոչքենե զոչրկ ևղած առնե  
ալ գիւրքը սիրելեկն չդադրիր :

1 . Այս աշխարհքիս վրայ աստուա-  
ծասէր հոգւոյ մեծագոյն պատիժները ոչ  
եթէ աղքատութիւնն է կամ հիւանդու-  
թիւնը , կամ անարգանքն ու հալածանքնե-  
րը , հասլա փորձութիւնները և հոգւոյն  
ամենայն մխիթարութենէ զուրկ ըլլալն  
է : Արբ հոգի մը Աստուծոյ քաղցր ներ-  
կայութիւնը կը վայելէ , ան ատեն ամէն  
ցաւ , նախատինք , և մարդկանց տուած  
նեղութիւնները զինքը վշտացընելու տեղ ,  
աւելի զինքը կը մխիթարեն , առիթ տալով  
որ իրեն սիրոյն գրաւական մը Աստուծոյ  
նուիրէ . միով բանիւ կրակը աւելի բորնկ-

ցրնելու նիւթ կ'ըլան : Բայց տեսնելով որ փորձութիւնները կը ջանան Աստուծոյ շնորհքը կորսնցրնել տալ իրեն , կամ վախնալով իրեն հոգւոյն անմխիթարութենէն որ արդէն կորսնցուցած չըլայ , այսպիսի վշտերը գէջիտու սիրող հոգւոյ շատ դառն կու դան : Բայց նոյն խկ սէրը ոյժ կու տայ համբերութեամբ տանելու անոնց , և կատարելութեան բռնած ճամբան առաջ երթալու : Այլ սրչափ կը յառաջանայ հոգին երբ Աստուած այդպիսի փորձերով իրեն սէրը կը փորձէ :

### ՓՈՐՁՈՒԹԵԱՆՑ ՎՐԱՅ

2 . Օգիտու սիրող հոգիներուն փորձութեանց նման դառն տանջանք չկայ . բոլոր մէկալ նեղութիւնները իրենց գրգիռ կ'ըլան Աստուծոյ հետ աւելի միանալու՝ զանոնք Աստուծոյ կամայր հպատակութեամբ ընդունելով . բայց փորձութիւնները՝ որովհետև զիրենք մեղանշելու կը մղեն ,



ինչպէս որ վերը ըսինք, ու Յիսուսէն հե-  
ռացրնելու, անոր համար ամէն չարչա-  
րանքէ աւելի դառն կու գան իրենց: Բայց  
պէտք է գիտնալ որ թէպէտ և ամենայն  
փորձութիւնք որ զմեզ 'ի չարն կը յորդո-  
րեն, ոչ երբէք Աստուծմէ կու գան, հա-  
պա սատանայէն կամ մեր թիւր յօժարու-  
թիւններէն, ինչպէս որ կ'ըսէ Յակոբոս ա-  
ռաքեալը. « Աստուած չար բանի փոր-  
ձութիւն չտար, և մէկը չփորձեր Աս-  
տուած », <sup>1</sup>. բայց երբեմն թոյլ կու տայ  
Աստուած որ իրեն աւելի սիրելիքը աւե-  
լի սաստիկ փորձութիւններ քաշեն. նախ՝  
որպէս զի փորձութիւններով աւելի լաւ  
ձանձնան իրենց տկարութիւնը, և թէ-  
որչափ կարօտ են աստուածային օգնու-  
թեան որ շինկնան: Արբոր մէկը աս-  
տուածային մխիթարութեամբ լցուած ըլ-  
լայ, կը կարծէ որ կարող է թշնամոյն  
ամէն յարձակմանցը դէմ դնել, ու Աս-  
տուծոյ փառացը համար ամէն գործք

<sup>1</sup> Աստուած անփորձ է չարեաց, փոր-  
ձէ նա և ոչ զոք: Յակ. Ա. 13:

կրնայ կատարել : Բայց մէյ մը որ սաստիկ փորձութեանց մէջ ինկնայ ու տեսնայ որ գահավէժ անդունդին բերանը հասեր է ու ինկնալու վրայ է , այն ատեն լաւ կը ճանչնայ իր ողորմելիութիւնն ու դէմ դնելու անկարողութիւնը , թէ որ Աստուած իրեն չօգնէ : Աս բանս սլառահեղաւ սրբոյն Պօղոսի առաքելոյն ալ , որ կ'ըսէ թէ Աստուած թող տուաւ որ աղէկ մը չարչարուի զգայական փորձութեամբ մը , որպէս զի չըլլայ թէ սարժենայ Աստուծոյ իրեն շնորհած յայտնութեանցը վրայ <sup>1</sup> :

3 . Կը թողու Աստուած որ մեր վրայ փորձութիւններ դան , որպէս զի սրտերնիս աւելի հեռացնենք այս աշխարհքէս , ու աւելի եռանդեամբ մը փափաքինք արքայութիւն երթալ ու հոն զինքը տեսնալ : Ասոր համար բարի հոգիք տեսնալով որ

1 Եւ զի մի առաւելութեամբ յայտնութեանցն հպարտացայց , տուաւ ինձ խայթ մարմնոյ , հրեշտակ սատան՝ կռփել զիս : Բ . Կորնթ . ԺԲ . 7 :

այս աշխարհքիս մէջ գիշեր ու ցորեկ այն շափ թշնամիք վրանին կը յարձակին, ձանձրանալով իրենց կեանքէն՝ կ'աղաղակեն .

“ Վայ ինձի, որ շատ երկնցաւ իմ օտարութիւնս ,”<sup>1</sup> : Ու հառաչանօք կը փափաքին այն վայրկենին որ կարենան ըսել .

“ Ընոնց որոգայթները կոտորտեցան ու մենք ազատեցանք ,”<sup>2</sup> : Հոգին կը փափաքի Ըստուծոյ թուշիլ, բայց քանի որ այս աշխարհքիս մէջն է, թելով մը կապուած է՝ որ զինքը վար կը բռնէ, ու շարունակ փորձութեանց յարձակմունք կը կրէ . մահը միայն կրնայ կտրել այս թելը, անոր համար սիրարորբօք հոգիք միշտ մահուան կը փափաքին, որով կ'ազատին զԸստուած կորսնցընելու վտանգէն :

4 . Դարձեալ կը թողու Ըստուած որ փորձուինք՝ որպէս զի վարձքերնիս շատցընէ . ինչպէս որ Տորիթին կ'ըսէ Վատինա .

<sup>1</sup> Վայ ինձ, զի ընդ երկար եղև պանդրխտութիւն իմ : Սղմ . ԾԺԹ . 5 :

<sup>2</sup> Որոգայթք նոցա փշրեցան, և մեք ապրեցաք : Սղմ . ԾԻԳ . 7 :

ցւոյ թարգմանութեան յարմար . “ Արու-  
 հետե Աստուծոյ հաճոյական էիր , անոր  
 համար հարկ էր որ փորձութիւններ վրադ  
 դան , : Արեմն պէտքը չէ վախնալ եր-  
 բոր մէկուն վրայ փորձութիւն դալու ըլ-  
 լայ , իբր թէ Աստուծոյ աչքէն ելեր է ,  
 մանաւանդ այն ատեն աւելի պէտք է յոյս  
 ունենայ որ Աստուծոյ սիրելի է : Սատա-  
 նայն խարդախութեամբ կարճամիտները  
 կը խարէ , թէ փորձութիւնները մեղք են  
 և զհոգին կ'աղտոտեն : Գէշ խորհուրդնե-  
 րը մեզի զԱստուած կորսնցընել չեն տար ,  
 հապա անոնց չար հաւանութիւնը , որչափ  
 սաստիկ ալ ըլլան սատանային թերադրու-  
 թիւնները , որչափ ալ ազդու ըլլան ան-  
 պարկեշտ երեակայութիւնները որ մեր միտ-  
 քը կը գրաւեն , բայց երբոր մենք կամք  
 չունենանք , ամենեին չեն արատեր զհո-  
 գին , մասնաւանդ թէ աւելի մաքուր , ա-  
 ւելի կտրիճ , և աւելի սիրելի կ'ընեն Աս-  
 տուծոյ : Սուրբ Բեռնարդոս կ'ըսէ թէ  
 քանի որ փորձութեանց յաղթենք , նոր  
 պսակ մ'ալ կը ստանանք . “ Բանի ան-  
 գամ որ յաղթենք , այնչափ անգամ պսակ

կ'առնենք ,, : Ախտերսեան կրօնաւորի մը հրեշտակ Աստուծոյ երեցաւ ու պսակ մը տուաւ ձեռքը և ասպարեց որ ուրիշ կրօնաւորի մը տանի տայ ու ըսէ որ այն պսակին արժանի եղեր է այն փորձութեանը յաղթելուն համար որ քիչ մը առաջ ունեցեր էր : Չվախնանք որ գէշ խորհուրդ մը մտքերնուս չեղար ու զմեզ կը տանջէ , բաւական է որ մենք զգուխնք անկէց ու վճնտել նայինք :

Ծ . “ Աստուած խարդախ չէ , կ'ըսէ Առաքեալը , ձեր կարողութենէն վեր զձեզ փորձութեան մէջ չձգեր . ու փորձութեան հետ յաջողութիւն ալ կու տայ ,, <sup>1</sup> : Ուրեմն ուլ որ փորձութեան գէմ կը կենայ , կորուստ չընելէն զատ վաստակ ալ կ'ընէ . “ Փորձութեան հետ յաջողութիւն ալ կու տայ ,, : Այս սլասմառու Աստուած

1 Հաւատարիմ է Աստուած , որ ոչ արկցէ զձեզ 'ի փորձութիւն առաւել քան զկար ձեր . այլ արասցէ ընդ փորձութեանն և զելան : Ա . Կորնթ . Ժ . 13 :

շատ անգամ թոյլ կու տայ որ իր սիրելի  
 հոգիները աւելի փորձութիւն քաշեն , որ  
 պէս զի աւելի առատ վարձք շահին այս  
 աշխարհքիս մէջ , ու անդին յաւիտենա-  
 կան փառք : Ինչպէս որ հանդարտ ջուրը  
 շուտ կ'ապականի , այսպէս հոգին ալ փոր-  
 ձութենէ , ու պատերազմէ ազատ մնալով ,  
 միշտ կորստեան վտանգի մէջ է՝ իր ար-  
 դեանցը վրայ սնապարծելով , ու կարծե-  
 ւով թէ կատարելութեան ծայրը հասած  
 է . ասանկ որ ըլլայ՝ վախն ալ կը պակսի ,  
 ու քիչ կ'աշխատի իր հոգւոյն փրկութիւնը  
 ապահովելու : Բայց երբոր փորձու-  
 թիւնները զինքը տանջեն , ու տեսնայ որ  
 մեղք ինկնալու վտանգի մէջ է , այն ատեն  
 Աստուծոյ կը դիմէ , սուրբ Աստուածած-  
 նայ կ'ապաւինի , առաջադրութիւնները կը  
 նորոգէ ու բիւր անգամ յանձն կ'առնու  
 մեռնիլը քան թէ մէյ մը մեղանչելը , կը  
 խոնարհի , ու զինքը բոլորովին աստուա-  
 ծային ողորմութեանը կը յանձնէ . և ա-  
 սանկով աւելի կը զօրանայ , ու աւելի Աս-  
 տուծոյ հետ կը միանայ , ինչպէս որ փոր-  
 ձը կը սորվեցնէ :

6. Բայց պէտքը չէ որ մենք փորձու-  
թեան փափաքինք, հասկա մանաւանդ  
միշտ պէտք է աղաչենք Աստուծոյ որ  
զմեզ փորձութիւններէն ազատէ, և մաս-  
նաւորապէս այն փորձութիւններէն որոնք  
որ գիտէ Աստուած թէ մեզի կը յաղթեն .  
(այս նշանակութիւնը ունի Հայր Տէրի՛ն այն  
աղաչանքը՝ Մի սանիւր զՏէր՛ի Գործո՛ւնիւն) :  
Իսկ երբոր Աստուած թող տայ որ փոր-  
ձութիւններ գան վրանիս, այն ատեն պէտք  
է որ առանց շփոթելու ու լքանելու այն  
գէշ խորհուրդներուն պատճառաւ՝ Յի-  
սուսին ասպաւինինք, ու իրեն օգնութիւնը  
խնդրենք . և անտարակոյս ինքը մեզի ուժ  
կու տայ որ դէմ դնենք : Սուրբ Օգոս-  
տինոս կ'ըսէ . « Իրեն ինկիր ու մի վախ-  
նար, քեզմէ ետ չքաշուիր որ ինկնաս »<sup>1</sup> :  
Օքեզ Աստուծոյ յանձնէ ու մի վախ-  
նար . վասն զի թէ որ զքեզ պատերազ-  
մի մէջ ձգէ, անտարակոյս զքեզ շթո-  
ղուր որ յաղթուիս :

7. Գանք հիմա տեսնանք թէ ինչ

<sup>1</sup> Խոստով . Գելլք Ը . ԳԼ . ԺԱ :

ճամբայ սլիտի բուննիք որ փորձութիւնն շրուն յաղթենք : Հողևոր դաստիարակները մեզի շատ ճամբայ կը սորվեցնեն , բայց աւելի հարկաւորն ու ապահովը , (որուն վրայ որ միայն կ'ուզեմ հոս խօսիլ) , է Աստուծոյ դիմել խոնարհութեամբ ու վտաւհութեամբ , և ըսել . “ Աստուած իմ , աչքդ դարձուր օգնէ ինձի . Տէր իմ , ինձի ընկեր ըլլալու փութացիր ” <sup>1</sup> : Այս աղօթքը միայն բաւական է մեզի յաղթել տալու դժոխքի ամէն սատանաներուն յարձակմանցը՝ թէ որ վրանիս վազեն հետերնիս սլատերազմին . վասն զի Աստուած անհնապէս զօրաւոր է քան զամենայն սատանաները : Վիտէ Աստուած որ մենք ուժ չունինք դժոխային իշխանութեանց փորձութիւններուն դէմ դնելու . ուստի Աողդի իմաստուն ծիրանաւորը կ'ըսէ թէ “ Փորձութեան ատեն յաղթուելու վտանդ որ հասնինք՝ Աստուած սլարտաւորեալ է

<sup>1</sup> Աստուած յօգնէլ ինձ նայեաց , և Տէր ընկերէլ ինձ փութա : Սղմ . Կթ . 1 :



դէմ կենալու համար բաւական օգնու-  
թիւն տալ, միայն թէ մենք իրմէն խն-  
դրենք ։

8. Աւ ինչպէս կրնանք կասկածիլ որ  
Յիսուս մեզի չօգնէր, երբոր այնչափ խոստ-  
մունքներ ըրած է Սուրբ Գրոց մէջ. « Ին-  
ծի եկէք, կ'ըսէ, դուք ամէնքնիդ որ աշ-  
խատեր էք ու բեռան տակ կը տքաք, որ  
զձեզ հանդչեցնեմ », <sup>1</sup> : Ինձի եկէք, դուք  
որ փորձութեանց դէմ սրտերազմելով յող-  
նած էք, որ ձեզի նոր ուժ տամ : « Ահա  
թեանդ օրը ինձի դիմէ, որպէս ես զի զքեզ  
ազատեմ, դուն ալ զիս փառաւորես », <sup>2</sup> :  
Ի՞նչ որ թշնամիք քեզ չարչարելու ըլլան,  
զիս կանչէ. ես զքեզ վտանգէն կ'ազատեմ,  
դուն ալ ինձի գոյութիւն տաս : « Այն  
ատեն թէ որ կանչես զԱստուած, Աս-

1 Եկայք առ իս ամենայն աշխատեալք  
և բեռնաւորք, և ես հանդուցից զձեզ :  
Մտթ . ԺԱ . 29 :

2 Կարդասցես առ իս յաւուր նեղու-  
թեան քո . ես փրկեցից զքեզ՝ և դու  
փառաւոր արասցես զիս : Սղմ . ԽԹ .  
15 :

տուած կը ըէ քեզի , ու բերանդ հազիւ որ  
 քանաս՝ ահա քուիդ եմ կ'ըսէ ,<sup>1</sup> : Օգնու-  
 թիւն կանչէ զԱստուած . Աստուած ալ քեզի  
 պատասխան կու տայ՝ որ եկեր եմ քեզի օգ-  
 նելու : « Ո՞վ երբէք Աստուծոյ դիմեր է , ու  
 Աստուած զանիկա երեսէ ձգած է ,<sup>2</sup> :  
 Ո՞վ եղեր է , կ'ըսէ մարգարէն , որ Աս-  
 տուծոյ դիմած ըլլայ , ու Աստուած առանց  
 օգնութիւն տալու զինքը արհամարհած :  
 Դառիթ մարգարէն աղօթքով ապահով  
 կ'ըլլար թէ ոչ երբէք իր թշնամիներէն  
 պիտի յաղթուի , ու կ'ըսէր . « Օ Աս-  
 տուած փառաւորելով իրեն կը դիմեմ՝ ու  
 թշնամիներէս կ'ազատիմ ,<sup>3</sup> : Արովհետեւ  
 դիտէր ինքը , որ Աստուած ամէն զին-  
 քը օգնութեան կանչողներուն կը հասնի .

1 Յայնժամ կարդացես և Աստուած  
 լուիցէ քեզ . և մինչդեռ խօսիցիս , ասաս-  
 յէ թէ ահաւասիկ հասեալ կամ : Եսայ .  
 ԾԸ . 9 :

2 Ո՞ կարդաց առ նա և անտես արար  
 զնա : Սիրաք . Բ . 12 :

3 Օրհնելով կարդացից առ Տէր , և  
 ՚ի թշնամեաց իմոց ապրեցայց : Սղմ .  
 ԺԷ . 4 :

“ Լստուած մտտ է անոնց , որոնք որ զինքըր օգնութիւն կը կանչեն , ”<sup>1</sup> : Պօղոս առաքեալն ալ կ'աւելցրնէ թէ Լստուած ագաս չէ , հապա առատութեամբ շնորհք կու տայ անոնց որ իրեն կը դիմեն . “ Որոնք որ իրեն կը դիմեն՝ ամենուն կը հասնի , ”<sup>2</sup> :

Գ . Ո՛հ , երանի՛ թէ ամէն մարդիկ փորձութեան վտանգի մէջ Լստուծոյ ապաւինէին , որով ամենեւին իրեն դէմ չէին մեղանչեր : Ողորմելիները կը կործանին , վասն զի իրենց չար յօժարութիւններէն խաբուելով , այն անցաւոր զուարճութիւնները չկորսնցնելու համար՝ փոյթերնին չէ զԼստուած՝ գերագոյն բարին կորսնցրնել : Փորձը յայտնի կը սորվեցնէ թէ ով որ փորձութեան ատեն Լստուծոյ կը դիմէ , չինկնար , ու ով որ չդիմեր , կ'ինկնայ , և մանաւանդ անժուժկալութեան

1 Մերձ է Տէր առ ամենեսեան որք կարդան առ նա : Սղմ . Ճ'ԽԴ . 18 :

2 Բաւական յամենեսին ոյք կարդան առ նա : Հռով . Ժ . 12 :

փորձութեան ատեն : Սողոմոն խնաստու-  
 նը ըսաւ , թէ աղէկ գիտէր որ չկրնար  
 ժուժկալ ըլլալ՝ մինչև որ Աստուած իրեն  
 չսլարգևէ . անոր համար փորձութեանց  
 մէջ աղօթքով իրեն կը դիմէր . “ Գիտցայ  
 որ ուրիշ կերպով չեմ կրնար ողջախոհ  
 ըլլալ , բայց եթէ Աստուած տայ : Աս-  
 տուծոյ առջևն ինկայ ու բողբով սրտիւ ի-  
 րեն աղաչեցի ,”<sup>1</sup> : Անմաքրութեան փոր-  
 ձութեանց ատեն , նոյնպէս հաւատքի դէմ  
 փորձութիւններու մէջ , կանոն չէ դէմ առ  
 դէմ փորձութեանը հետ սլատերազմիլ ,  
 հասլա փորձութեան սկիզբէն պէտք է ջա-  
 նալ վճնտելու՝ Աստուծոյ սիրոյն կամ մե-  
 ղաց զղջման ներգործութիւն ընելով , կամ  
 անտարբեր գործքի մը զբաղելով : Արբոր  
 չար խորհուրդ մը զգանք , մէկէն պէտք  
 է վճնտել , ու իբրեւ թէ գուռը իրեն դէմ  
 գոցել , ու չթողուլ որ մտքերնիս մտնայ .

<sup>1</sup> Գիտացի թէ ոչ այլ ազգ լինեցիմ  
 ժուժկալ , բայց եթէ Աստուած տայցէ :  
 Անկայ առաջի Տեառն , և աղաչեցի զնա  
 յամենայն սրտէ խմէ : Խմաստ . Ը . 21 :

և պէտք չէ կենալ քննել թէ ի՞նչ է, ի՞նչ կ'ուզէ : Այնպիսի գէշ մտածութիւնները մէկէն թօթուելու է, ինչպէս որ կը թօթուենք թէ որ իրանիս կրակի կայծ մը ցատքելու ըլլայ :

10 . Իսկ անմաքուր փորձութիւնը արգէն ներս միտքը մտած և ուզածը յայտնած է, ու զգայութիւնը կը գրգռէ . այն ատեն, կ'ըսէ սուրբն Հերոնիմոս, “ Հուտ մը աղաղակենք ըսելով . Աստուած իմ օգնականս ”<sup>1</sup> . ու օգնութիւն կանչենք Յիսուսի և Մարիամու ամենասուրբ անունը, որ մասնաւոր ուժ մը ունի այնպիսի փորձութիւնները սանձելու : Սուրբն Ֆրանչիսկոս Սալեզեան կ'ըսէ թէ տղայք երբոր գայլը տեսնալու ըլլան, իրենց հօրը՝ մօրը գիրկը կը վազեն, ու հոն ապահով կ'ըլլան . այսպէս պէտք է ընենք մենք ալ, դիմենք մէկէն Յիսուսի ու Մարիամու՝ ու զանոնք օգնութիւն կանչենք : Ար կրկնեմ՝ շուրջ գիճէլ առանց միտ դնելու, ու առանց փորձութեանը հետ խօսակցելու :

<sup>1</sup> Թուղթ ԻԲ . առ Եւսաոքի :

Հարանց վարուց մէջ կը պատմուի թէ սուրբն Պախում, ոս կը լսէ որ մը որ սատանայ մը կը պարծենայ թէ կրօնաւոր մը շատ անգամ մեղք էր ձգեր, վասն զի քանի որ սատանայն իրեն փորձութիւն բերէր, փորձութեան միտ կը դնէր ու առ Աստուած չէր ասպախիր: Իսկ ընդ հակառակն կը լսէ որ ուրիշ սատանայ մը կը գանգատէր ու կ'ըսէր. Աս իմ կրօնաւորիս բան մը չեմ կրնար ընել, վասն զի մէկէն Աստուծոյ կը դիմէ ու միշտ կը յաղթէ:

11. Թէ որ փորձութիւն մը դեռ դիմանայ ու զմեզ չարչարէ, զգուշանանք որ չըլլայ թէ անհանգիստ ըլլանք ու նեղանանք փորձութեանը դէմ. վասն զի սատանայն այն այլայլութենէն կրնայ ուժ առնուլ ու զմեզ կործանել: Այնպիսի ատեն պէտք է որ ամենայն խոնարհութեամբ զմեզ Աստուծոյ կամայը յանձնենք, որ կ'ուզէ թող տալ որ չարչարուինք այն դարշ մտածութեամբը, ու ըսնք. Տէր իմ, արժանի է՞ որ այսպիսի ազաբեղութիւններով չարչարուիմ, 'ի պատիժ չեզի Դէմ Գործած Տեղացս. Բայց դու ինչի պիտի օգ-

նէս ու թրէն : Այլ թէ որ փորձութիւնը դեռ  
 նեղէ զմեզ , մենք պէտք չէ դադրինք Յի-  
 սուս ու Սարիամ օգնութիւն կանչելէն :  
 Այնպիսի ատեն շատ օգտակար է նորո-  
 գել առ Աստուած ըրած խոստմունքդ ա-  
 մենայն տանջանք քաշելու , և բիւր ան-  
 գամ մեռնելու՝ քան թէ իրեն դէմ մեղան-  
 չել . և միանգամայն անդադար իր օգնու-  
 թիւնը խնդրել : Ու երբոր փորձութիւնը  
 անանկ ուժով ըլլայ , որ հաւանելու վտան-  
 դի մէջ ըլլանք , պէտք է աղօթքը շատցը-  
 նել , դիմել առ սուրբ խորհուրդն , խա-  
 չելութեան կամ՝ սուրբ Աստուածածնայ  
 պատկերի մը առջին փուռիլ , ու մեծաւ  
 եռանդեամբ աղօթել , հեծեծել , լալ , ու  
 օգնութիւն խնդրել : Ճշմարիտ է որ Աս-  
 տուած պատրաստ է իրեն աղաչողին օգ-  
 նել , և ինքն է՝ չէ թէ մեր ջանքը որ դէմ  
 կենալու ուժ կու տայ , բայց Աստուած  
 երբեմն կ'ուզէ որ մեր կողմանէ այսպիսի  
 ճգունք ընենք , ու ետքը մեր տկարու-  
 թեան պակսութիւնը կը լեցնեն , ու մեզի  
 յաղթութիւն կու տայ :

12 . Փորձութեան ատեն նաև մեծ օ-

դուտ ունի ճակատնիս ու կուրծքերնիս խա-  
 շակնքել : Այնպէս օգտակար է փորձու-  
 թիւնը Հոգևոր Հօր յայտնել : Սուրբն Որ-  
 լիպարոս՝ Աբրի կ'ըսէր թէ յայտնուած փոր-  
 ձութիւնը կէս մը յաղթուած է : Եւ այց  
 հոս պէտք է հասկըցընել՝ թէ ընդհանուր  
 աստուածաբանից , նաև խիստ աստուա-  
 ծաբանից վարդապետութիւնն է թէ ա-  
 նոնք որ երկայն ատեն հոգևորութեամբ  
 անցուցած են կեանքերնին , ու շատ երկիւ-  
 դած են , քանի որ տարակուսի մէջ են , ու  
 ստոյգ չեն որ հաւանութիւն տուած ըլլան  
 ծանր մեղքի մը , ասպահով պէտք է ըլլան  
 որ Աստուծոյ շնորհքը կորսնցուցած չեն ,  
 վասն զի բարոյսպէս անկարելի է՝ որ կամ-  
 քերնին երկայն ատեն բարի բարի առաջա-  
 դրութեանց մէջ հաստատած ըլլալով՝ մէ-  
 կէն 'ի մէկ փոխուի ու մահացու մեղքի  
 մը հաւանի , առանց այս բանը լաւ մը ի-  
 մանալու . սխտոճառն է , վասն զի մահա-  
 ցու մեղքը այնպիսի զարհուրելի հրէշ մըն  
 է որ չկրնար այն հոգին մտնել որն որ եր-  
 կայն ատեն անկից զգուած է , մինչև որ  
 որոշ չիմացուի : Այս բանս լիովին հաս-



տատած ենք մեր Նարոյականին մէջ<sup>1</sup> :  
 Սրբուհին թերեզա կ'ըսէր թէ « Մէկը  
 չկորսուիր առանց իր կորուստը ճանչնալու,  
 ու մէկը չխաբուիր առանց խաբուիչ ուզե-  
 լու » :

13. Ասոր համար երբեմն օգտակար է  
 որ Հոգևոր Հայրը փորձութիւնները յայտ-  
 նելն ու անոնց վրայ խօսելը արդելու անոնց՝  
 որ փափուկ խղճմտանք ունին ու առաքի-  
 նութեան մէջ լաւ հաստատուած են, բայց  
 երկչոտ են, ու փորձութիւններէ կը չար-  
 չարուին (մասնաւորապէս թէ որ հաւատ-  
 քի կամ ողջախոհութեան դէմ ըլլան) .  
 վասն զի յայտնելու համար հարկ կ'ըլլայ  
 քննել որ արդեօք ինչպէս մտեր են այն  
 խորհուրդները, և թէ մտքերնին գալու  
 ատեն հեշտութիւն կամ հաճոյք ու հա-  
 ւանութիւն տուեր են, ու ասանկով վրա-  
 նին աւելի մտածելով դէշ երևակայու-  
 թիւնները աւելի կը տպաւորուին ու աւելի  
 անհանգիստ կ'ընեն . բայց երբոր խոստո-  
 վանահայրը բարոյապէս ասպահով է, որ

1 Գերբ 2, Թիւ 476 :

այն անձը այնպիսի փորձութեանց տեղիք չտար, ըստ կ'ըլլայ հրամանն տայ որ վրան չխօսի: Տեսայ ալ որ ասանկ կ'ընէ եղեր սրբուհին Յովհաննա Շանդալ: Ինքն իր վրայ կը պատմէ, որ երկար ատեն փորձութեանց սոսկալի ալէկոծութիւններու մէջ յուզուելով, ու ամենեւին չգիտնալով որ հաւանութիւն տուած ըլլայ, ամենեւին չէր խոստովանած, հասկա միշտ իր հոգևոր հօր տուած կանոնին էր հետևեր: Այսպէս կ'ըսէ ինքը. « Ամենեւին հաւանութիւն տալու պայծառ ծանօթութիւն մը չեմ ունեցած », այսպէս ըսելով, կը հասկըցընէ թէ այն փորձութեանց պատճառաւ խղճմտանաց այլայլութիւն մը մնացեր էր. բայց 'ի վերայ այսր ամենայնի հանդարտ կը մնար իր հոգևոր հօրը տուած կանոնին հնազանդելովը ու չխոստովանելով այնպիսի տարակոյսները: Բայց ընդհանրապէս փորձութիւնները մեղմացընելու համար շատ օգտակար է խոստովանահօր յայտնելը, ինչպէս որ վերը ըսինք:

14. Բայց դարձեալ կ'ըսեմ որ փոր-

ձուլթեանց դէմ դեղերուն աւելի ազդուն ,  
 աւելի հարկաւորը , դեղ դեղոցն է Մատու-  
 ծոյ օգնութիւնը խնդրել , ու անդադար  
 աղօթել՝ քանի որ փորձութիւնը տեէ :  
 Շատ անգամ Մատուած սահմանած է  
 յաղթութիւնը տալ՝ չէ առջի անգամ աղ-  
 թելուն , հապա երկրորդին , երրորդին ,  
 չորրորդին : Սիով քանիւ պէտք է միտ-  
 քերնիս լաւ դնենք որ աղօթքով կ'ըլլայ  
 մեր վարուց փոփոխութիւնը , աղօթքով  
 կ'ըլլայ փորձութեանց յաղթելը , աղօթ-  
 քով կ'ըլլայ աստուածային սիրովն վա-  
 ուելիը , կատարելութիւնը , յարատեու-  
 թիւնն ու յաւիտենական փրկութիւննիս :

15 . Ամանք՝ որ իմ հոգևոր գործքերս  
 կարդացեր են , ձանձրացեր են թերևս , որ  
 խիստ շատ կրկներ եմ անդադար աղօթ-  
 քով առ Մատուած դիմելու մեծութիւնն  
 ու հարկաւորութիւնը : Բայց ինձի կ'ե-  
 ղենայ որ շատ չէ ըսածս , հապա մանա-  
 ւանդ թէ խիստ քիչ : Վիտեմ որ ամէն  
 որ գիշեր ու ցորեկ դժոխային փորձութիւն-  
 ները ամենուս հետ կը սլատերազմին , ու  
 սատանայն առիթ մը չփախցներ որ զմեզ

մեղաց մէջ ձգէ : Վիտեմ որ մենք առանց  
 Աստուծոյ օգնականութեանը ուժ չունինք  
 սատանային յարձակմանըր դէմ դնելու .  
 ասոր համար Առաքեալը կը յորդորէ զմեզ  
 որ Աստուծոյ զէնքերը վրանխա առնենք , ու  
 կ'ըսէ . “ Հաղէք Աստուծոյ զէնքը , որ  
 կարող ըլլաք սատանային հնարքներուն  
 դէմ դնել : Վասն զի այս կռիւր մարմնոյ  
 ու արեան դէմ կռիւ չէ , հասրա իշխանու-  
 թեանց ու պետութեանց դէմ , այս խա-  
 ւար աշխարհքիս տիրողին դէմ , որ է  
 երկնից տակ եղած չար սատանաներուն  
 դէմ ,<sup>1</sup> : Բայց ի՞նչ զէնքեր են որ Առա-  
 քեալը կը սորվեցընէ սատանաներուն դէմ  
 դնել . այս է ահա . “ Բոլոր աղօթքով ու

1 Չգէցարուք զսպառազինութիւն  
 Աստուծոյ , զի կարող լինիջիք կաւ ընդ-  
 դէմ հնարից սատանայի : Չի ոչ է պա-  
 տերազմ ընդ մարմնոյ և ընդ արեան ,  
 այլ ընդ իշխանութիւնս և ընդ պե-  
 տութիւնս , և ընդ աշխարհակալս խա-  
 ւարիս այսորիկ՝ ընդ այսա չարութեան  
 որ 'ի ներքոյ երկնից : Եփես . 2 . 11 ,  
 12 :

խնդրուածքով՝ միշտ հողւով աղօթք ընել,  
 և ամենայն երկայնատու թեամբ ու խնդրո-  
 ւածքով արթուն կենալ,՝<sup>1</sup> : Այս զէնքը  
 անդադար ու ջերմեռանդն աղօթքն է առ  
 Աստուած՝ որպէս զի մեզի օգնութեան  
 հասնի, որ չյաղթուինք : Պիտեմ դար-  
 ձեալ՝ որ թէ՛ հին և թէ՛ նոր կտակարանը  
 ուրիշ բան չեն ընե՛ր՝ բայց եթէ միշտ զմեզ  
 աղօթքի յորդորել : “Աղաղակէ ինձի ու  
 ես զքեզ կ’ազատեմ”,<sup>2</sup> : “Աղաղակէ ինձի՛  
 ես քեզի սլատասխան կու տամ”,<sup>3</sup> :  
 “Պէտք է միշտ աղօթք ընել ու չձանձ-  
 րանալ”,<sup>4</sup> : “Խնդրեցէք որ ձեզի տրուի”,<sup>5</sup> :

1 Ամենայն աղօթիւք և խնդրուածովք՝  
 աղօթս անել յամենայն ժամանակի հո-  
 գւով. և ի նոյն աքնեսջիք ամենայն ժուժ-  
 կալութեամբ, և խնդրուածովք : Եփես .  
 2 . 18 :

2 Կարդացեա առ իս և վերկեցից  
 զքեզ : Սղմ . ԽԹ . 15 :

3 Կարդա առ իս, և տաց քեզ սլա-  
 տասխանի : Երեմ . ԼԳ . 3 :

4 Պարտ է յամենայն ժամ կալ յա-  
 ղօթս, և մի ձանձրանալ : Ղուկ . ԺԸ . 1 :

5 Խնդրեցէք և տացի ձեզ : Մտթ .  
 Է . 7 :

“ Արթուն կեցէք ու աղօթք ըրէք ”<sup>1</sup> :  
 “ Միշտ աղօթք ըրէք ”<sup>2</sup> : Ուստի ինծի  
 կ'երևայ որ չէ թէ շատ՝ հասցա խիստ քիչ  
 խօսեր եմ աղօթքի վրայ :

16 . Ո՛ւր էր թէ ամէն քարոզիչները  
 աղօթքէ զատ ուրիշ բան չյանձնէին իրենց  
 ունկնդրացը . ո՛ւր էր թէ խոստովանահայ-  
 րերը աղօթքէ զատ ուրիշ բանի չյորդո-  
 ղէին իրենց խոստովանորդիքը . ո՛ւր էր թէ  
 հոգևորական բաներ գրողները ուրիշ նիւ-  
 թի վրայ այնչափ երկայն չգրէին ինչպէս  
 որ աղօթքի վրայ : Բայց այս բանիս վրայ  
 շատ կը պաւիմ, ու անտարակոյս մեր մե-  
 ղացը պատիժն է՝ որ այնչափ քարոզիչներ,  
 խոստովանահայրեր, հոգևոր մատենագիր-  
 ներ աղօթքի վրայ քիչ կը խօսին : Տարա-  
 կոյս չկայ որ շատ մեծ օգուտ կ'ընեն հո-  
 գևոր կենաց քարոզներ, մտածականներ,  
 սուրբ հաղորդութիւնը, մահացուցմունք .

1 Արթուն կացէք և աղօթա արարէք :  
 Մտթ . ԻԶ . 41 :

2 Անդադար աղօթա արարէք : Ա .  
 ԹԵՍ . Ե . 17 :

բայց թէ որ փորձութեանց ատեն զմեզ  
 Աստուծոյ յանձնելու չըլանք, անտարա-  
 կոյս կ'ինկնանք, թէ և քարոզ լսենք,  
 մտածական ընենք, հաղորդութիւն առ-  
 նենք, ապաշխարութիւններ ընենք, ու ա-  
 մէն կերպ բարի առաջադրութիւնները կա-  
 տարենք: Աւրեմն թէ որ մեր փրկութիւնը  
 կ'ուզենք՝ միշտ աղօթենք պիտի, ու յանձ-  
 նենք զմեզ մեր փրկչին Յիսուսի, մասնա-  
 ւորապէս փորձութեան ատեն, և ոչ միայն  
 պէտք է իրմէն սուրբ յարատեութիւն  
 խնդրել, հապա միշտ աղօթելու շնորհքն  
 ալ: Յանձնենք զմեզ միշտ նաև սուրբ  
 Աստուածածնայ, որ բաշխիչ է շնորհաց,  
 ինչպէս որ կ'ըսէ սուրբն Բեռնարդոս .  
 “Շնորհք խնդրենք, ու սուրբ Աստուա-  
 ծածնայ ձեռքովը խնդրենք,” : Այն սուրբը  
 մեզի կը սորվեցնէ թէ Աստուծոյ կամքն է  
 որ մենք ինչ շնորհք որ ընդունինք՝ սուրբ  
 Աստուածածնայ ձեռքէն պիտի անցնի .  
 “Ղուզեր Աստուած որ մենք բան մը ու-  
 նենանք որ Կուսին Մարիամու ձեռքէն  
 անցած չըլայ,” :

ԻՂՁՔ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Ո՛վ փրկիչ իմ Յիսուս , յոյսս քու սուրբ արեանդ վրայ դրած եմ որ քեզի դէմ գործած մեղքերուս թողութիւն տուած ես . ու կը յուսամ որ երկինքը գամ ու յաւիտեան քեզի շնորհակալ ըլլամ . “ Աստուծոյ ողորմութիւնը միշտ պիտի երգեմ , ” : Անցած կենացս մէջ թշուառաբար շատ անգամ մեղաց մէջ ինկայ , վասն զի անհոգ եղայ քեզմէ սուրբ յարատեութեան շնորհքը խնդրելու : Հիմա զնոյն յարատեութիւնը կը խնդրեմ քեզմէ . “ Սի թողուր զիս որ քեզմէ զատուիմ , ” : Աստուծադրեմ որ միշտ խնդրեմ քեզմէ այս յարատեութեան շնորհքը , մանաւանդ երբոր քեզի դէմ մեղանշելու փորձութեան մը մէջ ինկնամ : Այսպէս կ’առաջադրեմ ու զայս կը խոստանամ . բայց ի՞նչ օգուտ ունի այս իմ առաջադրութիւնս ու խոստմունքս , թէ որ ինձի շնորհք չտաս՝ որ



կարող ըլլամ ոտքդ ինկնալ : Արդ սուր  
 ուրեմն կ'աղաչեմ այս շնորհքը՝ քու չար-  
 չարանացդ արդեանցը համար , որ միշտ  
 քեզի յանձնեմ զիս իմ ամէն պիտոյիցս  
 մէջ : Ա՛յլ թագուհի իմ , և մայր իմ Մա-  
 թիամ , կ'աղաչեմ քեզի , որ Յիսուսի սի-  
 րոյն համար ըլլայ՝ ընդունիս ինծի այս  
 շնորհքը որ միշտ գիմեմ քու որդւոյդ ոտ-  
 քը և միանգամայն առ քեզ բոլոր կենացս  
 մէջ :

ԼԻՄԱՆ ԱՐԱՅ

17 . “ Խաբէութիւն է , կ'ըսէ սուրբն  
 Իրանչիսկոս Սաբղեան , ջերմեռանդու-  
 թիւնը չափել այն մտիթարութեամբ որ  
 կը զգանք : Աստուծոյ ճամբուն մէջ  
 ճշմարիտ ջերմեռանդութիւնն է հաս-  
 տատուն կամք ունենալ ամէն Աստուծոյ  
 հաճոյ եղած բաները կատարելու ,, : Աս-  
 տուած ցամաքութեամբ իրեն հետ կը միա-  
 ցընէ իր ամենէն աւելի սիրելի հոգիները :

Մեր անկարգ յօժարութեանց յարումը մեզի արգելք կ'ըլլայ Աստուծոյ հետ սերտ միանալու . ուստի երբոր Աստուած ուզէ հոգի մը իրեն կատարեալ սիրոյն քաշել, կը նայի որ հեռացնէ՛ զանիկա ամէն աւրարածական բարեաց յօժարութիւններէն : Ասանկով նախ կը վերցնէ՛ ժամանակաւոր բարիքը, աշխարհական հաճոյքը, ինչքը, սկստիւր, բարեկամները, ազգականներն ու մարմնոյ առողջութիւնը . ու այս կորըստեան, տհաճութեան, արհամարհանաց, մահուան ու հիւանդութեանց ճամբովը ամենայն արարածներէն զինքը կը հեռացընէ, որպէս զի իրեն դարձնէ՛ անոր բոլոր իղձերը :

18 . Ատքը որպէս զի այն հոգին հոգեկան բարեաց սէր ձգէ, սկզբան շատ մխիթարութիւններ իրեն կու տայ առատ արտասուօք ու սրտի փղձուկով . ուստի հոգին կը ջանայ զգայական հաճոյքներէ՛ հեռանալ, ու մանաւանդ կը նայի որ մարմինը ասպաշխարութեամբ, ծոմապահութեամբ, խարազնազգեցութեամբ ու ձաղկանքով ճնշէ : Բայց այն ատեն պէտք է որ խոս-

տութանահայրը սանձի տակ բռնէ , ար-  
 դիլէ որ մահացումունքներ չընէ , գոնէ  
 ինչ մահացումունք որ ինքը կ'ուզէ , վասն  
 զի այն զգայական եռանդը զինքը մղելով՝  
 անզգուշութեամբ կրնայ իր առողջութիւ-  
 նը դիւրաւ մնասուիլ : Ասիկա սատանային  
 խարդախութիւնն է , որ երբոր մէկը ինք-  
 զինքը Աստուծոյ կու տայ ու Աստուծոյ  
 դժութենէն մխիթարութիւն կը գտնէ , որ  
 սուլորաբար նոր սկսողներուն կը հանդիպի՝  
 թշնամին կը ջանայ առողջութիւնը կորսն-  
 ցընել տալ անխոհեմ ապաշխարութիւննե-  
 րով , որպէս զի վրան հիւանդութիւն գա-  
 լով ոչ միայն ապաշխարութիւնները ձեռ-  
 քէ ձգէ , հասկա աղօթքն ալ , հաղոր-  
 դութիւնն ալ և ուրիշ ջերմեռանդական  
 կրթութիւնները , ու իր առջի վարուցը  
 դառնայ : Աւստի այն անձինք որ նոր կը  
 սկսին հոգևոր կեանք ու ապաշխարութիւն  
 ընել կը խնդրեն , հոգևոր Հայրը պէտք է  
 շատ զգոյշ ըլլայ հրաման տալու , և ջա-  
 նայ զանոնք յորդորել որ ներքին մահա-  
 ցումունք ընեն՝ նախատինք ու ներհակու-  
 թիւն համբերութեամբ քաշելով , մեծա-

ւարնիրու հնազանդելով, աչաց ու ական-  
 ջաց հետաքրքրութենէ զգուշանալով, ու  
 ասոնց նման բաներ, ու պիտի ըսէ՝ թէ եր-  
 բոր բարի ունակութեամբ այս ներքին մա-  
 հացուցմանց զիրենք կը թեն, անկէ ետքը  
 կրնան արտաքին մահացուցմունք ընելու  
 ալ արժանի ըլլալ: Բայց բողոքողին սխալ  
 բան է որ ոմանք կ'ըսեն՝ թէ արտաքին  
 մահացուցմունքը անօգուտ են, կամ թէ  
 քիչ օգուտ ունին: Տարակոյս չկայ որ  
 կատարելութեան համար ներքին մահա-  
 ցուցմունքը աւելի հարկաւոր է, բայց քիչ  
 հարկաւոր չեն արտաքիններն ալ: Ա' ըսէր  
 սուրբն Վիչենցիոս Վաւլայեցի, թէ ով որ  
 արտաքին մահացուցմունք չընէր, այնպի-  
 սին ոչ արտաքուստ և ոչ ներքուստ մա-  
 հացեալ կ'ըլլայ: Սուրբն Յովհաննէս  
 Խաչեանն ալ կ'աւելցընէ, թէ պէտք չէ  
 հաւտալ այնպիսի հոգևոր հօր որ մար-  
 մնոյ ճնշումը կ'արհամարհէ, թէ և այն-  
 պիսին հրաշք ալ գործէ:

19. Բայց մենք մեր նսրատակը դառ-  
 նանք: Աւրեմն 'ի սկզբան որ հոգին ինք-  
 ղինքը Աստուծոյ կու տայ, և այն զգալի

մխիթարութեանց քաղցրութեանը համը  
կ'առնէ, որոնցմով որ Մտուած իրեն քա  
շել կը նայի զայն հոգին ու երկրաւոր հա  
ճոյքներէ հեռացնել, ինքն ալ կամաց կա  
մաց արարածներէ կը հեռանայ ու Մտ  
տուծոյ հետ կը կապուի, բայց պակսու  
թեամբ կը կապուի, աւելի այն հոգեւոր մխի  
թարութեանց զգայականութենէն շարժե  
լով քան թէ Մտուծոյ հաճոյքը կատա  
րելու կամքէն . կը խաբուի կարծելով որ  
որչափ իր ջերմեռանդութիւններէն համ  
առնէ, այնչափ աւելի զՄտուած կը սի  
րէ : Աւ ասկէց առաջ կու դայ որ երբոր  
իր հաճոյական կրթութիւններուն արգելք  
մը ըլլայ, ու հնազանդութեան կամ եղ  
բայրսիրութեան կամ իր վիճակին գործքե  
րուն զբաղել տան, կը խռովի ու կը տխրի .  
այս ընդհանուր մարդկային խեղճութեան  
պակասութիւնն է՝ որ ամէն գործքի մէջ  
իր հաճոյքը կը վնասուի, կամ թէ այն հո  
գեւոր կրթութեանց մէջ ուզած համն որ  
չառնէ՝ կամ բոլորովին զանց կ'ընէ, ե  
կամ կը քիչցընէ, ու այսպէս որ աւուր  
պակասեցնելով՝ վերջապէս բոլորովին կը թո

ղու : Այս գժբաղղութիւնը շատերուն  
կը սպատահի , որոնց Աստուած իր սիրոյն  
կոչումը տալով կը սկըսին իրենք ալ կա-  
տարելութեան ճամբան մտնալ , ու քանի  
որ հոգևորական քաղցրութիւնները դիմա-  
նան , առաջ կ'երթան . բայց այն քաղցրու-  
թիւնները դադրելու որ ըլլան , իրենք ալ  
ամէն բան կը թողուն , ու կը դառնան  
առջի վարքերնուն : Բայց պէտք է միտ-  
քերնիս պառկեցնենք որ Աստուծոյ սէրն  
ու կատարելութիւնը սրտի փղձուկ ու  
մխիթարութիւններ զգալու վրայ չեն , հա-  
պա անճնասիրութեան յաղթելու վրայ և  
Աստուծոյ կամացը հետևելու : Սուրբ  
Ֆրանչիսկոս Սալեզեան կ'ըսէ . “ Աս-  
տուած միօրինակ սիրելի է , թէ՛ երբոր  
զմեզ մխիթարէ , և թէ՛ երբոր զմեզ չար-  
չարէ ” :

20 . Այնպիսի մխիթարութեանց ա-  
տեն մեծ առաքինութիւն մը չէ զգայական  
հաճոյքները թողուլ , ու նախատանայ և  
հակառակութեանց համբերել . այնպիսի  
քաղցրութեանց ատեն հոգին ամէն բան  
սիրով կը տանի . բայց այդ համբերու-

Թիւնը շատ անգամ զգացած քաղցրու-  
 Թիւններէն առաջ կու գայ , քան թէ Աս-  
 տուծոյ ճշմարիտ սիրոյն ուժէն : Անոր  
 համար զհոգին առաքինութեանց մէջ հաս-  
 տատելու համար , Աստուած ետ կը քա-  
 շուի ու այն զգալի ախորժը կը վերցընէ ,  
 որպէս զի անձնասիրութեան ամէն յար-  
 մունքները վերցընէ : վասն զի անձնասի-  
 րութիւնը այնպիսի ախորժներով աւելի  
 ուժ կ'առնէ : Անոր համար առաջ որ ան-  
 ձին նուիրման , վստահութեան ու սիրոյն  
 Աստուծոյ ներգործութիւններ երբ ընէր  
 ուրախութիւն կը զգար , անկէջ ետքը  
 մխիթարութեանց աղբիւրն որ դադրի՝ նոյն  
 ներգործութիւնները պաղուծեամբ ու դը-  
 ժուարութեամբ կ'ընէ , ու ջերմեռանդա-  
 կան կըթուծիւններու , աղօթքի ու հո-  
 գևոր ընթերցուածոց ու հաղորդութիւն  
 առնելու ձանձրութիւն կ'իմանայ . մանա-  
 ւանդ թէ ուրիշ բան չզգար , բայց եթէ  
 խաւար մը , վախ մը , ու կը կարծէ որ ա-  
 մէն բան կորսնցուցած է : Արօթք կ'ընէ ,  
 կը դառնայ նորէն կ'աղօթէ , ու կը արտախ-  
 կարծելով որ ալ Աստուած աղօթքին մտիկ  
 չուզեր ընել :

21 . Գանք հիմա այն գործքերուն վրայ որ պէտք է մենք մեր կողմանէ ընենք : Արբոր Աստուած իր ողորմութեամբը կը մխիթարէ զմեզ սիրալիր այցելութիւններով , և մեզի զգալ կու տայ իրեն շնորհացը ներկայութիւնը , այս աստուածային մխիթարութիւնները մերժելը լաւ չէ . ինչպէս որ կան խորհրդական աստուածաբաններ որ այս սխալ կարծիքը ունին . հապա շնորհակալութեամբ ընդունինք , բայց զգուշանալու է որ չըլլայ թէ կենանք հողոյն այն խանդաղատանաց համն առնելու զուարճանալ . սուրբն Յովհաննէս խաչեան այս բանս կ'անուանէ որհրաճողութիւն հոգեւորական , որ պակսութիւն է ու Աստուծոյ անհաճոյ : Այնպիսի ատեն պիտի ջանանք մտքերնէս հեռացընել այն քաղցրութեանց զգայական հաճոյքը , և մասնաւորապէս պիտի զգոյշ կենանք որ միտքերնիս չգնենք թէ Աստուած այնպիսի գութ կը ցուցնէ մեզի , որովհետեւ ուրիշներէն աւելի լաւ կը վարուինք . վասն զի այսպիսի սնասլարծութեան մտածութիւնը կը բռնադատէ զԱս-



տուած որ մեզմէ բոլորովին հեռանայ , ու  
 զմեզ մեր խեղճութեանը մէջ ձգէ : Հապա  
 պէտք է որ այն ատեն եւանդեամբ իրեն  
 շնորհակալ ըլլանք , վասն զի այսպիսի հո-  
 զեորական միտիժարութիւնները Աստուծոյ  
 մեծամեծ պարգևներն են որ կը շնորհէ հո-  
 զւոյն , ու ամէն հարստութենէ ու ժամա-  
 նակաւոր պատիւներէ շատ մեծ են : Բայց  
 այնպիսի ատեն պիտի չնայինք որ այն  
 զգալի հաճոյքներով զուարճանանք , հա-  
 պա պիտի խոնարհինք՝ աչքերնուս առջին  
 բերելով առջի կեանքերնուս մեղքերը :  
 Պէտք է որ միտքերնիս դնենք թէ այն սի-  
 քալիր կերպերը Աստուծոյ բարութեանը  
 միայն գործքերն են . ու պիտի մտածենք  
 որ դուցէ Աստուած այն միտիժարութիւն-  
 ներով առաջուց կը զօրայրնէ զմեզ , որ-  
 պէս զի ետքը համբերութեամբ քաշենք  
 ծանր նեղութիւնն որ կ'ուզէ մեզի խառ-  
 րել . ուստի այն ատենը պիտի զմեզ նուի-  
 րենք որ համբերենք ինչ արտաքին կամ  
 ներքին միշտ որ հանդիպելու ըլլայ , հե-  
 ւանդութիւն , հալածանք , լքումն հոգւոյ ,  
 ըսելով . “ Տէր իմ , ահաւասիկ կեցեր եմ ես ,

ինծի ու խմ բաներուս ինչ որ կ'ուզես՝ այն ըրէ, աուր ինծի շնորհք զքեզ սիրելու, ու բողբոլիկն քու կամքդ կատարելու. ալ ուրիշ բան չեմ խնդրեր,, :

22. Արքայ Տոգին բարոյապէս գիտնայ թէ Աստուծոյ շնորհացը մէջն է, թէ պէտ է զուրկ ըլլայ թէ աշխարհային և թէ աստուածային հաճոյքներէ, բայց իր վիճակին վրայ զոհ կ'ըլլայ՝ գիտնալով որ ինքը զԱստուած կը սիրէ ու Աստուած ալ զինքը : Բայց Աստուած որ կ'ուզէ տեսնալ զայն հոգին աւելի մաքրեալ ու մերկացեալ ամենայն զգայական մխիթարութենէ, ու զուտ սիրով բողբոլիկն իրեն հետ միացընել, ինչ կ'ընէ. կը դնէ զայն լքման քուրային մէջը, որ թէ ներքին և թէ արտաքին տանջանքներէ որ մարդ կրնայ կրել աւելի դառն տանջանքն է, զինքը կը զրկէ շնորհաց մէջ ըլլալուն գիտութենէն, թանձր խաւարի մէջ կը ձգէ զինքը. և այն խաւարին մէջ կարծէ որ ալ զԱստուած պիտի չգտնայ : Մանաւանդ երբեմն Աստուած թոյլ կու տայ, որ վրան զգայական ծանր փորձութիւններ դան ու ստորին մա-

սին գէշ շարժմունքներ, կամ թերահաւատութեան և կամ յուսահատութեան խորհուրդներ, ու նաև աստուածատեցութեան, կարծելով որ ալ Աստուած զինքը երեսէ թողուցեր է ու չսեր իր արօթքին : Աւ որովհետև մէկ կողմանէ սատանային թելադրութիւնները զորաւոր, ու մարմնոյ ցանկութիւնը գրգռած ըլլալով, ու միւս կողմանէ հոգին այն թանձր խաւարը մատնուած, թէպէտ և իր կամքովը դէմ կենայ, բայց ըստ բաւականին չճանչնար որ որ ինչպէս որ պէտք է՝նէ՛ այն փորձութիւններուն դէմ դրա՞ծ է թէ հաւանութիւն տուած . որով վախը աւելի կ'աճի որ զԱստուած կորսնցուցած ըլլայ, Աստուած ալ այն փորձութեանց մէջ ցուցուցած անհաւատարմութեանցը համար զինքը բողբոլիներեսէ ձգած : Ուստի վերջին կործանման հասած կը կարծէ ինքզինքը ալ զԱստուած չսիրելու ու Աստուծոյ ատելի ըլլալու : Արբ բուհին թփերեզա այս չարչարանաց լաւ համը առաւ, և կը խոստովանի որ այն վիճակին մէջ միայնութիւնը զինքը չէր մխիթարեր, մանաւանդ աւելի տանջանք կ'երևար

իրեն , և թէ քանի որ աղօթքի կ'երթար՝  
կարծէր թէ դժոխքն է :

25 . Թէ որ այս բանս աստուածա-  
սէր հոգւոյ մը սլատահելու ըլլայ՝ ամենեւին  
սէտք չէ շփոթի , և ոչ զինքը առաջնոր-  
դող Հոգւոր Հայրը վախ ունենայ : Ասան  
զի այն զգայական շարժմունքները , այն  
հաւատքի դէմ փորձութիւնները , այն  
վհատութիւնը , այն գրգռմունքները որ  
զԱստուած ատելու կը մղեն , անոնք հո-  
գւոյն տանջանքն են ու սատանային ճգան-  
քը , չէ թէ կամայական գործքեր են , ա-  
նոր համար մեղք չեն սեպուիր : Օ՛հիսուս  
ճշմարտասպէս սիրող հոգին լաւ մը դէմ  
կը դնէ անոնց ու այնպիսի թեղադրու-  
թեանց հաւանութիւն չտար . բայց խա-  
ւարով սլատեալ ըլլալուն՝ չկրնար զանա-  
զանել , ու տարակուսի մէջ կը մնայ , և  
որովհետեւ կը տեսնայ թէ շնորհաց ներ-  
կայութենէն զուրկ մնացած է՝ կը վախ-  
նայ ու կը տրտմի : Բայց նաև աղէկ կ'ե-  
րենայ , որ Աստուծոյ այսպէս փորձած  
հոգիները բոլոր վախով ու կասկածան-  
քով լի են , չէ թէ ստոյգ են : Հարցու

իրենց այն լքման ատենն ալ թէ ար-  
գիօք գիտութեամբ ներելի մեղք մ'ալ  
միայն կը գործէին թէ չէ . և կը տեսնաս  
որ հաստատուն կամօք պատասխան կու  
տան՝ թէ պատրաստ են չէ թէ մէկ տան-  
ջանք , հապա հազար մահ յանձն առնե-  
լու , քան թէ կամաւորապէս այնպիսի  
Մտուծոյ տհաճելի բան մը գործել :

24 . Մտր հա՛մար պէտք է զանազա-  
նել , թէ ուրիշ բան է գովելի ներգործու-  
թիւն մը ընել , ինչպէս փորձութիւնը  
վերնտել , առ Մտուած ապաւինիլ , սի-  
րել ու կամիլ ինչ որ Մտուած կը կամի ,  
և ուրիշ բան է գիտնալ որ իրաւցրնէ կ'ը-  
նենք այն գովելի ներգործութիւնը : Այս  
երկրորդս՝ ճանչնալ որ գովելի ներգործու-  
թիւն մը կ'ընենք , մեզի ուրախութիւն  
որ կը բերէ , բայց շահաւորը առջինն է ,  
այսինքն իրաւցրնէ նոյն գովելի ներգործու-  
թիւնը ընել : Մտուած առջինուից գոհ  
կ'ըլլայ ու երկրորդէն կը զրկէ զհոգին ,  
այսինքն ճանչնալ թէ այն գովելի ներգոր-  
ծութիւնը ըրած է . որպէս զի ամէն միսի-  
թարութիւնը վերցրնէ , որ եղած ներգոր-

ծովթեանը ստուգութիւն մը չըրեր . վասն  
 զի Աստուած աւելի մեր օգուտը կը փնտռէ ,  
 քան թէ մեր մխիթարութիւնը : Սուրբն  
 Յովհաննէս Ասաչեան լքեալ հոգւոյ մը  
 այսպէս գրեց՝ զինքը մխիթարելու համար .  
 “ Դու ամենեւին հիմակուան պէս լաւ  
 միճակ չես ունեցած , վասն զի ոչ եր-  
 բէք այսպէս խոնարհած , ու աշխարհքէս  
 զատուած զանուեր ես , ու բնաւ այնպէս  
 գէշ չես ճանչցած ինքզինքդ , ինչպէս  
 որ հիմա կը ճանչնաս . և ոչ երբէք այս-  
 պէս քեզմէ դուրս ելեր ես , ու զքեզ  
 փնտռելէն հեռու ” : Միով բանիւ չկար-  
 ծենք որ երբ աւելի հոգւոյ խանդաղատանք  
 կը զգանք , Աստուծոյ աւելի սիրելի ենք .  
 վասն զի խանդաղատանքը կատարելու-  
 թիւն չէ , հասցա մեր կամքը մահացրնե-  
 լով Աստուծոյ կամացը հետ միացրնելը :

25 . Ուրեմն լքման ատեն հոգին  
 պիտի նայի որ սատանային աւանջ չը-  
 տայ , թէ որ թեղադրէ որ Աստուած  
 զինքը երեսէ ձգած է , ու ամենեւին  
 պէտքը չէ արթթիւն ետ մնայ : Սատա-  
 նային ուղածն աս է , որպէս զի դուրի

ժը մէջ ձգէ զանիկա : Արբուհին (Թերեզա  
կը զրէ թէ “ Յամարութեամբ ու փոր-  
ձութեամբ Աստուած իր սիրելիները կը  
փորձէ : Թէսլէտ և բոլոր կեանքը ցամա-  
քութեամբ անցնի , հոգին արօթքէն ետ  
պիտի չկենայ . ժամանակ պիտի դայ ու-  
րուն այն ամէն բանին լաւ մը փոխարէնը  
պիտի առնէ , : Այսպիսի նեղութեան վե-  
ճակին մէջ պէտք է խոնարհիլ , մտածե-  
լով որ արժանի է այդ բանին Աստուծոյ  
դէմ բրած մեղքերուն համար , պէտք է  
խոնարհի ու զինքը բոլորովին Աստուծոյ  
կամայը յանձնէ , ըսելով . “ Տէր , ահա  
կեցեր եմ . եթէ քու կամքդ է որ ես այս-  
պէս լքեալ ու վշտացեալ մնամ բոլոր կե-  
նացս մէջ , նաև յաւիտեան , տուր ինձի  
քու շնորհքդ , տուր որ սիրեմ գրեզ , ետ-  
քը ինչ որ կ'ուզես ըրէ զես , :

26 . Այն ատենը անօգուտ է և գու-  
ցէ աւելի անհանգստութիւն , ուզենալ ա-  
պահովապէս գիտնալ թէ Աստուծոյ շնոր-  
հաց մէջն ես , և թէ այդ վիճակը փորձ  
է՛ չէ թէ Աստուծոյ հրեպէն ինկնալ . ին-  
չու որ Աստուած չուզեր որ այն ատեն

զայդ գիտնաս . և չուզեր՝ քու մեծագոյն  
 օգտիդ համար , որպէս զի աւելի խոնար-  
 հիս , և աղօթքդ ու իր ողորմութեանը  
 վստահութեան ներգործութիւնները աւել-  
 ցընես : Դուն կ'ուզես տեսնալ , սակայն  
 Աստուած չուզեր որ տեսնաս : Բայց կ'ըսէ  
 սուրբն Յիրանչիսկոս Սալեզեան թէ “ Հաս-  
 տատ կամքը պզտի մեղքի մ'ալ չհաւա-  
 նելու , զմեզ ապահով կ'ընէ՝ որ Աստու-  
 ծոյ շնորհաց մէջ ենք ” : Սակայն երբոր հո-  
 ղին խորին լքում հասնի , և ոչ այս բանը  
 պայծառ կը ճանչնայ . բայց այդ վիճակին  
 մէջ պէտքը չէ պահանջել որ ուզածը զգայ  
 ալ , բաւական է որ կերպով մը ուզէ : Ու  
 ասանկով պէտք է ինքզինք բողբոլին թու-  
 դուլ աստուածային բարութեանը : Ո՛հ ,  
 որչափ զԱստուած սիրով կը բորբոքեն այդ  
 վստահութեան ու ասպախնութեան ներ-  
 գործութիւնները լքման խաւարին մէջ :  
 Ո՛հ , վստահանանք ուրեմն Աստուծոյ որ  
 ( ինչպէս կ'ըսէ սրբուհին (Թերեզա ) զմեզ  
 մեզմէ աւելի կը սիրէ :

27 . Թող Աստուծոյ սիրելի հոգիները  
 մխիթարուին , որոնք որ հաստատուն կամք



ունին որ բողբոլին Աստուծոյ ըլլան, ու միանգամայն կը տեսնան որ ամէն միսթարութենէ զուրկ մնացած են : Իրենց լքումը նշան է որ Աստուծոյ շատ սիրելի են և ինքը արքայութիւնը իրենց տեղը պատրաստած է՝ ուր որ միսթարութիւնը ընցուն ու յախտնական է : Այլ լաւ գիտնան որ որչափ այս աշխարհքիս վրայ նեղութիւն քաշեն, այնչափ աւելի պիտի միսթարութիւն երանելեաց թագաւորութեան մէջ : “ Իմ սրտիս ցաւերուն շատութեանը համեմատ՝ քու միսթարութիւնդ կ'ուրախացնէր հոգիս ”<sup>1</sup> : Եւ քեալ հոգւոյ միսթարութեանը համար կ'ուզեմ հոս աւելցնել ինչ որ կը պատմուի սրբուհի Յովհաննա Անդալին վարքին մէջ, որ քառասունըմէկ տարի տանջուեցաւ սոսկալի ներքին վշտերով, փորձութեամբ, Աստուծոյ շնորհացը մէջ չըլլալու ու նաև Աստուծոյ երեսէն ինկած ըլլալու վա-

1 Ըստ բազում ցաւոց սրտի խնոյ՝ միսթարութիւն քո ուրախ առնէր զանձն իմ : Սղմ. ԳԳ. 17 :

խով : Իրեն այս վիշտերը այնպէս անընդ-  
 չատ ու այնպէս մեծ էին , մինչև որ կ'ը-  
 սէր թէ միայն մահուան մտածութիւնը ի-  
 թեն քիչ մը մխիթարանք կու տար : Ա'ը-  
 սէր դարձեալ . “ Անանկ կատաղի են  
 վրաս եղած յարձակմունքները , որ չեմ  
 զխտեր թէ իմ խեղճ հոգւոյս սէր գտնամ  
 ապաւէն մը : Արբեմն ինծի անանկ կ'ե-  
 րևայ որ ալ համբերութիւնս հատեր է , ու  
 ամէն բան կորսնցնելու ու ձեռքէ ձգելու  
 վրայ եմ , ” : “ Այնպէս կ'ըսէր նաև . “ Այն-  
 պէս անգութ է փորձութեան բռնաւորը  
 որ օրուան ամէն մէկ ժամուն անոր տեղ  
 կեանքս կու տայի : Անանկ որ երբեմն կե-  
 րակուր ուտել ու քուն ըլլալն ալ կը մոռ-  
 նամ , ” :

28 . Իրեն կենացը վերջի ութը կամ  
 ինը տարին փորձութիւնները աւելի տաստ-  
 կացան : Սգադէլ կուսանը կ'ըսէր որ ի-  
 թեն սուրբ մայրը Շանդալ գիշեր ցորեկ  
 անընդ-չատ ներքին մարտիրոսութիւն մը կը  
 կրէր , թէ աղօթքի ատեն , թէ բան բանե-  
 լու ատեն և թէ քուն ըլլալու ատեն . ա-  
 նանկ որ սիրտը վրան կը կըտրտէր : Սուրբ

կոյսը բոլոր առաքինութեանց դէմ պա-  
 աներազմ ունեցաւ (ի բայց առեալ ողջախո-  
 չութիւնը), տարակոյսներով, մտաց խա-  
 ւարմունքով, ու ընդդիմութիւններ զգա-  
 լով: Արքեմն Աստուած զինքը կը զրկէր  
 մտաց լուսաւորութենէ, ու իրեն սրբողած  
 կ'երևար իբրև թէ իրմէ վաճառելու վրայ  
 ըլլար, անանկ որ սրբուհին վախէն աչքը  
 մէկդի կը դարձընէր որ մխիթարութիւն մը  
 գտնայ, բայց չգտնալով՝ նորէն կը հար-  
 կադրէր աչքը Աստուծոյ դարձընել ու յանձ-  
 նել զինքը իրեն ողորմութեանը: Փոր-  
 ձութեանց սաստիկ յարձակմունքէն կը  
 կարծէր որ ամէն վայրկեան ինկնալու վրայ  
 է: Աստուածային օգնականութիւնը չէր  
 թողուր զինքը, բայց իրեն կ'երևար որ Աս-  
 տուած զինքը արդէն երեսէ ձգած է, ու  
 րուհետև ամենեւին մխիթարութիւն մը չէր  
 զգար, հասլա թէ աղօթքի ատեն, թէ  
 հոգևոր ընթերցուածոց ատեն, թէ հա-  
 ղորդուելու ատեն, ու բոլոր ուրիշ հո-  
 գևոր կրթութիւններու ատեն ձանձրու-  
 թիւն ու անձկութիւն միայն ունէր: Այն-  
 պիսի լքման մէջ իրեն ուրիշ առաջնորդ

չունէր , բայց եթէ իր Աստուծոյն յառիչ  
ու իրեն թողուլ որ ինչ կ'ուզէ ընէ :

29 . Ա՛րքէր սուրբ կոյսը՝ թէ “ Բոլոր  
իմ լքմանցս ատեն միայն ապրիլս ալ ինծի  
նոր խաչ մըն է , ու իմ գործք ընելու ան-  
կարողութիւնս խաչի նոր յաւելուած մըն  
է ինծի , ” : Ա՛նոր համար կարծէր զինքը  
ցաւերով սլաշարած հիւանդ մը որ չկրնար  
մէկ կողմէն մէկալ կողմը դառնալ , մունջ  
մը որ չկրնար բացատրել իր ցաւերը , կոյր  
մը , որ չտեսնար թէ դիմացը եկողները  
իրեն գեղ կը բերեն թէ թոյն : Աւստի  
դառնապէս լալով կ'ըսէր . “ Արծեմ  
թէ ոչ հաւատք , ոչ յոյս և ոչ Աստուծոյն  
իմոյ սէրը ունիմ , ” : Բայց միանգամայն միշտ  
անսիրտով էր կերպարանքը , անուշ կենա-  
կցութիւնը ու միշտ աչքերը առ Աստուած  
հաստատած էր , հանդչելով աստուածային  
կամաց գրկին մէջ : Աւստի գրեց սուրբն  
Պրանչիսկոս Սալեղեան իրեն հողևոր հայ-  
րը , որ լաւ կը ճանչնար թէ սրչափ Աս-  
տուծոյ սիրելի էր անոր գեղեցիկ հողին .  
“ Իբ սիրտը խուլ երածշտի մը կը նմա-  
նէր , որ թէ և սքանչելի երգէ՝ չկրնար զուար-

ճուժիւն մը առնել,, : Իսկ իրեն առանկ  
 գրեց . “ Գուն պիտի ծառայես քու փրոկ-  
 չիդ՝ միայն իրեն կամայր սիրոյն համար ,  
 ամենայն միսիժարութենէ զրկուելով , ու  
 աս տրտմութեանց ու վախերու հեղեղնե-  
 րովը ,, : Եսանկ կ'ըլլան սուրբերը :

Սոքա են քարինք սուրբք հիմնեցեալք 'ի  
 յերկրի ,

Օ՛ր կանխաւ տեսեալ դուշակեաց մար-  
 գարէն .

Ի նոյն 'ի նիւթոյ շինեցաւ կաթողիկէ ե-  
 կեղեցի

Բարձրացեալ փառօք 'ի պարծանրս խա-  
 չին :

Սուրբերս այն ընտրեալ քարերն են , ինչ-  
 պէս որ կ'երգէ Ակեղեցին , որ մրձոյ հա-  
 րուածներով կը կոկուին , այս ինքն՝ փոր-  
 ճուժիւններով , վախերով , մտաց խաւա-  
 րով , և ուրիշ ներքին ու արտաքին վշտե-  
 րով , ու ետքը յարմար կ'ըլլան որ դրախ-  
 տին երանելի թագաւորութեան գահոյիցը  
 վրայ զետեղուին :

Բարեաւ մընայք դուք արարածք ա-  
մենայն ,

Մեկնիմ 'ի ձէնջ , հրաժեշտ ձեզ տամ  
միտադիւր .

Ոչ ևս անձն իմ , ոչ ևս է ձեր , և ոչ  
իւր ,

Այլ 'ի բնաւից զերծ , Աստուծոյ է միայն :  
Այո՛ քո եմ , քո բովանդակ , Տէր Յի-  
սուս .

Բնկալ զիս , քաղցր և անուշակ իղձ հո-  
գւոյս :

Տէր և փրկիչ իմ սիրելի , սուրբ սէր  
քոյ

Միահեծան յիս կանգնեսցէ իւր գահոյս .

Տիրեսցէ անդ և ուղղեսցէ ըստ հաճոյս

Օղիճըս սրբախ երբեմն 'ի քէն հեստելոյ .

Ստացիր , Փրկիչ իմ սիրելի , ստացիր  
զիս .

Բնկալ ըզսիրտ ողորմելոյս և հիփիս :

Աստուածային սէր , որ բոյուք երկ-  
նայնօք

Որոյ սիրենն ըզքեզ՝ զողիս այնոցիկ

Կիցուս վառես և յարդարես երջանիկ ,  
 Լ'ջ դու 'ի սիրտ իմ , և ըզսա հրաբորբոք  
 Լ'յոց եռանդեամբըդ . քով , սրբեսա զես նո-  
 վին ,

Օտխես սպառես զես , սէր սուրբ , սէր  
 երկնային :

ԻՂՁԻ ԵՒ ՊԱՂԱՏԱՆԻ

Յիսուս , յոյս իմ և սէր իմ , և մի միայն  
 սէր սրտիս , արժանի չեմ ես քու միտիժա-  
 րութեանցդ ու քաղցրութեանցդ . անմեղ  
 հոգիներուն պահէ զանունք , որ միշտ քեզ  
 սիրեր են . ես մեղաւորս արժանի չեմ անոնց  
 և ոչ ալ քեզմէ կը խնդրեմ . այս է միայն  
 որ քեզմէ կը խնդրեմ , տուր ինձի որ քեզ  
 սիրեմ , տուր ինձի կատարել քու կամքդ .  
 բոլոր կենացս մէջ , ու ետքը ինչ որ կ'ու-  
 զես ըրէ զես : Ա՛յ ինձի . ինչ խաւար , ինչ  
 վախ ու ինչ լքմունք , ինձի դժոխք կը վայ-  
 լէր , ուր որ միշտ քեզմէ զատուած ու բոլորո-  
 վին երեսէդ ինկած՝ պէտք էր որ յաւիտեան

լայի առանց կարող ըլլալու սիրել զքեզ :  
 Այլ չէ , Յիսուս իմ , չէ . ամէն պատիժ  
 կ'ընդունիմ , բայց այս չէ : Գուն արժա-  
 նի ես անհուն սիրոյ . խիստ շատ պարտա-  
 ւորեցիր զիս քեզ սիրելու . չէ , չեմ ուզեր  
 ապրիլ ու քեզ չսիրել : Ար սիրեմ՝ զքեզ  
 անհուն բարիդ իմ , կը սիրեմ՝ զքեզ բոլոր  
 սրտով , ինձմէ աւելի կը սիրեմ՝ զքեզ ու  
 չեմ ուզեր ուրիշ բան բայց եթէ զքեզ սի-  
 րել : Գիտեմ որ այս իմ բարի յօժարու-  
 թիւնս ալ բոլոր քու շնորհացդ պարգևն է ,  
 բայց , տէր իմ , կատարէ այս գործքը ,  
 միշտ օգնէ ինձի ինչուան մահս , զիս իմ  
 ձեռքս մի թողուր , ուժ տուր ինձի փորձու-  
 թեանց յաղթելու , ու զիս յաղթելու , անոր  
 համար տուր որ միշտ ես զիս քեզի յանձ-  
 նեմ : Աս կ'ուզեմ բոլորովին քուկդ ըլլալ ,  
 քեզ կու տամ մարմինս , հոգիս , կամքս ,  
 ազատութիւնս . ասկէց ետեւ ալ չեմ ուզեր  
 ես ինձի ապրիլ , այլ միայն 'ի քեզ , արա-  
 ըիչ իմ , փրկիչ իմ , սէր իմ , իմ ամէն  
 բանս . “ Աստուած իմ և ամենայն ինչ , , :  
 Ա'ուզեմ սուրբ ըլլալ , և այս բանս կը յու-  
 սամ քեզմէ : Ուզածիդ պէս միշտ տուր



ինծի, զրկէ զիս ամէն բանէ, բաւական  
է որ չզրկես քու շնորհացդ ու սիրոյդ :  
Ա՛յլ յոյս մեղաւորաց Մարիամ, հզօր ես  
դու Աստուծոյ առջին . յոյսս քու բարե-  
խօսութեանդ վրայ դրած եմ, կ'աղաչեմ  
քեզին՝ Յիսուսի վրայ ունեցած սիրոյդ հա-  
մար օգնէ ինծի ու սուրբ ըրէ զիս :



## ՀԱՄԱՌՕՏՈՒԹՒՒՆ

ԱՅՍ ԳՐԻՒՍ ՄԷՁԸ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԱԾ ԵՒ  
ՌԱՔԻՆՈՒԹԵԱՆՑ , ՈՐ ՁՅԻՍՈՒՍ ՍԻՐՈՂ,  
ՀՈԳԻՆ ՊԷՏԲ Է Ի ԳՈՐԾ ԴԵՆ :

1 . Այս կենացս ամէն նեղութիւնները պէտք է համբերութեամբ կրել . հիւանդութիւն , ցաւ , աղքատութիւն , ընչից կորուստ , աղքատականաց մահ , նախատինք , հալածանք , ու ամենայն ներհակ բաներ : Աւ գիտնանք որ այս կենաց նեղութիւնները նշան են որ Աստուած զմեզ կր սիրէ , ու կ'ուզէ անդին փրկութեան հասցնել : Կիտնանք նաև որ Աստուծոյ աւելի հաճոյ են ահամայ մահացումները , որ ինքը մեզի կը զրկէ , քան թէ կամուլին մահացումները՝ որ մենք մեզի կ'ընտրենք :

2 . Հիւանդութեան մէջ ջանանք մենք զմեզ բոլորովին Աստուծոյ կամացը յանձնել , որն որ հաճոյ է իրեն ուրիշ ամէն ջեր

մեռանդութենէ աւելի : Թէ որ այն ատեն չենք կրնար նէ մտքերնիս մտածականի տալ , խաչելութեան վրայ նայինք , իրեն նուիրենք մեր ցաւերը՝ միացընելով իրեն ցաւերուն հետ , որ խաչին վրայ մեզի համար կրեց : Աւ երբոր մահուան լուրը տան մեզի՝ սրտի խողաղութեամբ ու անձին նուիրմամբ ընդունինք , այսինքն մեր կամքովը յանձն առնենք մեռնիլը՝ Յիսուսի հաճոյական բան մը ընելու համար : Այս կամքը եղաւ որ մարտիրոսաց մահուանը բոլոր արժանիքը տուաւ : Պէտք է ըսել այն ատեն . “ Տէր , ահաւասիկ կեցեր եմ , ինչ որ դուն կ’ուզես՝ ես ալ զայն միայն կ’ուզեմ , կ’ուզեմ նեղութիւն կրել որչափ որ քու կամքդ է , կ’ուզեմ մեռնիլ երբոր հաճոյ է քեզի , , : Այլ կեանք չփնտռենք մեղքերնուս ապաշխարանքը քաշելու համար . կատարեալ հպատակութեամբ աստուածային կամաց մահը յանձն առնուլը ամէն ապաշխարանքէ վեր է :

3 . Պէտք է նաև աստուածային կամաց հպատակինք , երբոր կրելու ըլլանք աղքատութիւն , ու ինչ անհանգստութիւն

որ աղքատութեան հետ կը հանդիպի՝  
յուրտ , անօթութիւն , աշխատանք , ան-  
պատուութիւն , ու ամօթ :

4 . Աոյնպէս պէտք է Աստուծոյ կա-  
մայր հպատակ ըլլանք թէ որ ծնողք ու  
բարեկամք մեռնին , որոնք որ ապրելով  
կրնային մեզի բարիք ընել : Ամէն ներհակ  
բաներու մէջ մենք մեզի սորվեցընենք այս  
բանս ըսելու . “ Այսպէս Աստուած ուզեց ,  
այսպէս կ’ուզեմ՝ ես ալ , ” : Ու ազգակա-  
նաց մահուան ատեն լալով անօգուտ ժա-  
մանակ անցընելու տեղ , աղօթք ընենք անոնց  
հոգւոյն , ու Յիսուսին նուիրենք անոնց  
մահուանը պատճառաւ զգացած ցաւեր-  
նիս :

5 . Մտադիր ըլլանք մենք մեզի ճիգն  
ընելու որ համբերութեամբ ու հանդար-  
տութեամբ սրտի կրենք նախատինք ու ար-  
համարհանք : Մեզի թշնամանական խօս-  
քեր ըսողին անուշութեամբ պատասխան  
տանք , և երբոր տեսնանք որ խռոված  
ենք , ալ լաւ կ’ըլլայ այն ատեն նեղութիւնը  
կրել ու լռելը մինչև որ սրտերնիս հան-  
դարտի . ու ջանանք որ ուրիշին չգանդա-

տինք ընդունած նախատինքներնուս վրայ ,  
 Հասլա ըութեամբ Յիսուսի նուիրենք որ  
 մեղի համար այնչափ նեղութիւն կրեց :

6 . Անուշութեամբ վարուինք ամենուն  
 Հետ , մեծաւորի , պղտիկներու , ազնուա-  
 կաններու ու ռամիկներու , ազգականաց  
 ու օտարներու հետ . բայց մասնաւորապէս  
 աղքատներու ու հիւանդներու հետ , ու ա-  
 ռանձին կերպով անոնց հետ՝ որ մեղի գէշ  
 աչքով կր նային :

7 . Ուրիշին յանցանքը յանդիմանելու  
 ատեն աւելի օգտակար է քաղցրութիւնը  
 քան թէ ուրիշ ու ե իցէ ճամբայ կամ ինչ  
 և իցէ փաստ . անոր համար զգուշանանք  
 որ բարկութեան ատեն ուրիշի յանդիմա-  
 նութիւն չտանք . վասն զի այնպիսի ատեն  
 յանդիմանութիւնը միշտ դառն կ'ըլլայ՝  
 կամ խօսքով և կամ կերպով : Օգուշա-  
 նանք նաև որ յանցաւորը չյանդիմանենք  
 երբոր դեռ բարկութեան մէջ է , վասն  
 զի այն ատենը յանդիմանութիւնը աւելի  
 զինքը կը խստացնէ քան թէ կը զգաստա-  
 ցրնէ :

8 . Չնախանձինք աշխարհքիս մեծե-

լուն հարստութեանը , պատուոյն , աստի-  
ճանին մեծութեանը ու համբաւոյն , որ  
մարդկանցմէ կ'ընդունին . հապա անոնց  
նախանձինք որ աւելի կը սիրեն զՅիսուս ,  
որոնք անտարակոյս աշխարհքիս մեծամեծ  
թագաւորներէն աւելի գոհ են . ու Աստու-  
ծոյ տուած լուսոյն շնորհակալ ըլլանք՝ ո-  
րով կը ճանչցրնէ մեզի այս ամենայն աշ-  
խարհային բարեաց ունայնութիւնը , ո-  
րոնց համար այնչափ ողորմելիներ կը կոր-  
սուին :

9 . Մեր ամենայն գործոց ու մտա-  
ծութեանցը մէջ չփնտռենք մեր առանձին  
հաճութիւնը , հապա միայն Աստուծոյ  
հաճոյքը , ուստի չխռովինք երբոր չյաջո-  
ղելու ըլլայ մեր միտքին դրած դիտաւո-  
րութիւնը . ու եթէ յաջողելու ըլլայ՝ մարդ-  
կանց գովութիւնն ու շնորհակալութիւնը  
չփնտռենք . և թէ որ մեր վրայ գէշ խո-  
սին՝ բանի տեղ չդնենք , մխիթարելով  
զմեզ որ Աստուծոյ հաճոյիցը համար էր  
գործածնիս , և ոչ եթէ մարդկանց :

10 . Կատարելութեան գլխաւոր մի-  
ջոցներն են , Ա . փախչիլ ամէն կամաւոր

մեղքէ՛ թէ և թեթև ալ ըլլայ . բայց թէ որ դժբաղդութեամբ սպախութեան մը մէջ ինկնանք, զգուշանանք անհամբերութեամբ մենք մեզի նեղանալէն . այնպիսի ատեն պէտք է զղջում ընել սրտի հանդարտութեամբ, ու սիրոյն Յիսուսի ներգործութիւն մը ընել, խոտտանալով որ մէյ մ'ալ չընենք իրեն օգնութեամբը :

11 . Բ . Փափաքիլ սուրբերուն կատարելութեանը հասնելու . ու Յիսուսի հաճոյքը կատարելու համար ամէն նեղութեան համբերելու . և թէ որ այս փափաքը չունինք, աղաչենք Յիսուսի՛ որ իր բութեամբը շնորհէ մեզի . վասն զի թէ որ ճշմարիտ փափաքով չփափաքինք սուրբ ըլլալու նէ, կատարելութեան մէջ քայլ մ'ալ առաջ չենք երթար :

12 . Գ . Կատարելութեան հասնելու ճշմարիտ առաջադրութիւն ունենալ : Այլ որ այս հաստատուն առաջադրութիւնը չունի, տկարութեամբ գործ կը գործէ ու առիթը գալու ըլլայ նէ՛ դժկամակութեանց չարթեր . իսկ ընդ հակառակն Ըստուծոյ օգնութեամբ հաստատուն առաջա-

դրութիւն ըրած հոգի մը բանէ մը ետ  
չկենար, ամէն բանի կը յաղթէ :

13 . Դ . Ամէն օր երկու ժամ կամ  
գոնէ ժամ մը մտածական աղօթք ընել,  
ու առանց սաստիկ հարկաւորութեան  
զանց չընել ձանձրութեամբ, կամ ցամա-  
քութեամբ, կամ յուզման մէջ գտնուելուն  
սխառձառաւ :

14 . Ե . Շարժուն մէջ շատ անգամ  
հաղորդութիւն առնել Հոգևոր Հօրը  
հրամանաւը, վասն զի առանց Հոգևոր  
Հօրը հաւանութեան պէտք չէ ստէպ  
սրբութիւն առնել : Այնպէս ընելու է  
արտաքին մահացուցմանց կողմանէ ալ,  
ծովասպահութիւն, ձաղկանք, ու ա-  
սոնց նման բաներ : Այս տեսակ մահա-  
ցուցմունքները թէ որ առանց Հոգևոր  
Հօրը հրամանին ըլլան, կամ առողջու-  
թիւնը կ'աւրեն, կամ սնափառութիւն կը  
բերեն : Ասոր համար հարկաւոր է մաս-  
նաւոր Հոգևոր Հայր ունենալ, ու անոր  
հրամանաւը կարգաւորել ամէն բան :

15 . Զ . Անդադար աղօթք ընել, ա-  
մէն պիտոյից մէջ զմեզ Յիսուսի յանձնե-



լով, միանգամայն դիմելով պահապան հրեշ-  
տակին, մեր պաշտպան սուրբերուն և մաս-  
նաւորապէս սուրբ Աստուածամօր բարե-  
խօսութեանը, որուն ձեռքովը կու տայ  
մեզի Աստուած ամէն շնորհք: Ապացու-  
ցուած է ութերորդ գլխուն վերջերը՝ որ  
աղօթքէն կը կախուի մեր ամենայն բարի-  
քը: Պէտք է խնդրել Աստուծմէ մաս-  
նաւորապէս ամէն օր իրեն յարատեւու-  
թեան շնորհքը, և ուլ որ կը խնդրէ նէ,  
կ'ընդունի, և ուլ որ չխնդրեր նէ՝ չընդու-  
նիր ու կը դատապարտուի. խնդրել Յի-  
սուսէն իր սուրբ սէրը, և կատարեալ  
միաբանութիւն իր սուրբ կամացը հետ:  
Այլ միշտ պէտք է Յիսուսի արդեանցը  
համար շնորհքը խնդրել: Այս աղօթքնե-  
րը պէտք է ընենք առաւօտը ելլանուս  
պէս, ու ետքը նորէն ընենք մտածական  
աղօթքի մէջ, սրբութիւն առնելու ատեն,  
սուրբ Հաղորդութեան այցելութիւն ընե-  
լու ու իրիկունը խղճմտանաց քննու-  
թիւն ընելու ատեն: Վիսաւորապէս  
փորձութեանց ատեն պէտք է որ Աս-  
տուծմէ օգնութիւն խնդրենք դէմ գնելու

համար , և մանաւանդ թէ որ փորձու  
 թիւնները ողջխոհութեան դէմ ըլլան ,  
 օգնութեան կանչելով շատ անգամ Յիսու  
 սի ու Մարիամու սուրբ անունը : Աղօթք  
 ընողը կը յաղթէ , աղօթք չընողը կը յաղ  
 թուի :

16 . Խոնարհութեան կողմանէ չնա  
 փառիչ հարստութեամբ , պատուով , ազ  
 նուականութեամբ , հանձարոյ կամ ու  
 ըիշ բնութեան ձիրքի մը պատճառաւ . ևս  
 առաւել հոգևորական ձիրքի պատճա  
 ռաւ , մտածելով որ բոլոր Աստուծոյ սլար  
 գէներն են : Ամենէն գէշ սեպել զմեզ , ա  
 նոր համար դո՛՛հ ըլլալ ուրիշներէն նախա  
 տինք որ ընդունինք . ու չընենք այնպէս՝  
 ինչպէս որ ոմանք կ'ընեն , որ բերնով կ'ը  
 սեն թէ ամենէն գէշն ենք , ու ետքը կ'ուզեն  
 որ ամենէն աւելի լաւ կերպով հետերնին վա  
 ըուին : Առանց զմեզ արդարացընելու խո  
 նարհութեամբ ընդունիլ լանդիմանութիւ  
 նը , թէ և չըրած յանցանքնիս վրանիս ձգեն .  
 միայն թէ հարկաւոր չըլլայ պաշտպանու  
 թիւնը՝ ուրիշներուն գայթակղութիւն չտա  
 լու համար :

17. Այս առաւել զգուշանանք ցուցամն յութենէ ու մարդկային պատիւ փնտուելէն : Ուստի միշտ աչքերնուս առջին ունենանք սրբոյն Ֆրանչիսկոսի հոչակաւոր խօսքը , թէ “ Այնչափ ենք , որչափ որ ենք Աստուծոյ առջին ” : Աւելի գէշ բան է կրօնաւորի մը պատուաւոր պաշտօներու ու կրօնին մեծաւորութեանը աչք ունենալ . կրօնաւորի մը պատիւն է ամենէն աւելի խոնարհ ըլլալ , և անիկա է աւելի խոնարհը ու՛ր որ մեծ ուրախութեամբ նուաստութիւն յանձն կ’առնու :

18 . Սիրտը ամէն արարածներէ հեռացրնել : Ու՛ր որ երկրաւոր բանի մը կը յարուի , թէպէտ և պզտիկ բան ալ ըլլայ , չկրնար ամենեւին վերանալ ու բոլորովին Աստուծոյ հետ միանալ :

19 . Մասնաւորապէս հեռացրնենք մեր սիրտը ՚ի սիրոյ ազգականաց : Ա՛րտէր սուրբն Փիլիպպոս ‘Աերի’ թէ “ Որչափ սէր կը ձգենք արարածոց վրայ , այնչափ սէր Աստուծմէ կը պակսեցրնենք ” : Ու վիճակի ընտրութեան վրայ գալով՝ մասնաւորապէս պիտի ջանանք ազգականներէն

զգուշանալ, որոնք աւելի իրենց շահը կը փնտոնեն, բան թէ մեր օգուտը: Հեռա-  
 ցրնենք մեզմէ մարդկային նկատմունքը. և  
 ամենէն աւելի հեռանանք մեր յատուկ  
 կամքէն: Պէտք է ամէն բան թողուլ, որ  
 ամէն բան ստանանք. « Ըմենայն ընդ ա-  
 մենայնի », կ'ըսէ թուլմա Գեմբացին:

20. Չղայրանանք ամենեւին ինչ ալ որ  
 պատահի, ու թէ որ ըլլայ որ իմանանք  
 թէ բարկութիւնը վրանիս հասեր է, այն  
 ատեն շուտ մը պէտք է զմեզ Աստուծոյ  
 յանձնենք, ու ամենեւին գործք մը չը-  
 նենք, խօսք մը չխօսինք, ինչուան որ ա-  
 պահով ըլլանք թէ բարկութիւնը ինչած  
 է: Ընոր համար օգտակար է որ աղօթքի  
 ատեն պատրաստենք զմեզ ամէն տեսակ  
 դիպուածոց որ կրնան պատահիլ մեզի,  
 որպէս վի բարկութիւնը մեղքով չըլլայ:  
 Յիշենք այն որ կը խոստովանէր իր վրայ  
 սուրբն Քրանչիսկոս Սալեզեան. « Ըմե-  
 նեւին չէ եղած որ կիրք եղած ըլլամ ու  
 ետքը չզղջամ »,:

21. Արբութիւնը կը կայանայ զԱս-  
 տուած սիրելուն վրայ, և Աստուծոյ սէրը

կը կայանայ Աստուծոյ կամքը կատարելուն  
 վրայ : Պէտք է ուրեմն ամենայն կերպով  
 հպատակինք ինչ որ Աստուած մեր վրայ  
 կարգադրէ . ու անանկով խաղաղութեամբ  
 ընդունինք Աստուծոյ ուզած թէ յաջող  
 և թէ ձախող դիպուածները , այն վիճա-  
 կը որ Աստուած կ'ուզէ , այնպիսի առող-  
 ջութիւն ինչպէս որ Աստուած կ'ուզէ :  
 Աւ բոլոր աղօթքնիս պէտք է այս բանիս  
 ուղղենք , որ Աստուած իր սուրբ կամքը  
 կատարել տայ մեզի : Այլ Աստուծոյ կամայը  
 վրայ ասպահով ըլլալու համար՝ կրօնաւոր  
 եղողը իր մեծաւորին հնազանդութենէն  
 պիտի կախուի , իսկ աշխարհականը՝ իր  
 խոստովանահօրը , ստոյգ սեպելով ինչ որ  
 սուրբն Փիլիպպոս Ների կ'ըսէ . « Հնա-  
 զանդութեամբ եղած բանին Աստուծոյ հա-  
 մար չտրուիր » : Ա'իմացուի որ բանը յայտ-  
 նի մեղք չըլլայ :

22 . Փորձութեանց դէմ երկու դեղ  
 կայ . Աստուծոյ կամայը հպատակութիւն  
 ու աղօթք : Հպատակութիւն Աստուծոյ  
 կամայը . վասն զի մեղանչելն ու փորձու-  
 թիւնը թէ և Աստուծմէ չգար , բայց Աս-

տուած թող կու տայ մեր բարւոյն համար .  
 ուստի պիտի զգուշանանք որ չնեղասրտինք՝  
 որչափ ալ նեղացուցիչ ըլլայ փորձութիւնը :  
 Այն ատենը պէտք է որ զմեզ Աստուծոյ  
 կամացը յանձնենք, որ թող կու տայ  
 փորձութիւնները դալու, ու աղօթքին զէնքն  
 առնենք անոնց յաղթելու, որ ամէն զէնքերէն  
 ուժովն է ու աւելի ասպահովը թրշնամեաց  
 յաղթելու համար : Գէշ խորհուրդները  
 մեզք չեն, որչափ որ աղտոյի ու ամբարշտական  
 ըլլան. չար հաւանութիւնն է միայն մեզքը :  
 Ի՞նչ որ օգնութիւն կանչելու ըլլանք զամենատուրբ  
 անունն Յիսուսի ու Մարիամու՝ ամենեւին  
 չենք յաղթուիր : Արբոր փորձութիւնը  
 յարձակի, այն ատեն շատ կ'օգտէ նորոգել  
 մեր առաջադրութիւնը՝ որ աւելի կ'ուզենք  
 մեռնիլ քան թէ Աստուծոյ դէմ մեղանչել :  
 Ա'օգտէ նաև շատ անգամ խաչակներէ  
 նշանաւ խաչին, ու օրհնեալ ջրով .  
 դարձեալ շատ կ'օգտէ փորձութիւնը  
 խոստովանահօրը յայանելու . բայց աւելի  
 հարկաւոր դեղը աղօթքն է, խնդրելով  
 Յիսուսի ու Մարիամու օգնութիւնը դէմ  
 դնելու համար :

23 . Հողւոյն լքմանը ատեն երկօս  
 ներգործութիւն մասնաւորապէս պիտի ը-  
 նենք . Ա . Խոնարհեցընենք զմեզ՝ խոստո-  
 վանելով որ արժանի ենք այս կերպով տան-  
 ջուելու : Բ . Յանձնենք զմեզ աստուա-  
 ծային կամայը , ու բողբոլին զմեզ Աս-  
 տուծոյ բարութեանը թողունք : Արբոր  
 Աստուած զմեզ մխիթարելու ըլլայ , պատ-  
 բաստուինք նեղութեանց , որ շատ անգամ  
 մխիթարութեան ետեւէն կու գան : Իսկ  
 երբոր զմեզ լքեալ կը թողու , խոնարհինք ,  
 ու Աստուծոյ կամայը հպատակինք . Ե  
 այսպէս աւելի օգուտ կը քաղենք լքմանե-  
 քան թէ մխիթարութենէ :

24 . Միշտ բարի կեանք անցընելու  
 համար պէտք է տպաւորենք մտքերնուս  
 մէջ յաւիտենական կենաց քանի մը ա-  
 ոածները .

Այս աշխարհքիս ամէն բանը վերջ ու-  
 նի , թէ՛ վայելքը , և թէ՛ վիշտը . իսկ յաւի-  
 տենականութիւնը վերջ չունի :

Մահուան կէտին ինչ բանի կը ծա-  
 ւայեն աս աշխարհքիս մեծութիւնները :

Ինչ որ Աստուծմէ կու գայ՝ թէ՛ յաջող

և թէ ձախող, բարի են, ու մեր բարւոյն  
համար են :

Պէտք է ամէն բան թողուլ ամէն բան  
ստանալու համար :

Առանց Աստուծոյ ճշմարիտ խաղա-  
ղութիւն չկայ երբէք :

Հարկաւոր է միայն զԱստուած սիրել  
ու հոգին փրկել :

Միայն մեղքէն պէտք է վախնալ :

Օ Աստուած կորսնցրնելն է ամէն բան  
կորսնցրնել :

Ով որ չփափաքիր աս աշխարհքիս բա-  
ներուն, բոլոր աշխարհքիս տէրն է :

Ով որ աղօթք կ'ընէ՝ կը փրկուի, ով  
որ աղօթք չըներ՝ կը կորսուի :

Թող մեռնինք Աստուծոյ հաճոյական  
բան մը ընելու համար :

Որչափ ալ արժէ Աստուած՝ ոչ երբէք  
սուղ է :

Ով որ արժանի եղեր է դժոխքի, ամէն  
տանջանք իրեն թեթեւ է :

Ամէն բանի կը համբերէ ով որ զՅիսուս  
տեսնայ խաչին վրայ :

Ինչ որ Աստուծոյ համար չըլլար՝ բոլոր  
տանջանք է :



Ով որ զԱստուած միայն կ'ուզէ՝ հա-  
րուատ է ամենայն բարեօք :

Երանի՛ անոր որ սրտանց կրնայ ըսել .  
“ Յիսուս իմ, զքեզ միայն կ'ուզեմ, և ա-  
մենեին ուրիշ բան մը չեմ ուզեր ” :

Ով որ զԱստուած կը սիրէ, ամէն բա-  
նէ համ կ'առնէ . իսկ ով որ զԱստուած  
չսիրեր՝ ամենեին մէկ բանէ մը համ չառ-  
ներ :



The first part of the manuscript is a list of names and titles, including  
 John de ... and ...  
 The second part contains a list of ...  
 The third part is a list of ...  
 The fourth part is a list of ...  
 The fifth part is a list of ...  
 The sixth part is a list of ...  
 The seventh part is a list of ...  
 The eighth part is a list of ...  
 The ninth part is a list of ...  
 The tenth part is a list of ...  
 The eleventh part is a list of ...  
 The twelfth part is a list of ...  
 The thirteenth part is a list of ...  
 The fourteenth part is a list of ...  
 The fifteenth part is a list of ...  
 The sixteenth part is a list of ...  
 The seventeenth part is a list of ...  
 The eighteenth part is a list of ...  
 The nineteenth part is a list of ...  
 The twentieth part is a list of ...  
 The twenty-first part is a list of ...  
 The twenty-second part is a list of ...  
 The twenty-third part is a list of ...  
 The twenty-fourth part is a list of ...  
 The twenty-fifth part is a list of ...  
 The twenty-sixth part is a list of ...  
 The twenty-seventh part is a list of ...  
 The twenty-eighth part is a list of ...  
 The twenty-ninth part is a list of ...  
 The thirtieth part is a list of ...  
 The thirty-first part is a list of ...  
 The thirty-second part is a list of ...  
 The thirty-third part is a list of ...  
 The thirty-fourth part is a list of ...  
 The thirty-fifth part is a list of ...  
 The thirty-sixth part is a list of ...  
 The thirty-seventh part is a list of ...  
 The thirty-eighth part is a list of ...  
 The thirty-ninth part is a list of ...  
 The fortieth part is a list of ...  
 The forty-first part is a list of ...  
 The forty-second part is a list of ...  
 The forty-third part is a list of ...  
 The forty-fourth part is a list of ...  
 The forty-fifth part is a list of ...  
 The forty-sixth part is a list of ...  
 The forty-seventh part is a list of ...  
 The forty-eighth part is a list of ...  
 The forty-ninth part is a list of ...  
 The fiftieth part is a list of ...  
 The fifty-first part is a list of ...  
 The fifty-second part is a list of ...  
 The fifty-third part is a list of ...  
 The fifty-fourth part is a list of ...  
 The fifty-fifth part is a list of ...  
 The fifty-sixth part is a list of ...  
 The fifty-seventh part is a list of ...  
 The fifty-eighth part is a list of ...  
 The fifty-ninth part is a list of ...  
 The sixtieth part is a list of ...  
 The sixty-first part is a list of ...  
 The sixty-second part is a list of ...  
 The sixty-third part is a list of ...  
 The sixty-fourth part is a list of ...  
 The sixty-fifth part is a list of ...  
 The sixty-sixth part is a list of ...  
 The sixty-seventh part is a list of ...  
 The sixty-eighth part is a list of ...  
 The sixty-ninth part is a list of ...  
 The seventieth part is a list of ...  
 The seventy-first part is a list of ...  
 The seventy-second part is a list of ...  
 The seventy-third part is a list of ...  
 The seventy-fourth part is a list of ...  
 The seventy-fifth part is a list of ...  
 The seventy-sixth part is a list of ...  
 The seventy-seventh part is a list of ...  
 The seventy-eighth part is a list of ...  
 The seventy-ninth part is a list of ...  
 The eightieth part is a list of ...  
 The eighty-first part is a list of ...  
 The eighty-second part is a list of ...  
 The eighty-third part is a list of ...  
 The eighty-fourth part is a list of ...  
 The eighty-fifth part is a list of ...  
 The eighty-sixth part is a list of ...  
 The eighty-seventh part is a list of ...  
 The eighty-eighth part is a list of ...  
 The eighty-ninth part is a list of ...  
 The ninetieth part is a list of ...  
 The ninety-first part is a list of ...  
 The ninety-second part is a list of ...  
 The ninety-third part is a list of ...  
 The ninety-fourth part is a list of ...  
 The ninety-fifth part is a list of ...  
 The ninety-sixth part is a list of ...  
 The ninety-seventh part is a list of ...  
 The ninety-eighth part is a list of ...  
 The ninety-ninth part is a list of ...  
 The hundredth part is a list of ...

## Յ Ա Ն Կ Գ Լ Խ Ո Յ



- ԳԼ. Ա. Ո՛րչափ արժանի է որ սիրենք զՅիսուս այն սիրոյն համար՝ որ իր չարչարանքովը մեզի ցուցուց . . . . . 7
- ԳԼ. Բ. Ո՛րչափ արժանի է որ սիրենք զՅիսուս այն սիրոյն համար՝ որն որ մեր վրայ ցուցուց սուրբ Հաղորդութեան խորհուրդը հաստատելով . . . . . 32
- ԳԼ. Գ. Ի՛նչ մեծ վստահութիւն պիտի ունենանք Յիսուսի մեզի ցուցըցած սիրոյն և մեզի համար ըրած ամէն բաներուն վրայ . . . . . 52
- ԳԼ. Դ. Ո՛րչափ պարտական ենք սիրելու զՅիսուս . . . . . 70
- ԳԼ. Ե. Սէր երկայնամիտ է շնորհակալութիւնս . . . . . 70

- սիրող հոգին նեղութիւն քա-  
 շէլ կը սիրէ . . . . . 89
- ԳԼ. Զ. Սէր + աղջրանայ: Ով որ կը սի-  
 րէ զՅիսուս, կը սիրէ զքաղ-  
 ցրութիւն . . . . . 113
- ԳԼ. Է. Սէր ոչ նախանձի: ԶՅիսուս սի-  
 րող հոգին աշխարհքիս մեծե-  
 րուն չնախանձիր, հասպա ա-  
 նոնց միայն որ զՅիսուս աւելի  
 կը սիրեն . . . . . 130
- ԳԼ. Ը. Սէր ոչ ամբարհասածէ: Ով որ  
 կը սիրէ զՅիսուս, գաղջութե-  
 նէ կը փախչի, և կատարելու-  
 թիւնը կը սիրէ, որուն միջոց-  
 ներն են. Ա. Փափաք. Բ.  
 Առաջագորութիւն. Գ. Մտա-  
 ծական աղօթք. Դ. Հաղոր-  
 դութիւն. Ե. Աղօթք. . . . . 145
- ԳԼ. Թ. Սէր ոչ հպարտանայ: Ով որ զՅի-  
 սուս կը սիրէ, չհպարտանար  
 իր արժանաւորութեանցը հա-  
 մար, հասպա կը խոնարհի, ու  
 ինքզինքը ուրիշներէն ալ խո-  
 նարհած տեսնալուն վրայ կը  
 զուարճանայ. . . . . 203
- ԳԼ. Ժ. Սէր ոչ ամբարհասածէ: Ով որ

- զՅիսուսս կը սիրէ , ուրիշ բանի  
 չցանկար բայց եթէ Յիսու-  
 սին . . . . . 220
- ԳԼ. ԺԱ. Սէր ու Խնորհ զիւր : Ով որ  
 զՅիսուսս կը սիրէ , կ'ուզէ բու-  
 լոր ստեղծուածներէն բաժ-  
 նուիլ . . . . . 230
- ԳԼ. ԺԲ. Սէր ու Գրգռի : Ով որ կը  
 սիրէ զՅիսուսս , ոչ երբէք կը  
 բարկանայ ընկերին . . . . . 273
- ԳԼ. ԺԳ. Սէր ու Խորհի զլաւ , ու Խըն-  
 րայ ընդ անիբան-աւելիան , այլ Խնորայ  
 ընդ սքո-գո-ւելիան : Ով որ կը  
 սիրէ զՅիսուսս , ուրիշ բան չու-  
 ջէր , բայց եթէ ինչ որ Յի-  
 սուսս կ'ուզէ . . . . . 291
- ԳԼ. ԺԴ. Սէր ամենայնի քեռէ : Ով որ  
 զՅիսուսս կը սիրէ , ամէն բանի  
 Յիսուսին համար կը համբերէ ,  
 և մասնաւորապէս հիւանդու-  
 թեանց , աղքատութեան , ու  
 նախատանաց . . . . . 325
- ԳԼ. ԺԵ. Սէր ամենայնի հասարայ : Ով  
 որ կը սիրէ զՅիսուսս , իրեն ա-  
 մէն խօսքերուն կը հաւատայ . . . . . 357
- ԳԼ. ԺԶ. Սէր ամենեւին յոսսայ : Ով որ

զՅիսուս կը սիրէ , Յիսուսէն  
ամէն բանի յոյս կ'ունենայ . . . 367

- ԳԼ . ԺԷ . Սէր ամենայնի համբերէ : Ով որ  
զՅիսուս կը սիրէ սերա սիրով,  
ամէն փորձութեանց և ամե-  
նայն մխիթարութենէ զուրկ  
եղած ատենն ալ զինքը սիրե-  
լէն ջգադրիր . . . . . 395
- Փորձութեանց վրայ . . . . . 396
- Լքման վրայ . . . . . 421
- Համառօտութիւն այս գրքիս  
մէջը բովանդակուած առաքի-  
նութեանց , որ զՅիսուս սի-  
րող հոգին սէտք է 'ի դործ  
դնէ . . . . . 446





42 107



290 1

290 0

under 245

